Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

2011 ԹՎԱԿԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 2011 ԹՎԱԿԱՆԻՆ 45

ՀՀ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ 61

Հարկային եկամուտներ և պետական տուրքեր 63
Հարկային եկամուտներ 64
Պետական տուրք 75
Պարտադիր սոցիալական ապահովության վճարներ 80
Պաշտոնական դրամաշնորհներ 80
Այլ եկամուտներ 81

ՀՀ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ 85

Տնտեսագիտական դասակարգում 85

Ընթացիկ ծախսեր 86
Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ 88

Գործառական դասակարգում 89

Ընդհանուր բնույթի պետական ծառայություններ 89
Պաշտպանություն 107
Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն 108
Տնտեսական հարաբերություններ 114
Շրջակա միջավայրի պաշտպանություն 149
Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ 159
Առողջապահություն 165
Հանգիստ, մշակույթ և կրոն 180
Կրթություն 196
Սոցիալական պաշտպանություն 211
Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր 229

ՀՀ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ 230

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀՀ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 234

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀՀ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (գործառական դասակարգմամբ) 235

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀՀ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (տնտեսագիտական դասակարգմամբ) 240

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀՀ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԴԵՖԻՑԻՏԻ (ՊԱԿԱՍՈՒՐԴԻ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 243

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 247

ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐ 1716

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ 1821

2011 ԹՎԱԿԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արդյունաբերության ոլորտ

2011 թվականին ՀՀ կառավարության կողմից ընդունվել է «ՀՀ-ում արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության» ռազմավարությունը, որով նախանշված արդյունաբերական 11 ոլորտներից 3-ում արդեն կատարվել են միկրոմակարդակով ուսումնասիրություններ և վերլուծություններ:

300 մլն դրամը գերազանցող ներդրումային ծրագրերի շրջանակներում ԱԱՀ-ի հետադարձում. 2011 թվականի ընթացքում մշակվել և ՀՀ կառավարության կողմից հավանության են արժանացել 10 ընկերությունների ներդրումային ծրագրեր սննդարդյունաբերության, մետաղագործության, էներգետիկայի և դեղագործության ոլորտներում, որոնց ընդհանուր ներդրումները կազմում են մոտ 52.9 մլրդ ՀՀ դրամ, և արդյունքում նախատեսվում է մոտ 1100 նոր աշխատատեղերի ստեղծում:

«Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմի ժամկետների երկարաձգում. 2011 թվականին ՀՀ կառավարության կողմից «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով ներմուծված ապրանքների ժամկետների երկարաձգման թույլտվություն են ստացել թվով 7 ընկերությունների 8 ծրագրեր:

Գործարար միջավայրի բարեփոխումներ

Կառավարության՝ գործարար միջավայրի բարելավմանն ուղղված քայլերը ներառել են հետևյալ ուղղությունները.

Ընկերությունների գրանցում. Ապրիլից գործում է ընկերությունների էլեկտրոնային գրանցման «Մեկ պատուհանի կանգառ» սկզբունքով ծառայությունների մատուցման կենտրոնը:

Հարկերի վճարում. Շահութահարկի կանխավճարները և շահութահարկի նվազագույն վճարումները կրճատվել են 8-ով, գույքահարկի և հողի հարկի վճարումները՝ 2-ով, պարտադիր սոցիալական ապահովության վճարների հաշվետվությունները՝ 8-ով: Երկարաձգվել է մինչև 70 մլն դրամ շրջանառություն ունեցող տնտեսավարողների մոտ տեսչական ստուգումների արգելքը:

Արտաքին առևտուր. Համապատասխանության պարտադիր հավաստման գործընթացն իրականացվում է մաքսազերծումից հետո՝ մինչև իրացնելը: Չափման միջոցների տեսակի հաստատումն իրականացվում է մաքսազերծումից հետո մինչև իրացում կամ շահագործում: Կրճատվել են ծագման երկրի սերտիֆիկատի ստացման գործընթացի համար ծախսվող ժամանակը

և ծախսերը: Ներդրվել է մաքսային հայտարարագրման էլեկտրոնային համակարգ և մաքսային հսկողության իրականացման ռիսկերի կառավարման համակարգ:

Շինարարական թույլտվություններ. Ինժեներական սպասարկում իրականացնող ծառայությունների կողմից տրվող օբյեկտի նախագծման տեխնիկական պայմանները կառուցապատողին են տրամադրվում ճարտարապետահատակագծային առաջադրանքի հետ համատեղ ճարտարապետահատակագծային առաջադրանք տվողի կողմից:

Պայմանագրերի կիրարկում. ԴԱՀԿ ծառայությունում ներդրվել է աճուրդների իրականացման էլեկտրոնային համակարգ: Ստեղծվել է «ԴատաԼեքս» հանրային տեղեկատվական համակարգը, որը նախատեսված է դատական բնագավառի մի շարք ծառայությունների առցանց տրամադրման համար:

Վարկերի ստացում. ՀՀ կենտրոնական բանկն ընդունել է մի շարք իրավական ակտեր, որոնք ուղղված են վարկային բյուրոներին տրամադրվող վարկային տեղեկատվության գաղտնիության ապահովմանը, վարկային բյուրոների լիցենզավորմանը, բարձրացվել է վարկային տեղեկատվության հասանելիությունը:

Ներդրողների պաշտպանություն. Ընդունվել է «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը: ՀՀ կառավարության կողմից հաստատվեց 50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ ընկերություններում Կորպորատիվ կառավարման կանոնագրքի ներդրման ժամանակացույցը:

Սեփականության գրանցում. Իրականացված օրենսդրական փոփոխությունների արդյունքում ապահովվել է գույքային իրավունքների պետական գրանցման ընթացակարգերի պարզեցում, հաշվառման (չափագրման) գործառույթի մասնավորեցում, անշարժ գույքի հետ կապված առանձին գործարքների կնքման պարզեցված ընթացակարգի ներդրում:

Ստեղծվել են ՀՀ տնտեսական ոլորտը կարգավորող իրավական ակտերի բարեփոխումների խորհուրդը և ՀՀ կառավարության աշխատակազմի «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը:

Իրավական ակտերի ազդեցության գնահատում. ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել ՀՀ-ում նորմատիվ իրավական ակտերի կարգավորման ազդեցության գնահատման համակարգի կատարելագործման հայեցակարգը:

Փոքր և միջին ձեռնարկատիրություն

2011 թվականի ընթացքում իրականացվել է ՓՄՁ պետական աջակցության ծրագիրը, որի շրջանակում աջակցություն է տրամադրվել 3580 սուբյեկտի, այդ թվում՝ վարկային

երաշխավորությունների տրամադրում 49.8 մլն դրամի, 95 սկսնակ գործարարների աջակցություն (14-ը՝ ֆինանսական) 25.2 մլն դրամ վարկի ընդհանուր գումարով (Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի երաշխավորությունը՝ 30.2 մլն դրամ), «ՓՄՁ ներդրումներ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի միջոցով տրամադրվել է 38 վարկ՝ ընդհանուր 2440.9 մլն դրամ գումարի չափով:

Ապահովվել է Հաշվապահական կենտրոնի գործունեությունը: ՀՀ վարչապետի գլխավորությամբ ստեղծվել է ՓՄՁ զարգացման խորհուրդ, որի նպատակն է ՓՄՁ համար գործարար միջավայրի բարելավման հարցերով պետության և գործարար համայնքի արդյունավետ երկխոսությունն ապահովելը:

Միջազգային տնտեսական համագործակցություն

2011 թվականի ընթացքում աշխատանքներ են տարվել 59 երկկողմ և 12 բազմակողմ համաձայնագրերի տեքստերի թարգմանության, ուսումնասիրման, փորձաքննության, խմբագրման, ներպետական համաձայնեցման, վավերացման գործընթացի իրականացման, ստորագրման նախապատրաստման ուղղությամբ:

Նախապատրաստվել և անց են կացվել հայ-չինական, հայ-ուկրաինական, հայ-լեհական միջկառավարական հանձնաժողովների նիստերը:

Եվրոպական միության հետ համագործակցություն

ՀՀ և ԵՄ միջև Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտու (ԽՀԱԱԳ) ստեղծման շուրջ վարվելիք բանակցությունների մեկնարկի ապահովման նպատակով ՀՀ վարչապետի որոշմամբ հաստատվել է միջոցառումների ժամանակացույց: Իրականացված աշխատանքների արդյունքում գերակա առաջնային ոլորտներում նախատեսված միջոցառումները հիմնականում կատարվել են, որի արդյունքում 2012 թվականին մեկնարկել են ԽՀԱԱԳ բանակցությունները:

ՀՀ-ԵՄ Ասոցացման համաձայնագրի բանակցային գործընթացի շրջանակներում ստեղծված տնտեսական, ֆինանսական և ոլորտային համագործակցության հարցերով աշխատանքային խմբի կողմից բանակցվել և եվրոպական կողմի հետ համաձայնեցվել է ապագա համաձայնագրի 20 գլուխ: ՀՀ և ԵՄ միջև կնքվել են 4 ֆինանսական համաձայնագրեր, որոնց ընդհանուր արժեքը կազմում է շուրջ 31 մլն եվրո:

Ներդրումային քաղաքականություն

2011 թվականին ՀՀ տնտեսության իրական հատվածում կատարված օտարերկրյա ներդրումների ծավալը կազմել է 816.3 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով 16.2%-ով: ՀՀ Աժ կողմից ընդունվել է «Ազատ տնտեսական գոտիների մասին» ՀՀ օրենքը և մի շարք այլ օրենքներում փոփոխություններ: ՀՀ կառավարության որոշմամբ հաստատվել են համապատասխան ենթաօրենսդրական ակտերը: Ստորագրվել է «ՀՀ էկոնոմիկայի նախարարության և «Կորպորասիոն Ամերիկա ՍԱ» ընկերության միջև «Զվարթնոց» օդանավակայանի հարակից տարածքում ազատ տնտեսական գոտի ստեղծելու նպատակով համագործակցության համաձայնագիրը»: Մշակվել են «Հայաստան. Ներդրումների երկիր» ներդրումային առավելությունների ուղեցույց, ներդրումային հնարավորությունների վերաբերյալ ներ-դրումային քարտեզ, ներդրումային ծրագրի անձնագիր, Հայաստանում ներդրումներ կատարելու «Յոթ և ավելի պատճառներ» թղթապանակը:

Առևտուր և արդյունավետ շուկաներ

2011 թվականի հոկտեմբերի 19-ին ստորագրվել է ԱՊՀ երկրների համար «Ազատ առևտրի գոտու մասին» պայմանագիրը: Ընդունվել են ՀՀ մաքսային օրենսգրքում, «Ներքին շուկայի պաշտպանության մասին», «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքներում համապատասխան փոփոխություններ:

Ստորագրվել է Հայկական կոնյակագործների միության հիմնադիր պայմանագիրը: Միության նպատակն է «Հայկական կոնյակ» տեղանվանման պահպանությունը, Հայկական կոնյակի արտահանման շուկաների պահպանումը և նոր շուկաներ ընդլայնումը՝ պահպանելով կոնյակի որակական ցուցանիշները և համբավը:

Տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) և ինովացիոն քաղաքականություն

ՏՏ ոլորտում ակտիվ աշխատում է ավելի քան 300 ձեռնարկություն: 2011 թվականին ստեղծվել է մոտ 20 նոր ընկերություն: Ոլորտի շրջանառությունը կազմում է մոտ 205 մլն ԱՄՆ դոլար, որից մոտ 60%-ն արտահանվում է: Զբաղվածների ընդհանուր թիվը կազմում է մոտ 5000 մասնագետ: Արտադրության ծավալն աճել է շուրջ 30%-ով:

Հիմնվել են տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների ոլորտի Մայքրոսոֆթ ինովացիոն կենտրոնը, Հայ-հնդկական ՏՀՏ գերազանցության կենտրոնը, «Նոկիա» մոբայլ լուծումների տարածաշրջանային լաբորատորիան:

SS լուծումները տնտեսության այլ ճյուղերում կիրառելու վերաբերյալ գործարարների, հանրության իրազեկման մակարդակի բարձրացման ուղղությամբ կազմակերպվել են «ԴիջիԹեք Բիզնես» ֆորումը, «Դիջիթեք» տեղեկատվական, հեռահաղորդակցման և բարձր տեխնոլոգիաների մասնագիտացված միջազգային ցուցահանդեսը, «ԱրմԹեք 2011» Հայաստանի բարձր տեխնոլոգիաների 4-րդ ամենամյա համաժողովը:

ՀՀ-ում էլեկտրոնային անձնագրերի և նույնականացման քարտերի համակարգի ներդրման նպատակով լեհական «PWPW SA» ընկերության հետ կնքվել է պայմանագիր և մեկնարկել են համակարգի ներդրման աշխատանքները: 2012 թվականին նախատեսվում է թողարկել առաջին էլեկտրոնային անձնագրերը և նույնականացման քարտերը:

ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել «Ինովացիոն տնտեսության ձևավորման մեկնարկային ռազմավարության հայեցակարգը», որով ներկայացվել են ազգային ինովացիոն համակարգի ձևավորմանն ուղղված նախաձեռնությունները:

Զբոսաշրջություն

2011 թվականին Հայաստան ներգնա զբոսաշրջային այցելություններն աճել են 10.3%-ով՝ կազմելով 757935:

Դելյուքս կարգի շքեղ հյուրանոցներում ներդրումների, առավել բարձր որակական պահանջներ ունեցող զբոսաշրջիկների ներգրավման նպատակով շրջանառության մեջ են դրվել օրենքների նախագծեր: Գառնիում գործարկվել է զբոսաշրջիկների տեղեկատվական կենտրոնը: Գործարկվել են Best Western Paradise հյուրանոցը Դիլիջանում, Ani Resort հյուրանոցը Հանքավանում:

«Հայաստան՝ Նոյի երկիր» վավերագրական ֆիլմը ձեռք է բերվել լեհական, չեխական, հունական, ֆրանսիական միջազգային հեռուստաալիքների կողմից: Հայաստանի զբոսաշրջային արդյունքը ներկայացվել է հինգ միջազգային հեղինակավոր զբոսաշրջային ցուցահանդես-տոնավաճառներում: Երևանում անց է կացվել «Հայաստանը խոսող քարերի երկիր» 11-րդ միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսը: 2011 թվականին տեղի ունեցավ ՄԱԿ-ի Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության գլխավոր քարտուղարի պաշտոնական այցը Հայաստան: Հոկտեմբերի 8-14-ը Հայաստանը մասնակցեց Կորեայում կայացած ՄԱԿ ԶՀԿ գլխավոր ասամբլեայի 19-րդ նստաշրջանին, որտեղ կայացավ զբոսաշրջային պաստառների Vettor Giusti ցուցահանդես–մրցույթը: Հայաստանը ներկայացնող պաստառը հաղթող ճանաչվեց «Ժողովրդի ընտրություն» անվանակարգում:

Մտավոր սեփականության պահպանություն

2011 թվականի ընթացքում իրականացվել են բնագավառի իրավական դաշտի կատարելագործմանն ուղղված աշխատանքներ: «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծն արդեն անցել է առաջին ընթերցումը: «Աշխարհագրական նշումների մասին» ՀՀ նոր օրենքին համապատասխան ՀՀ կառավարության որոշմամբ հաստատվել է «Աշխարհագրական նշման, ծագման տեղանվան և երաշխավորված ավանդական արտադրանքի հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգը: Մշակվել է «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որի ընդունումը կապահովի բնագավառում ԵՄ օրենսդրության հետ ներդաշնակեցումը և հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների արդյունավետ պահպանությունը: Մշակվել և ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 10-ի թիվ 22–11 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել «Հայաստանի Հանրապետության մտավոր սեփականության իրավունքների ռազմավարությունը»:

Գյուղատնտեսություն

Ելնելով ոլորտի առանձնահատկությունների և երկրի պարենային անվտանգության խնդիրներից՝ 2011 թվականին շարունակվել է գյուղատնտեսության պետական աջակցության քաղաքականությունը՝ ուղղված ագրարային ոլորտում իրավական հիմքի ձևավորմանը, գյուղատնտեսությունում տնտեսավարողների համար գործունեության և ներդրումների բարենպաստ պայմանների ապահովմանը, ենթակառուցվածքների զարգացմանը, սննդամթերքի անվտանգության համակարգի ու անտառային տնտեսության զարգացմանը:

Հանրապետության գյուղացիական տնտեսությունների, գյուղատնտեսությամբ զբաղվող այլ տնտեսավարող սուբյեկտների արդյունավետ գործունեության և վարվող քաղաքականության արդյունքում վերջին տարիներին գյուղատնտեսությունում ապահովվում է տնտեսական աճ: Սակայն համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամն իր ազդեցությունն ունեցավ նաև գյուղատնտեսության վրա, չնայած նրան, որ ճյուղը, ի տարբերություն տնտեսության մյուս ոլորտների, 2009 թվականին դրսևորեց հարաբերական կայունություն. գյուղատնտեսության համախառն արտադրանքը նախորդ տարվա նկատմամբ կրճատվեց 0.5%-ով: 2010 թվականին գյուղատնտեսությունում տնտեսական անկումը կազմեց 13.6%՝ պայմանավորված անբարենպաստ բնակլիմայական պայմաններով: 2011 թվականին գյուղատնտեսությունում գրանցվել են էական դրական տեղաշարժեր: Համախառն արտադրանքի աճը նախորդ տարվա նկատմամբ կազմել է 14.1%, որն ապահովվել է հիմնականում բուսաբուծության ճյուղի հաշվին:

Գյուղատնտեսությունում 2011 թվականին իրականացված քաղաքականությունը նպատակաուղղվել է ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքների մեղմմանը, գյուղատնտեսության ծավալների վերականգնմանը, ճյուղի և նրան սպասարկող ոլորտների գործունեության արդյունավետության բարձրացմանը և դրա հիման վրա գյուղատնտեսության հետագա զարգացման և ընդլայնված վերարտադրության համար պայմանների ստեղծմանը, գյուղացիական տնտեսությունների իրական եկամուտների ավելացմանը, հանրապետության պարենային ապահովության և պարենային անվտանգության մակարդակի բարձրացմանը, բնակչության աղքատության մակարդակի կրճատմանը: Գյուղական բնակավայրերում աղքատության կրճատումը մեծապես պայմանավորված է գյուղատնտեսության աճով:

Վերջին տարիներին ծրագրավորված աջակցություն է ցուցաբերվել տնտեսավարող սուբյեկտներին բարձրորակ սերմերի (հացահատիկ, կարտոֆիլ), տնկիների, հանքային պարարտանյութերի, բույսերի պաշտպանության միջոցների մատակարարման, բարձրադիր գոտիներում հացահատիկային մշակաբույսերի տարածքների ընդլայնման և ագրոտեխնիկայի բարելավման ուղղությամբ:

Սոցիալական ապահովագրություն և սոցիալական ապահովություն

2011 թվականին սոցիալական պաշտպանության քաղաքականության հիմնական ուղղություններն են հանդիսացել մատուցվող ծառայությունների, կենսաթոշակային ապահովության և տրամադրվող պետական աջակցության արդյունավետության, նպատակաուղղվածության և հասցեականության մակարդակի բարձրացման, հանրությանը մատուցվող ծառայությունները բնակչության համար ավելի մատչելի դարձնելու նպատակով բարեփոխումների և միջոցառումների իրականացումը:

Աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտում պետական քաղաքականության հիմնական նպատակն է երկրում աղքատության մակարդակի էական կրճատումը, արդյունավետ զբաղվածության և արժանապատիվ աշխատանքի պայմանների, ՀՀ բնակչության առանձին խմբերի համար սոցիալական երաշխիքների ապահովումը:

2011-2013թթ. ժամանակահատվածում սոցիալական պաշտպանության ոլորտում որպես հիմնական խնդիր է դիտարկվում ոլորտում պետական միջամտությամբ իրականացվող հիմնական ծառայությունների և տրանսֆերտների մակարդակի պահպանումը և դրանց շարունակականության ապահովումը:

<u>Աշխատանք և զբաղվածություն</u>

2011 թվականին զբաղվածության բնագավառի հիմնական և գերակա ուղղությունները երիտասարդների, հաշմանդամություն ունեցող անձանց աշխատաշուկայում մրցունակությունը բարձրացնելու, գյուղատնտեսական նշանակության հողի սեփականատեր հանդիսացող անձանց զբաղվածությունը խթանող ծրագրերի մշակումն ու ներդրումն էր՝ կարևորելով բնակչության արդյունավետ զբաղվածության ապահովումը:

Աշխատանքի ոլորտում ազգային քաղաքականությունը նպատակաուղված է անհատական աշխատանքային հարաբերությունների կատարելագործմանը, աշխատանքի անվտանգության և հիգիենայի պայմանների, սոցիալական գործընկերության զարգացման մակարդակի, աշխատանքի բնագավառում օրենսդրական դաշտի ընդլայնմանը և աշխատանքային իրավահարաբերությունների նկատմամբ հսկողություն իրականացնող մարմնի՝ աշխատանքի պետական տեսչության արդյունավետ գործունեության ապահովմանը:

Շարունակվել են աշխատանքի ոլորտը կանոնակարգող օրենսդրական բարեփոխումները: ՀՀ կենտրոնական բանկի հետ համատեղ 2011 թվականի ընթացքում մշակվել է «Հայաստանի Հանրապետությունում արտադրական դժբախտ դեպքերից և մասնագիտական հիվանդություններից ապահովագրության ներդրման» հայեցակարգը:

<u>Կենսաթոշակային ապահովություն</u>

Կենսաթոշակային ապահովության բնագավառում 2011 թվականին աշխատանքներ են տարվել հետևյալ ուղղություններով.

1. պետական կենսաթոշակային համակարգի բնականոն գործունեության ապահովում. աշխատանքներ են տարվել պետական կենսաթոշակային համակարգի գործունեությունն ապահովող ենթաօրենսդրական իրավական ակտերի մշակման ուղղությամբ.

2. կամավոր կենսաթոշակային ապահովագրության իրականացումն ապահովող կառուցակարգերի ամբողջացում. մշակվել և ընդունվել են կամավոր կենսաթոշակային ապահովագրության իրականացումն ապահովող ենթաօրենսդրական ակտերը (չնայած օրենսդրական դաշտի առկայությանը՝ կամավոր կենսաթոշակային ապահովագրության ծառայություններ չեն առաջարկում ոչ բանկերը, ոչ ներդրումային ֆոնդերը, ոչ ապահովագրական ընկերությունները),

3. կուտակային կենսաթոշակային հաշիվների վարումն ապահովող տեղեկատվական համակարգի ներդրում. 2011 թվականի ապրիլի 14-ին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության, eCSD Expert AS-ի և «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի միջև կնքված պայմանագրի

համաձայն՝ աշխատանքներ են տարվել կենսաթոշակային հաշիվների վարումն ապահովող տեղեկատվական համակարգի մշակման ուղղությամբ,

4. եկամտային հարկի և կուտակային վճարի անձնավորված հաշվառման համակարգի ներդրում. ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին, ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի և <<ԱՅՅՈՒՆԵԹՎՈՐՔՍ>> կազմակերպության միջև 2011 թվականի սեպտեմբերի 23-ին կնքված պայմանագրի համաձայն՝ մշակվել է եկամտային հարկի և կուտակային վճարի անձնավորված հաշվառման համակարգի տեխնիկական առաջադրանքը,

5. պետական կենսաթոշակային համակարգի միասնական տեղեկատվական շտեմարանի ներդրում. ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին մշակվել է պետական կենսաթոշակային համակարգի միասնական տեղեկատվական շտեմարանը (փորձարկումը և հիմնական ներդրումը նախատեսվում է 2012 թվականին),

6. պետական կենսաթոշակային համակարգի կառավարման էլեկտրոնային գործիքների ներդրում.

1) մեկ միասնական համակարգչային ցանցում ընդգրկվել են կենսաթոշակ նշանակող և ՔԿԱԳ տարածքային մարմինները,

2) մշակվել և հաստատվել են ՔԿԱԳ մարմիններից, բնակչության պետական ռեգիստրից և սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգից (ՍԷԿՏ) տեղեկատվությունը ինքնաշխատ եղանակով ստանալն ապահովող ՀՀ կառավարության որոշումներ,

3) ներդրվել է բնակչության պետական ռեգիստրից անձնագրային և բնակության վայրի մասին տվյալներն ինքնաշխատ եղանակով ստանալն ու կիրառելն ապահովող համակարգչային ծրագիր,

4) մշակվել և ներդրվել է ՔԿԱԳ մարմիններից քաղաքացիների մահվան վերաբերյալ տեղեկատվությունը ինքնաշխատ եղանակով ստանալն ապահովող համակարգչային ծրագիր,

7. կենսաթոշակների վճարման անկանխիկ համակարգի ներդրում. գործարկվել է կենսաթոշակների վճարման անկանխիկ համակարգը (կենսաթոշակը անկանխիկ եղանակով (բանկի միջոցով) ստանում է շուրջ 80000 կենսաթոշակառու):

8. առանձին կատեգորիաներին տրվող դրամական օգնությունների չափերի բարձրացում՝ հաշվի առնելով առկա միջոցները.

2011 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած օրենսդրական փոփոխությունների արդյունքում զինվորական կենսաթոշակներին տրվող հավելումները միավորվեցին դրամական օգնությունների հետ, ինչպես նաև հստակեցվեցին դրամական օգնություն ստացող անձանց կատեգորիաները:

Իրականացված հստակեցումների արդյունքում ավելացվեցին ՀՀ պաշտպանության ժամանակ կամ ծառայողական պարտականությունները կատարելիս հաշմանդամ դարձած զինծառայողներին տրվող գումարները (կենսաթոշակի և դրամական օգնության հանրագումարը):

Միաժամանակ, 2011 թվականի սեպտեմբերի 1-ից

1) ՀՀ պաշտպանության ժամանակ կամ ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված զինծառայողների շուրջ 5300 ընտանիքներին տրվող դրամական օգնության չափը 10000 դրամի փոխարեն սահմանվեց 30000 դրամ, որին լրացուցիչ տրվում է յուրաքանչյուր երեխայի (շուրջ 1300 երեխա) համար 20000 դրամ,

2) Հայրենական մեծ պատերազմին և այլ պետություններում մարտական գործողություններին մասնակցելու հետևանքով հաշմանդամ դարձած շուրջ 4000 անձի տրվող դրամական օգնության չափը բարձրացվեց 5000 դրամով,

3) Հայրենական մեծ պատերազմի շուրջ 2800 վետերաններին տրվող ամենամսյա պատվովճարի չափը բարձրացվեց 5000 դրամով (20000 դրամի փոխարեն կազմելով 25000 դրամ):

<u>Սոցիալական աջակցություն</u>

Սոցիալական աջակցության քաղաքականությունն իրականացվել է հետևյալ ուղղություններով՝

- պետական նպաստների տրամադրում (ընտանեկան նպաստ, երեխայի ծննդյան միանվագ նպաստ, մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ, զոհված ազգային հերոսի կամ Մարտական խաչ շքանշանով հետմահու պարգևատրված անձի ընտանիքներին նպաստ, ավանդների դիմաց փոխհատուցում),
- սոցիալական ծառայությունների մատուցում,
- ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման համակարգի ներդրում՝ մեկ ընդունարանի սկզբունքով:

2011 թվականին սոցիալական պաշտպանության ենթաոլորտի հիմնական և գերակա ուղղություններով պետական քաղաքականության շրջանակներում մշակվել է նպաստների չափերի աճը, դրանց հասցեականությունը մեծացնելն ապահովող քաղաքականություն:

2011 թվականին պետական նպաստների բնագավառում կատարված փոփոխությունները հիմնականում նպատակ են ունեցել մեծացնել ծրագրերի հասցեականությունը՝ պահպանելով սոցիալական աջակցության տրամադրման սկզբունքները, ապահովել անհրաժեշտ տեղեկությունների առցանց եղանակով ստանալու մեխանիզմների ներդրումը:

ՀՀ ԱՎԾ 2010 թվականին տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության տվյալների համաձայն ընտանեկան նպաստի ազդեցությունը աղքատության

մակարդակի վրա կազմում է 3.6 տոկոսային կետ, այսինքն՝ ընտանեկան նպաստի ծրագրի բացակայության դեպքում 2010 թվականին աղքատության մակարդակը կդառնար 39.4%, առկա 35.8%-ի դիմաց, իսկ ծայրահեղ աղքատությունը՝ 6.8%, առկա 3%-ի դիմաց:)

ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի «ՀՀ կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N1763-Ն որոշմամբ ապահովվել է «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքի կիրառումը ընտանեկան նպաստի, իսկ ««Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով 2011 թվականի հուլիսից՝ նաև երեխայի ծննդյան միանվագ, ինչպես նաև մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստների իրավունքի իրացման ժամանակ: Միաժամանակ, 2011 թվականի փետրվար-մարտ ամիսների ընթացքում սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմիններն (այսուհետ՝ ՍԾՏՄ) ապահովվել են ինտերնետ/ինտրանետ կապով, որի արդյունքում 2011 թվականի ապրիլից պետական նպաստների իրավունքի որոշման ժամանակ բնակչության պետական ռեգիստրից պահանջվող տեղեկությունները ստացվում են առցանց եղանակով՝ ազատելով քաղաքացիներին տեղեկանք ներկայացնելու պարտավորությունից: ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N 1763-Ն որոշմամբ ամբողջությամբ վերանայվել է ընտանիքների անապահովության գնահատման ժամանակ կիրառվող՝ անասնապահությունից ստացվող եկամուտի հաշվարկման կարգը՝ նպատակ ունենալով աղքատ ընտանիքներին անասնապահությամբ զբաղվելու որոշակի դեպքերում պահպանելու ընտանեկան նպաստի իրավունքը (սահմանվել է ընտանիքի ամբողջական եկամտի կազմում անասնապահությունից ստացվող եկամտի չհաշվարկման շեմ):

ՀՀ Կառավարության 2010 թվականի հունիսի 17-ի նիստի «Պետական նպաստների համակարգում տեղեկատվության հավաքագրման արդյունավետության մեծացման միջոցառումների ժամանակացույցին հավանություն տալու մասին» N23 արձանագրային որոշմամբ սահմանված աշխատանքների արդյունքում մեծացել է ընտանիքների անապահովության գնահատման համակարգի և այլ (ՀՀ ԿԱ ոստիկանության ճանապարհային ոստիկանության, ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստի, ինչպես նաև քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալությունների, ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության) տեղեկատվական բազաների համադրելիության աստճանը և ստեղծվել են 2012 թվականից այդ տեղեկատվական բազաներից առցանց եղանակով տեղեկություններ ստանալու մեխանիզմներ:

ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 24-ի «Ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման համակարգի ներդրման միջոցառումների ծրագիր-

ժամանակացույցին հավանություն տալու մասին» N11 արձանագրային որոշմամբ 2011 թվականին սկսվել են ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման համակարգի ներդրման աշխատանքները, նախատեսվել են 6 խումբ աշխատանքներ, որոնց շրջանակներում 4 մարզերում (Կոտայքի, Լոռու, Տավուշի, Արարատի) և Երևան քաղաքում 6 ՍԾՏՄ-ներում իրականացվել է սոցիալական դեպքի վարման փորձնական ծրագիր (ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի աջակցությամբ):

Համաշխարհային բանկի Սոցիալական պաշտպանության վարչարարության ծրագրի աջակցությամբ իրականացվել են ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման կառուցվածքագործառութային մոդելի մշակման, տեղեկատվական շտեմարանների արդիականացման, տեղեկատվության առցանց փոխանակման համակարգի մշակման և ներդրման, հեռահաղորդակցության ենթակառուցվածքի բարելավման աշխատանքներ: ՀՀ կառավարության 2011 թվականի հուլիսի 28-ի N 29 արձանագրային որոշմամբ հավանություն է տրվել ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման համար անհրաժեշտ շենքերի (այդ թվում՝ միասնական ընդունարանների) տեղակայման վայրերին և պայմաններին:

Իրականացվել են ավելի քան 5 ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման համար անհրաժեշտ շենքերի (այդ թվում՝ միասնական ընդունարանների) նախագծանախահաշվային մշակման աշխատանքներ: Վերանորոգման, վերազինման աշխատանքներն իրականացվելու են 2012 թվականին:

<u>Հաշմանդամների և տարեցների հիմնահարցեր</u>

Ելնելով «Հաշմանդամների սոցիալական պաշտպանության 2006-2015թթ. ռազմավարության» դրույթներից, 2011 թվականի ընթացքում շարունակվել են աշխատանքները հաշմանդամներին հասարակությանն ինտեգրման ուղղությամբ:

Հաշմանդամների սոցիալական պաշտպանության բնագավառում իրականացվել են միջոցառումներ հանրապետությունում նպատակաուղղված հաշմանդամության սոցիալական մոդելի ներդրման, հաշմանդամների սոցիալական ներառման, հավասար իրավունքների ու հավասար հնարավորությունների ապահովման, հասարակական կյանքի բոլոր բնագավառներում հաշմանդամների համար մատչելի միջավայրի ստեղծման, նրանց բժշկասոցիալական վերականգնման, կրթական ու զբաղվածության ծրագրերի իրականացման, պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաներով ապահովման և այլ ծառայությունների տրամադրման ուղղությամբ:

Մշակվել է «Աշխատունակության կորստի աստիճանի որոշման հիման վրա հաշմանդամության սահմանման մոդելին անցնելու հայեցակարգը և հայեցակարգի իրականացումն ապահովող միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը, որը հաստատվել է 2011 թվականի դեկտեմբերի 8-ին՝ թիվ 48 արձանագրային որոշմամբ:

Մշակվել է նաև «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

Հաշմանդամների մասնագիտական վերականգնողական ծրագրերի շրջանակներում մասնագիտական ուսուցման եզրակացություններ են տրվել 50 հաշմանդամ-դիմորդների՝ բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորելու համար:

Տարվա ընթացքում իրականացվել են մի շարք ծրագրեր, որոնք հաշմանդամություն ունեցող անձանց համար ապահովում են հավասար պայմաններ և նպաստում նրանց ինտեգրմանը հասարակություն: Մասնավորապես՝ նրանց տրամադրվել են պրոթեզաօրթոպեդիկ պարագաներ, իրականացվել է բժշկասոցիալական և հոգեկան առողջության վերականգնում, լսողական և տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար մի շարք ծրագրեր և այլն:

2011 թվականին վերականգնողական բուժում է ստացել 979 հաշմանդամ, հատկացվել է 15318 պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագա, այդ թվում աչքի պրոթեզավորում է ստացել 90 և ձայնաստեղծ սարքերով ապահովվել 100 հաշմանդամ:

Տարեցների ենթաոլորտում «Խնամքի կարիք ունեցող 18 տարեկանից բարձր տարիքի անձանց խնամքի ծառայություններ» ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- Տարեցներին շուրջօրյա խնամքի ծառայություններ,
- Տնային պայմաններում միայնակ տարեցների սոցիալական սպասարկում,
- Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ցերեկային խնամքի ծառայություններ,
- Անօթևան մարդկանց համար ժամանակավոր օթևանի տրամադրման ծառայություններ,
- ՀՀ մարզերում միայնակ տարեցներին, հաշմանդամներին տնային պայմաններում և տարեցների ցերեկային խնամքի կենտրոններում սոցիալական սպասարկում,
- Բռնադատվածների բնակարանային պայմանների բարելավում,
- Բռնադատված քաղաքացիներին պատճառված վնասի դիմաց միանվագ դրամական փոխհատուցում:

<u>Ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցեր</u>

Ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի բնագավառում շարունակվել է երեխաների իրավունքների պաշտպանության համակարգի հզորացման, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների պաշտպանության, ինչպես նաև կանանց վիճակի բարելավմանը և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման, թրաֆիքինգի երևույթի կանխարգելմանն ուղղված քաղաքականության իրականացումը:

Այդ կապակցությամբ քաղաքականություն իրականացվել է հետևյալ ուղղություններով՝

- երեխաների տուն-ինտերնատներում շուրջօրյա խնամքի ծառայություններ,
- երեխաների խնամքի ու պաշտպանության գիշերօթիկ հաստատություններում շուրջօրյա խնամքի ծառայություններ,
- երեխաների ցերեկային հոգածության կենտրոններում ռիսկի խմբի երեխաներին և նրանց ընտանիքներին ծառայություններ,
- մանկական խնամակալական հաստատություններից կենսաբանական ընտանիք երեխաների վերադարձ և կանխարգելում խնամակալական կազմակերպություններ անապահով երեխաների մուտքը,
- պետական աջակցություն ՀՀ-ում մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին,
- երեխաներին խնամատար ընտանիքի խնամքի հանձնում,
- թրաֆիքինգի զոհերին պետական աջակցություն:

<u>Ժողովրդագրության հիմնահարցեր</u>

Կատարված աշխատանքներն ուղղված են եղել ժողովրդագրական իրավիճակի և զարգացումների վերաբերյալ հետազոտությունների իրականացմանը, ժողովրդագրական տեղեկատվության համակարգի ներդրմանը, ծնունդների խրախուսման նոր մոտեցումների առարկայացմանը, ժողովրդագրական զարգացման ընթացքի մոնիթորինգի միասնական համակարգի ստեղծմանը և դրանց համար անհրաժեշտ իրավական հենքի ձևավորմանը:

Ըստ այդմ, մշակվել և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հրամանով հաստատվել է «Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական իրավիճակի բարելավման ամենամյա պետական ծրագրի մոնիթորինգի իրականացման կարգը», որի նպատակն է ժողովրդագրական իրավիճակի բարելավման ամենամյա պետական ծրագրում ընդգրկված միջոցառումների ազդեցության գնահատումը և ժողովրդագրական իրավիճակի բարելավման նպատակով առաջարկությունների ներկայացումը:

Հաշվետու տարում իրականացվել է ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի միջոցներով իրականացվող ծրագրերի ժողովրդագրական փորձաքննության վերլուծություն:

Իրականացվել է «ՀՀ գյուղական երիտասարդության շրջանում ընտանիքի ձևավորման և կայացման խնդիրների, սոցիալական ոլորտում գործող իրավական ակտերի բավարարության և կիրարկման դժվարությունների բացահայտում» ընտրանքային հետազոտությունը:

Հանրապետությունում ծնունդների խրախուսման նոր համակարգի ներդրման նպատակով մշակվել է «Երեք և ավելի երեխա ունեցող ընտանիքներին պետական աջակցության տրամադրման հայեցակարգին և հայեցակարգի իրականացումն ապահովող միջոցառումների ժամանակացույցին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության արձանագրային որոշման նախագիծը:

ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի աջակցությամբ նախագծվել և ստեղծվել է ժողովրդագրական տեղեկատվական համակարգը, որը պարունակում է ինչպես վիճակագրական, այնպես էլ ժողովրդագրական իրավիճակի բարելավման ամենամյա պետական ծրագրով նախատեսված միջոցառումների վերաբերյալ տվյալներ՝ ըստ տարիների:

Տարածքային կառավարում

ՀՀ կառավարության 2008 թվականի ապրիլի 28-ի թիվ 380-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության գործունեության ծրագրի և ՀՀ Նախագահի 2009 թվականի մայիսի 6-ի «Եվրոպական հարևանության քաղաքականության Հայաստանի Հանրապետություն-Եվրոպական Միություն գործողությունների ծրագրի կատարումն ապահովող 2009-2011 թվականների միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՆԿ-68-Ա կարգադրության պահանջների կատարման նպատակով մշակվել և ՀՀ կառավարության 30 կողմից հավանության է արժանացել ՀՀ տարածքային զարգացման հայեցակարգը: Մշակվել է նաև «ՀՀ տարածքային զարգացման հայեցակարգից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

2011 թվականին առաջին անգամ իրականացվել է ներկայացված միասնական մոտեցումներին համապատասխան բոլոր 10 մարզերի զարգացման ծրագրերի կիսամյակային մոնիթորինգ:

Վարչական հսկողության կանոնակարգման և բոլոր մարզերի համար միասնականացման նպատակով 2011 թվականի ընթացքում մշակվել է վարչական հսկողության իրականացման և կադրային գործի վարման մեթոդական ուղեցույցի նախագիծ:

Շարունակվել է համագործակցությունը երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառում գործող միջազգային կառույցների (Save the children, Wold vision և UNICEF) հետ:

Առողջապահություն

Առողջապահության ոլորտում ՀՀ կառավարության առաջնահերթ ռազմավարական նպատակներն են՝ բնակչության հիգիենիկ և համաճարակային անվտանգության ապահովումը, բնակչության առողջության առաջնային պահպանումը, մոր և մանկան առողջության պահպանումը, բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված անձանց բժշկական օգնության տրամադրումը, սոցիալական և հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների բուժօգնության ապահովումը, դեղագործական գործունեության կազմակերպումը, բնակչությանը անվտանգ, արդյունավետ և որակյալ դեղերով ապահովումը:

Բնակչության հիգիենիկ և համաճարակային անվտանգության ապահովում

Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովումը պետական կարևորագույն խնդիրներից է և երաշխավորվում է «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

2011 թվականի ընթացքում շարունակվել է Հայաստանի Հանրապետությունում վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի և կանխարգելման գործընթացը կանոնակարգող օրենսդրական փաստաթղթերի մշակումը և դրանց գործադրումը՝ պայմանավորելով նպատակային քաղաքականությունը: Ոլորտը կանոնակարգող մի շարք գործընթացներ են իրականացվել երկրում Միջազգային առողջապահական (բժշկասանիտարական) կանոնների ներդրման շրջանակներում: Զգալի են հանրապետության նվաճումները կառավարելի վարակիչ հիվանդությունների կանխարգելման և դրանց դեմ պայքարի գործընթացներում, ինչը արդյունք է իմունականխարգելման ոլորտում իրականացված բազմաձավալ միջոցառումների:

2011 թվականին չեն արձանագրվել այնպիսի վարակիչ հիվանդություններ, ինչպիսիք են դիֆթերիան, սուր պոլիոմիելիտը, կարմրախտը, մալարիան, կատաղությունը, սիբիրյան խոցը, խոլերան, լեպտոսպիրոզը, ռիկետցիոզները (այդ թվում բծավոր տիֆ, Բրիլլի հիվանդություն) և այլն, մենինգակոկային վարակների հիվանդացությունը 2011 թվականին 2010 թվականի համեմատ զգալիորեն իջել է: Հայաստանն՝ ի թիվս եվրոպական այլ երկրների, ՄԱԿ-ի Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից դեռևս 2002 թվականից հավաստագրվել է և շարունակում է մնալ որպես պոլիոմիելիտից ազատ գոտի:

Մալարիայի դեմ բազմոլորտ և համակարգված հետևողական պայքարի արդյունքում 2006 թվականից երկրում մալարիայի տեղական դեպքեր չեն գրանցվել: Հայաստանը եվրոպական

տարածաշրջանի առաջին երկրներից մեկը դարձավ, որին հաջողվեց էլիմինացնել տեղական մալարիան երկրի տարածքում և 2011 թվականին Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից վկայագրվել որպես մալարիայից ազատ տարածք:

Հանրապետությունում այսօր ներդրվել է գրիպի համաճարակաբանական նոր, գործուն համակարգ, որը հնարավորություն է ընձեռում հանրապետությունում ժամանակին և լիարժեք կազմակերպել և իրականացնել կանխարգելիչ ու հակահամաճարակային համալիր միջոցառումներ՝ ուղղված գրիպի և սուր շնչառական վարակների տեղայնացմանը: 2011 թվականին գրիպի սեզոնի ընթացքում նշված հիվանդությունների աճ չի գրանցվել:

ՀՀ բնակչության առողջության պահպանման, վարակիչ, մասնագիտական, զանգվածային ոչ վարակիչ հիվանդությունների ու թունավորումների կանխարգելման, մարդու օրգանիզմի վրա շրջակա միջավայրի վնասակար ու վտանգավոր գործոնների ազդեցության բացառման նպատակով ՀՀ տարածքում գործող իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից սանիտարական օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ իրականացվող տեսչական ստուգումների անաչառության և օբյեկտիվության բարձրացման և անհարկի, չհիմնավորված ստուգումների բացառումն ապահովելու համար ՀՀ առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչությունն ընդգրկված է ՀՀ-ում տեսչական բարեփոխումների պիլոտային ծրագրում:

<u>Բնակչության առողջության առաջնային պահպանում</u>

Որպես առաջնահերթություն շարունակվել է առողջության առաջնային պահպանման ոլորտի զարգացումը՝ որպես առողջապահության համակարգի բարեփոխումների հիմք և բնակչությանը ցուցաբերվող բժշկական օգնության մատչելիությունն ապահովող հիմնական օղակ: Առաջնային օղակում իրականացվող բուժօգնության և մատուցվող ծառայությունների որակի բարելավման նպատակով շարունակել են իրենց գործունեությունը ՀՀ մարզերում, իսկ Երևանում ստեղծվել են որակի վերահսկման խորհուրդներ ու որակի համակարգողներ, որոնք կատարել են աջակցող վերահսկման այցելություններ իրենց ամրագրված ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատություններ, կատարել որակի մոնիթորինգ և արդյունքների մասին զեկուցել ՀՀ մարզային և Երևանի քաղաքապետարանի առողջապահական ծառայություններին:

Առաջնային օղակում իրականացվող բժշկական օգնության և սպասարկման որակի բարելավման նպատակով հաստատվել է ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական ծառայությունների կատարողականի գնահատման հիման վրա ֆինանսավորման և խրախուսող վարձատրման կարգը: Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական ծառայությունների

կատարողականի հիման վրա ընտանեկան բժիշկների, թերապևտների և մանկաբույժների և նրանց բուժքույրերի խրախուսական վարձատրության մեթոդներն ու ընթացակարգերը ներդրված են:

Շարունակվել է բնակչի կողմից առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկի ազատ ընտրության գործընթացը, որի ընդգրկումը 2011 թվականին պահպանվել է նախկին՝ 85%-ի մակարդակին:

Բնակչությանը տրամադրվող առաջնային բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատչելիության բարձրացման նպատակով ՀՀ առողջապահության նախարարի 07.07.2011թ. N1318-Ա հրամանով դադարեցվել է ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական հաստատությունների կողմից քաղաքացիներին տեղեկանքների տրամադրումը, դրանց փոխարեն առաջնային օղակի բժշկի կողմից (տեղամասային թերապևտ, ընտանեկան բժիշկ) անվճար տրվում է քաղվածք ամբուլատոր քարտից՝ ահնրաժեշտության դեպքում կազմակերպելով անվճար մասնագիտական խորհրդատվություն և լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտություններ:

ՀՀ կառավարության 24.03.2011թ. նիստի N11 արձանագրային որոշմամբ հաստատվել են «Առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների (շաքարային դիաբետ, սիրտանոթային հիվանդություններ, չարորակ նորագոյացություններ) վաղ հայտնաբերման և կանխարգելման ծրագրերը» և միջոցառումների ցանկերը, որոնց համաձայն ՀՀ առողջապահության նախարարի հրամանով ստեղծվել են աշխատանքային խմբեր՝ առողջապահության համակարգում «Շաքարային դիաբետի դեմ պայքարի ծրագրի» ներդրման գործողությունների պլանի և ժամանակացույցի մշակման նպատակով, և «Ըստ առանձին տեղակայումների չարորակ նորագոյացությունների վաղ հայտնաբերման, կանխարգելման և բուժման իրականացման ծրագիրը»: 2011 թվականից գործում է շաքարային դիաբետով և հիպերտոնիայով հիվանդների ռեեստրը:

Շտապօգնության ծառայությունների կողմից մատուցվող բժշկական օգնության որակի բարելավման, ինչպես նաև կյանքին վտանգ սպառնացող իրավիճակներում ցուցաբերվող անհետաձգելի բուժօգնության միասնական մոտեցումներ ապահովելու նպատակով մշակվել և հաստատվել են «Կյանքին վտանգ սպառնացող իրավիճակներում շտապ բժշկական օգնության բժշկի կողմից ցուցաբերվող անհետաձգելի բուժօգնության միջոցառումների» 15 գործելակարգեր:

<u>Մոր և մանկան առողջության պահպանում</u>

Մոր և մանկան առողջության պահպանումն առողջապահության ոլորտի կարևոր առաջնահերթություններից է: 2011 թվականին շարունակաբար կարևորվել է կանանց և երեխաների բժշկական օգնության կազմակերպման անհրաժեշտ ծավալների և մատչելիության, ինչպես նաև

հիվանդությունների կանխարգելման միջոցառումների ապահովումը՝ ուղղված երեխաների և մայրերի մահացության ու հիվանդացության ցուցանիշների նվազմանը:

Շարունակաբար ներդրվել է ծննդօգնության պետական հավաստագրի ծրագիրը, որն ուղղված է կանանց համար առավել մատչելի և իրապես անվճար ծննդօգնության ծառայությունների մատուցմանը:

Ծրագրի ներդրման արդյունքում արձանագրվել են դրական միտումներ ինչպես ծառայությունների որակական ցուցանիշների (հղիների նախածննդյան հսկողության և վաղ հաշվառման ցուցանիշի աճ շուրջ35 %-ով, մանկական մահացության կառուցվածքում վաղ նորածնային մահացության դեպքերի կրճատում ավելի քան 10%-ով, մայրական մահացության դեպքերի զգալի կրճատում. 2008թ.՝ 15դեպք, 2009թ.՝ 13 դեպք, 2010թ.՝ 3 դեպք, 2011թ.՝ 3 դեպք, հիմնականում ոչ մանկաբարձական պատճառներով), այնպես էլ մատչելիության բարելավման առումով: Ըստ USAID-ի NOVA ծրագրի կողմից 2009թ. իրականացված անկախ հետազոտության տվյալների, ծննդօգնության հաստատություններում ոչ պաշտոնական վճարումները կրճատվել են 4 անգամ (մինչև 2008թ. հուլիսի 1-ը՝ 91%, 2009թ. 24%): Առավել տպավորիչ են ժողովրդագրական առողջապահական հարցերի 2010 թվականի հետազոտության արդյունքները, որը վկայում է, որ հանրապետությունում ծննդօգնության ծառայությունների հետ կապված ստվերը կրճատվել է ավելի քան 10 անգամ, ընդ որում, այն առավել կրճատվել է գյուղական բնակչության շրջանում (գյուղերում՝ 16 անգամ, քաղաքներում՝ 7.7 անգամ):

2011 թվականի հունվարի 1-ից առողջապահության ոլորտում ներդրվել է 0-7 տարեկան երեխաների հիվանդանոցային բուժօգնության մատչելիության Երեխայի առողջության պետական հավաստագրի համակարգը: Ծրագրի ներդրման արդյունավետության գնահատման նպատակով Հայաստանի ամերիկյան համալսարանի կողմից իրականացվել է հետազոտություն տնային տնտեսություններում՝ հիվանդանոցային բուժում ստացած երեխաների խնամողների հետ հարցազրույցների անցկացման մեթոդով: Ծրագրի նախնական և ընթացիկ (6 ամիս անց) գնահատման արդյունքները վկայում են ոչ պաշտոնական վճարների ավելի քան 4-5 անգամ կրճատման մասին: Հարցմանը մասնակից և հավաստագրերից օգտված մայրերի 79%-ը Երևանում և 91%-ը մարզերում նշել են, որ գոհ են մատուցված ծառայություններից, քանի որ ստացել են անվճար բուժօգնություն: Ծրագրի ներդրման ադյունավետության և մանկական հիվանդանոցային ծառայությունների մատչելիության բարձրացման մասին է վկայում նաև հիվանդանոց դիմելիության աճը շուրջ 20 տոկոսով:

2011 թվականի ընթացքում շարունակվել են իրականացվել երեխաների մահացության, հիվանդացության և հաշմանդամության կանխարգելմանն ուղղված, ինչպես նաև

ֆենիլկետոնուրիայի, հիպոթիրեոզի և լսողության նորածնային սկրինինգի իրականացման ծրագրերը: Իրականացվել են մի շարք ծրագրեր՝ երեխաների ստոմատոլոգիական առաջնային կանխարգելման, աղջիկների վերարտադրողական առողջության գնահատման ու բուժման, խրոնիկ հիվանդ և հաշմանդամ երեխաների վերականգնողական բուժման ուղղությամբ:

Միջազգային համագործակցության շրջանակներում որոշակի աշխատանք է կատարվել երեխաների և կանանց բժշկական օգնության որակի բարելավման, մասնագետների գիտելիքների բարձրացման, բուժհաստատությունների նյութատեխնիկական հագեցվածության բարձրացման, կարողությունների հզորացման, մանկական և մայրական մահացության նվազեցման, անպտուղ ամուսնության հիմնախնդրի հաղթահարման ուղղությամբ:

Բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված անձանց բժշկական օգնության տրամադրում, սոցիալական և հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների բուժօգնության ապահովում

Սոցիալական կախվածություն և հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների վաղ հայտնաբերումը, հիվանդների բուժօգնության կազմակերպումը և շարունակական հսկողությունը, բնակչության շրջանում առողջ ապրելակերպի և հիգիենայի վերաբերյալ գիտելիքների քարոզչությունը սկզբունքային նշանակություն ունի բնակչության առողջության պահպանման հարցում, նպատակն է՝ բնակչության աղքատ խավերի, սոցիալապես անապահով առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված անձանց բժշկական օգնության և սպասարկման մատչելիության բարձրացումը և առավելագույն ապահովումը:

Կարևոր է նաև սոցիալական առումով հատուկ նշանակություն ունեցող և անապահով բնակչության համար մեծ ռիսկ ներկայացնող այնպիսի հիվանդությունների դեմ պայքարի արդյունավետությունը, կանխարգելումը և հետագա տարածումը, ինչպիսիք են հոգեկան, նարկոլոգիական, ինֆեկցիոն, սեռական ճանապարհով փոխանցվող, արյունաբանական (այդ թվում՝ օնկոհեմոտոլոգիական) հիվանդությունները, ախտորոշված չարորակ նորագոյացությունները, վերակենդանացման և անհետաձգելի միջոցառումներ պահանջող հիվանդությունները և վիճակները, մալարիան, տուբերկուլյոզը, ՄԻԱՎ-ը և այլն:

Դեղագործական գործունեության կազմակերպում, դեղերով և տեխնոլոգիաներով ապահովում

Բնակչությանը պատշաճ որակի բժշկական օգնության և սպասարկման ծառայություն մատուցելու գործում կարևոր նշանակություն ունի ՀՀ-ում անվտանգ, արդյունավետ և որակյալ դեղերի առկայությունը և դրանց մատչելիությունը՝ համապատասխան տեսականիով (ՀՀ հիմնական

դեղերի ցանկ): 2011 թվականին կարևորվել է ՀՀ հիմնական դեղերի ցանկում առկա, բայց ՀՀ-ում չգրանցված և ցածր պահանջարկ ունեցող, սակայն կենսականորեն անհրաժեշտ դեղերի ՀՀ-ում առկայության ապահովման նպատակով դրանց պետական գրանցումը:

2011 թվականին կարևորվել է կենտրոնացված կարգով ձեռքբերվող դեղերի անվանացանկի համալրումը նորագույն բուժման սխեմաների համար անհրաժեշտ դեղերով, պարբերաբար իրականացնվել են դեղագործական շուկայում դեղերի գների ուսումնասիրություններ, որը հնարավորություն է տվել բժշկական հաստատությունների կողմից բնակչությանն անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղերով ապահովելիս վերահսկել դրանց գները:

ՀՀ-ում դեղերի արտադրության ոլորտը կանոնակարգելու նպատակով մշակվել և ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 26-ի թիվ 734-Ն որոշմամբ հաստատվել է «Դեղերի պատշաճ արտադրական գործունեության կանոնները Հայաստանի Հանրապետությունում ներդնելու և դեղերի շրջանառության ոլորտում բարեփոխումներ իրականացնելու մասին» ժամանակացույցը:

Մշակվել է «Դեղերի արտադրության լիցենզիաներ տրամադրելու նպատակով փորձաքննության իրականացման լիցենզավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

Հաշվի առնելով դեղերի ոլորտում տարվող քաղաքականությունը և ակնկալվող բարեփոխումները՝ շրջանառության մեջ է դրվել «Դեղերի մասին» նոր օրենքի նախագիծը, որով կկարգավորի Հայաստանի Հանրապետությունում դեղերի, ինչպես նաև կենսակտիվ հավելումների շրջանառության հետ կապված հարաբերությունները՝ բնակչությանն անվտանգ, արդյունավետ, որակյալ, մատչելի դեղերով և դրանց մասին հավաստի տեղեկատվությամբ ապահովելու նպատակով:

Կրթություն և գիտություն

ՀՀ կրթության բնագավառի 2011 թվականի գերակա խնդիրներն են եղել նախադպրոցական կրթության մատչելիության բարձրացումը, հանրակրթության ոլորտի բարեփոխումները, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության զարգացումը, բարձրագույն կրթության բարեփոխումները՝ ըստ Բոլոնիայի գործընթացի հիմնական ուղղությունների:

Կարևորելով նախադպրոցական կրթության դերը, երեխաների համակողմանի զարգացման և դպրոցական կրթության համար հավասար մեկնարկային պայմաններ ստեղծելու նպատակով, Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2008 թվականին հաստատել է «Հայաստանի Հանրապետությունում նախադպրոցական կրթության բարեփոխումների 2008-2015թթ.

ռազմավարական ծրագիրը», որը ծախսարդյունավետ կրթական ծառայությունների ներդրման միջոցով նպատակադրում է մինչև 2015 թվականը ավագ նախադպրոցական տարիքային խմբի (5-6 տարեկանների) ընդգրկվածությունը հասցնել մինչև 90%: Ծրագրում առաջնայնությունը տրվում է աղքատ ընտանիքներին և այն համայնքներին, որտեղ նախադպրոցական հաստատություններ չեն գործում:

«Կրթության որակ և համապատասխանություն» 2-րդ վարկային ծրագրի շրջանակում նախադպրոցական կրթության դրամաշնորհային միկրոծրագրերի իրականացումը գերակատարվել է. նախատեսված 70-ի փոխարեն ներդրվել է 83 նախադպրոցական ծառայություն: Միկրոծրագրերն իրականացվել են ՀՀ Սյունիքի մարզի՝ 17, Վայոց Ձորի մարզի՝ 22, Արմավիրի մարզի՝ 23 և Գեղարքունիքի մարզի 21 համայնքներում: Ներկայումս նշված համայնքների հաստատություններում ընդգրկված է շուրջ 2000 երեխա: Շարունակվել է նաև 2010 թվականից սկսված՝ ՀՀ Արագածոտնի մարզի 19 և ՀՀ Արարատի մարզի 22 համայնքների հաստատություններում նախադպրոցական կրթության միկրոծրագրերի իրականացումը: 41 հաստատություններ ստացել են տեխնիկական աջակցություն:

Այլընտրանքային մոդելներով վերապատրաստվել են 5-6 տարեկանների նախադպրոցական կրթության ծրագրեր իրականացնող հաստատությունների թվով 324 ղեկավար և մանկավարժական կադրեր: Հրատարարակվել է «Ծննդից մինչև վեց տարեկան երեխաների զարգացման և կրթական չափորոշիչները» ձեռնարկը, որը բաշխվել է ՀՀ մարզերի գյուղական և քաղաքային համայնքների նախադպրոցական հաստատություններին:

Համաձայն «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի, 2010-2012թթ. գերակա ուղղություններն են 12-ամյա կրթության դասագրքերի, ուսումնաօժանդակ գրականության ստեղծման և ներդրման աշխատանքները, ինչպես նաև հանրակրթական ուսումնական հաստատությունների ղեկավարների հավաստագրումը, ուսուցիչների ատեստավորումը և տեղեկատվական հեռահաղորդակցման տեխնոլոգիաների ներդրումը:

2011 թվականին ավարտվել է առանձին գործող ավագ դպրոցների ցանցի ձևավորման գործընթացը, որն ուղղված է ապահովելու հոսքային ուսուցման կազմակերպումը՝ սովորողների հակումներին ու նախասիրություններին համապատասխան, և նախապատրաստելու մասնագիտական կրթություն ստանալուն: Ներկայումս առանձին գործող ավագ դպրոցների թիվը կազմում է 107:

Առանձին գործող ավագ դպրոցների հզորացման նպատակով 2009-2010 թվականներին վերակազմավորված 83 ավագ դպրոցներում հիմնվել են համակարգչային ուսումնական կենտրոններ, որոնք վերազինվել են համապատասխան գրասեղաններով, համակարգչային

սեղաններով, շարժական գրապահարաններով, աթոռներով, համակարգչային սարքավորումներով, ակտիվ գրատախտակներով: Իրականացվել է նաև «Հեռավար ուսուցում» («learning.armedu.am») համակարգի շահագործումը, որում կազմակերպվել են ավագ դպրոցի 10-րդ դասարանի խորացված հոսքի ութ ուսումնական առարկաների (Հայոց լեզու, Ռուսաց լեզու, Օտար լեզու (Անգլերեն), Հանրահաշիվ, Ֆիզիկա, Քիմիա, Կենսաբանություն, Հայոց պատմություն) հեռավար դասընթացների մշակման աշխատանքները, ուսուցիչների և աշակերտների խմբերի համար կազմակերպվել են «Գրաֆիկական խմբագրիչ ծրագրի ուսուցում», «Դպրոցի տեղային ցանցի շահագործման հմտությունների ուսուցում», «Գրաֆիկական ծրագրի ուսուցում» դասընթացները:

Հանրակրթության ոլորտի բարեփոխումները պայմանավորված են եղել նաև համակարգի կառավարման արդյունավետության և կարողությունների հզորացման բարձրացմանն ուղղված միջոցառումներով: Հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) համար վերապատրաստման դասընթացների մասնակցել է 1558 հավակնորդ: Հավաստագրման քննություններին մասնակցել են 1635-ը, որոնցից հավաստագիր են ստացել 1362-ը:

Հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչների ատեստավորման գործընթացը մեկնարկել է 2011 թվականին, սակայն չի ավարտվել՝ պայմանավորված «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության 2009 թվականի հուլիսի 10-ի ՀՕ-160-Ն օրենքի 26-րդ հոդվածի փոփոխմամբ, որն ընդունվել է 2011 թվականի հոկտեմբերի 6-ին: ՀՀ կառավարություն է ներկայացվել «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի ատեստավորման տարածքային ու որակավորման տարակարգի շնորհման հանրապետական հանձնաժողովների ձևավորման և գործունեության կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 14-ի N 1391-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին», «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի ատեստավորման և որակավորման տարակարգի շնորհման կարգերը հաստատելու և ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 14-ի N 1391-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին», «Ատեստավորման միջոցով որակավորում ստացած հանրակրթական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողներին հավելավճար տալու կարգը հաստատելու մասին և ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 14-ի N 1391-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշումների նախագծերը և հաստատվել 2011 թվականի նոյեմբերի 10-ի N 1745–Ն որոշմամբ: Ատեստավորման միջոցով որակավորում ստացած հանրակրթական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողներին հավելավճար տալու կարգը

հնարավորություն է տալիս ստեղծել մասնագիտական հետագա կատարելագործման համար խրախուսման խթաններ:

Հանրակրթական ուսումնական հաստատությունների ատեստավորման գործընթացի շրջանակում հաստատվել է 2011-2012 ուստարում ատեստավորման ենթակա ուսուցիչ վերապատրաստող երաշխավորված կազմակերպությունների ցանկը: Երաշխավորված 16 կազմակերպություններից 13-ը, ըստ առարկաների, ձևավորել են վերապատրաստվող ուսուցիչների խմբեր և իրականացրել հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատությունների շուրջ 7700 ուսուցիչների վերապատրաստում: Վերապատրաստված բոլոր ուսուցիչները ստացել են վկայական, որը վավեր է վերապատրաստումից հետո 6 ամսվա ընթացքում:

Հանրակրթության ոլորտում կրթության որակի բարելավման ուղղությամբ իրականացվել է ուսուցիչների վերապատրաստման ծրագիր՝ ուսուցման ժամանակակից մեթոդների և տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ուղղությամբ:

Հայաստանի համադպրոցական ինտերնետային ցանցին դպրոցների միացման առավել մեծ ընդգրկվածություն ապահովելու նպատակով ընտրված կազմակերպությունների հետ բանակցությունների արդյունքում նախապես սահմանված 414 դպրոցի փոխարեն փոխկապակցման ենթակա դպրոցների թիվն ավելացվել է 45-ով՝ ներառելով առավել հեռավոր վայրերում տեղակայված դպրոցները: Ներկայումս Հայաստանի համադպրոցական ինտերնետային ցանցում ընդգրկված են 944 հանրակրթական ուսումնական հաստատություններ:

Մասնագիտական կրթության որակի բարելավման նպատակով իրականացվել են մի շարք նախաձեռնություններ Բոլոնիայի և Կոպենհագենի գործընթացների սկզբունքներին համապատասխան: Դրանք ուղղված են եղել աշխատաշուկայի պահանջներին և եվրոպական ստանդարտներին համապատասխան կադրերի պատրաստման կարողությունների հզորացմանը:

Մասնագիտական որակյալ կրթության ապահովումն ու մատչելիությունը հանրապետության տնտեսական աճի, աղքատության ու անհավասարության մեղմման կարևորագույն գործոններից մեկն է:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության համակարգի բարեփոխումները հիմնականում իրականացվել են նախնական և միջին մասնագիտական կրթության միասնական չափորոշիչների և ուսումնական ծրագրերի մշակման ու ներդրման, անձնակազմի վերապատրաստումների, ուսումնամեթոդական նյութերի արդիականացման, 12 տարածաշրջանային քոլեջներում լաբորատորիաների, համակարգչային լսարանների նորացման, նյութատեխնիկական բազայի հարստացման և վերազինման, ինչպես նաև շենքային պայմանների բարելավման ուղղությամբ:

Հաստատվել են 20 մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչներ, վերանայվել են 3 ոլորտների պետական կրթական չափորոշիչները, մշակվել են վերանայված չափորոշիչների նախագծերը: Մշակվել են 20 մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչներին համապատասխան ուսումնական պլանները և մոդուլային ուսումնական ծրագրերը, ինչպես նաև ուսումնական ձեռնարկներ արհեստագործական և միջին մասնագիտական կրթության 10 մասնագիտությունների և որակավորումների համար: Կատարվել է մասնագիտական կրթության և ուսուցման բարեփոխումներին ուղղված միջոցառումների արդյունքների գնահատում 5 ուսումնական հաստատություններում:

Վերապատրաստվել են նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների 210 տնօրեններ, տնօրենի տեղակալներ ու մեթոդիստներ, ինչպես նաև տարածաշրջանային կենտրոնների կառավարման խորհրդի 128 անդամներ:

2005 թվականին Հայաստանը պաշտոնապես միացել է Բոլոնիայի գործընթացին՝ ստանձնելով պատասխանատվություն՝ իրականացնելու Բոլոնիայի գործընթացի հիմնական սկզբունքներն ըստ գործողությունների առանձին ուղղությունների և մասը դառնալու կազմավորվող Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի (ԵԲԿՏ): Ինտեգրումը ԵԲԿՏ-ին ընդգրկում է խորքային փոփոխությունների իրականացում ՀՀ բարձրագույն կրթական համակարգում:

2011 թվականին հաստատվել է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակի ներդրումն ու գործարկումն ապահովող միջոցառումների կատարման ժամանակացույցը, որի համաձայն նախատեսված է 6 միջոցառումների իրականացում 2012 թվականին: Հայաստանի որակավորումների ազգային շրջանակը նշանակալի ներդրում է ունենալու մարդկային ռեսուրսների զարգացման ոլորտում և դրանով իսկ նպաստելու է տեղական և միջազգային ճանաչում ունեցող որակավորումների մակարդակների շրջանակում մատչելիությանը, փոխադրմանն ու առաջխաղացմանը:

Բուհերի որակի ապահովման մեխանիզմների և չափանիշների հստակեցման նպատակով Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանում և Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում իրականացվել և ավարտվել է ինստիտուցիոնալ փորձաքննության գործընթացը:

ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի թիվ 25 նիստի արձանագրային որոշմամբ հաստատվել է ՀՀ բարձրագույն կրթության ֆինանսավորման ռազմավարությունը և դրա կատարումո ապահովող միջոցառումների ժամանակացույցը:

Կրթության զարգացման գլխավոր նպատակների իրականացումը պահանջում է էականորեն բարձրացնել կրթության կառավարման համակարգի արդյունավետությունը, զարգացնել

կառավարման օղակների և մանկավարժների մասնագիտական ներուժը, արդիականացնել կրթության բովանդակությունը՝ ապահովելով դրա համապատասխանությունը արդի պահանջներին:

2011 թվականին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2011-2015 թվականների պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքը (2011թ. հուլիսի 19-ի ՀՕ-246): Ծրագրով սահմանվել են կրթության ոլորտի զարգացման ռազմավարությունը, գերակայություններն ու ծրագրային ուղղությունները, ինչպես նաև ծրագրի մոնիթորինգային ցուցանիշների համակարգը:

Սպորտ և երիտասարդության հարցեր

Սպորտի և երիտասարդության ոլորտում ՀՀ կառավարության վարած պետական քաղաքականության իրականացումը ենթադրում է մի շարք հիմնախնդիրների լուծում, որոնք ներկայումս գտնվում են կառավարության ուշադրության կենտրոնում՝ զանգվածային ֆիզկուլտուրային-առողջարարական՝ համայնքային, տարածաշրջանային, մարզային և հանրապետական միջոցառումների անցկացում, հանրապետական փառատոների անցկացում, հաշմանդամների տարբեր խմբերի շրջանում ֆիզկուլտուրային-առողջարարական աշխատանքների հետագա բարելավում, հաշմանդամ մարզիկների, աշխարհի և Եվրոպայի առաջնություններին հանրապետության մարզիկների մասնակցությանն աջակցություն, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի քարոզչությանը և առողջ ապրելակերպի արմատավորման քարոզմանն ուղղված համալիր միջոցառումների և ծրագրերի իրականացում, ոլորտը կարգավորող իրավական ակտերի մշակման գործընթացի կազմակերպում, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում բարեփոխումներ կատարելու, Եվրախորհրդի ծրագրերին, սպորտի եվրոպական խարտիայի պահանջներից բխող հիմնահարցերին, խնդիրներին ծանոթացնելու նպատակով հանրապետական, մարզային, համայնքային սեմինար-խորհրդակցությունների անցկացում, բնակչության՝ մասնավորապես ուսումնական հաստատություններում ֆիզիկական դաստիարակության անընդհատությանը, հայրենիքի պաշտպանությանը պատրաստ երիտասարդության դաստիարակությանը նպաստող միջոցառումների անցկացում:

Կառավարության քաղաքականության առաջնահերթ խնդիրը և ուղղությունն են համարվում մարզական հերթափոխի պատրաստման համակարգի պահպանումն ու զարգացումը, մատուցվող ծառայությունների բարելավումը, նրանց որակի և արդյունավետության բարձրացումը, ինչն իր հերթին կնպաստի երեխաների և պատանիների շրջանում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասսայականացման հետագա զարգացմանը և համակարգի կազմակերպություններում աշխատող մարզիչ-մանկավարժների ու ղեկավար անձնակազմի սոցիալական վիճակի բարելավմանը:

Մեծ նվաճումների սպորտի բնագավառում կառավարության իրականացրած քաղաքականությունն ուղղված է՝

- սպորտի բարձրագույն նվաճումների քաղաքականության ապահովմանը,
- սպորտի զարգացման նպատակային ծրագրերի մշակմանն ու իրագործմանը,
- մարզիչ-մանկավարժների վերապատրաստման աշխատանքների կազմակերպմանը,
- օլիմպիական շարժման զարգացմանը, Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի և մարզական ֆեդերացիաների գործունեությանն աջակցմանը,
- մարզաձևերի զարգացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի ամրապնդմանն ու զարգացմանը,
- միջազգային, այդ թվում՝ սփյուռքի հետ կապերի ամրապնդմանը,
- մարզաձևերի հավաքական թիմերի գիտամեթոդական աշխատանքների ապահովմանը,
- միջպետական մարզական հարաբերությունների զարգացմանը:

Մասսայական և մանկապատանեկան սպորտի բնագավառում կառավարության իրականացրած քաղաքականությունն ուղղված է՝

- տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների մարզական ոլորտի աշխատանքների ակտիվացմանը,
- մարզական ակտիվի ներուժի օգտագործմանը, մարզական միջոցառումներում գյուղական երիտասարդության ներգրավմանը,
- հասարակության անդամներ հաշմանդամ-մարզիկների համար սպորտով զբաղվելու համապատասխան պայմանների ստեղծմանը:

Երիտասարդական ոլորտում կառավարության կողմից տարվող պետական քաղաքականությունը ենթադրում է զարգացնել մարզերում իրականացվող երիտասարդական պետական քաղաքականությունը, բարձրացնել հասարակական, քաղաքական զարգացումներին նրանց մասնակցության աստիճանը, նպաստել երիտասարդության գործունեությունն ապահովող իրավական դաշտի զարգացմանը, երիտասարդության շրջանում հոգևոր-մշակութային և գիտական մակարդակի բարձրացմանը, ազատ ժամանցի ակտիվ և նպատակային կազմակերպմանը, ուսումնասիրել առկա սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները և բարելավել երիտասարդների կենսապայմանները, հայտնաբերել և խրախուսել տաղանդավոր երիտասարդներին, նպաստել երիտասարդության շրջանում հայրենասիրական դաստիարակության, քաղաքացիական գիտակցության բարձրացմանը, ակտիվացնել, զարգացնել համագործակցությունը միջազգային երիտասարդական կառույցների հետ, ստեղծել պայմաններ երիտասարդությանը անհրաժեշտ

տեղեկատվությամբ ապահովելու համար, ստեղծել պայմաններ նրանց լիակատար ինքնադրսևորման համար:

Էներգետիկա և բնական պաշարներ

Էլեկտրաէներգիա արտադրող հզորությունների ստեղծում և վերազինում

- *Որոտանի ՀԷԿ-երի համակարգի վերազինման աշխատանքների իրականացման գործընթացի կազմակերպում և վերահսկում:*

2011 թվականի հունվարի 15-ին ստորագրվել է Որոտանի ՀԷԿ-երի համալիրի վերազինման ծրագրի վարկային պայմանագրի առանձին մաս հանդիսացող «Հատուկ համաձայնագիր»: KfW բանկի կողմից նշանակված գործակալի օժանդակությամբ «Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր» ՓԲԸ-ն պատրաստել է ծրագրի խորհրդատուի ընտրության փաստաթղթերի փաթեթը և դրա հիման վրա հայտարարվել է ծրագրի խորհրդատուի ընտրության միջազգային մրցույթ: Մրցույթի իրականացման արդյունքները 2011 թվականի դեկտեմբերի 29-ին հաստատվել են ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կառավարման խորհրդի կողմից, որից հետո շրջանառության մեջ է դրվել խորհրդատուի ընտրության միջազգային մրցույթի արդյուքները հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

- *Մեղրի ՀԷԿ-ի շինարարության ընթացք:*

Ըստ իրանական կողմի տրամադրած տեղեկատվության՝ ծրագրի իրականացման համար ֆինանսական միջոցների տրամադրման հարցը գտնվում է Իրանի Իսլամական Հանրապետության (ԻԻՀ) կառավարությունում և Մեջլիսում՝ քննարկման ավարտական փուլում:

2011 թվականի հունիսի 29-30 ԻԻՀ Թեհրան քաղաքում տեղի է ունեցել ՀՀ և ԻԻՀ միջկառավարական նիստը: Ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր, որտեղ կողմերը ամրագրել են Մեղրի ՀԷԿ-ի կառուցման նախագծի շուտափույթ իրականացման անհրաժեշտությունը, և որոշվել է այդ ուղղությամբ, ի թիվս այլ միջոցառումների, հետամուտ լինել ապահովելու նախագծի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները:

2011 թվականի դեկտեմբերի 23-ին ԻԻՀ նախագահի ՀՀ կատարած այցի շրջանակներում ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության և ԻԻՀ «Թավան Աբ Արազ Քոմփանի» ընկերության միջև ստորագրվել է Փոխըմբռնման Հուշագիր: Կողմերը համաձայնվել են 2010 թվականի հոկտեմբերի 15-ին ՀՀ կառավարության և իրանական «Թավան Աբ Արազ Քոմփանի» ընկերության միջև կնքված՝ Մեղրի ՀԷԿ-ի կառուցման ծրագիրը «կառուցում-տնօրինում-շահագործում-փոխանցում» հիմունքներով իրականացնելու վերաբերյալ Թույլտվության

պայմանագրում նշված մեկ տարի ժամանակահատվածը երկարաձգել մինչև 2012 թվականի հունիսի 1-ը, իսկ Մեղրի ՀԷԿ-ի շինարարությունը սկսել ոչ ուշ, քան 2012 թվականի հունիսի 15-ը:

Տարածաշրջանային ինտեգրացում և էլեկտրաէներգետիկական համակարգի տեխնիկական վերազինում

- *Իրան-Հայաստան և Վրաստան-Հայաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծերի կառուցման համար անհրաժեշտ համաձայնագրերի ու պայմանագրերի կնքում:*

Իրականացվել են Իրան-Հայաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի շինարարության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և մեղմացնող միջոցառումների մշակման փորձագիտական աշխատանքները: Շարունակվել են «Նորավան» 400/220/20 կՎ ենթակայանի նախագծային աշխատանքները: 2011 թվականի հունիսի 26-ին «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի և Իրանի Արտահանման Զարգացման Բանկի միջև կնքվել է ֆինանսական համաձայնագիր՝ գծի և ենթակայանի նախագծման, ճարտարագիտության, սարքերի, սարքավորումների և նյութերի ձեռքբերման, շինարարության, մոնտաժման, փորձարկման և շահագործման հանձնման արժեքի մինչև 77%-ի ֆինանսավորման համար: Ծրագրի կապալառու իրանական «Սանիր» ընկերության հետ համաձայնություն է ձեռք բերվել պայմանագրի 23%-ի չափով «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ին փոխառություն տրամադրելու վերաբերյալ: Ծրագրի կապալառուի կողմից Հայաստան է ներմուծվել աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ նյութերի և մեքենամեխանիզմների առաջին խմբաքանակը: Առանձին տեղամասերում սկսվել են հողային աշխատանքները:

ԱՄՆ ՄԶԳ աջակությամբ «TETRA TECH» ընկերության հետ շարունակվել են աշխատանքները՝ Հայաստան-Վրաստան էլեկտրաէներգետիկական համակարգերի զուգահեռ աշխատանքի ապահովման համար իրավական և նորմատիվ դաշտի ստեղծման ուղղությամբ:

2011 թվականի մայիսի 23-24-ին ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի՝ Վրաստան կատարած աշխատանքային այցի ընթացքում իրենց պարզաբանումն են ստացել 2010 թվականի հունվարի 26-ին ստորագրված 400 կՎ օդային գծի (ՕԳ) կառուցման Համաձայնագրի ուժի մեջ մտնելու հետ կապված վիճահարույց հարցերը:

2011 թվականի հուլիսի 6-ին «ԲԷՑ» ՓԲԸ-ի, «ԷԷՀՕ» ՓԲԸ-ի և «Վրաստանի Պետական Էներգահամակարգ» ՍՊԸ-ի կողմից ստորագրվել է Համաձայնագրի «Լրացում-1»-ը: Արդյունքում ուժի մեջ է մտել Համաձայնագիրը և նախկինում նախատեսված մեկ շղթա էլեկտրահաղորդման ՕԳ-ի փոխարեն կառուցվելու է նոր երկշղթա 400 կՎ ՕԳ «Հրազդան» ՋԷԿ-ից մինչև նոր կառուցվող «Մառնեուլի» 500/400/220/110 կՎ ենթակայան: Առաջարկությունը ներկայացվել է Գերմանական

KFW բանկին՝ ուսումնասիրման և ծրագրի ֆինանսավորման նպատակահարմարությունը գնահատելու համար:

Ի կատարումն Հայաստան-Վրաստան տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի 9-րդ նիստի ժամանակ ընդունված որոշման, մշակվել և վրացական կողմի համաձայնեցմանն են ներկայացվել 400 կՎ լարման օդային գծի կառուցման Համաձայնագրի մաս կազմող հավելվածները:

- *Հրազդան-Շինուհայր 220 կՎ լարման գործող օդային գծի վերակառուցման համար Համաշխարհային բանկի հետ վարկային համաձայնագրի կնքում, գործընթացի կազմակերպում և աշխատանքների ընթացքի վերահսկում:*

2011 թվականի հունիսի 1-ին Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի (ՀԲ) միջև ստորագրվել է «Էլեկտրամատակարարման հուսալիություն» վարկային համաձայնագիրը, որն ուժի մեջ է մտել 2011 թվականի նոյեմբերի 28-ին: Վարկային համաձայնագրով նախատեսված «Նորադուզ-Լիչք-Վարդենիս-Վայք-Որոտան-1» 220 կՎ էլեկտրահաղորդման գծի կառուցման աշխատանքների ընթացքում ծրագիրն իրականացնող «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ին աջակցելու և ծրագրով նախատեսված աշխատանքները վերահսկելու նպատակով իրականացվում է «Իրականացման օժանդակություն» խորհրդատվական ծառայությունների մատուցման խորհրդատվական կազմակերպության ընտրության միջազգային մրցույթի գործընթաց: ՀԲ-ի հետ համաձայնեցման փուլում են նաև ծրագրի գլխավոր կապալառուի ընտրության միջազգային մրցույթի մրցութային փաստաթղթերը:

<u>Ատոմային էներգետիկայի զարգացում</u>

- *Հայկական ԱԷԿ-ում նոր միջուկային էներգաբլոկի կառուցման հարցում ներդրողների հետ բանակցությունների վարում:*

Համաձայն «Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության կառավարությունների միջև կնքված միջկառավարական համաձայնագրի» դրույթների, 2011 թվականի ընթացքում ք. Մոսկվայում և ք. Երևանում տեղի են ունեցել աշխատանքային հանդիպումներ, որոնց ընթացքում քննարկվել են ՀՀ–ում կառուցվող նոր միջուկային էներգաբլոկի կառուցման նախապատրաստական փուլում կատարվող առաջնահերթ աշխատանքները, աշխատանքների լիցենզավորման պլանի նախագիծը, տիպային գրաֆիկը, ՀՀ–ում կառուցվող նոր միջուկային էներգաբլոկի կառուցման պայմանագրերի նախապատրաստման և լիցենզավորման աշխատանքների կազմակերպման, ինչպես նաև էլեկտրաէներգիայի սպառման կանխատեսումների և սակագնային կարգավորման հետ կապված հարցերը:

ՀՀ-ում նոր միջուկային էներգաբլոկի կառուցման նպատակով ապրիլի 27-28-ը Երևանում նախատեսվում էր անցկացնել ներդրողների և հիմնական սարքավորումների մատակարարների միջազգային համաժողով: Համաժողովի աշխատանքներին մասնակցելու համար հրավիրվել էին տարբեր բանկերի, միջազգային ֆինանսական կազմակերպությունների և ընկերությունների ներկայացուցիչներ: Սակայն 2011 թվականի մարտի 11-ին Ճապոնական Ֆուկուսիմա ԱԷԿ-ում տեղի ունեցած վթարի պատճառով ներդրողների և հիմնական սարքավորումների մատակարարների միջազգային համաժողովը հետաձգվել է:

2011 թվականի մայիսի 17-ին ք. Արմավիրում և մայիսի 24-ին ք. Գյումրիում տեղի են ունեցել «Հայաստանի Հանրապետությունում նոր միջուկային էներգաբլոկի կառուցման՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության» բնապահպանական հաշվետվության հասարակական լսումներ, որոնց ժամանակ արված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա հաշվետվությունը լրամշակվել է:

«ՀԱԷԿ-ի նոր միջուկային էներգաբլոկի շինարարական հարթակի սեյսմիկ և հրաբխային վտանգի գնահատումը» հաշվետվության լրամշակված տարբերակի վերաբերյալ ԱԷՄԳ-ի փորձագետները վերջնական հաշվետվությունը հայկական կողմին են հանձնել 2011 թվականի դեկտեմբերին: ԱԷՄԳ-ի փորձագիտական երկրորդ առաքելության կողմից արվել են խմբագրական բնույթի դիտողություններ և առաջարկվել է իրականացնել լրացուցիչ հետազոտություններ՝ կապված Երևանի խզվածքի հետ:

ԷՍՊՈ կոնվենցիայի քարտուղարությունում 2011 թվականի դեկտեմբերին քննարկվել է շրջակա միջավայրի վրա ՀՀ-ում նոր միջուկային էներգաբլոկի կառուցման ազդեցության գնահատման ծանուցման վերաբերյալ Ադրբեջանի կողմից բարձրացված բողոքը: Հայկական կողմի առաջարկով քարտուղարության կողմից բողոքի վերջնական քննարկումը հետաձգվել է:

- *Իրան-Հայաստան նավթամթերքատար խողովակաշարի և նավթամթերքների տերմինալի կառուցման գործընթացի կազմակերպում և վերահսկում:*

Ծրագրի իրականացման խնդիրները քննարկվել են ԻԻՀ նավթի նախարարի տեղակալի՝ Հայաստան կատարած այցի ընթացքում, ինչպես նաև ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի ու նախարարի տեղակալի՝ ԻԻՀ կատարած այցերի ընթացքում:

Կողմերի միջև դեռևս վերջնական համաձայնություն ձեռք չի բերվել գնի բանաձևի վերաբերյալ: Պայմանավորվածություն է ձեռք բերվել քննարկումները շարունակել 2012 թվականին Երևանում՝ դրանցում ներգրավելով իրանական կողմից հավանական ներդրող «Ֆառասաթ» ընկերության, ինչպես նաև ներկայումս Հայաստան նավթամթերքներ ներկրող ընկերությունների ներկայացուցիչներին:

Ջրային տնտեսություն

2011 թվականի ընթացքում ջրային տնտեսության ոլորտում ՀՀ կառավարության գործունեության հիմքում ընկած էին ՀՀ ջրային օրենսգրքի, ջրի ազգային ծրագրի և ջրի ազգային քաղաքականության մասին օրենքների հիմնադրույթները, ինչպես նաև ՀՀ կառավարության ջրային ոլորտի բարեփոխումներին նվիրված որոշումները (այդ թվում՝ Կայուն զարգացման և պետական միջնաժամկետ ծրագրերը), գերակա խնդիրներն ու միջոցառումները, որոնցով հաստատված են համակարգի հիմնական ծրագրային ուղղվածությունները:

Հաշվետու տարում շարունակվել են աշխատանքները՝ համակարգում կառուցվածքային փոփոխությունների, հաշվառման համակարգի ներդրման ու կատարելագործման, ջրամատակարարման տևողության ավելացման ու ջրի որակի բարելավման, մասնավոր կառավարման պայմանագրերի վերահսկման, մատակարարված ջրի դիմաց վճարների հավաքագրման մակարդակի բարձրացման, համակարգում կորուստների նվազեցման և ընկերությունների գործունեության արդյունավետության բարձրացման, ջրաչափական սարքերի տեղադրման, բյուջետային, վարկային և դրամաշնորհային միջոցների արդյունավետ օգտագործման և նոր վարկային ու դրամաշնորհային միջոցների ներգրավման, ինչպես նաև այլ ուղղություններով:

Ջրային տնտեսության ոլորտում 2011 թվականի ընթացքում կատարվել են հետևյալ հիմնական աշխատանքները.

1. Կնքված պայմանագրերի շրջանակներում ապահովվել է «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների արդյունավետ տնտեսական բնականոն գործունեությունը: Ֆրանսիական Սաուր կազմակերպության հետ կնքվել է «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի գործադիր մարմնի լիազորությունները մասնավոր կառավարչին հանձնելու կառավարման պայմանագրի գործողության ժամկետը մինչև 2013 թվականի դեկտեմբերի 31-ը երկարաձգելու պայմանագիր: Նշված ընկերությունների մասով ապահովվել է նաև Համաշխարհային բանկի, Ասիական Զարգացման բանկի, Վերակառուցման և Զարգացման Եվրոպական բանկի, KfW բանկի վարկային ներդրումային ծրագրերի համապատասխան չափաբաժիններով իրականացումը:

2. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի ֆինանսավորմամբ Գավառ, Մարտունի, Վարդենիս, Սևան քաղաքներում կոյուղացանցերի վերանորոգման ծրագրի շինարարական մրցույթների արդյունքում տնտեսված միջոցների հաշվին կառուցվել են 11.4 կմ կոյուղագծեր: Ծրագրով իրականացման ընթացքում են Գավառ, Վարդենիս և Մարտունի

քաղաքներում կեղտաջրերի մաքրման կայանների կառուցման աշխատանքները, որոնց ավարտը սահմանված է 2012 թվականի ամառը:

3. Աբու Դաբի հիմնադրամի և ՀՀ կառավարության համաֆինանսավորման շրջանակներում Արփա-Սևան թունելի անհապաղ վերականգնողական աշխատանքների իրականացման համար կնքվել է համապատասխան պայմանագիր՝ 11.8 մլրդ դրամի չափով, որից արդեն իսկ իրականացվել են շուրջ 3.3 մլրդ դրամի շինարարական աշխատանքներ: Արդյունքում հնարավորություն է ստեղծվել լուծել թունելի առավել վտանգավոր հատվածների անվտանգ շահագործման հարցերը:

4. Ոռոգում ջրառ իրականացնող «Սևան-Հրազդանյան-ջրառ», «Ախուրյան-Արաքս-ջրառ» և «Դեբետ-Աղստև-ջրառ» ՓԲԸ-ների, ինչպես նաև ոռոգման ջուր մատակարարող 44 ջրօգտագործողների ընկերությունների գործունեության արդյունքում ապահովվել է կայուն ջրամատակարարում, և ընկերություններն ունեցել են ֆինանսական կայուն վիճակ:

5. Համակարգի կազմակերպությունների հիմնական գործունեության վերլուծությունը ցույց է տալիս, որ իրագործվում են հաստատված ծրագրերը՝ տալով զգալի դրական տեղաշարժեր: Միայն հավաքագրումների գծով 2011 թվականի համակարգի գանձումը կազմել է շուրջ 19.53 մլրդ դրամ՝ 2010 թվականի 18.73 մլրդ դրամի փոխարեն կամ ավել է գանձվել շուրջ 0.8 մլրդ դրամ: Խմելու ջրի մասով գանձվել է շուրջ 15.77 մլրդ դրամ՝ 2010 թվականի 15.17 մլրդ դրամի դիմաց կամ ավել է գանձվել շուրջ 0.6 մլրդ դրամ, իսկ ոռոգման ոլորտում գանձվել է 3.76 մլրդ դրամ՝ 2010 թվականի 3.56 մլրդ դրամի դիմաց կամ ավել է գանձվել շուրջ 0.2 մլրդ դրամ: Ընդ որում, խմելու ջրի ոլորտում գանձման տոկոսը 2011 թվականին կազմել է 97.36 %, իսկ ոռոգման ոլորտում՝ 82.7 %՝ 2010 թվականի 81.8%-ի դիմաց:

Էլեկտրաէներգիայի ծախսի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ համակարգում իրականացված ներդրումային և կազմակերպչական միջոցառումների արդյունքում հնարավորություն է ստեղծվել անցած տարիների համեմատությամբ ավելի քիչ էլեկտրաէներգիա ծախսել՝ ապահովելով զգալի էներգախնայողություն: Ընդ որում, 2011 թվականին 2000 թվականի համեմատ շուրջ 2.68 անգամ պակասել է էլեկտրաէներգիայի ծախսը:

6. 2011 թվականի ընթացքում ջրային տնտեսության համակարգի կազմակերպությունների կողմից ՀՀ պետական բյուջե են փոխանցվել շուրջ 5.58 մլրդ դրամի հարկեր, տուրքեր և պարտադիր վճարներ, որը 2010 թվականի համեմատ ավել է 80 մլն դրամի չափով:

Եթե խմելու ջրի ոլորտի բոլոր կազմակերպությունները նախկինում սուբսիդավորվում էին, ապա ներկայումս միայն «Երևան Ջուր» ՓԲԸ-ի մասով նշենք, որ այն ոչ միայն չի սուբսիդավորվում, այլև ՀՀ պետական բյուջե է վճարել շուրջ 2.85 մլրդ դրամի հարկեր, տուրքեր և վճարներ:

7. 2011 թվականի ընթացքում «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» ՓԲԸ-ների սպասարկման տարածքներում տեղի են ունեցել ջրամատակարարման տևողության ավելացումներ:

8. 2011 թվականին Սևանա լճից (առանց Մարտունու տարածաշրջանի պոմպակայաններով իրականացված ջրառը հաշվի առնելու) բաց է թողնվել 156.44 մլն մ^3 ջուր: Սևանա լիճ է տեղափոխվել 53.1 մլն մ^3 ջրաքանակ: 2011 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Սևանա լճի մակարդակը կազմել է 1900.13 մ, որը նախորդ տարվա նույն ցուցանիշը գերազանցում է 23 սանտիմետրով:

9. Շարունակվել է բարելավվել հաշվառման համակարգը, կատարվել է ջրամատակարար կազմակերպությունների միջև գույքային հարաբերությունների և պարտավորությունների ճշգրտումներ:

10. 2011 թվականի ընթացքում կառուցվել են 652 կմ խողովակաշարեր և ջրատարներ (առանց Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ ծրագրի), այդ թվում՝ խմելու ջրագծեր՝ 594.6 կմ, կոյուղու կոլեկտորներ՝ 11.4 կմ, ոռոգման ջրանցքներ և ջրատարներ՝ 46 կմ (որից Համաշխարհային բանկի ոռոգման համակարգերի վերականգնման հրատապ ծրագրով Արմավիրի և Թալինի մայր ջրանցքներում՝ 20.3 կմ):

11. Ավարտվել են Մարմարիկի ջրամբարի շինարարական աշխատանքները: Վերականգնումը տվել է իր դրական արդյունքները, մասնավորապես, վերացվել է ջրամբարի ներքին բյեֆի գրեթե 142000 ազգաբնակչության համար ստեղծված վտանգը, ստեղծվել է հնարավորություն ջրամբարում կուտակել 23 մլն խմ լրացուցիչ ինքնահոս ջրաքանակ, որը լրացուցիչ 1055 հա-ի ոռոգման հնարավորություն է տալիս: Դրանից բացի, վերականգնված ջրամբարը թույլ է տալիս գարնանային վարարումների ընթացքում կարգավորել Մարմարիկ գետի հոսքերը:

12. Աջակցություն է ցուցաբերվել Հազարամյակի մարտահրավերներ ծրագրի ոռոգման ոլորտին ուղղված աշխատանքների իրականացմանը:

13. Իրականացվել են դրենաժների մաքրման և խորացման աշխատանքներ՝ 432 կմ-ի չափով, այդ թվում՝ Հազարամյակի մարտահրավերներ ծրագրի շրջանակներում՝ մայր կոլեկտորների երկրորդային և երրորդային չորացուցիչների մաքրում և խորացում՝ 302 կմ-ի չափով, իսկ ՀՀ պետական բյուջեով նախատեսված ֆինանսավորման հաշվին՝ կոլեկտորադրենաժային համակարգերի մաքրում՝ 130 կմ-ի չափով: Միաժամանակ աշխատանքներ են իրականացվել գրունտային ջրերի մակարդակների որոշման աշխատանքների իրականացման ուղղություններով:

14. Համաշխարհային բանկի հետ մշակվել է Հայաստանի ջրամատակարարման ոլորտի զարգացման՝ «Հայաստան: Նոթեր ջրամատակարարման ոլորտի մասին» ծրագիրը:

15. KfW բանկի հետ համաձայնություն է ձեռք բերվել ջրամատակարար կազմակերպությունների սպասարկման դաշտից դուրս գտնվող գյուղական բնակավայրերում ջրամատակարարման կառավարման բարելավման ուղղված ուսումնասիրությունների իրականացման համար համապատասխան ֆինանսական միջոցների հատկացման հարցում:

Ջրային տնտեսության ոլորտում վերը նշված աշխատանքների իրականացման արդյունքում խմելու և ոռոգման ջրերի մատակարարման, ինչպես նաև ջրահեռացման ոլորտներում 2011 թվականի ընթացքում ապահովվել է համակարգերի հուսալի և անվտանգ շահագործումը, բարելավվել է խմելու և ոռոգման ջրամատակարարումը, իրականացվել է համակարգի անվտանգ շահագործումը, կրճատվել են կորուստները, ապահովվել է էներգախնայողությունը, բարելավվել է ծառայությունների մատուցման որակը, ապահովվել է ջրամատակարարման շարունակականության ավելացումը և այլն:

Տրանսպորտ և կապ

2011 թվականին տրանսպորտի բնագավառում իրականացվել են վերահսկողական գործառույթներ կանոնավոր փոխադրումներ իրականացնող երթուղիների սպասարկման գործընթացի կազմակերպման նկատմամբ: Երևան քաղաքի տրանսպորտային ծանրաբեռնվածությունը բեռնաթափելու նպատակով վերացվել են ուղևորատար տրանսպորտային միջոցների երթակարգավարական, ինչպես նաև ապօրինի կուտակման կետերը՝ տրանսպորտային միջոցների մեկնման վայրերը տեղափոխվելով համապատասխան ավտոկայաններ, Սևանի փողոցի 93/1 հասցեում կազմավորվել է նոր ավտոկայարան:

«Միջազգային ավտոճանապարհային փոխադրումներ կատարող տրանսպորտային միջոցների անձնակազմի աշխատանքի մասին» համաձայնագրին միանալուց հետո՝ վերջինիս պահանջների ապահովման նպատակով, Հայաստանի Հանրապետությունում ներդրվել է հսկիչ սարքերի (թվային տախոգրաֆների) համակարգը:

Բարեփոխումներ են իրականացվել տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման գործընթացը կարգավորող իրավական դաշտում՝ ազատականացվել է տրանսպորտային միջոցների պատադիր տեխնիկական զննության անցկացման գործընթացը. այսուհետ քաղաքացիները կարող են իրենց պատկանող տրանսպորտային միջոցները տեխնիկական զննության ներկայացնել ցանկացած տեխնիկական զննման գործունեության կազմակերպման լիցենզիա ունեցող կազմակերպության կայանում, իսկ այն կազմակերպությունները, որոնք ունեն տեխնիկական զննություն իրականացնելու անհրաժեշտ

տեխնիկական միջոցներ (հոսքագիծ) կարող են ստանալ ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական զննություն իրականացնելու լիցենզիա, առանց նախկինում սահմանված մրցույթի:

2011 թվականին առաջին անգամ սկսվել են թունելների տեխնոլոգիական վիճակի ուսումնասիրությունները՝ համապատասխան միջոցառումներ մշակելու նպատակով: Դիլիջանի թունելում փոխվել է լուսավորության համակարգը, տեղադրվել են արտացոլիչներ և տեսահսկողական համակարգեր:

Հայկական երկաթուղու անշարժ գույքի նկատմամբ ՀՀ սեփականության իրավունքի գրանցման և դրանց տիրապետման ու օգտագործման իրավունքները «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ին փոխանցելու գործընթացը հիմնականում ավարտվել է, ընկերությանը հանձնվելիք թվով 382 անշարժ գույքի միավորներից 378-ը գրանցվել են որպես Հայաստանի Հանրապետության սեփականություն, և դրանց տիրապետման ու օգտագործման իրավունքները փոխանցվել են «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ին, ինչը կազմում է, հանձնված ամբողջ կոնցեսիոն ակտիվների 98.96%-ը: Կոնցեսիոն պայմանագրի համաձայն 2011 թվականի կտրվածքով ներդրումային ծրագրով նախատեսվել են 13,465.44 մլն դրամի ներդրումային ծախսեր, որոնք կատարվել են 100%-ով, իսկ կոնցեսիայի սկզբից մինչև 2011 թվականի վերջ ներդրումային ծրագրով նախատեսված պարտավորությունները կատարվել են 100.6%-ով:

2011 թվականին երկաթուղային բեռնափոխադրումների ծավալն աճել է շուրջ 6.2%-ով և կազմել 3252 հազար տոննա, այդ թվում՝ արտահանվող բեռների ծավալն աճել է 30.9%-ով, իսկ ներհանրապետական փոխադրումներինը՝ 12.2%-ով, ներկրվող բեռների ծավալը նվազել է 5.2%-ով:

ՀՀ տեսալսողական ոլորտը կարգավորող օրենսդրությունը ԵՄ տեսալսողական ոլորտի օրենսդրությանը, ինչպես նաև տեսալսողական ոլորտի ծառայությունների և արտադրանքի ԵՄ ստանդարտներին համապատասխանեցնելու նպատակով մշակվել է «Տեսալսողական ոլորտում Եվրոպական Միության օրենսդրությանը համապատասխան Ազգային Ծրագրի մշակման և իրականացման հայեցակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

ՀՀ-ում բջջային կապի օպերատորներ «ԱրմենՏել» ՓԲԸ-ն, «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ն և «Օրանժ Արմենիա» ՓԲԸ-ն մատուցում են 2G, 3G, 3G տեխնոլոգիայով ինտերնետ հասանելիության ծառայություններ, օպերատորների կողմից փորձարկվում է ծառայությունների մատուցման 4G տոխնոլոգիան: Արդյունքում զգալիորեն աճել է նոր տեխնոլոգիաներով մատուցվող ինտերնետ ծառայություններից օգտվողների քանակը, ծածկույթը, որակը, և նվազել են սակագները: Նշված տեխնոլոգիաներով մատուցվող ծառայությունների ծածկույթը կազմում է 98.9%:

2011 թվականի մայիսի 26-ին ք. Լեյպցիգում ստորագրվել է Հայաստանի Հանրապետության կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության միջև միջազգային ավտոմոբիլային փոխադրումների մասին համաձայնագիր: 2011 թվականի հուլիսի 7-ին ք. Վարշավայում նախաստորագրվել է Հայաստանի Հանրապետության կառավարության և Լեհաստանի Հանրապետության կառավարության միջև միջազգային ավտոմոբիլային հաղորդակցության մասին համաձայնագիրը: 2011 թվականի հունիսի 14-ին ք. Երևանում ստորագրվել է Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության և Ավտոտրանսպորտի միջազգային միության միջև Հայաստանի Հանրապետության տարածքով Ասիայի, Եվրոպայի և հիմնական համաշխարհային շուկաների միջև ավտոտրանսպորտային փոխադրումների զարգացման մասին Փոխըմբռնման հուշագիր:

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության և Հեռահաղորդակցության միջազգային միության ԱՊՀ երկրների տարածաշրջանային բաժնի նախաձեռնությամբ, ինչպես նաև ՅՈՒՆԵՍԿՕ-ի կրթության բնագավառում տեղեկատվական տեխնոլոգիաների ինստիտուտի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործերով Հայաստանի ազգային հանձնաժողովի մասնակցությամբ, 2011 թվականի նոյեմբերի 21-ին Երևանում բացվել է «Կույր և վատ տեսողություն ունեցող անձանց համար ինտերնետային հասանելիության կենտրոն», որը կույր և վատ տեսողություն ունեցող անձանց հնարավորություն է ընձեռել տեղեկատվական ռեսուրսներից օգտվելու համար: Այն նաև ժամանակակից տեխնոլոգիաներից օգտվելու նպատակով կրթական հարթակ է տրամադրել ինչպես կույրերի, այնպես էլ իրենց կրթությամբ և վերապատրաստմամբ զբաղվող անձանց համար:

Փոստային կապի ոլորտի բարեփոխումները հիմնականում պայմանավորված են ՀՀ «Հայփոստ» ՓԲԸ-ն հավատարմագրային կառավարման հանձնելու պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման նկատմամբ հսկողության իրականացման գործառույթների, ինչպես նաև փոստային կապի բնագավառի զարգացման քաղաքականության իրականացման ապահովմամբ:

2006 թվականից սկսված վերանորոգվել և արդիականացվել են 104 փոստային բաժանմունքներ, որից 50 փոստային բաժանմունք՝ 2011 թվականին: «Հայփոստ Թրասթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերության հետ կնքված պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգվել է 6 ամսով, որի ընթացքում կողմերը «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերության արդիականացման նպատակով կիրականացնեն բոլոր այն գործողությունները, որոնք անհրաժեշտ են «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի կառավարման ձևի փոփոխման վերաբերյալ նոր պայմանագիր կնքելու և իրագործելու համար:

2011 թվականին ՀՀ կառավարության կողմից հաստատվել են «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի, հարակից տարածքում միջազգային լոգիստիկ կենտրոնի և ազատ տնտեսական գոտու մոտեցման տրանսպորտային ենթակառուցվածքների ռազմավարական ծրագիրը և Հայաստանի Հանրապետության հիմնական տարանցիկ մայրուղիների վերականգնման և վերակառուցման հայեցակարգը, որը կիրականացվի պետություն-մասնավոր համագործակցության սկզբունքով:

Պետական եկամուտների քաղաքականություն

Կուտակված հարկային ապառքների կրճատման, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված (հաշվառված), սակայն փաստացի գործունեություն չիրականացնող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի լուծարման (գործունեության դադարեցման) պարզեցված ընթացակարգի ներդրման նպատակով 2011 թվականին մշակվել և ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունվել են «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար հարկային և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» ՀՕ-185-Ն և «2008 թվականի հունվարի 1-ի դրությամբ հարկային հաշվետվություններ չներկայացրած կազմակերպությունները լուծարելու և անհատ ձեռնարկատերերին պետական հաշվառումից հանելու մասին» ՀՕ-186-Ն Հայաստանի Հանրապետության օրենքները:

Ծառայությունների մատուցման կոնցեսիոն համաձայնությունների շրջանակներում կոնցեդենտի (շնորհատուի) և կոնցեսիոների (օպերատորի) միջև ձևավորվող հարկային հարաբերությունների կարգավորման նպատակով մշակվել և ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունվել են «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՕ-187-Ն և «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-188-Ն Հայաստանի Հանրապետության օրենքները:

2011 թվականին մշակվել և ՀՀ կառավարության կողմից ընդունվել է «Հանրային ծառայությունների մատուցման ենթակառուցվածքներ հանձնելու համաձայնությունները (պայմանագրերը) հարկման նպատակով որպես կոնցենսիոն պայմանագիր որակելու չափանիշներն ու ընթացակարգերը սահմանելու մասին» ՀՀ կառավարության թիվ 1339-Ն որոշումը:

Հարկային օրենսդրությամբ նախատեսված հաշվետվությունների, այլ փաստաթղթերի և տեղեկությունների՝ էլեկտրոնային եղանակով ներկայացման համակարգի կիրառության շրջանակներն ընդլայնելու նպատակով մշակվել և ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունվել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-218-Ն օրենքը:

Հարկման այլընտրանքային համակարգերի կիրառության շրջանակները հնարավորինս նեղացնելու նպատակով մշակվել և ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունվել է «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-148-Ն օրենքը:

Կազմակերպությունների հողի հարկի և գույքահարկի վճարումների, ինչպես նաև գույքահարկի հաշվետվությունների ներկայացման պարբերականության կրճատման նպատակով մշակվել և ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունվել են «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-140-Ն և «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-141-Ն Հայաստանի Հանրապետության օրենքները:

Մետաղական օգտակար հանածոների և դրանց վերամշակման արդյունքում ստացված արտադրանքի իրացման համար ռոյալթիների հաշվարկման ընթացքում առաջացած բազմաթիվ խնդիրների հստակեցման, ինչպես նաև բնօգտագործման վճարի փոխարեն ռոյալթիի սահմանման նպատակով մշակվել և ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը:

2012 թվականի պետական բյուջեի մասով լրացուցիչ հարկային եկամուտների հավաքագրում ապահովող համապատասխան օրենսդրական հիմքի ձևավորման նպատակով մշակվել և ՀՀ Ազգային Ժողովի կողմից 2011 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին ընդունվել է ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող՝ հարկային օրենսդրության փոփոխություններ նախատեսող օրենսդրական նախագծերի փաթեթը:

Հարկային քաղաքականության և հարկային հարաբերությունները կարգավորող օրենսդրության փոփոխությունների առաջիկա տարիների հիմնական ուղղությունները նախանշելու նպատակով մշակվել է «Հարկային օրենսդրության վերանայման 2012-2014 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

Մշակվել և հաստատվել է «Ռիսկերի գնահատման չափանիշների մեթոդաբանությունը սահմանելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի հրամանը, որով սահմանվել են մաքսային սահմանին ռիսկերի գնահատման չափանիշները:

Ստորագրվել են «ՀՀ կառավարության և Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության կառավարության միջև եկամուտների և կապիտալի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին» կոնվենցիան, «ՀՀ կառավարության և Իռլանդիայի կառավարության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին» համաձայնագիրը և «ՀՀ կառավարության և Ռուսաստանի

Դաշնության կառավարության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը վերացնելու մասին 1996 թվականի դեկտեմբերի 28-ի համաձայնագրում և նրան կից 1996 թվականի դեկտեմբերի 28-ի Արձանագրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Արձանագրությունը:

Վավերացվել են «ՀՀ կառավարության և Կիպրոսի Հանրապետության կառավարության միջև եկամուտների կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին» համաձայնագիրը, «Հայաստանի Հանրապետության և Իսպանիայի Թագավորության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին» և «Հայաստանի Հանրապետության և Սլովենիայի Հանրապետության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին» կոնվենցիաները:

Պետական ներքին ֆինանսական հսկողության ոլորտ

ՀՀ կառավարության 11.11.10թ. թիվ 44 արձանագրային որոշմամբ հաստատված պետական ներքին ֆինանսական հսկողության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների շրջանակներում 2011 թվականին մշակվել են «Ֆինանսական կառավարման և հսկողության մասին» և «Ֆինանսական տեսչության մասին» ՀՀ օրենքների նախագծերի հայեցակարգերը, որոնց ընդունմամբ կսահմանվեն նշված օրենքների նախագծերի հիմնադրույթները:

Լրամշակվել և ՀՀ կառավարության 22.12.11թ. նիստում հավանության է արժանացել «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Նշված օրենքի ընդունմամբ կստեղծվեն անհրաժեշտ իրավական հիմքեր միջազգային ստանդարտներին համապատասխանող ՀՀ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման համակարգի ներդրման համար: Օրենքի նախագիծը ներկայացվել է ՀՀ Ազգային ժողովի քննարկմանը:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվել է ոչ առևտրային կազմակերպությունների ֆիդուցիար (վստահության վրա հիմնված) վերահսկողության փորձնական ծրագիրը, որի արդյունքում մշակվել է «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների ֆիդուցիար հսկողության համակարգի ներդրման ռազմավարությանը հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը: Նախագծի ընդունմամբ կսահմանվի պետական ոչ առևտրային կազմակերպությունները սահմանող և դրանց ֆինանասական կառավարման, հսկողության համակարգերը նկարագրող մոդել (հայեցակարգ), ինչը հիմք կհանդիսանա ՊՈԱԿ-ների ֆիդուցիար հսկողության համակարգի ներդրման գործընթացում:

Համաձայն ՀՀ վարչապետի 21.03.2011թ. «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի և «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ

օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» թիվ 197-Ա որոշման հավելվածի 1-ին կետի՝ մշակվել և ՀՀ կառավարության 2011 թվականի օգոստոսի 11-ի թիվ 1233-Ն որոշմամբ հաստատվել են ՀՀ ներքին աուդիտի մասնագիտական գործունեության ստանդարտները և ներքին աուդիտորների վարքագծի կանոնները, որոնք լիովին համապատասխանում են միջազգայնորեն ճանաչված ստանդարտներին և սահմանում են ներքին աուդիտի գործընթացի և ներքին աուդիտորների վարքագծի հիմնական սկզբունքները:

Մշակվել և ՀՀ ֆինանսների նախարարի 08.12.2011թ. թիվ 974-Ա հրամանով հաստատվել են «Հայաստանի Հանրապետության ներքին աուդիտի մասնագիտական գործունեության ստանդարտների կիրառման մեթոդական ցուցումները», որոնք ուղղորդում են ներքին աուդիտորներին պատշաճորեն կատարել իրենց առջև դրված խնդիրներն ու պարտականությունները:

«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի 7-րդ կետով սահմանված պահանջի կատարումն ապահովելու նպատակով մշակվել և ՀՀ ֆինանսների նախարարի 28.12.2011թ. թիվ 1100-Ա հրամանով հաստատվել են «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կազմակերպությունների ներքին աուդիտի ստորաբաժանումների, ներքին աուդիտորների և ներքին աուդիտի ստորաբաժանումների կանոնակարգերի գրանցամատյանների ձևերը և լրացման կարգերը»:

2011 թվականի ընթացքում մշակվել է նաև «Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի ներքին աուդիտի ձեռնարկի և կանոնակարգի մշակման ուղեցույցները հաստատելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի հրամանի նախագիծը, որը հաստատվել է 2012 թվականի փետրվարի 17-ին թիվ 143-Ն հրամանով: Նշված ձեռնարկով մշակվել են հանրային հատվածի կազմակերպությունների՝ միջազգային ստանդարտներին համապատասխան հաշվետվության օրինակելի ձևեր, որոնք հաշվետվությունները կդարձնեն ավելի մանրամասնեցված և բովանդակային:

Պետական գնումների ոլորտ

2011 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ է մտել «Գնումների մասին» ՀՀ նոր օրենքը, որով գնումների հետ կապված հարաբերությունների կարգավորման համար ներդրվել են առավել արդիական և լիարժեք մեխանիզմներ: Նշված օրենքի կիրարկումն ապահովելու նպատակով մշակվել և ՀՀ կառավարության 10.02.11թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատվել է «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը»:

Էլեկտրոնային գնումների համակարգի ներդրման շրջանակներում մշակվել և փորձարկվել է Հայաստանի էլեկտրոնային գնումների համակարգը (ծրագրային և ապարատային ապահովումները): Թվով երեք ընտրված պետական կառավարման մարմինների կողմից 2011 թվականի հոկտեմբերին կազմակերպվել են գնման գործընթացներ՝ էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով՝ իրական ռեժիմով:

Միաժամանակ էլեկտրոնային գնումների համակարգի կիրառումն ապահովելու համար ՀՀ ֆինանսների նախարարության կողմից մշակվել և ՀՀ կառավարության 29.12.11թ. թիվ 1916-Ն որոշմամբ հաստատվել է «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման կարգը»: Նշված որոշմամբ սահմանվում է, որ ՀՀ պետական մարմինները «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բաց ընթացակարգով կատարվող գնումները 2012 թվականի հունվարի 1-ից իրականացնելու են էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով:

Հայաստանը 2011 թվականի սեպտեմբերի 15-ին անդամակցել է ԱՀԿ Պետական Գնումների Համաձայնագրին: Նշված համաձայնագրին անդամակցությունը, բացի մի շարք քաղաքական և տնտեսական հնարավորություններ ընձեռելուց, փաստում է այն հանգամանքը, որ Հայաստանի գնումների իրավական համակարգը համապատասխանում է լավագույն միջազգային չափանիշներին: Համաձայնագրին անդամակցությունը Հայաստանի տեղական արտադրողներին հնարավորություն կընձեռի մասնակցելու համաձայնագրին անդամակցող 41 երկրներում կազմակերպվող պետական գնումների գործընթացներին՝ վերջիններիս արտադրողների հետ հավասար իրավունքներով, ինչը խթան կհանդիսանա հայաստանյան արտադրողների համար նոր շուկաներ գտնելու և արտադրությունն ընդլայնելու համար: Այսինքն՝ համաձայնագրին միանալը նաև հնարավորություններ է ընձեռում Հայաստանի Հանրապետության տնտեսվարող սուբյեկտներին մի կողմից բարելավել իրենց կողմից մատուցվող ծառայությունների որակը և մյուս կողմից՝ մեծացնել իրենց տնտեսական շրջանառության հնարավորությունները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 2011 ԹՎԱԿԱՆԻՆ

2011 թվականի փաստացի տվյալների ամփոփումը վկայում է, որ տնտեսության վերականգնումը շարունակվում է՝ հանգեցնելով մակրոտնտեսական իրավիճակի զգալի բարելավման: Տնտեսական ակտիվության վերականգնման գործընթացը հիմնականում պայմանավորված էր թե՛ համաշխարհային տնտեսության վերականգնմամբ, և թե՛ ՀՀ կառավարության կողմից իրականացված ակտիվ գործողություններով:

2011 թվականին գրանցվել է 4.6% տնտեսական աճ, որին նպաստել են տնտեսության գրեթե բոլոր ճյուղերը, բացառությամբ շինարարության: Գրանցվել է նաև արտաքին առևտրաշրջանառության աճ, հատկապես գրանցելով բարձր արտահանման աճ՝ 27.7% (դոլարային արտահայտությամբ): Արձանագրվել է նաև պետական բյուջեի եկամուտների անվանական ավելի քան 12.9% աճ, իսկ ծախսերի գծով անվանական աճը կազմել է 3.4%: Այսպիսով, 2011 թվականի արդյունքներով հարկաբյուջետային քաղաքականությունը ամբողջական պահանջարկի վրա եղել է զսպող:

<u>Համախառն պահանջարկ:</u> 2011 թվականին վերջնական սպառումն իրական արտահայտությամբ աճել է 3.1%-ով: Վերջնական սպառման աճը հիմնականում պայմանավորված է նախորդ տարվա նկատմամբ մասնավոր տրանսֆերտների, ինչպես նաև բնակչության տնօրինվող եկամուտների աճով: Վերջնական սպառման կառուցվածքում պետական և մասնավոր սպառման տեսակարար կշիռները 2011 թվականին կազմել են համապատասխանաբար 14.2% և 85.8%, ընդ որում, իրական արտահայտությամբ պետական սպառումը նախորդ տարվա համեմատ աճել է 5.4%-ով, իսկ մասնավոր սպառումը՝ 2.7%-ով:

Կապիտալ ներդրումներն իրական արտահայտությամբ կրճատվել են 7.1%-ով: Կրճատվել են ինչպես պետական, այնպես էլ մասնավոր ներդրումները՝ պայմանավորված շինարարության ոլորտում իրականացվող ներդրումների կրճատմամբ:

2011 թվականին արտահանման իրական ծավալները դրամային արտահայտությամբ աճել են 14.8%-ով՝ պայմանավորված համաշխարհային տնտեսությունում պահանջարկի աստիճանական վերականգնմամբ, արտահանավող ապրանքների մրցունակության բարձրացմամբ, ինչպես նաև արտահանման խրախուսմանն ուղղված՝ կառավարության կողմից ձեռնարկված գործողություններով: Այսինքն համախառն պահանջարկի աճին հիմնականում նպաստել է արտահանումը՝ շուրջ 3 տոկոսային կետով:

Ապրանքների և ծառայությունների ներմուծումն իրական արտահայտությամբ նվազել է 2.5%-ով, որը հիմնականում պայմանավորված է եղել ներմուծվող ապրանքների բարձր գներով:

Համախառն առաջարկ: 2011 թվականին համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) ընթացիկ գներով կազմել է 3817.3 մլրդ դրամ, ընդ որում, իրական ՀՆԱ-ն աճել է 4.6%-ով՝ 4.3% դեֆլյատորի պայմաններում: Ընդ որում, տնտեսության բոլոր ճյուղերում, բացառությամբ շինարարության, գրանցվել են աճի ցուցանիշներ:

2011 թվականի տնտեսական աճին ամենամեծ նպաստումն են ունեցել արդյունաբերության և գյուղատնտեսության ոլորտները՝ համապատասխանաբար 2.3 և 2.4 տոկոսային կետով: Նշված ժամանակահատվածում արդյունաբերությունը (ներառյալ էներգետիկան) աճել է 15.9%-ով, իսկ գյուղատնտեսության իրական աճը կազմել է 13.7%: Ծառայություններն աճել են 3.7%-ով և նպաստել տնտեսական աճին 1.5 տոկոսային կետով: Շինարարությունը դիտարկվող ժամանակահատվածում նվազել է 12.3%-ով՝ 2.1 տոկոսային կետով բացասական ներգործություն ունենալով աճի վրա: Գծապատկեր 1-ում ներկայացված են տնտեսության առանձին ճյուղերում արձանագրված իրական աճի վրա ազդեցության չափերը:

Գծապատկեր 1. 2010 և 2011 թվականների ՀՆԱ-ի իրական աճին տնտեսության ճյուղերի ազդեցության չափը, տոկոսային կետ



Աղյուսակ 1. 2004-2011թթ. տնտեսության ճյուղերի իրական աճերը նախորդ տարվա նկատմամբ

	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011
Արդյունաբերություն	1.8	5.6	-2.5	2.8	2.1	-6.9	10.5	15.9
Գյուղատնտեսություն	14.6	11.2	0.5	10.4	3.3	6.0	-15.7	13.7
Շինարարություն	15.4	27.9	37.7	18.2	11.3	-41.6	3.0	-12.3
Ծառայություններ	13.7	15.0	16.0	12.5	4.8	-3.3	4.5	3.7
Զուտ անուղղակի հարկեր	2.4	12.4	14.9	35.9	17.1	-22.5	9.2	4.3
Համախառն ներքին արդյունք	10.5	13.9	13.2	13.7	6.9	-14.1	2.1	4.6

Արդյունաբերություն[1]***:*** 2011 թվականին նախորդ տարվա համեմատ արձանագրվել է արդյունաբերական արտադրանքի իրական ծավալի 14.1% աճ: Հանքագործական արդյունաբերության, մշակող արդյունաբերության, էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում և ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում ենթաճյուղերի թողարկումներն իրական արտահայտությամբ աճել են համապատասխանաբար 12.2%-ով, 13.2%-ով, 21.6%-ով և 4.8%-ով:

Հանքագործական արդյունաբերության աճին նպաստել են ինչպես համաշխարհային շուկայում մետաղների գների բարձրացումը[2], այնպես էլ ճյուղի մրցունակության բարելավումը, որոնց արդյունքում ճյուղի արտադրանքի արտահանումն ընթացիկ գներով եղել է առաջանցիկ ճյուղի աճի նկատմամբ և կազմել է 21.1%:

Մշակող արդյունաբերության աճին նպաստել են սննդամթերքի արտադրության (16.7%), խմիչքների արտադրության (19.7%), հիմնային մետաղների արտադրության (9.9%) և պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրության (92.7%) աճերը: Սննդամթերքի արտադրության աճը պայմանավորված է ինչպես տնօրինվող եկամտի բարձր աճով, այնպես էլ արտաքին պահանջարկի աճով, որն ընթացիկ գներով կազմել է 30.5%:

Էլեկտրաէներգիայի արտադրության աճին հիմնականում նպաստել է ՋԷԿ-երի կողմից արտադրված էլեկտրաէներգիայի 67.8% աճը՝ պայմանավորված Իրանի Իսլամական Հանրապետություն արտահանման ծավալների աճով:

Գյուղատնտեսություն: 2011 թվականին նախորդ տարվա նկատմամբ արձանագրվել է գյուղատնտեսության արտադրանքի իրական ծավալի 14.1% աճ: Ընդ որում, գյուղատնտեսության աճը հիմնականում պայմանավորվել է բուսաբուծության արտադրանքի 26.6% աճով: Բուսաբուծության աճին նպաստել են ինչպես բնակլիմայական բարենպաստ պայմանները, որոնք նախորդ տարվա ընթացքում ենթաճյուղի խորը անկման պատճառ էին հանդիսացել, այնպես էլ կառավարության կողմից իրականացված մի շարք ծրագրեր, մասնավորապես՝ 2011 թվականին կառավարությունը ձեռնարկեց վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման, գյուղատնտեսական մթերքների իրացման շղթայի ապահովման, ցորենի և գարու սերմնաբուծության և սերմնարտադրության, օրգանական գյուղատնտեսության զարգացման, տեղական կենսապարարտանյութերի զարգացման, գյուղատնտեսական տեխնիկայի վերազինման ծրագրեր:

Անասնաբուծությունում գրանցվել է իրական ծավալի աննշան՝ 0.1% աճ: 26.2% աճ է արձանագրվել նաև ձկնորսության և ձկնաբուծության ենթաճյուղում:

---

[1] Այստեղ և հետագա շարադրանքում ներկայացված են ճյուղերի համախառն թողարկումների իրական ծավալների ինդեքսները:
[2] ԱՄՀ տվյալներով պղնձի գների միջին աճը կազմել է շուրջ 17%:

Շինարարություն: Ֆինանսավորման բոլոր աղբյուրների հաշվին իրականացված շինարարության ծավալները 2011 թվականին կազմել են 480.8 մլրդ դրամ և նախորդ տարվա համեմատ իրական արտահայտությամբ նվազել 11.5%-ով: Իրականացված կապիտալ շինարարության (ըստ ֆինանսավորման աղբյուրների) կառուցվածքում ամենամեծը կշիռն ունեցել են կազմակերպությունների միջոցները՝ կազմելով 46.1%, որոնց հաշվին իրականացված շինարարության ծավալները նախորդ տարվա համեմատ նվազել են 13.5%-ով: Պետական բյուջեի միջոցներով իրականացված շինարարությունը կազմել է 17.6%՝ աճելով 15.2%-ով: Նախորդ տարվա համեմատ միջազգային վարկերի միջոցների հաշվին իրականացված շինարարության կշիռը նվազել է 4.1 տոկոսային կետով, իսկ ծավալների անկումը կազմել է 44.6%: Շարունակում են անկում ապրել ճգնաժամից հետո սկսված՝ բնակչության կողմից ֆինանսավորվող շինարարության, հիմնականում՝ բնակարանային շինարարության ծավալները: Մասնավորապես՝ իրականացված կապիտալ շինարարության կառուցվածքում բնակչության միջոցները կազմել են 16.1%՝ իրական արտահայտությամբ նվազելով 30.5%-ով:

Արդյունքում կարող ենք արձանագրել, որ շինարարության ծավալների նման անկումը հիմնականում պայմանավորված է ըստ ֆինանսավորման աղբյուրների ամենամեծ մասնաբաժինն ունեցող՝ կազմակերպությունների, ինչպես նաև բնակչության միջոցների հաշվին իրականացվող շինարարության ծավալների կրճատմամբ:

Գծապատկեր 2. 2010 և 2011 թվականներին շինարարության կառուցվածքն ըստ տնտեսության ճյուղերի



Ըստ տնտեսության ճյուղերի՝ շինարարությունը հիմնականում ուղղված է եղել հանքագործական արդյունաբերությանը, կրթության և տրանսպորտի ոլորտներին, որոնց մասնաբաժինները շինարարության ծավալներում փոփոխվել են՝ աճելով համապատասխանաբար 4.2, 2.9 և 2.8 տոկոսային կետերով: Իսկ անշարժ գույքի հետ կապված գործառնությունների, մշակող արդյունաբերության, տեղեկատվության և կապի, էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրության և բաշխման ոլորտների մասնաբաժինները նվազել են համապատասխանաբար 8, 5.6, 2.1, 1.9 տոկոսային կետերով (տե՛ս Գծապատկեր 2):

Ծառայություններ և առևտուր: 2011 թվականին մատուցված ծառայությունների ծավալն իրական արտահայտությամբ նախորդ տարվա նկատմամբ աճել է 6.1%-ով, որին հիմնականում նպաստել է ֆինանսական և ապահովագրական գործունեության ծառայությունների 24.3% աճը: Ծառայությունների կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ են կազմել ֆինանսական և ապահովագրական գործունեության (22.3%), տեղեկատվության և կապի (22.9%), ինչպես նաև տրանսպորտի (20.6%) ծառայությունները: Աճել են կրթության, կացության և հանրային սննդի մասնաբաժինները ծառայությունների մեջ:

Գծապատկեր 3. Ծառայությունների կառուցվածքը 2010 և 2011 թվականներին



2011 թվականին առևտրի շրջանառությունն ընթացիկ գներով կազմել է 2042.3 մլրդ դրամ, որը նախորդ տարվա համեմատ, համադրելի գներով, աճել է 3.5%-ով, որին հիմնականում նպաստել է մեծածախ առևտրի 5.5% աճը:

Տրանսպորտ և կապ: 2011 թվականին հանրապետությունում ընդհանուր օգտագործման տրանսպորտով բեռնափոխադրումների ծավալը 2010 թվականի համեմատ նվազել է 8%-ով, որը

պայմանավորված է ավտոմոբիլային տրանսպորտի բեռնափոխադրումների 20.2% նվազմամբ, որն իր հերթին արդյունք է ներհանրապետական ավտոմոբիլային բեռնափոխադրումների ծավալների ավելի մեծ՝ 25.4% նվազման (տեսակարար կշիռն ընդհանուր ավտոմոբիլային բեռնափոխադրումների մեջ կազմում է 78.5%):

Ըստ երկաթուղային, օդային և մայրուղային խողովակաշարային տրանսպորտի տեսակների՝ բեռնափոխադրումների ծավալներն աճել են համապատասխանաբար 6.7%-ով, 13.6%-ով և 15.8%-ով:

Գներ և սակագներ: 2011 թվականի տարեվերջին 12-ամսյա գնաճը կազմել է 4.7%, ինչը հիմնականում պայմանավորված է եղել պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչքը և ծխախոտը) գների՝ 5.8% (նպաստումը գնաճին՝ 3.1 տոկոսային կետ), ոչ պարենային ապրանքների գների՝ 4.3% (նպաստումը գնաճին՝ 0.7 տոկոսային կետ) և ծառայությունների սակագների 2.9% (նպաստումը գնաճին՝ 0.9 տոկոսային կետ) աճով: Գնաճի նվազմանը և նպատակային թիրախի կենտրոնական արժեքից շեղման թույատրելի միջակայքում ձևավորմանը նպաստեցին ինչպես տարեսկզբին ԿԲ-ի դրամավարկային պայմանների խստացումը և տարվա ընթացքում իրականացված զսպողական հարկաբյուջետային քաղաքականությունը, այնպես էլ գյուղատնտեսության ճյուղում առաջարկի վերականգնումը, արտաքին աշխարհից փոխանցվող գնաճային ճնշումների թուլացումը և աշխատանքի շուկայի թույլ գնաճային ազդեցությունը:

Աղյուսակ 2. 2011 թվականի գնաճին ամենամեծ նպաստումն ունեցող ապրանքատեսակները

		Ժամանակահատվածի վերջի		Տարեկան միջին		
	Ամենամեծ նպաստումն ունեցող ապրանքատեսակները	գնաճ տոկոս	նպաստումը գնաճին	գնաճ տոկոս	նպաստումը գնաճին	Կշիռն ընդհանու-րի մեջ
1	հացամթերք	2.3	0.2	11	1.2	10.63
2	մսամթերք	12.7	1.3	12	1.2	10.19
3	կաթնամթերք	6.8	0.3	18.6	0.8	4.24
4	կենդանական և բուսական յուղ	11.8	0.4	17	0.5	3.23
5	միրգ	-	-	15.8	0.6	3.65
6	բանջարեղեն և կարտոֆիլ	-	-	10.1	0.6	6.26
7	շաքարավազ	35.4	0.4	20.9	0.2	1.07
8	սուրճ, թեյ, կակաո	18.9	0.7	10.5	0.4	3.54
9	բենզին	17.7	0.2	16.4	0.2	1.2
10	բուժսպասարկման ծառայություններ	12.6	0.5	11.1	0.4	3.7
	ԸՆԴԱՄԵՆԸ ՆՊԱՍՏՈՒՄԸ	-	**3.9**	**-**	**6.1**	**47.7**

2011 թվականին միջին գնաճը կազմել է 7.7%, որը հիմնականում պայմանավորված է եղել պարենային ապրանքների (ներառյալ՝ ոգելից խմիչքը և ծխախոտը) գների 11.2% (նպաստումը գնաճին՝ 6 տոկոսային կետ), ոչ պարենային ապրանքների գների՝ 3.4% (նպաստումը գնաճին՝ 0.5 տոկոսային կետ) և ծառայությունների սակագների՝ 3.6% (նպաստումը գնաճին՝ 1.1 տոկոսային կետ) աճով:

Աշխատանքի շուկա: 2011 թվականին պաշտոնապես գրանցված գործազուրկների մակարդակը հանրապետությունում նախորդ տարվա նկատմամբ նվազել է 0.8 տոկոսային կետով և կազմել 6.2%: 2011 թվականին զբաղվածների թիվը նախորդ տարվա համեմատ, պայմանավորված տնտեսության աշխուժացմամբ, աճել է շուրջ 1.4%-ով՝ կազմելով 1120.8 հազ. մարդ:

2011 թվականին միջին ամսական անվանական աշխատավարձը 2010 թվականին գրանցված ցուցանիշի նկատմամբ աճել է 6.1%-ով: 2011 թվականին պետական հատվածի աշխատավարձի աճը (6.7%) գերազանցել է ոչ պետական հատվածում աշխատավարձի աճին (4.0%):

Հաշվետու ժամանակահատվածում տնտեսության պետական և ոչ պետական հատվածներում միջին անվանական աշխատավարձը համապատասխանաբար կազմել է 93487 դրամ և 141314 դրամ, իսկ միջին աշխատավարձը՝ 115451 դրամ:

<u>Արտաքին հատված:</u> 2011 թվականին շարունակել են արտահայտվել հակաճգնաժամային միջոցառումների շրջանակներում արտահանման խթանման ուղղությամբ ՀՀ կառավարության քաղաքականության դրական արդյունքները. տնտեսության արտաքին հատվածի բարելավումը ձևավորվում էր շատ արագ ինչը, բացի կառավարության քաղաքականությունից, պայմանավորված է նաև արտաքին միջավայրի բարենպաստ զարգացումներով: Արտաքին պահանջարկի աճի հետ մեկտեղ տարեսկզբից ավելացել են նաև Հայաստան ներհոսող տրանֆերտները և գործոնային եկամուտները՝ նպաստելով ընթացիկ հաշվի պակասուրդի կրճատմանը մինչև ՀՆԱ-ի 10.9 տոկոսը:

Գծապատկեր 4. Ընթացիկ հաշվի տարրերի դինամիկան 2000-2011 թվականներին (մլն ԱՄՆ դոլար)



2011 թվականին ապրանքների գծով արտաքին առևտրի բացասական մնացորդը (տե՛ս Գծապատկեր 4) կազմել է 2086.5 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 54.0 մլն ԱՄՆ դոլարով կամ 2.7%-ով և կազմելով ՀՆԱ-ի 20.4%-ը՝ նախորդ տարվա 21.7%-ի դիմաց:

ՀՆԱ-ի նկատմամբ ապրանքների և ծառայությունների արտահանման կշիռը (միջին հակումը) 2011 թվականին կազմել է 23.5% (2010 թվականին՝ 20.7%): Ապրանքների և ծառայությունների ներմուծումը 2011 թվականին կազմել է ՀՆԱ-ի 46.7%-ը՝ նախորդ տարվա 44.9%-ի դիմաց:

Արտաքին առևտուր: Արտաքին ապրանքաշրջանառությունը 2011 թվականի արդյունքներով կազմել է 5481.0 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով 14.4%-ով: Հաշվետու ժամանակահատվածում տեղի է ունեցել դոլարային արտահայտությամբ արտահանման և ներմուծման ծավալների աճ. արտահանումն աճել է 27.7%-ով՝ կազմելով 1329.5 մլն ԱՄՆ դոլար, իսկ ներմուծումը՝ 10.7%-ով և կազմել է 4151.5 մլն ԱՄՆ դոլար:

Ներմուծում: Ներմուծման աճը հիմնականում պայմանավորված էր ընթացիկ տարում ինչպես բնակչության տնօրինվող եկամուտների աճով, այնպես էլ տնտեսության վերականգմամբ: Ներմուծման աճ է արձանագրվել կառուցվածքում մեծ կշիռ ունեցող գրեթե բոլոր ապրանքների գծով, բացառությամբ «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի, որը նվազել է 11.2%-ով՝ 1.1 տոկոսային կետով հակազդելով ներմուծման աճին: Բացառություն են կազմել նաև ներդրումային բնույթի ապրանքները, որոնց տեսակարար կշիռն ընդհանուր ներմուծման մեջ կազմել է 15.1%՝ 4.2 տոկոսային կետով զիջելով 2010 թվականի համապատասխան ցուցանիշը (19.2%): Ընդ

որում, «Մեքենաներ, սարքավորումներ, մեխանիզմներ» և «Սարքեր և ապարատներ» ապրանքախմբերի նվազումը 2.5 տոկոսային կետով հակազդել է ներմուծման աճին: Ներմուծման ընդհանուր 10.7% աճի ամենաբարձր՝ 4.2 տոկոսային կետը պայմանավորվել է «Հանքահումքային արտադրանք», 2.0 տոկոսային կետը՝ «Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտ» և 1.5 տոկոսային կետը՝ «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբերի ներմուծման աճով, որոնք համապատասխանաբար կազմել են 23.4, 24.9 և 35.3 տոկոս:

Արտահանում: Տնտեսության արտահանման ոլորտում ՀՀ կառավարության հակաճգնաժամային միջոցառումների արդյունքները, զուգորդվելով հումքային բնույթի ապրանքատեսակների արտահանման շուկաների վիճակի բարելավման հետ, հաշվետու տարվա ընթացում ամրապնդեցին արտահանման ձեռքբերումները: Սակայն, չորրորդ եռամսյակում պղնձի միջազգային գների նվազմամբ պայմանավորված՝ ՀՀ արտահանման աճի տեմպը փոքր-ինչ դանդաղեց:

2011 թվականի արդյունքներով արտահանման 27.7% աճի ամենաբարձր՝ 8.8 տոկոսային կետը պայմանավորվել է «Հանքահումքային արտադրանք» ապրանքախմբի արտահանման 30.0% աճով: Արտահանման աճի 6.0 տոկոսային կետը պայմանավորվել է «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր», 5.1 տոկոսային կետը՝ «Պատրաստի սննդի արտադրանք» և 3.1 տոկոսային կետը՝ «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբերի ծավալների աճով, որոնք կազմել են համապատասխանաբար 46.5, 40.3 և 9.7 տոկոս:

Նորմալացված առևտրային հաշվեկշիռ[3]: Տնտեսական անվտանգությունը բնութագրող ցուցանիշներից է նորմալացված առևտրային հաշվեկշռի գործակիցը, որը ճգնաժամային տարիներին ցուցաբերել է վատթարացման (տես Գծապատկերը) միտում՝ 2009 թվականին կազմելով -0.65: Վատթարացման խորացումը հիմնականում պայմանավորված էր դոլարային արտահայտությամբ արտահանման անկմամբ, իսկ 2010 թվականին, արտահանման դոլարային արտահայտությամբ առաջանցիկ աճով պայմանավորված, համապատասխան ցուցանիշը կազմել է -0.57՝ ցուցաբերելով որոշակի բարելավում նախորդի համեմատ: 2011 թվականին նորմալացված առևտրային հաշվեկշիռը կազմել է -0.51՝ շարունակելով նախորդ տարվա բարելավման միտումը:

[3] Նշված ցուցանիշը հաշվարկվում է որպես առևտրային հաշվեկշռի և ապրանքաշրջանառության հարաբերակցություն և ցույց է տալիս թե միավոր արտաքին ապրանքաշրջանառության մեջ որքան զուտ արտահանված ապրանք կա:

Գծապատկեր 5. Նորմալացված առևտրային հաշվեկշռի գործակիցը 1997-2011 թվականներին



Ներմուծման ծածկման գործակից: 2011 թվականին ներմուծման ծածկման գործակիցը նախորդ տարվա համեմատ աճել է 4.2 տոկոսային կետով. արտահանման հաշվին ֆինանսավորվել է ներմուծման 50.2%-ը (տես Գծապատկեր 6):

Գծապատկեր 6. 1996-2011 թվականների ներմուծման ծածկման գործակիցը[4], տոկոսներով



Ներճյուղային առևտուր: Վերջին տարիների ՀՀ ներճյուղային առևտրի[5] մակարդակի վերլուծությունը վկայում է «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր»,

[4] Ներմուծման ծածկման գործակիցը հաշվարկված է որպես ապրանքների և ծառայությունների արտահանման և ներմուծման հարաբերակցություն (ՖՕԲ գներով):

«Թանկարժեք ու կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» և «Արվեստի ստեղծագործություններ» ապրանքախմբերի գծով համեմատաբար կայուն երկկողմանի արտաքին առևտրի պահպանման մասին: 2011 թվականին լրիվ երկկողմանի էր նաև «Հանքահումքային արտադրանք» և «Պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբերի արտաքին առևտուրը:

Գծապատկերում դրական և բացասական նշանները տրամադրում են լրացուցիչ տեղեկատվություն և պայմանավորված են համապատասխան ապրանքախմբերի արտաքին առևտրային հաշվեկշռի դրական կամ բացասական մնացորդով: «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» (լրիվ երկկողմանի առևտուր) ապրանքախմբի դրական առևտրային մնացորդը վկայում է մեր երկրի կողմից արտաքին աշխարհի պահանջարկը բավարարելու մասին:

Գծապատկեր 7. 2011 թվականի ներճյուղային առևտուրը



Մնացած ապրանքախմբերով տեղի է ունեցել մեծ մասամբ միակողմանի առևտուր՝ ներքին պահանջարկը բավարարելու ուղղությամբ (բացասական առևտրային մնացորդ):

Արտաքին առևտուրն ըստ գործընկեր երկրների: 2011 թվականին ՀՀ արտաքին առևտրաշրջանառության 26.9%-ը բաժին է ընկել ԱՊՀ և 32.4%-ը՝ ԵՄ երկրներին: 2010 թվականին նշված երկրների տեսակարար կշիռները կազմել են 28.0% և 31.9%: ԱՊՀ երկրների համեմատ ԵՄ երկրների հետ ՀՀ ապրանքաշրջանառության աճը տարեսկզբից առաջանցիկ է և 2011 թվականին

[5] Ներճյուղային առևտուրը տեղի է ունենում, երբ երկիրը և՛ ներմուծում, և՛ արտահանում է առանձին ճյուղում արտադրվող ապրանքատեսակները: Ներճյուղային առևտրի գործակիցը իրենից ներկայացնում է արտահանման և ներմուծման բացարձակ արժեքով փոքրի հարաբերակցությունը մեծին: “0” նշանակում է լրիվ միակողմանի, իսկ “1”՝ լրիվ երկկողմանի առևտուր:

նախորդ տարվա համեմատ կազմել է 16.3%, իսկ ԱՊՀ երկրների արտաքին առևտրաշրջանառության աճը՝ 9.9%: ՀՀ խոշոր առևտրային գործընկեր-երկրների շրջանակում ընդգրկված են Չինաստանը (առևտրաշրջանառության 7.7%-ը), Գերմանիան (7.4%), Իրանը (5.9%), Բուլղարիան (4.6%), ԱՄՆ-ն (4.5%), Թուրքիան (4.4%), ինչպես նաև ԱՊՀ երկրներից Ռուսաստանը (20.3%) և Ուկրաինան (4.5%): Վերջիններիս բաժին է ընկել ՀՀ և ԱՊՀ երկրների միջև հաշվետու տարվա ընթացքում կատարված ապրանքաշրջանառության շուրջ 92%-ը: Հանրապետության թվով 38 հիմնական գործընկեր երկրները մեծամասամբ (մոտ 80%-ը) հանդիսանում են ԱՀԿ անդամ պետություններ:

Փոխարժեք: 2011 թվականի տարեսկզբից ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքը դրսևորել է դանդաղ արժեզրկման միտում: Տարեվերջին՝ դեկտեմբեր ամսին, փոխարժեքը կազմել է 383.2 դրամ 1 ԱՄՆ դոլարի դիմաց, որը նախորդ տարվա դեկտեմբերին ձևավորված միջին փոխարժեքի (360.5) նկատմամբ արժեզրկվել է 6.3%-ով: 2011 թվականի դրամի միջին անվանական փոխարժեքը կազմել է 372.5 դրամ 1 ԱՄՆ դոլարի դիմաց՝ նախորդ տարվա համեմատ գրանցելով 0.3% արժևորում՝ 2010 թվականի 2.8% արժեզրկման դիմաց:

Գծապատկեր 8. 2011թ. դրամ/ԱՄՆ դոլար միջին (կուտակային) փոխարժեքի փոփոխության (նախորդ տարվա համեմատ, %) դինամիկան



ՀՀ ազգային արժույթը ոչ միայն դոլարի, այլև արտաքին առևտրի տեսանկյունից առավել կարևոր մի քանի արժույթներից բաղկացած «զամբյուղի» նկատմամբ (անվանական արդյունավետ փոխարժեք[6]) 2011 թվականին նախորդ տարվա նկատմամբ արժեզրկվել է 2.7%-ով, ինչը նշանակում է, որ ՀՀ դրամն արժեզրկվել է հիմնական արժույթների միավորված արժեքի համեմատ, և դրամի

[6] Արդյունավետ փոխարժեքը ցույց է տալիս ազգային արժույթի փոխարժեքի միջինացված շարժընթացը ոչ թե մեկ, այլ մի քանի, հանրապետության համար ավելի կարևոր արժույթներից բաղկացած "զամբյուղի" նկատմամբ: Ընդ որում, հաշվարկներում զամբյուղը կազմող արժույթները նախ բերվում են դոլարային արտահայտության, որից հետո ճշգրտվում են ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեքով, այսինքն հաշվարկվում է դրամի կրոս կուրսը՝ յուրաքանչյուր տարադրամի 1 միավորի դիմաց (դրամի անուղղակի գնանշում):

դիրքերը թուլացել են գործընկեր երկրների արժույթների համեմատ: Իսկ Հայաստանի և հիմնական գործընկեր երկրների գներով ճշգրտված զամբյուղների հարաբերական արժեքը՝ իրական արդյունավետ փոխարժեքը, 2010 թվականի 1,01% արժևորման դիմաց 2011 թվականի ընթացքում արժեզրկվել է 1.2%-ով[7] (տես Գծապատկեր 9):

Գծապատկեր 9. Իրական արդյունավետ փոխարժեքի[8] ամսական միջին շարժընթացը 2010 և 2011 թվականներին



Ֆինանսական շուկա: 2011 թվականի վերջում փողի բազան կազմել է 671.3 մլրդ դրամ՝ տարեսկզբի նկատմամբ աճելով 32.3%-ով: Ընդ որում, զուտ արտաքին ակիվներն աճել են 3.7%-ով, իսկ զուտ ներքին ակտիվները՝ շուրջ 3.7 անգամ:

Նույն ժամանակահատվածում փողի բազայում ԿԲ-ից դուրս կանխիկն աճել է 14.5%-ով, արդյունքում տարեսկզբի նկատմամբ կանխիկի տեսակարար կշիռը փողի բազայում նվազել է 9.2 տոկոսային կետով՝ կազմելով շուրջ 59.4%: Պարտադիր պահուստները դրամով աճել են 2.8 անգամ, իսկ արտարժույթով՝ 16.2%-ով, սակայն նշենք, որ վերջինիս կշիռը փողի բազայում տարեսկզբի նկատմամբ նվազել է 2.1 տոկոսային կետով՝ կազմելով շուրջ 15.3%:

[7] Հաշվարկներում օգտագործվել են ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական կայքի 2012թ. մարտի 22-ի դրությամբ տվյալները:

[8] Իրական արդյունավետ փոխարժեքի ինդեքսն անվանական արդյունավետ փոխարժեքն է՝ ճշտված գներով, և հանդիսանում է այն հիմնական ցուցանիշը, որը բնութագրում է հիմնական արժույթների միավորված շարժընթացն ու շարժման ուղղությունը և կարող է հիմք հանդիսանալ վերջիններիս զարգացման միտումների կողմնորոշիչ հետևություններ անելու համար: Բացի դրանից, այն հիմնական ցուցանիշն է, որը բնութագրում է երկրի մրցունակությունը միջազգային շուկայում: Իրական արդյունավետ փոխարժեքը ցույց է տալիս մեր և գործընկեր երկրների միջև հարաբերական գների վարքագիծը՝ բերված մեկ արժույթի:

2011 թվականի տարեվերջին փողի զանգվածը կազմել է 1127 մլրդ դրամ՝ տարեսկզբի նկատմամբ աճելով 23.7%-ով: Ընդ որում, զուտ արտաքին ակտիվները նվազել են 95.3%-ով, իսկ զուտ ներքին ակտիվներն աճել են 56.6%-ով:

Նույն ժամանակահատվածում փողի զանգվածում բանկային համակարգից դուրս կանխիկը աճել է 14.8%-ով, իսկ դրամային և արտարժութային ավանդներն աճել են համապատասխանաբար 42.7 և 20 տոկոսով: Այս պայմաններում տարվա ընթացքում նկատվել է դոլարայնացման մակարդակի նվազում՝ նախորդ տարվա 64.2%-ի դիմաց դոլարային ավանդների կշիռն ընդհանուր ավանդների մեջ կազմել է 60.1%: Վերջինիս նպաստել է ԿԲ-ի և Կառավարության կողմից ապադոլարայնացման միջոցառումների իրականացումը, մասնավորապես՝ ԿԲ-ն իրականացրել է պարտադիր պահուստավորման մեխանիզմի փոփոխություններ[9]:

Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներից և ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդները 2011 թվականի վերջին նախորդ տարվա համեմատ ավելացել են 38.1%-ով[10] և ՀՆԱ-ի մեջ կազմել շուրջ 25.4%, ինչը 5.3 տոկոսային կետով բարձր է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից: Առևտրային բանկերի մինչև մեկ տարի ժամկետով դրամով ներգրավված ավանդների տոկոսադրույքները 2011 թվականին միջին հաշվով կազմել են 9.25%՝ 2010 թվականի 8.95%-ի համեմատ:

Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրված վարկերը 2011 թվականի վերջի դրությամբ նախորդ տարվա համեմատ ավելացել են 321.2 մլրդ դրամով կամ 33.8%-ով[11] և ՀՆԱ-ի մեջ կազմել շուրջ 33.3%, ինչը 6.2 տոկոսային կետով բարձր է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից (վարկերի 61%-ը կազմում են արտարժույթով վարկերը): Առևտրային բանկերի՝ դրամով տրամադրված վարկերի տոկոսադրույքները 2011 թվականին միջին հաշվով կազմել են 17.76%՝ 2010 թվականի 19.2%-ի համեմատ:

Հատուկ ուշադրության է արժանի նաև այն, որ առևտրային բանկերի՝ մինչև մեկ տարի ժամկետով դրամով ներգրավված ավանդների և վարկերի տոկոսադրույքների միջև սպրեդը 2011 թվականին 2010 թվականի նկատմամբ նվազել է 1.7 տոկոսային կետով՝ կազմելով 8.5 տոկոսային կետ:

---

[9] Տարվա սկզբին սահմանվել էր, որ բանկերի կողմից արտարժույթով ներգրավված միջոցների դիմաց ԿԲ-ում տեղաբաշխվող պարտադիր պահուստների (որը կազմում է ներգրավված միջոցների 12%-ը) ներգրավված արտարժութային միջոցների 9%-ը պետք է իրականացվի Հայաստանի Հանրապետության դրամով պահուստավորում: Այնուհետև, դեկտեմբերին ավարտվեց ապադոլարայնացման միջոցառումների շրջանակում պարտադիր պահուստավորման մեղանիզմի փոփոխության վերջին փուլը, որը ենթադրում է ներգրավված արտարժութային միջոցների դիմաց միայն դրամով պահուստավորում:

[10] Ընդգրկված չեն կուտակված տոկոսները:

[11] Ընդգրկված չեն կուտակված տոկոսները: Վարկերի մեջ ներառված են նաև ֆակտորինգային, լիզինգային գործառնությունները և ռեպո համաձայնագրերը:

Տարվա ընթացքում ԿԲ կողմից իրականացվող տոկոսադրույքների քաղաքականությունը համահունչ էր ձևավորված մակրոտնտեսական միջավայրին: Այսպես, տարվա սկզբին գնաճային ճնշումները մեղմելու նպատակով ԿԲ-ն 2011 թվականի փետրվարից իրականացրել է կոշտ դրամավարկային քաղաքականություն՝ երեք ամիս շարունակ բարձրացնելով վերաֆինանսավորման տոկոսադրույքն ընդհանուր առմամբ 1.25 տոկոսային կետով՝ հասցնելով այն 8.5%-ի, իսկ հարկաբյուջետային քաղաքականությունն այդ ժամանակահատվածում շարունակում էր դրսևորել հիմնականում զսպողական վարքագիծ: Նշված մակրոտնտեսական քաղաքականությունը, ի թիվս գնաճի վրա ազդող այլ գործոնների, նպաստել է 12-ամսյա գնաճի ցուցանիշի կտրուկ նվազմանը (2011թ. մարտի 11.5%-ից այն կտրուկ նվազեց՝ դեկտեմբերին հասնելով 4.7%-ի): Նշենք նաև, որ տարվա երկրորդ կեսից գնաճային ճնշումների թուլացմամբ պայմանավորված՝ սեպտեմբեր ամսին ԿԲ-ի խորհրդի որոշմամբ վերաֆինանսավորման տոկոսադրույքը նվազեցվեց 0.5 տոկոսային կետով՝ սահմանվելով 8%:

2011 թվականի ընթացքում ՀՀ պետական (շուկայական) պարտատոմսերի շուկայում նկատվել է ինչպես տեղաբաշխման ժամկետայնության, այնպես էլ տոկոսադրույքների աճ: Այսպես, եթե 2010 թվականի ընթացքում տեղաբաշխված պետական արժեթղթերի միջին եկամտաբերությունը կազմել է 11.9%, ապա 2011 թվականին այն կազմել է 12.3%, իսկ պարտատոմսերի տեղաբաշխման ժամկետայնությունը 2011 թվականին կազմել է 1702 օր՝ նախորդ տարվա 1032-ի դիմաց:

2011 թվականի ընթացքում տեղաբաշխված պետական արժեթղթերի ծավալը կազմել է 139.2 մլրդ դրամ: Հաշվետու ժամանակահատվածում տեղաբաշխված պետական արժեթղթերի միջին ժամկետայնությունը կազմել է 1696 օր:

2011 թվականի վերջին պետական (շուկայական) պարտատոմսերի նկատմամբ պահանջարկը գերազանցել է թողարկման ցուցանիշը 1.81 անգամ, իսկ տեղաբաշխում/թողարկում հարաբերակցության միջին մեծությունը կազմել է 0.95:

Հարկաբյուջետային հատված: 2011 թվականին հարկաբյուջետային քաղաքականության բնույթը եղել է զսպող: Տարվա արդյունքներով պետական բյուջեի ընդհանուր եկամուտները կազմել են ՀՆԱ-ի 23.1%-ը՝ նախորդ տարվա 22.3%-ի դիմաց, իսկ հարկային եկամուտները՝ ներառյալ սոցիալական ապահովագրության վճարները, կազմել են ՀՆԱ-ի 20.4%-ը՝ նախորդ տարվա 20%-ի դիմաց: Նախորդ տարվա նկատմամբ պետական բյուջեի եկամուտների անվանական աճը կազմել է 12.9%, իսկ հարկային եկամուտներինը, ներառյալ սոցիալական ապահովագրության վճարները՝ 11.1%:

Բյուջետային քաղաքականության մոտեցումը եղել է բազմակողմ և միաժամանակ հավասարակշռված: Ընդ որում, մի կողմից նպատակ է դրվել չհակազդել տնտեսական

վերականգնմանը, մյուս կողմից, մակրոտնտեսական կայունության նպատակադրմամբ պայմանավորված՝ ապահովել արդյունավետ պարտքի կառավարում և պակասուրդի աստիճանական կրճատում:

ՀՀ պետական բյուջեի ծախսերի մասով 2011 թվականի արդյունքներով ծախսեր/ՀՆԱ ցուցանիշը դրսևորել է նվազման միտումներ նախորդ տարվա նկատմամբ՝ 1.4 տոկոսային կետի չափով, և կազմել 25.8%: Ընթացիկ ծախսերի գծով գրանցվել է անվանական աճ՝ 6.4%-ի չափով, սակայն արձանագրվել է անկում ընթացիկ ծախսեր/ՀՆԱ ցուցանիշի գծով, ընդ որում, նշված ցուցանիշը կազմել է 21.3%՝ նախորդ տարվա 21.8%-ի դիմաց: Կապիտալ ծախսերը 2011 թվականին կազմել է ՀՆԱ-ի 4.7%-ը՝ նախորդ տարվա 5.5%-ի փոխարեն:

ՀՀ պետական բյուջեի պակասուրդը 2011 թվականին կազմել է ՀՆԱ-ի 2.8%-ը՝ նախորդ տարվա 5%-ի դիմաց:

Հարկաբյուջետային ազդակը: 2011 թվականի արդյունքներով գրանցվել է 1.2% զսպող հարկաբյուջետային ազդակ, ընդ որում, եկամուտների գծով գրանցվել է 0.1%, իսկ ծախսերի գծով՝ 1.1% զսպող ազդակ:

Գծապատկեր 10. Հարկաբյուջետային ազդակը 2009 թվականից եռամսյակներով



ՀՀ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեով, ելնելով 4.6% տնտեսական աճի կանխատեսումից, ծրագրվել էր ստանալ ավելի քան 852.4 մլրդ դրամ եկամուտներ, որից 796.4 մլրդ դրամը՝ սեփական եկամուտների, 56 մլրդ դրամը՝ արտաքին պաշտոնական դրամաշնորհների տեսքով: «ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 11-րդ կետի և 11-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներից ելնելով՝ պետության դրամական միջոցների համախմբված հաշվառման նպատակով պետական բյուջեի ծրագրային և փաստացի ցուցանիշներում ներառվել են նաև ՀՀ պետական հիմնարկների համար բացված արտաբյուջետային հաշիվների համապատասխան շրջանառությունը, ինչպես նաև առանց սահմանափակման պետական բյուջեից կատարվող վճարումները: Նշված միջոցները ներառյալ, ինչպես նաև հաշվի առնելով կառավարության լիազորությունների շրջանակներում կատարված մյուս փոփոխությունները՝ ՀՀ պետական բյուջեի եկամուտների ծրագիրն ավելացվել է 30.7 մլրդ դրամով (3.6%-ով) և կազմել շուրջ 883.2 մլրդ դրամ, որից 818.5 մլրդ դրամը՝ սեփական եկամուտների, 64.6 մլրդ դրամը՝ պաշտոնական դրամաշնորհների գծով: 2011 թվականի փաստացի եկամուտները կազմել են շուրջ 880.9 մլրդ դրամ, որոնք նախորդ տարվա ցուցանիշը գերազանցել են 100.4 մլրդ դրամով կամ 12.9%-ով, իսկ ծրագրային ցուցանիշը կատարվել է 99.7%-ով՝ պայմանավորված պաշտոնական դրամաշնորհների կատարողականով, որը կազմել է 91.9%, կամ կանխատեսվածից պակաս է ստացվել 5.2 մլրդ դրամ: Առանց արտաբյուջետային եկամուտների, պետական բյուջեի ընդհանուր եկամուտների կատարողականը կազմում է 99.9%: Հարկային եկամուտները (ներառյալ՝ պետական տուրքերը և պարտադիր սոցիալական ապահովության վճարները) և այլ եկամուտները գերազանցել են ճշտված ծրագրային ցուցանիշները համապատասխանաբար 0.1%-ով և 6%-ով:

Գծապատկեր 11. ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի եկամուտները



Հաշվետու տարում ՀՆԱ-ի նկատմամբ պետական բյուջեի եկամուտների հարաբերակցությունը կազմել է 23.1%, որը 0.8 տոկոսային կետով գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշը և 0.4 տոկոսային կետով՝ կանխատեսված ցուցանիշը[12]:

2010 թվականի համեմատ պետական բյուջեի եկամուտների 12.9%-ով աճը գերազանցապես պայմանավորված է հարկային եկամուտների ավելացմամբ՝ 10%-ով կամ 57.5 մլրդ դրամով: Հարկ է նշել, որ նախորդ տարվա համեմատ աճ է արձանագրվել նաև մյուս եկամտատեսակների գծով, մասնավորապես՝ պաշտոնական դրամաշնորհներն ավելացել են 94.2%-ով (28.8 մլրդ դրամով), պարտադիր սոցիալական ապահովության վճարները՝ 17.2%-ով (18.1 մլրդ դրամով), պետական տուրքերը՝ 11.6%-ով (2.3 մլրդ դրամով), իսկ այլ եկամուտները նվազել են 12.7%-ով (6.4 մլրդ դրամով):

Գծապատկեր 12. ՀՀ պետական բյուջեի եկամուտների կատարողականը 2010-2011թթ.



Պաշտոնական դրամաշնորհների և պարտադիր սոցիալական ապահովության վճարների համամեմատաբար բարձր աճի արդյունքում 2010 թվականի համեմատ 2011 թվականի պետական բյուջեի եկամուտներում 2.8 տոկոսային կետով ավելացել է պաշտոնական դրամաշնորհների, 0.5 տոկոսային կետով՝ պարտադիր սոցիալական ապահովության վճարների տեսակարար կշիռը, իսկ հարկային եկամուտների (ներառյալ՝ պետական տուրքերը) և այլ եկամուտների գծով նույն ցուցանիշը նվազել է համապատասխանաբար 1.9 և 1.5 տոկոսային կետով:

[12] ՀՀ 2011 թվականի բյուջետային ուղերձում բյուջեի եկամուտներ/ՀՆԱ կանխատեսված ցուցանիշը կազմել է 22.7%:

Գծապատկեր 13. ՀՀ պետական բյուջեի եկամուտների կառուցվածքը



Հարկային եկամուտներ և պետական տուրքեր

ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի եկամուտների 74.2%-ն ապահովվել է հարկային եկամուտների և պետական տուրքերի հաշվին, որոնք կազմել են 654 մլրդ դրամ և 0.1%-ով գերազանցել կառավարության լիազորությունների շրջանակներում ճշտված տարեկան ծրագիրը: Նշված գումարից 631.6 մլրդ դրամը կազմել են հարկային եկամուտները, 22.4 մլրդ դրամը՝ պետական տուրքերը: Դիտարկելով հարկային եկամուտների ամսական շարժը՝ կարելի է արձանագրել, որ 2011 թվականին հարկային եկամուտներն ունեցել են հիմնականում կայուն վարքագիծ, տարվա բոլոր ամիսներին արձանագրվել է մուտքերի աճ նախորդ տարվա համապատասխան ամիսների համեմատ: Բացի այդ, հարկ է նշել, որ տարվա ընթացքում գրեթե ամբողջությամբ ապահովվել է եռամսյակային ծրագրերի կատարումը:

Գծապատկեր 14. ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ ամիսների, 2010-2011թթ.



2010 թվականի համեմատ հարկային եկամուտները և պետական տուրքերն աճել են 10.1%-ով կամ 59.9 մլրդ դրամով: Հարկերի աճը հիմնականում ապահովվել է ավելացված արժեքի հարկի, շահութահարկի, եկամտահարկի և մաքսատուրքի մուտքերի հաշվին:

2011 թվականին ՀՆԱ-ի նկատմամբ հարկային եկամուտների և պետական տուրքերի հարաբերակցության ցուցանիշը կազմել է 17.1%՝ 0.1 տոկոսային կետով զիջելով կանխատեսված և 0.2 տոկոսային կետով գերազանցելով նախորդ տարվա համապատասխան ցուցանիշները: Արդյունքում հարկային սահունության գործակիցը 2011 թվականին կազմել է 1.12 (ՀՆԱ-ի աճի յուրաքանչյուր տոկոսային կետին բաժին է ընկել հարկերի 1.12 տոկոսային կետով ավելացում)՝ 2010 թվականի 1.2-ի դիմաց:

<u>Հարկային եկամուտներ</u>

2011 թվականին ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել շուրջ 631.6 մլրդ դրամ հարկային եկամուտներ՝ 100%-ով ապահովելով ծրագրված և 10%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշները: 2010 թվականի համեմատ հարկային եկամուտների կազմում գրանցվել է ուղղակի հարկերի տեսակարար կշռի աճ՝ եկամտահարկի և շահութահարկի տեսակարար կշիռն աճել է 1.9 տոկոսային կետով և կազմել 28.3%: Աճն ապահովվել է շահութահարկի հաշվին: Միևնույն ժամանակ, անուղղակի հարկերի բաժինը 2.7 տոկոսային կետով նվազել է:

Գծապատկեր 15. ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների կառուցվածքը, 2010-2011թթ.



2011 թվականին հարկային եկամուտների 52%-ն ապահովվել է *ավելացված արժեքի հարկի հաշվին,* որը կազմել է 328.5 մլրդ դրամ: Նշված գումարից 207.3 մլրդ դրամը ստացվել է ՀՀ սահմանին հարկումից, 121.2 մլրդ դրամը՝ ապրանքների և ծառայությունների ներքին շրջանառությունից: Նախորդ տարվա համեմատ պետական բյուջե մուտքագրված ԱԱՀ-ն աճել է

8.9%-ով կամ 26.8 մլրդ դրամով: Մասնավորապես, ապրանքների ներմուծումից ստացված ավելացված արժեքի հարկը 11.4%-ով է գերազանցել նախորդ տարվա ցուցանիշը, իսկ ներքին շրջանառության գծով աճը կազմել է 4.8%: ԱԱՀ-ի աճի հիմնական աղբյուր են հանդիսացել ներմուծման ծավալների և տնտեսվարող սուբյեկտների կողմից իրացման ծավալների աճը:

Ավելացված արժեքի հարկի գծով 2011 թվականի մուտքերի վրա անդրադարձել են մի շարք օրենսդրական փոփոխություններ, որոնք կատարվել են «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում: Մասնավորապես՝

- 2011թ. ապրիլի 15-ի «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-126-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2011թ. մայիսի 14-ից) սահմանվել է, որ ավելացված արժեքի հարկով չհարկվող շեմի որոշման նպատակով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համատեղ գործունեության պայմանագրով գործող գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող սուբյեկտներից (մասնակիցներից) յուրաքանչյուրը հանդես է գալիս որպես առանձին հարկ վճարող:
- 2010թ. հոկտեմբերի 7-ի «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-129-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2011 թվականի հունվարի 1-ից) 15-րդ հոդվածը լրացվել է նոր կետով, որի համաձայն, ավելացված արժեքի հարկից ազատվում են դիզելային վառելիքի ներմուծումը և (կամ) օտարումը:
- 2010թ. նոյեմբերի 15-ի «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-151-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2010 թվականի դեկտեմբերի 4-ից) 15-րդ հոդվածը լրացվել է նոր կետով, որի համաձայն, ավելացված արժեքի հարկից ազատվում է անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից իրավաբանական անձանց կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում գույքի ներդրումը:
- 2010թ. դեկտեմբերի 7-ի «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-179-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2011 թվականի հունվարի 1-ից) 15-րդ հոդվածը լրացվել է նոր կետով, որի համաձայն, ավելացված արժեքի հարկից ազատվում են ջրօգտագործողների ընկերությունների կողմից ոռոգման ջրի մատակարարման գործարքները:
- 2010թ. դեկտեմբերի 22-ի «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-208-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2011 թվականի հունվարի 1-ից) սահմանվել է, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքների կոմիսիոն

հիմունքներով վաճառքի դեպքում ավելացված արժեքի հարկի շեմի որոշման նպատակով հաշվի է առնվում վաճառված ապրանքների ընդհանուր արժեքը (ներառյալ ավելացված արժեքի հարկը):

Նույն օրենքով սահմանվել է, որ ավելացված արժեքի հարկի շեմը չի կիրառվում՝

1) այն անձանց նկատմամբ, որոնց «ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով առևտրային գործունեության (վաճառքի) նպատակներով Հայաստանի Հանրապետություն ներմուծած՝ օրենքով հաստատված ցանկում ընդգրկված ապրանքների (որոնցից ավելացված արժեքի հարկը մաքսային մարմինների կողմից չի հաշվարկվում և չի գանձվում) իրացման գործարքներից առաջացող հարկվող շրջանառությունը հաշվետու տարվա որևէ պահին գերազանցում է 1 մլն դրամը: Տվյալ դեպքում անձը համարվում է ավելացված արժեքի հարկ վճարող 1 մլն դրամի շեմը գերազանցելու պահից մինչև տվյալ օրացուցային տարվա ավարտը՝ 1 մլն դրամը գերազանցող մասի և այլ հարկվող գործարքների մասով:

2) «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11.1 հոդվածով սահմանված՝ հարկման նպատակով փոխկապակցված համարվող անձանց նկատմամբ: Զուգահեռաբար, 2010թ. դեկտեմբերի 22-ի «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-207-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2011թ. հունվարի 1-ից) «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11.1 հոդվածում ամրագրվել է, որ իրավաբանական և (կամ) ֆիզիկական անձինք համարվում են փոխկապակցված նաև այն դեպքերում, երբ գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից:

- 2011թ. մայիսի 25-ի «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-194-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2011 թվականի հունիսի 25-ին) «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածը լրացվել է 36-րդ կետով, որի համաձայն, ազատ տնտեսական գոտու կազմակերպչին և ազատ տնտեսական գոտու շահագործողին ծառայությունների մատուցումը, ազատ տնտեսական գոտու տարածքում ապրանքների մատակարարումը ազատվել է ավելացված արժեքի հարկից:
- 2011թ. հունիսի 23-ի «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-212-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2011թ. հուլիսի 23-ին) վերախմբագրվել է «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասը, ինչի արդյունքում ԱՏԳ ԱԱ դասակարգչի 8432, 8433, 8434, 8436, 8701 ծածկագրերին դասվող տեխնիկայի և մասերի, 31 ապրանքախմբի ծածկագրերին դասվող պարարտանյութերի, 3808 91, 3808 92, 3808 93, 3808 94, 3808 99 ապրանքախմբի ծածկագրերին դասվող թունաքիմիկատների, գյուղատնտեսական մշակա-

բույսերի և բազմամյա տնկարկների սերմացուների և տնկանյութի իրացումը ազատվել է ավելացված արժեքի հարկից:

2011 թվականի հուլիսի 23-ից ուժի մեջ է մտել «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափ ունեցող և ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնցից ավելացված արժեքի հարկը մաքսային մարմինների կողմից չի հաշվարկվում և գանձվում» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, որով գյուղատնտեսական սերմացուները և պարարտացման մի շարք նյութեր ազատվել են մաքսային սահմանին ԱԱՀ-ի վճարումից:

2011 թվականին *ակցիզային հարկից* պետական բյուջեի մուտքերը կազմել են 39.4 մլրդ դրամ: Մասնավորապես՝ հանրապետություն ներմուծված ենթաակցիզային ապրանքների հարկումից ստացվել է 28.1 մլրդ դրամ, որից 14.4 մլրդ դրամը՝ ծխախոտի ներմուծման հարկումից: Հանրապետությունում արտադրվող ենթաակցիզային ապրանքների հարկումից պետական բյուջեի մուտքերը կազմել են 11.3 մլրդ դրամ, որից 5.1 մլրդ դրամը ստացվել է ներքին արտադրության ծխախոտի իրացումից: 2010 թվականի համեմատ ակցիզային հարկի մուտքերը նվազել են 18.1%-ով կամ 8.7 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է ակցիզային հարկով հարկվող ապրանքների, մասնավորապես՝ գարեջրի, սիգարների, սիգարելաների, սիգարետների, օղու, բենզինի ներմուծման ծավալների նվազմամբ: Ներմուծվող օղու ակցիզային հարկի նվազումը պայմանավորված է նաև 07.10.2010թ. «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխություններով, ըստ որի նվազեցվել է ԱՏԳԱԱ 2208 ապրանքային ծածկագրին դասվող ներմուծվող օղիների ակցիզային հարկի դրույքաչափը՝ սահմանվելով մաքսային արժեքի 30 տոկոսի, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար 500 դրամի չափով՝ նախկինում սահմանված 600 դրամի փոխարեն: Նշենք, որ 07.10.2010թ. օրենսդրական փոփոխության արդյունքում, 2011 թվականի հունվարի 1-ից «Բենզինի և դիզելային վառելիքի համար հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքն ուժը կորցրած ճանաչվեց, բենզինի և դիզելային վառելիքի հարկումը տեղափոխվեց ընդհանուր դաշտ: Նվազել են նաև ՀՀ-ում արտադրված օղու, ծխախոտի արտադրատեսակների իրացման ծավալները: Վերոհիշյալ օրենսդրական փոփոխությամբ ԱՏԳԱԱ 2208 ապրանքային ծածկագրին դասվող տեղական արտադրության օղու համար ակցիզային հարկի դրույքաչափը սահմանվել է բացթողման գնի (առանց ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի) 30 տոկոսի, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար 500 դրամի չափով՝ նախկինում սահմանված 380 դրամի փոխարեն: Նշված օրենքով բենզինի 1 տոննայի համար ակցիզային հարկի դրույքաչափը սահմանվել է 25000 դրամ, իսկ դիզելային վառելիքի համար՝ մաքսային արժեքի 10 տոկոսի չափով, բայց ոչ պակաս, քան 1 տոննայի համար 32500դրամ: Միաժամանակ, սահմանվել է, որ բենզինի 1

տոննայի համար սահմանված ակցիզային հարկի և օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված ավելացված արժեքի հարկի հանրագումարը 112000 ՀՀ դրամից պակաս լինելու դեպքում ակցիզային հարկն ավելացվում է այն չափով, որպեսզի բենզինի 1 տոննայի համար գանձվող ակցիզային հարկի և ավելացված արժեքի հարկի հանրագումարը հավասարվի 112000 ՀՀ դրամի: Զուգահեռաբար, 2010թ. հոկտեմբերի 20-ի «Բենզինի և դիզելային վառելիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-130-Ն օրենքի համաձայն, 2011 թվականի հունվարի 1-ից ուժը կորցրած է ճանաչվել «Բենզինի և դիզելային վառելիքի համար հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը: Հարկ է նշել, որ դիզելային վառելիքի ներմուծումից ակցիզային հարկն աճել է 3.5 անգամ կամ 3.4 մլրդ դրամով, որը պայմանավորված է դիզելային վառելիքի ներմուծման ծավալների աճով: 2011 թվականի սեպտեմբերի 14-ի «Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-255-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2011 թվականի հոկտեմբերի 22-ից) պտղային և հատապտղային գինենյութը դուրս է բերվել ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների խմբից:

ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի փաստացի հարկային եկամուտների 15.5%-ն ապահովվել է շահութահարկի հաշվին՝ կազմելով 97.8 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ շահութահարկի մուտքերն աճել են 25.7%-ով կամ 20 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է շահութահարկ վճարողների կողմից 2011 թվականին վճարված շահութահարկի կանխավճարների աճով, որի հաշվարկման համար հիմք է հանդիսացել 2010 թվականի փաստացի շահութահարկի գումարները:

Շահութահարկի 2011 թվականի մուտքերի վրա ազդեցություն են գործել նաև մի շարք փոփոխություններ, որոնք կատարվել են «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում: Մասնավորապես՝

- 2010թ. հոկտեմբերի 27-ի «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-152-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2010 թվականի դեկտեմբերի 4-ից) սահմանվել է, որ շահութահարկով հարկման նպատակով եկամուտ չեն համարվում պետական կամ համայնքային բյուջեներ վճարվող այլ պարտադիր վճարների և տուրքերի, բնօգտագործման վճարների գծով տրվող արտոնությունների գումարները, ինչպես նաև սահմանված կարգով պետության կամ լիազորված մարմնի կողմից հաստատված սակագների կիրառության հետ կապված՝ պետական բյուջեից տրվող սուբսիդիաները:

- 2010թ. դեկտեմբերի 7-ի «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-180-Ն օրենքի համաձայն (ուժի մեջ է մտել 2011 թվականի հունվարի 1-ից) 2011 թվականի հունվարի 1-ից վերացվել է ոռոգման ջրի մատակարարման գծով բնակչությանը, Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական համայնքներին, ջրօգտագործողների ընկերություններին, ջրօգտագործողների ընկերությունների միություններին, համատիրություններին, բազմաբնակարան շենքի սպասարկում (կառավարում) իրականացնող անձանց մատուցվող ծառայությունների (գործարքների) մատուցման գծով շահութահարկի վճարման ժամկետը մինչև դրանց իրացման դիմաց վճարման հաշվետու ժամանակաշրջանը հետաձգելու դրույթը:
- 2010թ. դեկտեմբերի 8-ի «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-189-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2011 թվականի հունվարի 1-ից) սահմանվել է, որ շահութահարկի կանխավճարների մուծումները կատարվում են յուրաքանչյուր եռամսյակ, նախորդ տարվա շահութահարկի փաստացի գումարի և (կամ) շահութահարկի հաշվարկային մեծության մեկ վեցերորդի չափով՝ յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվա 15-ից ոչ ուշ:
- 2010թ. դեկտեմբերի 22-ի «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-265-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2011 թվականի հունվարի 9-ից) սահմանվել է, որ՝

1) հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է գործատուի կողմից վարձու աշխատողի համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կամավոր կուտակային կենսաթոշակային ապահովագրության պայմաններով կատարված վճարումների՝ տվյալ վարձու աշխատողի աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումների 5 տոկոսը չգերազանցող մասով,

2) մինչև 2014թ. հունվարի 1-ը հարկատուի հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է հարկատուի յուրաքանչյուր վարձու աշխատողի համար հարկատուի կատարած կամավոր կուտակային կենսաթոշակային վճարումների 50 տոկոսի չափով, բայց ոչ ավել, քան տվյալ վարձու աշխատողի աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումների 2.5 տոկոսի չափով (սույն ենթակետով սահմանված նվազեցումը 1-ին ենթակետով սահմանված նվազեցման թույլատրելի չափի հետ չպետք է գերազանցի գործատուի կատարած՝ տվյալ վարձու աշխատողի աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումների 7.5 տոկոսը):

3) 2011թ. մայիսի 25-ի «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-196-Ն օրենքով

(ուժի մեջ է մտել 2011 թվականի հունիսի 25-ից) վերանայվել է Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծված ազատ տնտեսական գոտու շահագործող հանդիսացող հարկ վճարողների մասով շահութահարկից ազատման արտոնության շրջանակը:

Հաշվետու տարում ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել 81.2 մլրդ դրամ *եկամտահարկ*՝ ապահովելով հարկային եկամուտների 12.9%-ը: 2010 թվականի համեմատ եկամտահարկի մուտքերն աճել են 9.8%-ով կամ 7.3 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է 2011 թվականին արձանագրված անվանական աշխատավարձերի աճով, ինչպես նաև եկամտահարկ վճարողների կողմից 2011 թվականին վճարված եկամտահարկի կանխավճարների աճով, որի հաշվարկման համար հիմք են հանդիսացել 2010 թվականի փաստացի եկամտահարկի գումարները:

Եկամտահարկի մուտքերի վրա անդրադարձել են նաև «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքում կատարված հետևյալ փոփոխությունները՝

- 2010թ. հոկտեմբերի 27-ի «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-162-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2010թ. դեկտեմբերի 1-ից) հստակեցվել է, որ ժամանակավոր անաշխատունակության նպաստները եկամտահարկով հարկման նպատակով ներառվում են համախառն եկամտի մեջ և հարկվում են:
- 2010թ. նոյեմբերի 16-ի «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-165-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2011թ. հունվարի 1-ից) սահմանվել է, որ համախառն եկամուտը եկամտի ստացման յուրաքանչյուր ամսվա համար նվազեցվում է 32500 դրամի չափով՝ նախկին 30000 դրամի փոխարեն:
- 2010թ. դեկտեմբերի 22-ի «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-275-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2011 թվականի հունվարի 9-ից) սահմանվել է, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կամավոր կուտակային կենսաթոշակային ապահովագրության պայմաններով հարկ վճարողի կողմից իր համար և (կամ) հարկ վճարողի համար երրորդ անձի (այդ թվում՝ գործատուի) կողմից կատարվող կուտակային կենսաթոշակային ապահովագրության վճարները՝ հարկ վճարողի համախառն եկամտի 5 տոկոսը չգերազանցող չափով, նվազեցվում են հարկատուի համախառն եկամտից:
- 2011թ. մայիսի 25-ի «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-195-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2011 թվականի հունիսի 25-ից) վերանայվել են Հայաստանի Հանրապետության տարածքում

ստեղծված ազատ տնտեսական գոտու շահագործող հանդիսացող հարկատուների՝ եկամտահարկից ազատման արտոնության շրջանակները:

- 2011թ. հունիսի 23-ի «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-232-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2011թ. հուլիսի 30-ից) սահմանվել է, որ այն դեպքում, երբ գրավ դրված գույքը սեփականության իրավունքով անցել է գրավառու բանկին (վարկային կազմակերպությանը), ապա գրավատուի՝ գույքն օտարելուց ստացված եկամուտ է համարվում գրավ դրված գույքի իրացման գնի (առանց անուղղակի հարկերի, եթե դրանք կիրառելի են) և վարկային պարտավորության դրական տարբերությունը: Այն դեպքում, երբ բանկի (վարկային կազմակերպության) սեփականությանն անցած գրավադրված գույքը վերջինի կողմից այդ գույքն ի սեփականություն վերցնելուց հետո՝ 6 ամսվա ընթացքում, կրկին օտարվում է այդ գույքի նախկին սեփականատիրոջը (որի գույքի վրա տարածվել է բռնագանձումը) կամ նրա իրավահաջորդին, ապա համարվում է, որ գրավատուն սույն կետի իմաստով գույք չի օտարել (գույքի օտարումից եկամուտ չի ստացել): Միաժամանակ, նույն օրենքով սահմանվել են գրավ դրված գույքի իրացման հետևանքով ֆիզիկական անձին եկամուտների վճարման օրվա և իրացման գնի որոշման հետ կապված մոտեցումները:

Հաշվետու տարվա ընթացքում պետական բյուջե մուտքագրված *մաքսատուրքը* կազմել է շուրջ 36.3 մլրդ դրամ՝ ապահովելով հարկային եկամուտների 5.7%-ը: Հիմնականում ներմուծման ծավալների ավելացման հետևանքով նախորդ տարվա համեմատ մաքսատուրքի գծով բյուջետային մուտքերն աճել են 23.6%-ով կամ 6.9 մլրդ դրամով: Մաքսատուրքի մուտքերի վրա ազդել են նաև ՀՀ մաքսային օրենսգրքում կատարված փոփոխությունները: 2011 թվականի փետրվարի 5-ից ուժի մեջ է մտել «Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-25-Ն օրենքը, որով մի շարք ապրանքների ներմուծման համար մաքսատուրքերի դրույքաչափերը սահմանվել են 10 տոկոս 0 տոկոսի փոխարեն, ինչպես նաև արգելվել է Հայաստանի Հանրապետության անձանց կողմից ԱՏԳ ԱԱ 8702 և 8703 ծածկագրերին դասվող ավտոմեքենաների ժամանակավոր ներմուծումը Հայաստանի Հանրապետություն՝ 15 օրը գերազանցող ժամկետով, որի արդյունքում նշված ապրանքները վերահայտարարագրվել են, և վճարվել են նախկինում չվճարված մաքսային վճարները:

2011 թվականին պետական բյուջե են մուտքագրվել 20.7 մլրդ դրամ *հաստատագրված վճարներ* (առանց ծխախոտի արտադրանքի, ներմուծվող բենզինի ու դիզելային վառելիքի հաստատագրված վճարների)՝ ապահովելով հարկային եկամուտների 3.3%-ը: Մուտքերի 78.1%-ը (16.2 մլրդ դրամ) ստացվել է սպասարկման ոլորտից, 16.4%-ը (3.4 մլրդ դրամ)՝ հանրային սննդի ոլորտից, 4.1%-ը (846.5 մլն դրամ)՝ առևտրական գործունեությունից, 1%-ը (205.7 մլն դրամ)՝ ներմուծողների կողմից բենզինի իրացման, 0.4%-ը (76.6 մլն դրամ)՝ ներմուծողների կողմից

դիզելային վառելիքի իրացման համար: Հաշվետու տարում հաստատագրված վճարները նախորդ տարվա համեմատ նվազել են 5.6%-ով կամ 1.2 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է նախկինում հաստատագրված վճար վճարող հարկատուների՝ նախորդ տարիներին վճարված հաստատագրված վճարի մուտքերից 2011 թվականին այլ հարկատեսակներին հաշվանցումով:

Հաստատագրված վճարների մուտքերի վրա ազդեցություն են ունեցել նաև «Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կատարված հետևյալ փոփոխությունները.

- 2010 թվականի դեկտեմբերի 22-ի «Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-214-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2011 թվականի հունվարի 1-ից) փոփոխություններ են կատարվել օրենքի 53-րդ հոդվածում, ինչի արդյունքում ավտոտեխսպասարկման կայանների (կետերի) գործունեության համար սահմանված հաստատագրված վճարի սահմանային ամսական 800 հազար դրամ չափը փոխարինվել է եռամսյակային 2.400 հազար դրամ չափով: Նշված փոփոխությունը մինչև այդ գործող սահմանային չափի հետ համեմատության պայմաններում պետական բյուջեի եկամուտների վրա կարող է ազդեցություն ունենալ այն դեպքերում, երբ եռամսյակի որևէ ամսվա ընթացքում ավտոտեխսպասարկման կայանների (կետերի) գործունեությունից հարկ վճարողի իրացման շրջանառությունը գերազանցի 800 հազար դրամը, սակայն եռամսյակային կտրվածքով նշված գործունեությունից ստացված համախառն եկամտի հանրագումարը չգերազանցի 2.400 հազար դրամը: Ամսվա ընթացքում իրացումից հասույթը 800 հազար դրամը գերազանցելու դեպքում նախկինում գործող օրենսդրության համաձայն, տվյալ հարկ վճարողի գործունեությունից տվյալ ամսվա հասույթը կհարկվեր հարկման ընդհանուր համակարգում, իսկ 2011թ. հունվարի 1-ից գործող կարգով նշված դեպքերում հարկ վճարողի կողմից իրականացված գործունեությունը շարունակել է հարկվել հաստատագրված վճարների համակարգում:
- 2011թ. հունիսի 23-ի «Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-223-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2011թ. հուլիսի 30-ին) լրացում է կատարվել «Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 61-րդ հոդվածում, ինչի արդյունքում ավտոկանգառների գործունեության համար հաստատագրված վճարի հաշվարկման համար օրենքով սահմանված դրույթները չեն կիրառվի համայնքի ավագանու որոշմամբ համայնքի սեփականություն հանդիսացող տարածքներում կազմակերպված ավտոկանգառների վրա: Վերջինս նշանակում է, որ համայնքի սեփականություն հանդիսացող տարածքներում նախկինում

կազմակերպված ավտոկանգառների գործունեության համար պետական բյուջե գանձվող հաստատագրված վճարը կատարված օրենսդրական փոփոխությունից հետո այլևս չի գանձվի:

2011 թվականին ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել շուրջ 12.2 մլրդ դրամ *բնօգտագործման և բնապահպանական վճարներ,* որից 7.2 մլրդ դրամը կազմել են բնապահպանական վճարները, 5 մլրդ դրամը՝ բնօգտագործման վճարները: Մասնավորապես՝ 4.7 մլրդ դրամ է մուտքագրվել օգտակար հանածոների արդյունահանման համար, 3.4 մլրդ դրամը՝ այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներից օդային ավազան վնասակար նյութեր արտանետելու, 2 մլրդ դրամը՝ ՀՀ ներմուծվող շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար: Հիմնականում նշված երեք վճարների գծով արձանագրված մուտքերի աճի արդյունքում նախորդ տարվա համեմատ բնօգտագործման և բնապահպանական վճարներն ավելացել են 34%-ով կամ 3.1 մլրդ դրամով: Մասնավորապես՝ 29.6%-ով կամ 1.1 մլրդ դրամով աճել են օգտակար հանածոների արդյունահանման համար վճարված բնօգտագործման վճարները, որի հիմնական պատճառ է հանդիսացել օգտակար հանածոների արդյունահանման ծավալների աճը, 67.8%-ով կամ 1.4 մլրդ դրամով՝ մաքսային մարմինների կողմից գանձվող՝ այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներից օդային ավազան վնասակար նյութերի արտանետման դիմաց վճարված բնապահպանական վճարները և 30.8%-ով կամ 470.2 մլն դրամով՝ ՀՀ ներմուծվող շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների դիմաց վճարված բնապահպանական վճարները:

Հաշվետու տարվա ընթացքում պետական բյուջե են մուտքագրվել 15.4 մլրդ դրամի այլ հարկեր: Մասնավորապես՝ 6.4 մլրդ դրամ է կազմել «Կոնցեսիայի մասին» ՀՀ օրենքով սահմանված ռոյալթին, 3.2 մլրդ դրամ՝ ճանապարհային վճարները, 1.7 մլրդ դրամ՝ ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման (գործողության ժամկետի երկարաձգման) վճարները, 990 մլն դրամ՝ ԱՏԳԱԱ 2208 ապրանքային ծածկագրին դասվող օղու ներմուծման թույլտվության համար սակագնային քվոտայի վճարը, 936.3 մլն դրամ՝ հարկային օրենսդրության խախտման համար «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանված տուգանքները, 452.6 մլն դրամ՝ հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարները, 305.2 մլն դրամ՝ կոնցեսիոն վճարը, 44 մլն դրամ՝ արտոնագրային վճարները և շուրջ 1.5 մլրդ դրամ՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նյութական խրախուսման ֆոնդի եկամուտները: 2010 թվականի համեմատ այլ հարկային եկամուտներն արձանագրել են 28.5%-ով (3.4 մլրդ դրամով) աճ, որը հիմնականում պայմանավորված է ռոյալթիի և ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման վճարների աճով: Բացի այդ, «Ներքին շուկայի պաշտպանության մասին» ՀՀ օրենքում 2011 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ է մտել օրենսդրական փոփոխություն, որով սահմանվել է ԱՏԳԱԱ 2208 ապրանքային ծածկագրին դասվող օղու ներմուծման

թույլտվության համար սակագնային քվոտայի վճար, որի գծով 2011 թվականին պետական բյուջե է մուտքագրվել 990 մլն դրամ:

Ռոյալթիի գծով մուտքերի 63.9%-ով (2.5 մլրդ դրամով) աճը հիմնականում պայմանավորված է միջազգային շուկայում մետաղների (պղնձի, մոլիբդենի) գների աճով: Ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման վճարները ծրագրված 100 մլն դրամի փոխարեն կազմել են 1.7 մլրդ դրամ՝ 2.6 անգամ (1.05 մլրդ դրամով) գերազանցելով նաև նախորդ տարվա մուտքերը: Նշված աճը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ի կողմից ռադիոհաճախականության օգտագործման թույտվության տրամադրման 2010 թվականի դեկտեմբեր ամսվա վճարները կատարվել են 2011 թվականի հունվար ամսին, իսկ ռադիոհաճախականության օգտագործման 2012 թվականի հունվար ամսվա վճարները՝ 2011 թվականի դեկտեմբեր ամսին, ինչպես նաև «Արմենթել» և «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ների կողմից ցանցերի զարգացման և նոր տեխնոլոգիաների ներդրման հանգամանքով:

Շուրջ 452.6 մլն դրամ կազմել են հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների գծով մուտքերը՝ 8.3%-ով գերազանցելով կանխատեսված և 8.1%-ով՝ նախորդ տարվա համապատասխան ցուցանիշները, որը պայմանավորված է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի և «Երևան ՋԷԿ» ՓԲԸ-ի կողմից 2012 թվականի առաջին եռամսյակում նախատեսված վճարումները 2011 թվականի դեկտեմբեր ամսին կատարելու հանգամանքով:

«Կոնցեսիայի մասին» ՀՀ օրենքով սահմանված կոնցեսիոն վճարի գծով փաստացի մուտքերը 72.4%-ով գերազանցել են կանխատեսված և 38.1%-ով՝ նախորդ տարվա համապատասխան ցուցանիշները, ինչը հիմնականում պայմանավորված է տվյալ տարում ուսումնասիրված օբյեկտների քանակով, ուսումնասիրության տրամադրված տարածքների մակերեսներով, հանքարդյունահանող տնտեսավարող սուբյեկտների քանակով և նախկինում կուտակված պարտքերի մարման հանգամանքով:

Նախորդ տարվա համեմատ արտոնագրային վճարներն աճել են 2.8 անգամ, որի հիմնական պատճառը 2011 թվականին ուժի մեջ մտած օրենսդրական փոփոխության հետևանքով տվյալ հարկատեսակով հարկվող գործունեության տեսակների ընդլայնումն է: 2011թ. հունվարի 1-ից ուժի մեջ է մտել «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-209-Ն նոր օրենքը, որի համաձայն արտոնագրային վճար վճարող կարող են համարվել նաև անհատ ձեռնարկատեր հանդիսացող ֆիզիկական անձինք: Բացի այդ, ընդլայնվել են գործունեության տեսակները, որոնք իրականացնելու դեպքում ֆիզիկական անձինք և անհատ ձեռնարկատերերը կարող են համարվել արտոնագրային վճար վճարող, իսկ արտոնագրային վճար վճարող համարվելու համար նախկինում սահմանված 2.5 մլն ՀՀ դրամի շեմը փոխարինվել է 6 մլն դրամով (առանց անուղղակի հարկերի):

2010 թվականին համեմատ աճ է արձանագրվել նաև ճանապարհային վճարների գծով՝ 2.7%-ով կամ 84.8 մլն դրամով, ինչը հիմնականում ապահովվել է այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցների՝ ՀՀ տարածք մուտքի աճով:

Պետական տուրք

2011 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել շուրջ 22.4 մլրդ դրամ *պետական տուրքեր*՝ ապահովելով պետական բյուջեի եկամուտների 2.5%-ը: Պետական տուրքի փաստացի մուտքերը 2.2%-ով կամ 486.6 մլն դրամով գերազանցել են ՀՀ կառավարության լիազորությունների շրջանակներում ճշտված ծրագիրը: Վերջինս հիմնականում պայմանավորված է լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ տալու և ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթղթերի, որոշակի ծառայությունների կամ գործողությունների համար գանձված տուրքերի համեմատաբար բարձր կատարողականով՝ կազմելով համապատասխանաբար 109.1 և 113.2 տոկոս:

Նախորդ տարվա համեմատ պետական տուրքի մուտքերն աճել են 11.6%-ով կամ 2.3 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է օրենքով սահմանված այլ ծառայությունների և գործողությունների, դատարան տրվող հայցադիմումների, դիմումների ու գանգատների, դատարանների վճիռների և որոշումների դեմ տրվող վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու, ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթղթերի, որոշակի ծառայությունների կամ գործողությունների և պետական գրանցման համար գանձվող տուրքերի աճով:

2011 թվականին դատարան տրվող հայցադիմումների, դիմումների ու գանգատների, դատարանների վճիռների և որոշումների դեմ տրվող վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար պետական բյուջե է վճարվել ավելի քան 1.8 մլրդ դրամ (որից 1.1 մլրդ դրամը կազմում են պետական կառավարման մարմինների կողմից վճարված և պետական բյուջեից փոխհատուցված գումարները)՝ նախատեսված շուրջ 2 մլրդ դրամի դիմաց: Նախորդ տարվա համեմատ նշված մուտքերն աճել են 65.1%-ով կամ 724.6 մլն դրամով:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու և Հայաստանի Հանրապետության քաղաքացիության փոփոխման համար վճարվող տուրքերը կազմել են 25 մլն դրամ՝ ապահովելով 153.3% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված տուրքերի գծով արձանագրվել է 27.2% աճ, որը պայմանավորված է դիմողների քանակի ավելացմամբ:

Հյուպատոսական ծառայությունների կամ գործողությունների դիմաց պետական բյուջե է վճարվել 1.9 մլրդ դրամ՝ 96.1%-ով ապահովելով կանխատեսված ցուցանիշը: 2010 թվականի համեմատ նշված տուրքերն աճել են 4.5%-ով կամ 82.6 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է անձնագրային ձևակերպումների քանակի ավելացմամբ: 2011 թվականի հունվարից փոփոխվել են հյուպատոսական ծառայությունների կամ գործողությունների համար սահմանված պետական տուրքերի դրույքաչափերը (միասնականացվել են, միաժամանակ որոշ դրույքաչափեր սահմանվել են գործողից բարձր, իսկ որոշ դրույքաչափեր՝ գործողից ցածր):

Պետական տուրքերի 14.6%-ը բյուջե է վճարվել պետական գրանցումների դիմաց՝ կազմելով շուրջ 3.3 մլրդ դրամ, որը 3%-ով գերազանցում է նախատեսված ցուցանիշը և 10.4%-ով՝ նախորդ տարվա փաստացի մուտքերը: Աճը պայմանավորված է ավտոմեքենայի պետական համարանիշ տալու և կորցրած պետական համարանիշը վերականգնելու, գյուղատնտեսական ինքնագնաց մեքենայի գրանցման, պետական համարանիշ տալու, ինչպես նաև կորցրած պետական համարանիշը վերականգնելու, ջրային փոխադրամիջոցների գրանցման, ավտոմեքենայի (մոտոցիկլետի) տեխնիկական անձնագիր (գրանցման վկայական), ինչպես նաև կորցրած տեխնիկական անձնագրի (գրանցման վկայականի) կրկնօրինակ տալու համար գանձված տուրքերի ավելացմամբ: 2010 թվականի դեկտեմբերից դադարել են գործել ավտոմեքենայի կորցրած պետական համարանիշը վերականգնելու (բազային տուրքի 24-ապատիկի չափով) և ավտոմեքենայի (մոտոցիկլետի) կորցրած տեխնիկական անձնագրի (գրանցման վկայականի) կրկնօրինակ տալու համար (բազային տուրքի 12-պատիկի չափով) նախատեսված պետական տուրքերը: Մոտոփոխադրամիջոցների, կցորդների և կիսակցորդների հաշվառման համարանիշ տալու համար սահմանվել է բազային տուրքի վեցապատիկի չափով պետական տուրք (փոփոխությունն ուժի մեջ է մտել 2010 թվականի դեկտեմբերի 25-ից): Սահմանվել են ներդրումային ընկերություններին որպես ներդրումային ֆոնդի կառավարիչ վերագրանցելու համար բազային տուրքի քսանապատիկի չափով, ՀՀ-ում գրանցված բանկերի, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների ներկայացուցչությունները գրանցելու համար բազային տուրքի հնգապատիկի չափով պետական տուրքեր: Պետական ռեգիստրում գրանցման ենթակա առևտրային կազմակերպությունների պետական գրանցման կամ նրանց առանձնացված ստորաբաժանումների հաշվառման համար բազային տուրքի 12-ապատիկի չափով սահմանված պետական տուրքի փոխարեն պետական ռեգիստրում գրանցման ենթակա առևտրային կազմակերպությունների պետական գրանցման համար սահմանվել են բազային տուրքի 17-ապատիկի չափով, իսկ առևտրային կազմակերպությունների առանձնացված ստորաբաժանումների հաշվառման համար՝ բազային տուրքի 12-ապատիկի չափով պետական տուրքեր (փոփոխությունն ուժի մեջ է մտել 2011 թվականի մարտից):

Մշակութային արժեքների արտահանման կամ ժամանակավոր արտահանման իրավունքի վկայագիր տրամադրելու դիմաց 2011 թվականին պետական բյուջե է վճարվել շուրջ 1.2 մլն դրամ, որը 18.9%-ով գերազանցում է նախատեսվածը և 10.8%-ով՝ նախորդ տարվա փաստացի մուտքերը: Աճը պայմանավորված է մշակութային արժեքների արտահանման համար տրամադրված վկայագրերի և դրանց կրկնօրինակների թվի ավելացմամբ. հաշվետու տարում այն կազմել է 236՝ 2010 թվականի 215-ի դիմաց:

Գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների, ֆիրմային անվանումների, ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների իրավական պահպանության հետ կապված գործողությունների համար հաշվետու տարում ՀՀ պետական բյուջե է վճարվել շուրջ 320 մլն դրամ պետական տուրք՝ 43.5%-ով գերազանցելով կանխատեսված և 9.7%-ով՝ նախորդ տարվա համապատասխան ցուցանիշները, ինչը պայմանավորված է հայտատուների թվի ավելացմամբ:

Ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակության փաստաթղթերի, որոշակի ծառայությունների կամ գործողությունների համար 2011 թվականին գանձվել է շուրջ 2.6 մլրդ դրամ, որը 13.2%-ով գերազանցում է կանխատեսված ցուցանիշը և 22.4%-ով՝ նախորդ տարվա փաստացի մուտքերը: 2011 թվականի հունիսից հանրակրթական և մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում սովորող կամ որպես մանկավարժ, դասախոս աշխատող օտարերկրյա անձի ծնողներին, ամուսնուն, զավակին, քրոջը կամ եղբորը ՀՀ կացության ժամանակավոր կարգավիճակ և կացության քարտ տալու, կացության ժամանակավոր կարգավիճակի ժամկետը երկարաձգելու, ինչպես նաև հաշվառելու համար պետական տուրքը նվազեցվել է 60 տոկոսի չափով:

Հաշվետու տարում պետական բյուջե մուտքագրված պետական տուրքերի 19.4%-ը ստացվել է լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ տալու համար: Նշված աղբյուրից պետական բյուջե է մուտքագրվել 4.3 մլրդ դրամ՝ 9.1%-ով գերազանցելով կանխատեսված և 4.2%-ով՝ նախորդ տարվա մուտքերը: Աճը հիմնականում պայմանավորված է կապիտալ շինարարության բնագավառում քաղաքաշինության փաստաթղթերի մշակման, ինժեներական հետազննման և փորձաքննության համար, պարզ ընթացակարգով տրվող, ինչպես նաև վիճակախաղերի և շահումներով խաղերի բնագավառներում լիցենզիաներ տալու համար գանձված տուրքերի աճով: Մասնավորապես՝ քաղաքաշինության բնագավառի պետական տուրքերը կազմել են 572.2 մլն դրամ՝ 59.1%-ով գերազանցելով կանխատեսված, 71.4%-ով՝ նախորդ տարվա ցուցանիշը, ինչը պայմանավորված է 2011 թվականի հունվարից տվյալ բնագավառում սահմանված պետական տուրքերի բարձրացմամբ: Վիճակախաղերի, շահումներով խաղերի բնագավառում գանձվել է շուրջ 1.1 մլրդ դրամ պետական տուրք՝ 40.1%-ով գերազանցելով կանխատեսված և 8%-ով՝

նախորդ տարվա ցուցանիշը: Տուրքերի նշված աճը պայմանավորված է այն հանգամանքով, որ 2011 թվականին նախատեսվել է ավելացնել խաղային բնագավառի հարկերի դրույքաչափերը, ինչով էլ պայմանավորված վերոնշյալ գործունեության տեսակներով զբաղվող տնտեսվարող սուբյեկտների քանակը չէր ավելանա: Սակայն, 2011 թվականին հարկերի դրույքաչափերի նախատեսված բարձրացումը չիրականացավ, ուստի այդ գործունեության տեսակներով զբաղվող տնտեսվարող սուբյեկտների քանակն աճեց 1-ով և 2011 թվականին գանձվեց ավելի շատ տուրք, քան կանխատեսվել էր: Շահումով խաղերի և խաղատների ծրագրավորման ժամանակ կանխատեսումը կատարվել էր նաև հաշվի առնելով ՀՀ-ում 2013 թվականին շահումով խաղերի և խաղատների կազմակերպման տարածքային սահմանափակումները, ինչով և պայմանավորված ակնկալվում էր շահումով խաղերի և խաղատների կազմակերպման գործունեություն իրականացնողների քանակի նվազում: Միևնույն ժամանակ, 2011 թվականին նախատեսված էր ավելացնել այդ բնագավառի սուբյեկտներից գանձվող հարկերի դրույքաչափերը: Սակայն փոփոխությունը տեղափոխվեց 2012 թվական և այդ գործունեությամբ զբաղվող սուբյեկտների թիվը կանխատեսվածի չափ չնվազեց: Գործունեության այլ բնագավառներում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից պարզ ընթացակարգով տրվող լիցենզիաների դիմաց 2011 թվականին ստացվել է 744.2 մլն դրամ՝ 20.2%-ով գերազանցելով կանխատեսված և 16.1%-ով՝ նախորդ տարվա մուտքերը: Եկամուտների նշված աճը պայմանավորված է պարզ ընթացակարգով լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների թվի ևս մեկով (այն է՝ անշարժ գույքի գնահատում) ավելանալու հանգամանքով:

Լիցենզավորումից ստացված մուտքերի վրա ազդեցություն են ունեցել նաև մի շարք այլ օրենսդրական փոփոխություններ: 2010 թվականի հոկտեմբերից բարձրացվել են հեռահաղորդակցության բնագավառի՝ հեռուստահաղորդումների եթերային հեռարձակում իրականացնելու համար սահմանված դրույքաչափերը, մասնավորապես՝ հանրապետական սփռման համար սահմանվել է տարեկան բազային տուրքի 20000-ապատիկի չափով, մայրաքաղաքային սփռման համար՝ տարեկան բազային տուրքի 10000-ապատիկի չափով, տարածքային սփռման համար՝ տարեկան բազային տուրքի 1000-ապատիկի չափով, ինչպես նաև հեռուստահաղորդումների կաբելային (մալուխային) հեռարձակման համար սահմանված պետական տուրքերի դրույքաչափերը: 2011 թվականի հունվարի 1-ից դադարել են գործել գյուղատնտեսության բնագավառի անասնաբուժության համար (տարեկան բազային տուրքի 5-ապատիկի չափով), հեռահաղորդակցության բնագավառի շարժական կապի ծառայությունների մատուցման (տարեկան բազային տուրքի 100-ապատիկի չափով), շրջակա միջավայրի պահպանության բնագավառի ավտոտրանսպորտային միջոցներից աղտոտող նյութերի արտանետումների չափումների (յուրաքանչյուր չափիչ կետի համար) համար (տարեկան բազային տուրքի 150-ապատիկի չափով), որակի ստանդարտացման, սերտիֆիկացման, չափագիտության բնագավառի չափման միջոցների արտադրու-

թյան համար (տարեկան բազային տուրքի 25-ապատիկի չափով), տրանսպորտի բնագավառի կանոնավոր օդային հաղորդակցության համար (տարեկան բազային տուրքի 15000-պատիկի չափով), սոցիալական պաշտպանության բնագավառի մանկատների կազմակերպման, երեխաների ցերեկային խնամքի կազմակերպման, երեխաների ժամանակավոր խնամքի կազմակերպման համար (տարեկան բազային տուրքի 100-ապատիկի չափով) և ծեր և հաշմանդամ քաղաքացիների խնամքի և սպասարկման կազմակերպման համար (տարեկան տուրքի 100-ապատիկի չափով), գործունեության այլ բնագավառի՝ սնանկության կառավարչի գործունեության իրականացման համար (տարեկան բազային տուրքի 25-ապատիկի չափով), տեղագրական քարտեզագրման և հողաշինարարական աշխատանքների իրականացման համար (տարեկան բազային տուրքի 50-ապատիկի չափով), ռիելտորական գործունեության համար (տարեկան բազային տուրքի 50-ապատիկի չափով), հատուկ պաշտպանվածություն պահանջող պետական նշանակության փաստաթղթերի տպագրական աշխատանքների կատարման համար (տարեկան բազային տուրքի 1000-ապատիկի չափով), թանկարժեք մետաղների զտարկման, բանկային ոսկու և ստանդարտացված ձուլակտորների արտադրության համար (տարեկան բազային տուրքի 1000-ապատիկը), զբոսաշրջության բնագավառի զբոսավարների գործունեության լիցենզիաների համար (տարեկան բազային տուրքի 10-ապատիկի չափով), ուղեկցորդների գործունեության լիցենզիաների համար (տարեկան բազային տուրքի 10-ապատիկի չափով), մաքսային բնագավառի մաքսային միջնորդական գործունեության համար (տարեկան բազային տուրքի 200-ապատիկի չափով) նախատեսված պետական տուրքերը: Սահմանվել է ֆոնդի կառավարման գործունեության իրականացման համար տարեկան բազային տուրքի 100-ապատիկի չափով պետական տուրք: Հանվել են ազատ տնտեսական գոտիների կազմակերպման (բազային տուրքի 3000-ապատիկի չափով) և շահագործման համար (բազային տուրքի 1000-ապատիկի չափով) սահմանված պետական տուրքերը (փոփոխությունն ուժի մեջ է մտել 2011 թվականի հունիսից):

2011 թվականին օրենքով սահմանված այլ ծառայությունների և գործողությունների համար գանձվել են շուրջ 8.1 մլրդ դրամ պետական տուրքեր՝ ապահովելով 97.8% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված տուրքերն աճել են 7.1%-ով կամ 534.5 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է վարորդական իրավունքի վկայական և կորցրած վկայականի կրկնօրինակը տալու համար գանձված տուրքերի աճով: Հաշվետու տարում այս մուտքերը կազմել են շուրջ 1.9 մլրդ դրամ՝ 2.3 անգամ գերազանցելով կանխատեսված և 2.7 անգամ՝ նախորդ տարվա փաստացի ցուցանիշները: Ընդ որում, 2010 թվականի դեկտեմբերից դադարել է գործել վարորդական իրավունքի կորցրած վկայականի կրկնօրինակը տալու (բազային տուրքի 24-պատիկի չափով) համար նախատեսված պետական տուրքը: Միևնույն ժամանակ, նախորդ տարվա համեմատ նշված

խմբում մեծ տեսակարար կշիռ ունեցող՝ օդային տրանսպորտով ֆիզիկական անձանց ելքի համար բյուջե մուտքագրված տուրքերը նվազել են 10%-ով կամ 620.4 մլն դրամով՝ կազմելով 5.6 մլրդ դրամ:

Պարտադիր սոցիալական ապահովության վճարներ

2011 թվականին պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով բյուջետային եկամուտները կազմել են 123.4 մլրդ դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ստացված գումարից 103.8 մլրդ դրամը վճարվել է գործատուների կողմից, 16.4 մլրդ դրամը՝ աշխատավարձից և դրան հավասարեցված եկամուտներից, 3.3 մլրդ դրամը՝ անհատ ձեռնարկատերերի կողմից: 2010 թվականի համեմատ նշված վճարներն աճել են 17.2%-ով կամ 18.1 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված գործատուների վճարումների 18.4% աճով:

Պաշտոնական դրամաշնորհներ

2011 թվականին արտաքին աղբյուրներից տրամադրվել են 59.4 մլրդ դրամ պաշտոնական դրամաշնորհներ՝ կազմելով տարեկան ճշտված ծրագրի 91.9%-ը, այսինքն՝ կանխատեսվածից պակաս է ստացվել 5.2 մլրդ դրամ: Շեղումը մեծ մասամբ առաջացել է նպատակային վարկային ծրագրերի գծով, որոնց շրջանակներում ստացվել է կանխատեսված գումարի 86.8%-ը՝ 32.3 մլրդ դրամ: Նշված գումարից 27.3 մլրդ դրամը (նախատեսվածի 100.3%-ը) ստացվել է ԱՄՆ կառավարության աջակցությամբ իրականացվող «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում: 1.8 մլրդ դրամ (նախատեսվածի 85%-ը) է ստացվել Համաշխարհային բանկի, 937.6 մլն դրամ (նախատեսվածի 32.9%-ը)՝ Գերմանիայի զարգացման վարկերի բանկի, 704.5 մլն դրամ (նախատեսվածի 42.5%-ը)՝ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի, 682.5 մլն դրամ (նախատեսվածի 27.3%-ը)՝ Եվրոպական միության, 348.4 մլն դրամ (նախատեսվածի 100.3%-ը)՝ Դանիական Թագավորության, 253.6 մլն դրամ (նախատեսվածի 100%-ը)՝ ՄԱԿ-ի, 248.4 մլն դրամ (նախատեսվածի 100%-ը)՝ Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող ծրագրերի շրջանակներում:

2011 թվականին 25.8 մլրդ դրամ է ստացվել ոչ նպատակային ծրագրերի շրջանակներում՝ կազմելով ծրագրի 99.2%-ը: Մասնավորապես՝ 17.5 մլրդ դրամ, 4 մլրդ դրամ և 60.5 մլն դրամ է ստացվել համապատասխանաբար Եվրամիության «Մակրոֆինանսական աջակցություն», «Ընդհանուր բյուջետային աջակցություն» և Ճապոնական կառավարության՝ տոհմային երինջների ձեռք բերման ծրագրերի շրջանակներում, որոնք նախատեսված ծավալով հատկացվել են: 4.3 մլրդ դրամ (նախատեսվածի 95.1%-ի չափով) է հատկացվել Եվրոպական հարևանության շրջանակներում ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումների ֆինանսավորման համար: 1.3

մլրդ դրամ է տրամադրվել տարբեր միջազգային կազմակերպությունների կողմից, որը մուտքագրվել է պետական մարմինների արտաբյուջետային հաշիվներին: Նշված միջոցները ստացվել են նախատեսվածի 91.3%-ի չափով: Դրանց հիմնական մասը՝ 885.1 մլն դրամը, հատկացվել է առողջապահական համակարգին:

Նախորդ տարվա համեմատ պաշտոնական դրամաշնորհներից պետական բյուջեի մուտքերն աճել են 94.2%-ով կամ 28.8 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է Եվրամիության կողմից տրամադրված աջակցության աճով:

<u>Այլ եկամուտներ</u>

2011 թվականին ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել 44 մլրդ դրամ այլ եկամուտներ, որը կազմում է բյուջեի եկամուտների 5%-ը՝ նախորդ տարվա 6.5%-ի դիմաց: Այլ եկամուտները 6%-ով կամ 2.5 մլրդ դրամով գերազանցել են կառավարության լիազորությունների շրջանակներում ճշտված ծրագրով սահմանված ցուցանիշը, ինչը հիմնականում պայմանավորված է բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարների, իրավաբանական անձանց կապիտալում կատարված ներդրումներից ստացվող շահաբաժինների և ռեզիդենտներին տրամադրված վարկերի օգտագործման տոկոսավճարների բարձր ցուցանիշով, որոնք համապատասխանաբար 42.2, 51 և 7.1 տոկոսով գերազանցել են ծրագիրը:

Հաշվետու տարում 539.6 մլն դրամ է մուտքագրվել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցումից՝ 60.1%-ով գերազանցելով կանխատեսված և 3.8 անգամ՝ նախորդ տարվա ցուցանիշը:

Պետական սեփականություն հանդիսացող գույքի վարձակալության դիմաց 2011 թվականին ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել 963.2 մլն դրամ՝ 5.5%-ով գերազանցելով ծրագիրը և 12.2%-ով՝ նախորդ տարվա փաստացի մուտքերը: Մասնավորապես՝ 881.6 մլն դրամ (103.5%) է մուտքագրվել գույքի (բացառությամբ հողի) վարձակալության վարձավճարներից, 45.1 մլն դրամ (99.6%)՝ պետական պահուստի հողերի վարձակալության և օգտագործման դիմաց գանձվող վարձավճարներից, 36.5 մլն դրամ (228.1%)՝ պետական անտառների և անտառային հողերի օգտագործման վճարներից: Նախորդ տարվա համեմատ պետական սեփականություն հանդիսացող գույքի վարձակալության վարձավճարներն ավելացել են 12.2%-ով՝ հիմնականում ձեռնարկությունների և գույքի (բացառությամբ հողի) վարձակալության վարձավճարների աճի արդյունքում, որը պայմանավորված է նոր կնքված վարձակալական պայմանագրերով և գների փոփոխություններով: Պետական անտառների և անտառային հողերի օգտագործման վճարները

նախորդ տարվա համեմատ ավելացել են 24.8%-ով՝ պայմանավորված նախորդ տարիներին առաջացած ապառքների մարմամբ: Պետական պահուստի հողերի վարձակալության և օգտագործման դիմաց գանձվող վարձավճարները նախորդ տարվա համեմատ նվազել են 38.5%-ով:

Հաշվետու տարում բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվել են 5.6 մլրդ դրամ տոկոսավճարներ՝ 42.2%-ով գերազանցելով ծրագրված ցուցանիշը, սակայն միևնույն ժամանակ 61.5%-ով զիջելով նախորդ տարվա մուտքերը: Ծրագրվածից ավել եկամուտների ստացումը պայմանավորված է այն հանգամանքով, որ ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի կատարման ընթացքում ծախսերը պակաս են կազմել ՀՀ կառավարության կողմից հաստատված եռամսյակային համամասնություններով նախատեսված ծրագրերից: Բացի այդ, գանձապետական միասնական հաշվի կառավարումից սպասվող եկամուտների կանխատեսման ժամանակ ենթադրվել է, որ 2011 թվականի տարեսկզբի ազատ մնացորդը կձևավորվի 2010 թվականի պետական բյուջեի ցուցանիշների 100 տոկոս կատարման արդյունքում, մինչդեռ 2010 թվականի փաստացի կատարման արդյունքում պետական բյուջեի ազատ մնացորդը գերազանցել է կանխատեսված նախնական մակարդակը: 2010 թվականի համեմատ 2011 թվականին ՀՀ պետական բյուջե մուտքագրված տոկոսավճարների 8.4 մլրդ դրամով նվազումը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ 2010 թվականի տարեսկզբին գանձապետական միասնական հաշվի միջոցները կազմել են 161.8 մլրդ դրամ, իսկ 2011 թվականի տարեսզբին՝ 101.2 մլրդ դրամ: Ժամկետային ավանդների միջին տոկոսադրույքը հաշվետու տարում կազմել է 9.0 տոկոս՝ նախորդ տարվա 9.1 տոկոսի դիմաց:

Իրավաբանական անձանց բաժնետիրական կապիտալում կատարված ներդրումներից ստացվել են 983.4 մլն դրամի շահաբաժիններ՝ 51%-ով գերազանցելով ծրագրային և 49.3%-ով՝ նախորդ տարվա ցուցանիշը:

Պետության տված վարկերի օգտագործման դիմաց 2011 թվականին ստացվել են 6.1 մլրդ դրամ տոկոսավճարներ, որից 5.9 մլրդ դրամը (ծրագրի 107.1%-ը) ստացվել է ռեզիդենտներին, իսկ 219.5 մլն դրամը (ծրագրի 121%-ը)՝ ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի օգտագործման դիմաց: Նախորդ տարվա համեմատ ռեզիդենտներին տրամադրված վարկերի օգտագործման դիմաց տոկոսավճարները նվազել են 6.1%-ով կամ 385.5 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է ձեռնարկությունների զարգացման ծրագրի շրջանակներում տրամադրված վարկերի դիմաց ստացված տոկոսավճարների նվազմամբ: Պետության կողմից ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի օգտագործման դիմաց տոկոսավճարների ծրագրի գերազանցումը պայմանավորված է այն հանգամանով, որ 2010 թվականի վերջին վճարումը՝ 38.1 մլն դրամը, փոխանցվել է 2010 թվականի

դեկտեմբերի վերջին, սակայն Գանձապետական միասնական հաշվին մուտքագրվել է 2011 թվականի հունվարին: Նախորդ տարվա համեմատ նշված եկամուտն աճել է 8.8%-ով:

Տիրազուրկ, ժառանգության իրավունքով, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանցից (բացառությամբ ՀՀ համայնքների, միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների) նվիրատվության կարգով պետությանը որպես սեփականություն անցած դրամական միջոցներից, ինչպես նաև հիմնական միջոց կամ ոչ նյութական ակտիվ չհանդիսացող գույքի օտարումից մուտքերը կազմել են 784.7 մլն դրամ՝ 1%-ով գերազանցելով ծրագրային և 3.5 անգամ՝ նախորդ տարվա ցուցանիշները: Նման աճը հիմնականում պայմանավորված է ՀՀ արտաքին գործերի նախարարության արտաբյուջետային միջոցների աճով:

Իրավախախտումների համար գործադիր և դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից մուտքերը կազմել են 6.1 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրի 97.3%-ը և 1.3%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը:

Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ պետական բյուջե մուտքագրվող այլ եկամուտների գծով պետական բյուջե է մուտքագրվել շուրջ 23 մլրդ դրամ՝ 100%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Նշված մուտքերից 12.7 մլրդ դրամը կազմել են պետական հիմնարկների արտաբյուջետային եկամուտները, որոնք կատարվել են 96.2%-ով, 5.1 մլրդ դրամը՝ ռադիոհաճախականության վճարը, որը 10.6%-ով գերազանցել է ծրագիրը, 3.3 մլրդ դրամը՝ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ստորաբաժանումների կողմից մատուցված ծառայությունների դիմաց վճարը, որը ծրագիրը գերազանցել է 3%-ով: Նշենք, որ ռադիոհաճախականության վճարի ծրագրի գերազանցումը պայմանավորված է 2012 թվականի հունվարի վճարումները 2011 թվականի դեկտեմբերին կատարելու հանգամանքով, ինչպես նաև «ԱրմենՏել» և «Ղ-Տելեկոմ» ընկերությունների կողմից ցանցերի զարգացմամբ և նոր տեխնոլոգիաների ներդրմամբ: 368.5 մլն դրամ է մուտքագրվել «Արմավիա» ՍՊԸ-ի կողմից օդուղիների հատկացման դիմաց, որը 2.9%-ով գերազանցել է ծրագիրը: Հայկական երկաթուղու համակարգի վերաբերյալ կոնցեսիոն պայմանագրով նախատեսված տարեկան վճարը կազմել է 280.2 մլն դրամ, որը 12.1%-ով գերազանցել է ծրագիրը և 11.8%-ով՝ նախորդ տարվա ցուցանիշը՝ պայմանավորված «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի հասույթի ավելացմամբ: 111.3 մլն դրամ է ստացվել ՀՀ էներգետիկայի բնագավառում էլեկտրական էներգիայի և բնական գազի ներկրման և արտահանման գործունեության լիցենզիայի պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում ֆինանսական երաշխիքներից մուտքերի գծով, որոնք 2.3 անգամ գերազանցել են ծրագիրը՝ պայմանավորված էներգետիկայի բնագավառում կարգավորող անձանց կողմից լիցենզիայի պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքերի կանխատեսված

քանակի գերազանցմամբ: Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ պետական բյուջե մուտքագրվող այլ եկամուտները 6.4%-ով գերազանցել են նախորդ տարվա մուտքերը:

ՀՀ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ

ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի մասին օրենքով նախատեսվել էր 1,001.1 մլրդ դրամ ծախսերի կատարում: Տարվա ընթացքում, հաշվի առնելով «ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 11-րդ կետի և 11-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները, պետության դրամական միջոցների համախմբված հաշվառման նպատակով, պետական բյուջեի ծրագրային և փաստացի ցուցանիշներում ներառվել են նաև ՀՀ պետական հիմնարկների համար բացված արտաբյուջետային հաշիվների համապատասխան շրջանառությունը, ինչպես նաև առանց սահմանափակման պետական բյուջեից կատարվող վճարումները: Նշված միջոցները, ինչպես նաև պետական բյուջեում փոփոխություններ կատարելու վերաբերյալ օրենքով ՀՀ կառավարությանը վերապահված լիազորությունների շրջանակներում կատարված փոփոխությունները ներառյալ՝ ՀՀ պետական բյուջեի ծախսերի ծրագիրը կազմում է շուրջ 1,042.0 մլրդ դրամ՝ ավելանալով 40.9 մլրդ դրամով (4.1%-ով): Վերջինիս դիմաց փաստացի ծախսերը կազմել են 986.5 մլրդ դրամ՝ ապահովելով պետական բյուջեի ծախսային ծրագրերի շրջանակներում պետական մարմինների կողմից սահմանված կարգով ստանձնած պարտավորությունների ամբողջական և ծրագրի 94.7% կատարողական: Վերջինս պայմանավորված է որոշ ծրագրերով նախատեսված միջոցների տնտեսմամբ, ինչպես նաև առանձին ծրագրերի շրջանակներում գնումների հետ կապված վճարումների հետաձգմամբ: Շեղումը մասամբ պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի ցածր կատարողականով (73.2%), առանց որոնց ծախսերի կատարողականը կազմում է 97.4%: Պետական հիմնարկների արտաբյուջետային միջոցների հաշվին 2011 թվականին կատարվել են 21.9 մլրդ դրամի ծախսեր՝ կազմելով ծրագրի 85.2%-ը:

2011 թվականին նախորդ տարվա համեմատ ՀՆԱ-ի անվանական մեծության 9% աճի պայմաններում ՀՀ պետական բյուջեի ծախսերն ավելացել են 3.4%-ով կամ 32.2 մլրդ դրամով, ինչը հանգեցրել է ՀՆԱ-ի նկատմամբ ծախսերի հարաբերակցության նվազմանը. այն կազմել է 25.8%՝ կանխատեսված 26.6%-ի[13] և 2010 թվականի 27.3%-ի դիմաց:

Տնտեսագիտական դասակարգում

ՀՀ 2011 պետական բյուջեի փաստացի ծախսերի շեղումը ծրագրից կազմել է 5.3% կամ 55.5 մլրդ դրամ, որից 29.9 մլրդ դրամը բաժին է ընկել ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններին, 25.6 մլրդ դրամը՝ ընթացիկ ծախսերին: Նախորդ տարվա համեմատ պետական բյուջեի ծախսերն աճել են 3.4%-ով՝ պայմանավորված ընթացիկ ծախսերի աճով: Արդյունքում 2010 թվականի համեմատ բյուջետային ծախսերի կազմում 2.4 տոկոսային կետով

[13] ՀՀ 2011 թվականի բյուջետային ուղերձում կանխատեսված ցուցանիշ:

նվազել է ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների տեսակարար կշիռը և համապատասխանաբար՝ ավելացել ընթացիկ ծախսերի կշիռը: ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի ծախսերն ունեցել են հետևյալ կառուցվածքը՝ դրանց 82.3%-ն ուղղվել է ընթացիկ ծախսերին և 17.7%-ը՝ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններին:

Ընթացիկ ծախսեր

ՀՀ 2011 թվականի պետական բյուջեից ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանը տրամադրվել է 812.3 մլրդ դրամ, որը կազմում է տարեկան ծրագրի 96.9%-ը: Տնտեսումների զգալի մասն արձանագրվել է նպաստների, կենսաթոշակների, այլ ծախսերի, ծառայությունների ու ապրանքների ձեռքբերման և պետական պարտքի սպասարկման ծախսերում:

Հաշվետու տարում ընթացիկ ծախսերի 10.4%-ը՝ շուրջ 84.7 մլրդ դրամ, տրամադրվել է պետական հիմնարկների աշխատողների աշխատանքի վարձատրությանը: Նշված ծախսերի գծով օգտագործվել է տարեկան նախատեսված միջոցների 98.6%-ը: Նախորդ տարվա համեմատ աշխատանքի վարձատրության ծախսերն ավելացել են 8.2%-ով:

2011 թվականին ծառայությունների և ապրանքների ձեռքբերման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 171.5 մլրդ դրամ կամ բյուջեի ընթացիկ ծախսերի 21.1%-ը: Նշված ծախսերի տարեկան ծրագիրը կատարվել է 97.8%-ով: Նախորդ տարվա համեմատ ծառայությունների և ապրանքների ձեռքբերման ծախսերն ավելացել են 7.2%-ով՝ հիմնականում պայմանավորված պայմանագրային այլ ծառայությունների ձեռքբերման ծախսերի աճով:

Հաշվետու տարվա ընթացքում պետական պարտքի սպասարկման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է ավելի քան 35.5 մլրդ դրամ կամ ծրագրված միջոցների 94.9%-ը: Շեղումը մեծ մասամբ պայմանավորված է ներքին պետական պարտքի սպասարկման ծախսերի տնտեսմամբ, որոնք կազմել են 20.7 մլրդ դրամ կամ կանխատեսված ցուցանիշի 93.4%-ը: Վերջինս պայմանավորված է պարտատոմսերի արժեկտրոնային և փաստացի եկամտաբերությունների տարբերությամբ, նախատեսված 24 մլրդ դրամի դիմաց 20.6 մլրդ դրամ ծավալով հետգնումների իրականացմամբ, տոկոսադրույքների բարձրացման պայմաններում ավելի բարձր եկամտաբերությամբ հետգնումների իրականացմամբ: Արտաքին պարտքի սպասարկմանը հաշվետու տարում ուղղվել է 14.8 մլրդ դրամ կամ կանխատեսվածի 97%-ը: Նախորդ տարվա համեմատ պետական պարտքի սպասարկման ծախսերն ավելացել են 16.7%-ով կամ 5.1 մլրդ դրամով: Մասնավորապես՝ 30.8%-ով (4.9 մլրդ դրամով) աճ է արձանագրվել ներքին պարտքի, 1.5%-ով (223.4 մլն դրամով)՝ արտաքին պարտքի սպասարկման ծախսերում: Ներքին պետական պարտքի սպասարկման ծախսերի աճը պայմանավորված է ներքին պարտքի ծավալի աճով, ներքին

պետական պարտքի կառուցվածքում միջնաժամկետ և երկարաժամկետ պարտատոմսերի տեսակարար կշռի 14% աճով, ինչպես նաև ֆինանսական շուկայում տոկոսադրույքների բարձրացմամբ:

2011 թվականին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել են 19.8 մլրդ դրամի սուբսիդիաներ, որից 17.9 մլրդ դրամը հատկացվել է պետական կազմակերպություններին, 1.9 մլրդ դրամը՝ ոչ պետական կազմակերպություններին: Հատկացված սուբսիդիաներից 7.3 մլրդ դրամը տրամադրվել է մշակույթի, 5.1 մլրդ դրամը՝ սոցիալական պաշտպանության բնագավառներին: Սուբսիդիաների ծրագիրը կատարվել է 98%-ով: 2010 թվականի համեմատ պետական բյուջեից տրամադրված սուբսիդիաների գումարն աճել է 10.7%-ով, ընդ որում, ավելացել են ինչպես պետական, այնպես էլ ոչ պետական հատվածին կատարված հատկացումները:

2011 թվականին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել են շուրջ 99.4 մլրդ դրամի դրամաշնորհներ՝ ապահովելով 99.2% կատարողական: Մասնավորապես՝ 97.7 մլրդ դրամ է տրամադրվել պետական հատվածի այլ մակարդակներին, 1.5 մլրդ դրամ՝ միջազգային կազմակերպություններին, 179 մլն դրամ՝ օտարերկրյա պետություններին: Պետական բյուջեից համայնքների բյուջեներին համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաները հատկացվել են նախատեսված ամբողջ ծավալով՝ կազմելով 32.4 մլրդ դրամ, որը պահպանվել է նախորդ տարվա մակարդակին: 7.3 մլրդ դրամի սուբվենցիաներ են տրամադրվել համայնքների բյուջեներին՝ 99.7%-ով կատարելով ծրագիրը: 2010 թվականի համեմատ պետական բյուջեից տրամադրված դրամաշնորհներն աճել են 5.3%-ով, որը հիմնականում պայմանավորված է պետական հատվածի այլ մակարդակներին կատարված ընթացիկ հատկացումների ավելացմամբ:

Հաշվետու տարում պետական բյուջեի ընթացիկ ծախսերի 31.6%-ը կամ 256.4 մլրդ դրամ կազմել են սոցիալական նպաստները և կենսաթոշակները, որոնց տարեկան ծրագիրը կատարվել է 95.3%-ով: Հատկացումները բաշխվել են հետևյալ կերպ. շուրջ 69.8 մլրդ դրամն ուղղվել է նպաստների, 186.6 մլրդ դրամը՝ կենսաթոշակների ֆինանսավորմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 5.1%-ով, ընդ որում՝ 7.1%-ով ավելացել են նպաստների, 4.3%-ով՝ կենսաթոշակների ծախսերը:

2011 թվականի պետական բյուջեի ընթացիկ ծախսերի 17.9%-ը կամ 145.1 մլրդ դրամ կազմել են այլ ծախսերը, որոնց տարեկան ծրագիրը կատարվել է 96.8%-ով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 4.9%-ով:

Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ

2011 թվականին պետական բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները կազմել են շուրջ 174.2 մլրդ դրամ, որոնք կազմում են ընդհանուր ծախսերի 17.7%-ը և տարեկան ծրագրի 85.4%-ը: Ծրագրից շեղումը հիմնականում արձանագրվել է շենքերի և շինությունների շինարարության, կապիտալ վերանորոգման և այլ մեքենաների ու սարքավորումների գծով ծախսերում: 2010 թվականի համեմատ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների ցուցանիշը նվազել է 8.9%-ով կամ 17 մլրդ դրամով: Մասնավորապես՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը նվազել են 7.3%-ով կամ 14 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված շենքերի և շինությունների շինարարության գծով կատարված ծախսերի նվազմամբ, իսկ ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերն աճել են 6.2 անգամ կամ 3 մլրդ դրամով:

2011 թվականին ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը կազմել են 177.7 մլրդ դրամ, որից 159.4 մլրդ դրամն օգտագործվել է շենքերի և շինությունների ձեռքբերման, շինարարության և կապիտալ վերանորոգման, 16.1 մլրդ դրամը՝ մեքենաների և սարքավորումների ձեռքբերման, պահպանման և հիմնանորոգման, 2.3 մլրդ դրամը՝ այլ հիմնական միջոցների ձեռքբերման նպատակով:

Հաշվետու տարվա ընթացքում 3.5 մլրդ դրամ է մուտքագրվել ոչ ֆինանսական ակտիվների օտարումից՝ կանխատեսված 3.3 մլրդ դրամի և նախորդ տարվա 564.5 մլն դրամի դիմաց: Նշված գումարից 3 մլրդ դրամը ստացվել է հողի, 524 մլն դրամը՝ այլ ակտիվների օտարումից:

Գործառական դասակարգում

<u>Ընդհանուր բնույթի պետական ծառայություններ</u>

ՀՀ 2011 թվականի պետական բյուջեից 154.1 մլրդ դրամ է տրամադրվել ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների ծախսերին՝ ապահովելով ծրագրի 96% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Պետական հատվածի բարեփոխումների երկրորդ ծրագրի, պետական պարտքի սպասարկման և պետական եկամուտների կոմիտեի նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի միջոցների հաշվին նախատեսված ծախսերի ցածր կատարողականով: Նախորդ տարվա համեմատ ոլորտի ծախսերն աճել են 7.6%-ով: Աճի հիմնական մասը բաժին է ընկնում պետական պարտքի սպասարկման, պետական եկամուտների կոմիտեի նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի և գիտական ու գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքների պահպանման ու զարգացման ծախսերին:

«Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում» դասի ծախսերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են 13.8 մլրդ դրամ՝ ապահովելով նախատեսված ծախսերի 99.2%-ը: 2010 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 3.5%-ով՝ հիմնականում պայմանավորված գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման և վարչական օբյեկտների հիմնանորոգման ծախսերի ավելացմամբ:

2011 թվականին ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի և պատգամավորների պահպանման համար նախատեսված միջոցներն օգտագործվել են 99.9%-ով՝ կազմելով 2.7 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ Ազգային ժողովի պահպանման ծախսերն ավելացել են 8.4%-ով, որը հիմնականում պայմանավորված է գործուղման և վառելիքի ծախսերի աճով, ինչպես նաև պետական ծառայողների աշխատավարձի ֆոնդի ավելացմամբ:

Հաշվետու տարում 783 մլն դրամ հատկացվել է ՀՀ վերահսկիչ պալատի պահպանմանը՝ կազմելով ծրագրի 99.9%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 15%-ով, որը հիմնականում պայմանավորված է աշխատավարձերի, պարտադիր սոցիալական ապահովության վճարների, գործուղման, մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման, տրանսպորտային նյութերի ձեռքբերման ծախսերի աճով:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանմանը տրամադրվել է 6.3 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրի 99.2%-ը: Հատկացված միջոցներով իրականացվել է ՀՀ նախագահի և կառավարության

աշխատակազմերի, ինպես նաև մարզպետարանների պահպանումը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 5.4%-ով՝ հիմնականում պայմանավորված աշխատավարձերի բնականոն աճի, էլեկտրաէներգիայի, վառելիքի, գործուղման, սպասարկման և կապի ծառայությունների ձեռքբերման ծախսերի աճով, ինչպես նաև ավտոմեքենաների պարտադիր ապահովագրմամբ:

ՀՀ նախարարությունների պահպանման ծախսերը՝ նախարարների աշխատակազմերի մասով, 2011 թվականին կազմել են 987.5 մլն դրամ, իսկ նախարարությունների աշխատակազմերի մասով՝ 838.6 մլն դրամ, և ապահովել համապատասխանաբար 97.4% և 98% կատարողական: Նախորդ տարվա համեմատ վերոհիշյալ ծախսերն աճել են համապատասխանաբար 13.1%-ով և 6.8%-ով՝ պայմանավորված աշխատավարձերի բնականոն աճով, էլեկտրաէներգիայի, վառելիքի, գործուղման, սպասարկման, ներկայացուցչական ծախսերի աճով, ինչպես նաև ավտոմեքենաների պարտադիր ապահովագրմամբ:

Վարչական օբյեկտների հիմնանորոգմանը տրամադրվել է 1.3 մլրդ դրամ, որն իրականացվել է 99.5%-ով: Հատկացված միջոցներով իրականացվել է ՀՀ Նախագահի և ՀՀ կառավարության աշխատակազմերի, Շիրակի մարզպետարանի, ՀՀ Ազգային ժողովի, ՀՀ դատախազության, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության վարչական շենքերի, ինչպես նաև Սևանի թերակղզու պետական ամառանոցի վերանորոգումը: Նախորդ տարվա համեմատ վարչական օբյեկտների հիմնանորոգման ծախսերում արձանագրվել է 18.4% աճ:

Քաղաքական հետազոտություններ իրականացնելու նպատակով 2011 թվականի պետական բյուջեով նախատեսված 115 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Նախորդ տարվա համեմատ ցուցանիշը գրեթե չի փոփոխվել:

Հաշվետու տարվա ընթացքում 577.8 մլն դրամի սուբվենցիա է հատկացվել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի պահպանմանը՝ ապահովելով ծրագրի 100%-ը և 5.5%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը, ինչը հիմնականում պայմանավորված է աշխատավարձերի աճով:

ՀՀ վերահսկիչ պալատի պահուստային ֆոնդի գծով նախատեսված 15.7 մլն դրամը նույնպես ամբողջությամբ օգտագործվել է՝ նախորդ տարվա ցուցանիշը գերազանցելով 14%-ով:

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կարողությունների զարգացման համար նախատեսված 60.8 մլն դրամի ծախսերն ամբողջությամբ կատարվել են:

Նախատեսված ծավալով իրականացվել են ՀՀ կառավարության գործունեության գնահատականների, կյանքի որակի և համայնքային կարիքների գնահատման հետազոտությունների ծախսերը, որոնք կազմել են 103.7 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 18.8%-ով՝ պայմանավորված այն հանգամանքով, որ 2010 թվականի առաջին կիսամյակում վերը նշված ծառայությունները մատուցած «Այ Փի Էս Սի» քաղաքական և

սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտը ԱԱՀ վճարող չի հանդիսացել, իսկ 2011 թվականին ամբողջությամբ հանդիսացել է ԱԱՀ վճարող, ինչպես նաև նոր աշխատողների ավելացմամբ և գրասենյակի տարածքի մեծացմամբ:

Արտաբյուջետային միջոցների հաշվին գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման նպատակով իրականացվել են 37.8 մլն դրամի ծախսեր՝ կազմելով 97.8%:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կարողությունների զարգացմանը (նախարարությունների աշխատակազմերի մասով) տրամադրվել է 14.3 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 86.3%-ը: Միջոցներն ուղղվել են ՀՀ արդարադատության նախարարության համար արտասահմանյան գրականության ձեռքբերմանը և ՀՀ սփյուռքի նախարարության համար վարչական սարքավորումների ձեռքբերմանը:

Նախորդ տարի վերոհիշյալ երկու ծրագրերի գծով պետական բյուջեից միջոցներ չէին հատկացվել:

Ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերությունների դասի ծրագրերին հաշվետու տարում տրամադրվել է 45.2 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսվածի 97.1%-ը: Շեղումը, որը կազմել է 1.4 մլրդ դրամ, հիմնականում պայմանավորված է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի միջոցների պակաս օգտագործմամբ: Սակայն նախորդ տարվա համեմատ արձանագրվել է այս ծախսերի աճ, ինչի արդյունքում 2010 թվականի համեմատ տվյալ դասի ծախսերն աճել են 6.5%-ով կամ 2.8 մլրդ դրամով:

Ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերությունների դասում ընդգրկված գործադիր իշխանության մարմինների պահպանման ծրագրի շրջանակներում տրամադրվել է 9.7 մլրդ դրամ, որն իրականացվել է նախատեսված ողջ ծավալով: Միջոցներն ուղղվել են ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանմանը (նախարարությունների աշխատակազմերի մասով) տրամադրվել է 1.4 մլրդ դրամ, որի կատարողականը կազմել է 96.7%: Միջոցներն ուղղվել են ՀՀ ֆինանսների նախարարության պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 7%-ով:

Նախատեսված ողջ ծավալով իրականացվել են ակցիզային դրոշմանիշների ձեռքբերման և ավելացված արժեքի հարկի վերադարձի ծախսերը, որոնք կազմել են համապատասխանաբար 1.4 և

22.9 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ առաջին ծրագրի գծով ծախսերն աճել են 2 անգամ, իսկ երկրորդի գծով՝ նվազել 3.1%-ով: Ակցիզային դրոշմանիշների ձեռքբերման ծախսերի աճը պայմանավորված է այն հանգամանքով, որ 2011 թվականին ամբողջությամբ վճարվել է նաև «2012» թվագրումով ակցիզային դրոշմանիշների ձեռքբերման գումարը:

ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակիցների խրախուսման նպատակային ֆոնդը կազմել է 594.8 մլն դրամ կամ նախատեսվածի 99.7%-ը: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն աճել են 2.8%-ով:

ՀՀ պետական պարտատոմսերի գովազդի նպատակով 2011 թվականին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 99.6 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 99.6%-ը: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն աճել են մոտ երկու անգամ՝ պայմանավորված գովազդի գների և ծավալների աճով:

Հաշվետու տարում ՀՀ գանձապետական համակարգի վճարահաշվարկային սպասարկման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է 152.9 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 91.4%-ը: 2010 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 12.7%-ով:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կարողությունների զարգացմանը (նախարարությունների աշխատակազմերի մասով) տրամադրվել է 135 մլն դրամ, որի կատարողականը կազմել է 99.6%: Միջոցները տրամադրվել են ՀՀ ֆինանսների նախարարությանը:

Հարկային վարչարարությանն օժանդակության նպատակով վիճակահանության անցկացման և պարգևավճարների տրամադրման նպատակով օգտագործվել է 1.7 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.8%-ը: Նշված ծախսերը նախորդ տարվա համեմատ աճել են 16.2%-ով:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի ծախսերը կազմել են 7.2 մլրդ դրամ կամ նախատեսվածի 85.2%-ը, որը պայմանավորված է կանխատեսվող հարկային ստուգումների քանակի և ներմուծման ծավալների նվազմամբ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնից ձեռք բերվող հարկային հաշիվների ձևերի տպագրությանն արտաբյուջետային միջոցներից տրամադրվել է 24.9 մլն դրամ, որի կատարողականը կազմել է 49.8%: Շեղումը պայմանավորված է նրանով, որ հարկ վճարողների մի մասը հարկային հաշիվներ դուրս է գրում էլեկտրոնային տարբերակով, որն ավելանալու միտում ունի: Նշված ծրագրի շրջանակներում 2010 թվականին ծախսեր չեն կատարվել՝ պայմանավորված «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածում 29.10.2009թ. կատարված օրենսդրական փոփոխությամբ (ուժի մեջ է մտել 2010 թվականի հուլիսի 1-ից), որով սահմանվել է հարկային

հաշիվների ձևերի՝ հարկային մարմնից ձեռքբերման պահանջը, և դրանց տպագրության համար ծախսեր նախատեսվել են 2011 թվականից սկսած:

Հաշվետու տարում 10 մլրդ դրամ է տրամադրվել *արտաքին հարաբերությունների* դասի ծրագրերին, որը կազմել է նախատեսված հատկացումների 99%-ը: Արտաքին հարաբերությունների ծախսերը 2010 թվականի համեմատ ավելացել են 7.7%-ով՝ հիմնականում պայմանավորված ՀՀ ԱԳՆ արտաբյուջետային միջոցներից ՀՀ դեսպանությունների և ներկայացուցչությունների պահպանման և Լոս Անջելեսում ՀՀ գլխավոր հյուպատոսության շենքի ձեռքբերման համար միջոցների հատկացմամբ, ինչպես նաև արտասահմանյան պաշտոնական գործուղումների ծախսերի աճով:

Արտաքին հարաբերությունների ծախսերից 5.9 մլրդ դրամ պետական բյուջեի հաշվին, 532.1 մլն դրամ՝ արտաբյուջետային միջոցների հաշվին ուղղվել է ՀՀ դեսպանությունների և ներկայացուցչությունների պահպանմանը՝ կազմելով նախատեսվածի 100%-ը: Նախատեսված ողջ ծավալով իրականացվել են նաև հետևյալ 4 ծրագրերը:

- Միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության վճարների գծով ծախսերը կազմել են 1.4 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 8.3%-ով՝ պայմանավորված նոր կազմակերպություններին անդամակցությամբ, ինչպես նաև այն հանգամանքով, որ լրացուցիչ գումարներ են տրամադրվել նախորդ տարիներին չվճարված պարտավորությունների մարմանը:
- ՀՀ արտաքին գործերի նախարարության աշխատակազմի «Պետական արարողակարգի ծառայություն» գործակալության պահպանմանը հատկացվել է 152.9 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 24.4%-ով՝ պայմանավորված աշխատավարձերի բնականոն աճի և պարգևավճարների ավելացմամբ:
- Դեսպանությունների շենքերի գնմանը հատկացվել է 32.4 մլն դրամ, որն ուղղվել է Բրյուսելում ՀՀ դեսպանության շենքի գնման նպատակով վերցված վարկի գծով 2011 թվականի չափաբաժնի մարմանը: Նշված ծախսերը 2010 թվականի համեմատ նվազել են 12.4%-ով:
- Լոս Անջելեսում ՀՀ գլխավոր հյուպատոսության շենքի ձեռքբերման նպատակով արտաբյուջետային միջոցներից հատկացվել է 89.5 մլն դրամ:

Արտասահմանյան պատվիրակությունների ընդունելությունների և արտասահմանյան պաշտոնական գործուղումների նպատակով հաշվետու տարում օգտագործվել է համապատասխանաբար 331.3 մլն դրամ և 579.2 մլն դրամ, որոնք կատարվել են 87.2%-ով և 93.4%-ով:

Գործադիր իշխանության, պետական կառավարման մարմինների պահպանման ծրագրի շրջանակներում ՀՀ արտաքին գործերի նախարարությանը տրամադրվել է 869.8 մլն դրամ՝

ապահովելով ծրագրի 99.9% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 15.1%-ով, որը հիմնականում պայմանավորված է 10 նոր կցորդի հաստիքի ավելացմամբ:

Հայաստանի Հանրապետությանը սուվերեն վարկանիշ շնորհելու կապակցությամբ կազմակերպությունների մատուցած ծառայությունների դիմաց վճարման ծախսերը կազմել են 70.1 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 99.4% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 11.3%-ով:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կարողությունների զարգացմանը (նախարարությունների աշխատակազմերի մասով) հատկացվել է 37.9 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 97.8% կատարողական: Միջոցները տրամադրվել են ՀՀ արտաքին գործերի նախարարությանը:

Հաշվետու տարում 396.7 մլն դրամ է տրամադրվել *աշխատակազմի (կադրերի) գծով ընդհանուր բնույթի ծառայությունների* դասի ֆինանսավորմանը՝ կազմելով ծրագրի 98.9%-ը: 2010 թվականի համեմատ տվյալ դասի ծախսերն աճել են 9%-ով:

Տվյալ դասում գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերը կազմել են 191.4 մլն դրամ՝ ապահովելով տարեկան ծրագրի 99.9% կատարողական: Միջոցներն ուղղվել են ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 9.4%-ով՝ հիմնականում պայմանավորված կենտրոնացված թեստավորման կազմակերպման ծախսերի աճով:

Քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում գտնվող քաղաքացիական ծառայողների վարձատրության հետ կապված ծախսերը կազմել են 60.5 մլն դրամ կամ նախատեսվածի 99.4%-ը և 34.2%-ով գերազանցել նախորդ տարվա ցուցանիշը, որը հիմնականում պայմանավորված է քաղաքացիական ծառայության կադրերի կարճաժամկետ ռեզերվում գրանցվածների թվաքանակի աճով:

Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության գործունեության կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման ֆինանսավորման նպատակով հաշվետու տարվա ընթացքում պետական բյուջեից տրամադրվել է 144.8 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 97.5%-ը: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն էական փոփոխության չեն ենթարկվել:

«Ծրագրման և վիճակագրական ընդհանուր ծառայություններ» դասի ծախսերը հաշվետու տարում կազմել են 1.6 մլրդ դրամ կամ նախատեսվածի 94.3%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է տնտեսումներով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 61.5%-ով՝ պայմանավորված մարդահամարի գծով ծախսերի կատարմամբ:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերը կազմել են 614 մլն դրամ կամ ծրագրի 98.7%-ը: Միջոցները հատկացվել են ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 3.5%-ով:

Պետական վիճակագրական տեղեկատվության հավաքագրման ծախսերը կազմել են 267.1 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 92.3%-ը: Շեղումը տնտեսման արդյունք է: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն էական փոփոխության չեն կրել:

Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի խթանման ծառայությունների հատկացումները կազմել են 77.2 մլն դրամ կամ նախատեսվածի 96.5%-ը: 2010 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 6.5%-ով, որի պատճառը նախորդ տարվա համեմատ գնաճն է: Ծրագրի շրջանակում բացվել են Մայքրոսոֆթ ինովացիոն և Հայ-հնդկական ուսումնական կենտրոնները, «Նոկիա մոբայլ» ծրագրերի տարածաշրջանային լաբորատորիան, տեղի են ունեցել «Դիջիթեք» ցուցահանդեսը, «ԴիջիԹեք Բիզնես» ֆորումը, «ԱրմԹեք 2011» Հայաստանի բարձր տեխնոլոգիաների ոլորտի գլոբալ համաժողովը, «Գիտության և տեխնոլոգիաների ձեռներեցության ծրագրի (STEP) շրջանակում «VC» վենչուրային համաժողովի ֆինանսավորում» միջոցառումը, պարբերաբար կազմակերպվել են «ՏՀՏ լիդերները առանց փողկապների» հանդիպում-քննարկումները, իրականացվել է հետազոտություն, որի արդյունքների հիման վրա թարմացվել է SS ոլորտի ներկա իրավիճակի հաշվետվությունը, ինչպես նաև SS ընկերությունների ուղեցույցը:

2011 թվականի մարդահամարի նախապատրաստման աշխատանքների կազմակերպման ծախսերը կազմել են 266.4 մլն դրամ կամ նախատեսվածի 88.1%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է մի շարք պայմանագրեր ավելի էժան կնքելու հանգամանքով:

ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության արտաբյուջետային միջոցների հաշվին իրականացվող ՀՀ 2011թ. մարդահամարի ֆինանսավորման նպատակով Իտալիայի կառավարության կողմից տրամադրվող դրամաշնորհի և «Միջազգային համադրումներ» ծրագրի շրջանակներում նախատեսված ծախսերն ամբողջությամբ կատարվել են՝ կազմելով համապատասխանաբար 5.6 մլն դրամ և 186.3 հազ դրամ: «Մարդահամար-2011» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ծախսերը կազմել են 345.5 մլն դրամ կամ նախատեսվածի 93%-ը:

ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության կարողությունների զարգացմանը տրամադրվել է 5.2 մլն դրամ կամ նախատեսվածի 91.5%-ը:

Ընդհանուր բնույթի այլ ծառայությունների դասին հաշվետու տարում ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 708.6 մլն դրամ, որից 314.8 մլն դրամը՝ գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների, 4.1 մլն դրամը՝

Գեղարքունիքի մարզի Արծվաշեն համայնքի ղեկավարի աշխատակազմի պահպանմանը, որոնց կատարողականը կազմել է համապատասխանաբար 96.8% և 97.2%:

«ՀՀ պետական գնումների գործակալություն» և «Սպասարկում» ՊՈԱԿ-ներին պետական աջակցությունը տրամադրվել է նախատեսված ողջ ծավալով՝ կազմելով համապատասխանաբար 146.1 մլն դրամ և 243.7 մլն դրամ: 2010 թվականի համեմատ ընդհանուր բնույթի այլ ծառայությունների դասի ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

2011 թվականին «*Ընդհանուր բնույթի հետազոտական աշխատանք*» դասին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 7.3 մլրդ դրամ, որը կազմել է նախատեսված ցուցանիշի 97.7%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 30.9%-ով՝ հիմնականում պայմանավորված գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքների պահպանման ու զարգացման ծախսերի աճով:

Գիտաշխատողներին գիտական աստիճանների համար 2011 թվականին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել են 369 մլն դրամ հավելավճարներ՝ ապահովելով 85.4% կատարողական և 29.6%-ով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը՝ պայմանավորված հավելավճար ստացող գիտնականների թվի նվազմամբ:

«Գիտական և գիտատեխնիկական գործունեության հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտություններ», և «Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանություն» ծրագրերը կատարվել են նախատեսված ծավալով՝ կազմելով համապատասխանաբար 177.6 մլն դրամ և 309.1 մլն դրամ:

«Գիտական և գիտատեխնիկական գործունեության հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտություններ» ծրագրի շրջանակներում 166.8 մլն դրամ է հատկացվել ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեին: Իրականացվել է կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված երկամյա ծրագրերի մրցույթ՝ մասնավոր հատվածի կամ այլ աղբյուրների հետ համաֆինանսավորման սկզբունքով, որն էապես բարձրացնում է գիտական արդյունքների քանակն ու որակը: Մրցույթին ներկայացված 43 նախագծերից ֆինանսավորվել են 17-ը: Ծրագրի շրջանակներում 10.8 մլն դրամ հատկացվել է ՀՀ սփյուռքի նախարարությանը, որի հաշվին իրականացվել է սփյուռքին վերաբերող 9 թեմաների գիտական հետազոտությունների պատվեր:

«Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանություն» ծրագրի շրջանակներում հատկացված գումարը տրամադրվել է Մատենադարանին՝ պահպանվող հին ձեռագրերի, տպագիր գրքերի և արխիվային վավերագրերի վերականգնողական աշխատանքների, ինչպես նաև մշակութային ու գիտական արժեքների թվայնացման և էլեկտրոնային արխիվացման աշխատանքների ֆինանսավորման նպատակով: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն ավելացել են 27.9%-ով:

Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքների պահպանման ու զարգացման ծախսերը կազմել են 6.2 մլրդ դրամ կամ նախատեսվածի 98.3%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 35.4%-ով՝ հիմնականում պայմանավորված գիտաժողովների, գործուղումների քանակի աճով, ինչպես նաև «Ա.Ի.Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա» ՊՈԱԿ-ի պահպանման ծախսերը տվյալ ծրագրում ներառելու հանգամանքով:

ԱՄՆ կառավարության աջակցությամբ իրականացվող «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագիրն իրականացվել է նախատեսված ողջ ծավալով: Ծրագրի շրջանակներում 2011 թվականի ընթացքում օգտագործվել է 195.2 մլն դրամ, որն ուղղվել է ծրագրի մոնիթորինգի և գնահատման աշխատանքների ֆինանսավորմանը: Մասնավորապես՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից իրականացվող տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունը (ԿՄԱՀ), ի թիվս այլ գործառույթների, օգտագործվել է ՀՄՀ-Հայաստան (Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստան) ծրագրի ազդեցության գնահատման համար: Հարկ է նշել, որ 2007թ. հունվարից սկսած, ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ը համաֆինանսավորել է ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության (ԱՎԾ) կողմից ամենամյա պարբերականությամբ իրականացվող տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունը: Այս նպատակով, ՀՄՀ-Հայաստանը շուրջ 2500 տնային տնտեսությունով մեծացրել է հետազոտության գյուղական ընտրանքը և բարելավել հարցարանի գյուղատնտեսություն բաժինը: Ավարտվել է Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության աղքատության ցուցանիշների ճշգրտման առաջադրանքը, որն իրականացվում էր միջազգային փորձագետի կողմից: 2011 թվականին ավարտվել են «Ջրից դեպի շուկա» բաղադրիչի շրջանակներում իրականացվող վերապատրաստման դասընթացների ազդեցության գնահատման համար պատվիրակված Գյուղատնտեսական գործունեության հետազոտության երրորդ փուլի, ինչպես նաև «Ձեռնարկությունների կիրառման հետազոտության» դաշտային և վերլուծական աշխատանքները: Իրականացվել են ջրօգտագործող ընկերությունների և ջրօգտագործողների հետազոտության երկրորդ փուլի աշխատանքները: 2011 թվականի մայիսին ՀՄՀ-Հայաստան ծրագրի Մոնիթորինգի և գնահատման թիմի կողմից կազմակերպվել է «Մոնիթորինգ և գնահատում» թեմայով եռօրյա վերապատրաստման դասընթաց Արզականում: «Սիներջի Ինթերնեշնլ Սիսթեմզ» կազմակերպության հետ համատեղ մշակվել է տեղեկատվական կառավարման համակարգ, որն ավարտին է հասցվել 2011 թվականի վերջին: Տեղեկատվական կառավարման համակարգը ՀՄՀ-Հայաստան ծրագրի մասին ամփոփ տեղեկատվություն ստանալու գործիք է և նախատեսված է տարբեր ոլորտները ներկայացնող օգտագործողների համար, այդ թվում՝ ՀՀ կառավարություն, ՀԿ-ներ, անհատ հետազոտողներ և զարգացման միջազգային գործակալությունների փորձագետներ: Այն ընդգրկում է ՀՄՀ-Հայաստան ծրագրի շրջանակներում

իրականացված ծրագրերի մասին բազմաբնույթ տեղեկատվություն, այն է՝ ծրագրային փաստաթղթեր, հետազոտությունների տվյալների բազաներ, հաշվետվություններ, պայմանագրեր և այլն: 2011 թվականի մարտին և սեպտեմբերին, ՄԳ և Համակարգման թիմերի համատեղ աշխատանքի արդյունքում լույս է տեսել «ՀՄՀ-Հայաստան ծրագիր. խոսում են արդյունքները» խորագրով երկու գրքույկ: Այս գրքույկներում ամփոփված են ՀՄՀ-Հայաստան ծրագրի հիմնական արդյունքները և ձեռքբերումները, վերջնական ցուցանիշներն ու ծրագրի շահառուները, ինչպես նաև հետագա տարիների ընթացքում սպասվող ազդեցությունը և ծրագրի կենսունակության մեխանիզմները: 2011 թվականի դեկտեմբերին Հազարամյակի մարտահրավեր կորպորացիային է ներկայացվել ՀՄՀ-Հայաստան ծրագրի ավարտական հաշվետվության նախագիծը:

Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքների դասի ծախսերը հաշվետու տարում կազմել են 906.3 մլն դրամ կամ նախատեսվածի 95.7%-ը: 2010 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 45.4%-ով՝ պայմանավորված գիտական ու գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) հետազոտությունների ծախսերի կրճատմամբ: Խմբի ծախսերի զգալի մասը՝ 779.9 մլն դրամ, տրամադրվել է նշված ծրագրին, որը իրականացվել է 95.1%-ով: Հաշվետու տարում ծրագրի շրջանակներում ֆինանսավորվել է 170 գիտական թեմա՝ նախորդ տարվա 705-ի փոխարեն, որը պայմանավորված է տվյալ ոլորտում տարվող քաղաքականության սկզբունքների փոփոխությամբ: 2011 թվականից սկսած պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորումը վերածվել է դրամաշնորհայինի, և նախատեսվել է ֆինանսավորել 170 գիտական թեմա՝ կատարման ժամկետը սահմանելով մինչև 2 տարի: Թեմաների ընտրությունը կատարվում է մրցութային հիմունքներով՝ անկախ գիտական փորձաքննության հիման վրա:

Տվյալ խմբում ընդգրկված՝ գիտական և գիտատեխնիկական նպատակային-ծրագրային հետազոտություններին հատկացումներն իրականացվել են ամբողջությամբ, որոնց շրջանակներում 126.4 մլն դրամ է հատկացվել ՀՀ ԳԱԱ «Պատմության ինստիտուտ» ՊՈԱԿ-ին՝ «Հայոց պատմություն» եռահատորյակի և ՀՀ ԳԱԱ «Արևելագիտության ինստիտուտ» ՊՈԱԿին՝ «Հայաստանի հարակից երկրների պատմություն» եռահատորյակի տպագրության համար:

Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների (այլ դասերին չպատկանող) դասի ծախսերը հաշվետու տարում կազմել են 6.1 մլրդ դրամ կամ նախատեսվածի 70.5%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող վարկային և դրամաշնորհային ծրագրերի ցածր կատարողականով: Նախորդ տարվա համեմատ այլ դասերին չպատկանող ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների դասի ծախսերն աճել են 6.6%-ով, որը հիմնականում պայմանավորված է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ստորաբաժանումների կողմից մատուցվող ծառայություններից ստացվող

եկամուտների հաշվին կոմիտեի համակարգի պահպանման, ինչպես նաև վարկային և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում կատարված ծախսերի աճով:

Հաշվետու տարվա ընթացքում 549.7 մլն դրամ է տրամադրվել այս դասում ընգրկված պետական կառավարման մարմինների՝ ՀՀ հանրային ծառայությունների կարգավորման հանձնաժողովի և ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի պահպանմանը, որը կազմել է ծրագրի 99.5%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 2.6%-ով: Տվյալ դասում ընգրկված պետական կառավարման մարմինների կարողությունների զարգացմանը տրամադրվել է 51.7 մլն դրամ, որը կատարվել է 100%-ով:

Նախատեսված ողջ ծավալով իրականացվել են նաև հետևյալ 4 ծրագրերը, որոնք նախորդ տարվա համեմատ գրեթե չեն փոփոխվել:

- Փորձաքննությունների կատարման ծառայությունների ձեռքբերմանը տրամադրվել է 282.3 մլն դրամ:
- Աճուրդների կազմակերպման և անցկացման աշխատանքներին տրամադրվել է 21.1 մլն դրամ:
- Պետական գույքի հաշվառման, գույքագրման, ուսումնասիրությունների և գնահատման աշխատանքների իրականացման ծախսերը կազմել են 35 մլն դրամ:
- Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայությանը տրամադրվել է 435.5 մլն դրամ:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ստորաբաժանումների կողմից մատուցվող ծառայություններից ստացվող եկամուտների հաշվին կոմիտեի համակարգի պահպանման ծախսերը կազմել են 2.6 մլրդ դրամ կամ ծրագրի 96.4%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 14.9%-ով՝ հիմնականում պայմանավորված ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 11-ի N7-Ն որոշմամբ համակարգում բարեփոխումների իրականացման աշխատանքները սահմանված ժամկետներում իրականացնելու համար 300 պայմանագրային աշխատողների ընդգրկման հետևանքով աշխատավարձի ծախսի ավելացմամբ:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Պետական հատվածի բարեփոխումների երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 401.3 մլն դրամ կամ նախատեսվածի 21.4%-ը, ընդ որում վարկի միջոցներից՝ 287.5 մլն դրամ, կառավարության համաֆինանսավորման հաշվին՝ 113.8 մլն դրամ: Ծրագրի նպատակն է կատարելագործել հանրային հատվածի կառավարման իրականացումը և ծառայությունների մատուցումը քաղաքականության մշակման ոլորտում գերատեսչական հզորությունների ուժեղացման, մարդկային կապիտալի արդյունավետությունն առավելագույնի հասցնելու և ներքին աշխատանքային հոսքերի և արտաքին հաղորդակցության համար տեղեկատվական համակարգերի ստեղծման միջոցով: Մշակված գնումների ժամանակացուցի և այլ փաստաթղթերի հիման վրա 2011 թվականին իրականացվել են

գնումների բնականոն ընթացքի համար անհրաժեշտ մեկնարկային աշխատանքներ: Ծրագրի ցածր կատարողականի պատճառներից հիմնականն այն է, որ 2011 թվականին ընթացքում գտնվող հետևյալ գնումների հիմնական մասի ամփոփումը տեղափոխվել է 2012 թվական.

- Նախարարությունների և մարզպետարանների ներքին համակարգչային ցանցի սարքավորումների ձեռք բերում և տեղադրում,
- ՀՀ Ոստիկանության Ճանապարհային ոստիկանության ծառայությունում տեղեկատվական-փնտրողական ավտոմատացված համակարգի ձեռքբերում, տեղադրում և տեղայնացում,
- Կառավարական կորպորատիվ ցանցի հանգույցների համար սարքավորումների ձեռքբերում և տեղադրում,
- Հասարակայնության հետ կապերի ստորաբաժանումների կարողությունների ուժեղացման համար խորհրդատվական ծառայություններ,
- Կառավարության, նախարարությունների և մարզպետարանների կառավարման տեղեկատվական համակարգերի գործարկման համար հավելյալ համակարգչային սարքավորումներով համալրում և ՀՀ ոստիկանության համար SS սարքավորումների ձեռք բերերում,
- ՀՀ կառավարության էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի համար ավտոմատացված պահուստավորման և արխիվային համակարգի և SS սարքավորումների ձեռքբերում և տեղադրում,
- Ազգային ժողովում կառավարման տեղեկատվական համակարգերի գործարկման համար համակարգչային սարքավորումներով, կապի միջոցներով և տպագրական տեխնիկայով համալրում,
- Ազգային ժողովի համար գույքի (նիստերի դահլիճ, պատգամավորների և ԱԺ աշխատակազմի գրասենյակներ և այլն) ձեռքբերում,
- ԱԺ մամուլի ասուլիսների սրահի տեխնիկական հագեցում,
- Վերահսկիչ պալատում կառավարման տեղեկատվական համակարգերի գործարկման և չափումների ավտոմատացման համար համակարգչային և տեխնիկական սարքավորումներով համալրում (3D լազերային սկանավորման սարք):

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Երևան քաղաքի պինդ աղբի կառավարման նպատակով պետական մասնավոր համագործակցության կառույցի համար գործարքի խորհրդատվական աջակցության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսված 86.4 մլն դրամի փոխարեն օգտագործվել է 71.8 մլն դրամ (83.1%): Ծրագրի նպատակն է աջակցություն ցուցաբերել Երևան քաղաքի երկու գոտիների աղբահավաքման և սանիտարական մաքրման համար կոնցեսիայի գործարքների, ինչպես նաև Երևան քաղաքի Նուբարաշենի աղբանոցի նախագծման-ֆինանսավորման-կառուցման-շահագործման (ՆՖԿՇ)

գործարքի նախապատրաստման և իրականացման գործին: Ծրագրի շրջանակներում 2011 թվականին իրականացվել են Երևան քաղաքի աղբի կառավարման համակարգի բարելավման վերաբերյալ առաջարկությունների վերանայման և բարելավման աշխատանքներ: Աշխատանքներն իրականացման ընթացքում են: Ծրագրի ցածր կատարողականը պայմանավորված է նրանով, որ վճարումների մի մասն իրականացվել է նախորդ տարիներին ստացված կանխավճարների հաշվին:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող օտարերկրյա ներդրումների և արտահանման աջակցության երկրորդ դրամաշնորհային ծրագրի իրականացման համար ծախսվել է 302.4 մլն դրամ կամ նախատեսվածի 97.9%-ը: Ծախսերից 255.7 մլն դրամը կատարվել է դրամաշնորհային միջոցների, 46.7 մլն դրամը՝ կառավարության համաֆինանսավորման հաշվին: Շեղումը պայմանավորված է այն հանգամանքով, որ 2011 թվականին իրականացված աշխատանքների մի մասի դիմաց վճարումներն իրականացվել են 2012 թվականի հունվար ամսին:

Ծրագրի նպատակն է օժանդակել Հայաստանին ներդրումների և արտահանման խթանման գործում, ինչպես նաև բարելավել բիզնես և ներդրումային միջավայրը, որի շնորհիվ օժանդակություն կցուցաբերվի նաև տնտեսական և սոցիալական անցումային գործընթացին: 2011 թվականին իրականացվել են ծրագրով նախատեսված հետևյալ աշխատանքները.

- ենթակառուցվածքների և հմտությունների զարգացում,
- ներդրողների և արտահանողների սպասարկման ինստիտուցիոնալ ամրապնդում,
- ներդրումների և արտահանման խթանում,
- ծրագրի կառավարում, մոնիտորինգ և գնահատում:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Ազգային ժողովի քաղաքականության ձևավորման և հանրության հետ երկխոսության կարողությունների հզորացման դրամաշնորհային ծրագրի իրականացման համար ծախսվել է 19.8 մլն դրամ կամ նախատեսվածի 8.8%-ը: Ծախսերից 10.8 մլն դրամը կատարվել է դրամաշնորհային միջոցների, 9 մլն դրամը՝ կառավարության համաֆինանսավորման հաշվին: Ցածր կատարողականի հիմնական պատճառն այն է, որ 2011 թվականին գնումների պլանը վերանայվել է, և աշխատանքների հիմնական մասը տեղափոխվել է 2012 թվական:

2011 թվականին իրականացվել են ծրագրով նախատեսված հետևյալ ուղղություններով աշխատանքներ.

- Ազգային ժողովում քաղաքականության ձևավորման կարողությունների ստեղծում,
- Ազգային ժողովի գրադարանի արդիականացում,
- Արդյունավետ հաղորդակցություն ընտրողների, հանրության և լրատվամիջոցների հետ:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող պետական պարտքի կառավարման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսված 122.9 մլն դրամի փոխարեն օգտագործվել

է 121.5 մլն դրամ (98.9%), ընդ որում դրամաշնորհային միջոցներից՝ 92.3 մլն դրամ, իսկ կառավարության համաֆինանսավորման հաշվին՝ 29.2 մլն դրամ: 2011 թվականին իրականացվել են ծրագրով նախատեսված պետական պարտքի կառավարումն ուժեղացնելու և ներքին պարտքի շուկայի զարգացմանն ուղղված հետևյալ աշխատանքները.

- տվյալների հավաքագրում, կանխիկ հոսքերի մոդելավորում, ռիսկի չափորոշիչների և հաշվետվությունների ձևավորում,
- առաջնային գրասենյակի ներուժի ստեղծման, առաջնային դիլերների համակարգի բարեփոխման գնահատում,
- դրամային շուկաների և իրացվելիության ծրագրի մշակում:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող հանրային հատվածի ներքին աուդիտի իրականացման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսված 108.3 մլն դրամի փոխարեն ծախսվել է 15 մլն դրամ (13.9%): Ցածր կատարողականի պատճառներից հիմնականն այն է, որ ՀԲ-ի և շահառուների հետ համաձայնեցված տեխնիկական հանձնարարականի հիման վրա 2010 թվականին վերահայտարարված մրցույթով պայմանագիրը կնքվել է միայն 2011 թվականին, և վճարումները նախատեսվում են 2012 թվականին: Ծրագրի նպատակն է հանրային հատվածում ներքին աուդիտի ինստիտուցիոնալ համակարգի ամրապնդումն ու կարողությունների ստեղծումը: 2011 թվականին իրականացվել են ծրագրով նախատեսված աշխատանքներ հետևյալ ուղղություններով.

- ներքին աուդիտի նոր մեթոդաբանության լայնամաշտաբ փորձարկում,
- ներքին աուդիտի համար տեղեկատվության կառավարման միասնական համակարգի մշակում և իրականացում:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ոչ առևտրային կազմակերպությունների ֆիդուցիար վերահսկողության փորձնական դրամաշնորհային ծրագրի իրականացման համար ծախսվել է 198.9 մլն դրամ կամ նախատեսվածի 103.8%-ը: Տարբերությունը պայմանավորված է 2011 թվականի ՀՀ պետական բյուջեում դրամաշնորհային միջոցների հաշվին վճարում կատարելու նպատակով նախատեսված միջոցների համար ՀՀ դրամի՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ հաշվարկված և խորհրդատուին կատարված վճարումների ժամանակ փաստացի փոխարժեքների տարբերությամբ: Ծրագրի նպատակն է աջակցել ՀՀ Ֆինանսների նախարարությանը հետևյալ ուղղություններով.

1) Ուսումնասիրել ՊՈԱԿ-ների ֆիդուցիար վերահսկողության/մոնիթորինգի գործող համակարգը և ներկայացնել առաջարկություններ այն հիմնական պահանջների վերաբերյալ, որոնք պետք է սահմանվեն ՊՈԱԿ-ների նկատմամբ՝ նպատակ ունենալով տալ հետևյալ հարցերի պատասխանները.

ա) Որոնք են այն հանգուցային սկզբունքները, որոնց հիման վրա կկայացվեն նոր ՊՈԱԿ-ներ ստեղծելու մասին որոշումները կամ կպահպանվի գործող ՊՈԱԿ-ների կարգավիճակը,

բ) Որոնք են այն հիմնական պահանջները, որոնք պետք է սահմանվեն ՊՈԱԿ-ների ֆինանսա-տնտեսական գործունեության (ֆինանսական կառավարման, ակտիվների ու պարտավորությունների կառավարման և այլնի) նկատմամբ,

գ) Արդյոք ՊՈԱԿ-ների ենթակատեգորիաները (կամ ընտանիքները) էապես տարբերվում են միմյանցից իրենց բնույթով և գործունեությամբ, և եթե այո, ապա որոնք են նրանց հիմնական բնորոշ առանձնահատկությունները, և ինչպես պետք է կարգավորվի և վերահսկվի յուրաքանչյուր ենթակատեգորիա,

դ) Ինչպես պետք է իրականացվի ՊՈԱԿ-ների ֆինանսատնտեսական գործունեության վերահսկողությունը և մոնիթորինգը, և արդյոք կան բացեր ֆիդուցիար վերահսկողության մշակված մեթոդաբանությունում (տեսական մոդելում), և որոնք են առաջարկվող համակարգի հաջող ներդրման հետ կապված հիմնական ռիսկերը:

2) Ընտրված ՊՈԱԿ-ներում պիլոտային հիմունքով իրականացնել ՊՈԱԿ-ների ֆիդուցիար վերահսկողության կամ մոնիտորինգի մշակված համակարգը և պիլոտային ծրագրի արդյունքների հիման վրա ներկայացնել առաջարկություններ համակարգի հետագա օպտիմալացմանն ուղղված քայլերի վերաբերյալ:

Ծրագրի արդյունքում մշակվել և հաստատվել են հետևյալ հաշվետվությունները՝

1. ՊՈԱԿ-ների ֆիդուցիար հսկողության (մոնիթորինգի) մոդելի թերությունների (բացերի) և մոդելի ներդրման հետ կապված ռիսկերի վերլուծության վերաբերյալ,

2. ՊՈԱԿ-ների նույնականացման և խմբավորման չափորոշիչների վերաբերյալ,

3. ՊՈԱԿ-ների ֆիդուցիար հսկողության (մոնիթորինգի) համակարգի փորձնական փուլի աշխատանքների և դրանց շրջանակներում իրականացված վերապատրաստումների վերաբերյալ,

4. ՊՈԱԿ-ների ֆիդուցիար հսկողության (մոնիթորինգի) համակարգի ներդրման ռազմավարության և օրենսդրական փոփոխությունների մասին առաջարկների վերաբերյալ:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ էկոնոմիկայի նախարարության կարողությունների զարգացման ծրագրի շրջանակներում նախատեսված 6 մլն դրամի փոխարեն օգտագործվել է 4.3 մլն դրամ (71.6%): Ցածր կատարողականը հիմնականում պայմանավորված է նրանով, որ 2011 թվականին նախատեսված ծրագրի աուդիտն իրականացվել է 2012 թվականին:

Ծրագրի նպատակն է ՀՀ էկոնոմիկայի նախարարության ներքին ընթացակարգերի շրջանակներում նոր և նորարարական միջոցառումների ներդրման, ինչպես նաև քաղաքականության կառուցման առաջատար մոդելների փորձարկման միջոցով ապահովել ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում համապատասխան ներուժի զարգացումը: 2011 թվականին

իրականացվել են ինստիտուցիոնալ զարգացման խթանմանը և քաղաքականության վերլուծության ներուժի ամրապնդմանն ուղղված աշխատանքներ:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ կառավարության արդյունքների մոնիթորինգի բարելավման կարողությունների ստեղծման դրամաշնորհային ծրագրի նախատեսված 79.3 մլն դրամի փոխարեն օգտագործվել է 72.8 մլն դրամ (91.8%), որից 59 մլն դրամը՝ դրամաշնորհային միջոցների, 13.8 մլն դրամը՝ կառավարության համաֆինանսավորման հաշվին:

Ծրագրի նպատակը կառավարությունում ինստիտուցիոնալ գիտելիքի և կարողությունների ստեղծումն է մոնիթորինգի և գնահատման ազգային համակարգի հիմունքների ձևավորման միջոցով պետական կառավարման համակարգի աշխատանքային ընթացակարգերի բարեփոխման համար: 2011 թվականին իրականացվել են գործող ընթացակարգերի վերլուծության և նոր աշխատանքային ու մոնիթորինգի և գնահատման ընթացակարգերի ներդրման, ինչպես նաև կատարողականի մոնիթորինգի կարողությունների ստեղծման աշխատանքներ: ՀԲ-ի և շահառուների հետ համաձայնեցված տեխնիկական հանձնարարականի հիման վրա տեղական ընկերության հետ կնքվել է պայմանագիր: Աշխատանքներն ավարտվել են: Ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է նրանով, որ 2011 թվականին նախատեսված մասնագետների վերապատրաստումը հետաձգվել է 2012 թվական:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Էլեկտրոնային հասարակության և ինովացիոն ծրագրի նախապատրաստման կանխավճարի վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 164.4 մլն դրամ կամ նախատեսվածի 25.5%-ը, որից վարկի միջոցներից՝ 110.7 մլն դրամ, կառավարության համաֆինանսավորման հաշվին՝ 53.7 մլն դրամ: Ցածր կատարողականը հիմնականում պայմանավորված է նրանով, որ 2011 թվականին Հավաստագրման կենտրոնի ստեղծման համար մշակվել էր մրցութային փաթեթ, սակայն գնահատման արդյունքում որոշում էր կայացվել չեղյալ համարել մրցույթը, քանի որ հաղթող ճանաչված ընկերության առաջարկը զգալիորեն գերազանցում էր գնահատված արժեքը և առկա բյուջեն: Անհրաժեշտություն առաջացավ լրամշակել տեխնիկական հանձնարարականը՝ առկա ռեսուրսներին համապատասխանեցնելու նպատակով, և 2011 թվականի հոկտեմբերի 25-ին հայտարարվեց նոր մրցույթ:

Ծրագրի նպատակն է օժանդակել էլեկտրոնային հասարակության և ինովացիոն ծրագրի նախապատրաստմանը, որի նպատակներն են տնային տնտեսությունների, բիզնեսի և պետական կազմակերպությունների համար հիմնացանցի, համակարգիչների և էլեկտրոնային ծառայությունների մատչելիությունը և հասանելիությունը, գիտելիքահեն և տեխնոլոգիահեն հատվածի ծավալները և տվյալ հատվածում զբաղվածության աճը, ինչպես նաև հասանելիությունը շուկաներին, ֆինանսներին, հմտություններին:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

- էլեկտրոնային հասարակության ենթակառուցվածքների զարգացում,
- ձեռնարկությունների ինովացիոն ենթակառուցվածքների խթանում,
- ծրագրի կառավարում և իրականացում:

2011 թվականին մշակված գնումների ժամանակացուցի և այլ փաստաթղթերի հիման վրա իրականացվել են գնումների բնականոն ընթացքի համար անհրաժեշտ մեկնարկային աշխատանքներ:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող պետական հատվածի արդիականացման վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 94.6 մլն դրամ կամ նախատեսվածի 96.7%-ը: Ծրագրի նպատակն էր պետական կառավարման համակարգի արդյունավետության բարձրացումն ընտրված հաստատություններում մոդելային նորարարությունների իրականացման միջոցով, պետական կառավարման համակարգի թափանցիկության և հաշվետվելիության բարձրացումը, կառավարության կողմից որոշումների կայացումն ու քաղաքականության իրականացումն արդյունավետորեն վերահսկելու համար համապատասխան մեխանիզմների ստեղծումը:

2011 թվականին ավարտել են Էլեկտրոնային պետական գնումների համակարգի համար ծրագրային ապահովման և այլ աշխատանքները, ինչպես նաև իրականացվել է ավարտական աուդիտը:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող զարգացման քաղաքականության վարկի երկրորդ ծրագրի նախապատրաստման կանխավճարի ծրագրի շրջանակներում նախատեսված էր 2.1 մլն դրամ: Կանխավճարի նպատակն էր Զարգացման քաղաքականության վարկի երկրորդ ծրագրի նախապատրաստումը: Նախատեսված բոլոր աշխատանքներն իրականացվել են մինչև ծրագրի ավարտման ժամկետը՝ 2010 թվականին նոյեմբերի 30-ը: 2011 թվականին իրականացվել է կանխավճարի ավարտական աուդիտը, որի համար կանխավճարը կատարվել է 2010 թվականին:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող տեխնոլոգիաների մրցունակության բարձրացման ծրագրի նախապատրաստման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսված 172.2 մլն դրամի փոխարեն օգտագործվել է 151.6 մլն դրամ (88%), ընդ որում դրամաշնորհային միջոցներից՝ 139.6 մլն դրամ, կառավարության համաֆինանսավորման հաշվին՝ 12 մլն դրամ: Բացի այդ, 19.3 մլն դրամ փաստացի ծախսերն իրականացվել են ի հաշիվ նախորդ տարիներին ստացված կանխավճարների: Ծրագրի նպատակն է ստեղծել օժանդակ միջավայր Հայաստանում ինովացիոն և մրցունակ գիտելիքահենք հասարակություն ձևավորելու նպատակով՝ զարգացած տեղեկատվական ենթակառուցվածքով, էլեկտրոնային ծառայություններով և հզոր տեղական տեխնոլոգիական ոլորտներով: 2011 թվականին իրականացվել են էլեկտրոնային

հասարակության, ինովացիոն և SS ոլորտի ենթակառուցվածքների զարգացման աշխատանքներ: Ծրագիրն ավարտվել է:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստանի կառավարության ֆիսկալ կառավարման և հարկային պարտավորությունների կատարման կարողությունների բարելավման համար դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսված 64.4 մլն դրամի փոխարեն օգտագործվել է 17.1 մլն դրամ (26.6%), ընդ որում դրամաշնորհային միջոցներից՝ 7.4 մլն դրամ, կառավարության համաֆինանսավորման հաշվին՝ 9.7 մլն դրամ:

Ծրագրի շրջանակներում աջակցություն է տրամադրվել ՀՀ ֆինանսների նախարարությանը մակրո-ֆիսկալ կանխատեսման և վերլուծության, ինչպես նաև Պետական եկամուտների կոմիտեին՝ արդյունավետ կառավարման համար կարողությունների ստեղծման ուղղությամբ: Ցածր կատարողականի պատճառներից հիմնականն այն է, որ 2011 թվականին գնումների պլանը վերանայվել է, և աշխատանքների հիմնական մասը տեղափոխվել է 2012 թվական:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող վիճակագրական հզորությունների կառուցման դրամաշնորհային ծրագրի գծով օգտագործվել է 41.8 մլն դրամ կամ նախատեսվածի 97.2%-ը, ընդ որում դրամաշնորհային միջոցներից՝ 34.6 մլն դրամ, իսկ կառավարության համաֆինանսավորման հաշվին՝ 7.2 մլն դրամ: Ծրագրի նպատակն է 2011 թվականի Հայաստանի բնակչության մարդահամարի փորձարկումը և նախապատրաստումը: Ցածր կատարողականը հիմնականում պայմանավորված է նրանով, որ 2011 թվականին նախատեսված ծրագրի աուդիտը տեղափոխվել է 2012 թվական:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ստորաբաժանումների կողմից մատուցվող ծառայություններից ստացվող եկամուտների հաշվին կոմիտեի համակարգի կարողությունների զարգացմանը տրամադրվել է 388.1 մլն դրամ կամ նախատեսվածի 79.3%-ը: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն ավելացել են 18%-ով՝ պայմանավորված կապիտալ վերանորոգման և վարչական սարքավորումների ձեռքբերման ծախսերի ավելացմամբ:

Ընտրական վարչարարության փորձի ուսումնասիրման, ընտրական վարչարարության բարձրացման, կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերազինման և ընտրական օրենսդրությանը վերաբերող նյութերի հրատարակման աշխատանքներին ՀՀ ԿԸՀ արտաբյուջետային միջոցներից հատկացվել է 25.8 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 95.5%-ը:

2011 թվականին *պետական պարտքի* գծով գործառնությունների դասի ծախսերը կատարվել են 94.9%-ով կազմելով 35.5 մլրդ դրամ: Նշված գումարից 20.4 մլրդ դրամ տրամադրվել է պետական արժեթղթերի (գանձապետական պարտատոմսերի) սպասարկմանը, որը կազմել է 93.6%: Նշված ծախսերի տնտեսումը պայմանավորված է պարտատոմսերի արժեկտրոնային և փաստացի

եկամտաբերությունների տարբերությամբ, նախատեսված 24.0 մլրդ դրամի դիմաց 20.6 մլրդ դրամ ծավալով հետգնումների իրականացմամբ, տոկոսադրույքների բարձրացման պայմաններում ավելի բարձր եկամտաբերությամբ հետգնումների իրականացմամբ (20.6 մլրդ դրամ ծավալով հետգնումների դիմաց սպասարկման ծախսը կազմել է 506.9 մլն դրամ):

Օտարերկրյա պետություններից, միջազգային կազմակերպություններից և այլ արտաքին աղբյուրներից ստացված վարկերի սպասարկմանը տրամադրվել է 14.8 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսվածի 97%-ը: Մուրհակների սպասարկմանը տրամադրվել է 12.6 մլն դրամ կազմելով նախատեսվածի 99.9%-ը: 273.2 մլն դրամ է տրամադրվել «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի նկատմամբ պարտավորությունների սպասարկմանը, որը կազմել է նախատեսվածի 81.8%-ը: Նախորդ տարվա համեմատ պետական պարտքի գծով գործառնությունների ծախսերն աճել են 16.7%-ով՝ հիմնականում պայմանավորված գանձապետական պարտատոմսերի սպասարկման ծախսերի աճով:

2011 թվականին ՀՀ պետական բյուջեից *կառավարության տարբեր մակարդակների միջև իրականացվող ընդհանուր բնույթի տրանսֆերտները* ֆինանսավորվել են ողջ ծավալով՝ կազմելով 32.5 մլրդ դրամ: Նշված գումարը տրամադրվել է համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների և Ազգային ժողովի ընդունած օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցման ֆինանսավորմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

<u>Պաշտպանություն</u>

2011 թվականին պաշտպանության բնագավառում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են 145.5 մլրդ դրամ՝ 99.4%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Նախորդ տարվա համեմատ ոլորտի ծախսերը նվազել են 1.4%-ով՝ հիմնականում պայմանավորված ռազմական կարիքների բավարարման ծախսերի կրճատմամբ:

Հաշվետու տարում *ռազմական պաշտպանության* դասին հատկացվել է 139.8 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրի 99.5%-ը: Նշված գումարից 139.6 մլրդ դրամն ուղղվել է ռազմական կարիքների բավարարմանը, որը կազմում է ծրագրի 99.5%-ը: ՀՀ ռազմական կցորդների պահպանմանը հատկացվել է 205.4 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 94.9%-ը: 2010 թվականի համեմատ ռազմական պաշտպանության ծախսերը նվազել են 1.7%-ով:

Արտաքին ռազմական օգնությանը տրամադրվել է 132.6 մլն դրամ կամ ծրագրված միջոցների 95.8%-ը: Այս դասում ներառված՝ ՆԱՏՕ-ում Հայաստանի Հանրապետության ռազմական

ներկայացուցչության պահպանման ծախսերը կազմել են 47.6 մլն դրամ՝ ապահովելով 96.3% կատարողական: ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի համադրման օղակում ՀՀ կապի սպայի գործունեության ապահովման ծախսերը կազմել են 35.6 մլն դրամ՝ ապահովելով 90% կատարողական: Երևանում ՆԱՏՕ-ի հասարակական տեղեկատվական կենտրոնի շենքի վարձակալության նպատակով բյուջեից հատկացումները կազմել են 9.6 մլն դրամ, իսկ ՆԱՏՕ-ի վերափոխման հրամանատարությունում ՀՀ փոխգործակցության ներկայացուցչի պահպանման հատկացումները՝ 39.9 մլն դրամ, որոնք ամբողջությամբ օգտագործվել են:

Արտաքին ռազմական օգնության ծախսերը 2.3%-ով գերազանցել են 2010 թվականի ցուցանիշը:

Պաշտպանության ոլորտում հետազոտական և նախագծային աշխատանքների դասում ներառված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության նպատակային-ծրագրային հետազոտություններ» ծրագրի շրջանակներում կատարվող հատուկ գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների գծով պետական բյուջեի ծախսերը կազմել են 1 մլրդ դրամ՝ ապահովելով 92% կատարողական և նախորդ տարվա համեմատ ավելանալով 15.7%-ով:

Պաշտպանության ծառայությունների (այլ դասերին չպատկանող) ծախսերին տրամադրվել է շուրջ 4.6 մլրդ դրամ, որից 4.4 մլրդ դրամը կազմել են պաշտպանության բնագավառի այլ ծախսերը, 56 մլն դրամ՝ զորակոչիկներին վարորդական իրավունքի վկայականների տրման և քննությունների ընդունման ծախսերը: Այլ ծախսերի գծով՝ արտաբյուջետային միջոցների հաշվին օգտագործվել է 115.7 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ տվյալ դասի ծախսերն աճել են 4.8%-ով:

<u>Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն</u>

Հասարակական կարգի, անվտանգության և դատական գործունեության բնագավառներին ՀՀ 2011 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 72.5 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրային հատկացումների 97.8%-ը: Ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է ոստիկանության որոշ ծրագրերի համեմատաբար ցածր կատարողականով:

Բաժնի ծախսերի 66.7%-ը կամ 48.4 մլրդ դրամ կազմել են հասարակական կարգի և անվտանգության խմբի ծախսերը, որոնց ծրագիրը կատարվել է 97%-ով: Նշված գումարից 35.7 մլրդ դրամը կազմել են ոստիկանության, 12.7 մլրդ դրամը՝ Ազգային անվտանգության դասի ծախսերը, որոնք կատարվել են համապատասխանաբար 96.1%-ով և 99.4%-ով: Նախորդ տարվա համեմատ հասարակական կարգի և անվտանգության խմբի ծախսերն աճել են 5%-ով կամ 2.3 մլրդ դրամով:

2010 թվականի համեմատ ոստիկանության դասի ծախսերն աճել են 4.6%-ով՝ հիմնականում պայմանավորված հասարակական կարգի պահպանության ապահովման ծախսերի աճով, որոնք

կազմել են 23.6 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.9%-ը: ՀՀ անձնագրերի բլանկների տպագրության ծախսերը կազմել են 162.9 մլն դրամ կամ նախատեսվածի 93.8%-ը և 4.7%-ով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը: Պետավտոհամարանիշների ձեռքբերման համար պետական բյուջեից տրամադրվել է 236.2 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել: Հաշվետու տարում 6 մլրդ դրամի ծախսեր են կատարվել ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության ստորաբաժանումների կողմից պայմանագրային հիմունքներով պահպանության և անվտանգության գծով իրականացվող ծառայությունների դիմաց ստացվող արտաբյուջետային միջոցների հաշվին, որոնք կազմել են նախատեսվածի 94.7%-ը և 4.5%-ով (260.4 մլն դրամով) գերազանցել նախորդ տարվա ցուցանիշը: ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության ճանապարհային ոստիկանության կողմից արձանագրված խախտումների համար վարչական տուգանքների գանձումներից, գրանցման-քննական ծառայությունների դիմաց վճարումներից և այլ վճարովի ծառայություններից ստացված արտաբյուջետային միջոցների օգտագործումը հաշվետու տարում կազմել է 5.3 մլրդ դրամ կամ նախատեսվածի 83.2%-ը: 2010 թվականի համեմատ տվյալ ծախսերն ավելացել են 2.1%-ով: Քաղաքացիներին բժշկական օգնության և սպասարկման վճարովի ծառայությունների մատուցման նպատակով արտաբյուջետային միջոցներից տրամադրվել է 6.2 մլն դրամ կամ նախատեսվածի 87.8%-ը, որոնք նախորդ տարվա համեմատ նվազել են 12.6%-ով: ՀՀ քաղաքացու անձնագիր տալու կամ փոխանակելու վճարովի ծառայության մատուցումից ստացվող միջոցներն օգտագործվել են 97.5%-ով՝ կազմելով 370.5 մլն դրամ և 76.2%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը:

2011 թվականի ընթացքում *Ազգային անվտանգության* բնագավառին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 12.7 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրային հատկացումների 99.4%-ը: 2010 թվականի համեմատ Ազգային անվտանգության ծախսերն աճել են 6.4%-ով կամ 766.1 մլն դրամով: Մասնավորապես 10.6 մլրդ դրամ հատկացվել է ազգային անվտանգության ապահովման ծրագրի ֆինանսավորմանը, որը իրականացվել է ամբողջությամբ: 2010 թվականի համեմատ տվյալ ծախսերն աճել են 9%-ով: Պետական պահպանության ապահովման ծախսերի կատարողականը կազմել է 96.6% կամ 1.7 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ պետական պահպանության ապահովման ծախսերը նվազել են 1.6%-ով: ՀՀ Ազգային անվտանգության խորհրդի աշխատակազմի պահպանման ծրագրի շրջանակներում օգտագործվել է շուրջ 341 մլն դրամ (98.9%)՝ 17.7%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը՝ հիմնականում պայմանավորված արտասահմանյան գործուղումների ծախսերի աճով: ՀՀ կառավարական կապի անվտանգության ապահովման նպատակով արտաբյուջետային միջոցների հաշվին իրականացվել են 22 մլն դրամի ծախսեր, որոնց կատարողականը կազմել է 60.7%:

Հայաստանի *փրկարար ծառայության* համակարգի պահպանման նպատակով հաշվետու տարում ծախսվել է 4.4 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրային հատկացումների 99.5%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 2.6%-ով: Այս դասում ընդգրկված գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման (նախարարությունների աշխատակազմերի մասով) ծրագրի ծախսերը կազմել են 546.3 մլն դրամ՝ ապահովելով 97.6% կատարողական: Միջոցներն ուղղվել են ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 80.1%-ով, պայմանավորված այն հանգամանքով որ 2010 թվականի հոկտեմբեր ամսին Պետական հրդեհային տեսչության վերակազմավորման արդյունքում վերջինս ընդգրկվեց ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կազմում՝ դուրս գալով Հայաստանի փրկարար ծառայության կազմից: Հայաստանի փրկարար ծառայության համակարգի ստորաբաժանումների պահպանման ծախսերը կատարվել են 99.7%-ով՝ կազմելով 3.9 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 3.3%-ով:

Դատարանների դասի ծրագրերին ՀՀ 2011 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 9.4 մլրդ դրամ՝ 100%-ով ապահովելով ծրագրի կատարումը: 2010 թվականի համեմատ այս ծախսերն աճել են 7.4%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է դատարանների պահպանման և ՀԲ աջակցությամբ իրականացվող Դատահիրավական բարեփոխումների երկրորդ ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի աճով:

Հաշվետու տարվա պետական բյուջեից 5.5 մլրդ դրամ տրամադրվել է դատական իշխանության մարմինների պահպանմանը՝ կազմելով նախատեսվածի 99.1%-ը: Շուրջ 386 մլն դրամ է տրամադրվել ՀՀ սահմանադրական դատարանի պահպանմանը՝ կազմելով նախատեսվածի 99.2%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են համապատասխանաբար 10.1%-ով և 8.5%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է դատավորների և դատական ծառայողների աշխատավարձերի՝ մասնագիտական ստաժի հետ կապված բարձրացմամբ:

Հաշվետու տարում 639.9 մլն դրամ է տրամադրվել Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության պահպանմանը, որը կազմել է նախատեսվածի 99.3%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 13.6%-ով՝ հիմնականում պայմանավորված էլեկտրաէներգիայի, վառելիքի, նյութերի, սպասարկման և կապի ծառայությունների ձեռքբերման ծախսերի աճով:

Դատահիրավական բարեփոխումների երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում 2011 թվականին կատարվել են 2.4 մլրդ դրամի ծախսեր կամ նախատեսվածի 103.2%-ը, որից վարկային միջոցներից 1.9 մլրդ դրամ, կառավարության համաֆինանսավորման հաշվին՝ 503.7 մլն դրամ: Ծրագիրը բաղկացած է վեց հիմնական բաղադրիչներից.

- դատական համակարգի կառավարման ու վարչարարության ուժեղացում,
- դատարանների շենքերի վերականգնում,
- դատավորների վերապատրաստման դպրոց,
- դատական ակտերի հարկադիր կատարման բարելավում,
- արբիտրաժի ծառայությունների ուժեղացում,
- իրավական տեղեկատվության մատչելիության ընդարձակում և հանրային իրազեկության բարձրացում:

Ծրագրի շրջանակներում 2011 թվականին ավարտվել և շահագործման են հանձնվել չորս ընդհանուր իրավասության դատարանների նորակառույց շենքեր՝ Եղեգնաձոր, Մեղրի, Իջևան, Ապարան քաղաքներում, ինչպես նաև ՀՀ Արդարադատության Ակադեմիայի և Փորձագիտական կենտրոնի շենքերը: Մեկնարկել են Կապան և Սևան քաղաքների ընդհանուր իրավասության դատարանների շենքերի կառուցման աշխատանքները: Իրականացվել է Ապարան, Եղեգնաձոր, Սևան, Իջևան, Կապան, Վարդենիս, Մեղրի քաղաքների դատարանների համար գրասենյակային կահույքի մատակարարում, ՀՀ դատարանների շենքերի համար անվտանգության համակարգերի՝ հսկիչ անցակետերի մատակարարում և տեղադրում, ՀՀ դատական դեպարտամենտի և Չարենցավան, Սպիտակ Գորիս, Մեղրի, Բերդ, Ապարան քաղաքների դատարանների համար ՏՏ սարքավորումների մատակարարում, տեղադրում, միացում և փորձարկում, ԴԱՀԿ ծառայության կարիքների համար ցանցային հեռախոսային սարքերի գնում, մարզերի դատարանների համար կահավորանքի գնում:

ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ դատարանների պահուստային ֆոնդերից օգտագործվել է համապատասխանաբար 8.4 մլն դրամ և 111.1 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի համապատասխանաբար 100%-ը և 96.8%-ը:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող դատաիրավական բարեփոխումների երկրորդ վարկային ծրագրում ճապոնական դրամաշնորհային ծրագրի շրջանակներում կատարվել են 48.2 մլն դրամի ծախսեր, որից 40.1 մլն դրամ՝ դրամաշնորհային, 8.1 մլն դրամ՝ համաֆինանսավորման միջոցներից: Նշված ծախսերը 31.7%-ով գերազանցել են ծրագիրը, որը պայմանավորված է շինարարական աշխատանքների իրականացմանը զուգընթաց հեղինակային և տեխնիկական հսկողության աշխատանքների կատարմամբ:

2011 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում հիմնականում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- Դատարանների կառավարման ծրագրի (CAST) տեղադրման աշխատանքների իրականացում Հայաստանի բոլոր դատարաններում, ծրագրի օգտագործման նպատակով ուսուցման դասընթացների կազմակերպում, ինչպես նաև դատարանների համակարգչային ծրագրի

աշխատանքն ապահովելու նպատակով միջնաժամկետ տեխնիկական սպասարկում և օժանդակություն;

- Հայաստանի դատաիրավական բարեփոխումների ծրագրով իրականացված ծրագրերի արդյունքների վերաբերյալ հեռուստատեսային վավերագրական ֆիլմի պատրաստման և համապետական ծածկույթ ունեցող հեռուստաալիքով հեռարձակման ծառայություններ;
- Հայաստանի Դատաիրավական բարեփոխումների երկրորդ ծրագրով ստեղծված www.arlis.am և www.datalex.am հանրային տեղեկատվական կայքերի մասին հանրային իրազեկման նպատակով տեսահոլովակների պատրաստման և համապետական ծածկույթ ունեցող հեռուստաալիքով հեռարձակման ծառայություններ;
- Դատավարական օրենսդրության նախագծերի մշակում;
- Իրավունքների պաշտպանության և իրավաբանական ծառայությունների մատչելիության վերաբերյալ տպագիր շաբաթական հավելվածի պատրաստում;
- հեղինակային և տեխնիկական հսկողության աշխատանքներ Սևան, Եղեգնաձոր, Մեղրի, Իջևան, Ապարան, Կապան քաղաքների դատարանների, ինչպես նաև ՀՀ արդարադատության Ակադեմիայի և փորձագիտական կենտրոնի շենքերի համար:

Համաշխարհային Բանկի աջակցությամբ իրականացվող դատաիրավական բարեփոխումների երկրորդ վարկային ծրագրում հոլանդական դրամաշնորհային ծրագրի ծախսերը կազմել են 399.8 մլն դրամ կամ նախատեսվածի 94%-ը: 2011 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում հիմնականում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- Արբիտրաժի ծառայությունների ամրապնդում, տեխնիկական օժանդակության ծրագիր;
- Դատալեքս հանրային տեղեկատվական կրպակների համալիրների տեղադրում համայնքային կետերում և դատարաններում;
- «ԱՌԼԻՍ» համակարգի արդիականացման նպատակով SS սարքավորումների գնում;
- էլեկտրոնային արխիվի տվյալների բազային ծրագրային ապահովման մշակում;
- Պետական հարկերի էլեկտրոնային վճարման համակարգի մշակում:

2011 թվականին ՀՀ սահմանադրական դատարանի կարողությունների զարգացման ծախսերը կատարվել են նախատեսված ծավալով՝ կազմելով 32.8 մլն դրամ:

Հաշվետու տարում պետական բյուջեից 452.6 մլն դրամ է տրամադրվել *իրավական պաշտպանության* դասի ծրագրերին՝ կազմելով նախատեսվածի 97.1%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 15.6%-ով, ինչը պայմանավորված է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի պահպանման, ինչպես նաև դատավարություններին ընդգրկված թարգմանիչների, փորձագետների և վկաների վարձատրության ծախսերի աճով:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի պահպանման ծախսերը 2011 թվականին կազմել են 160 մլն դրամ կամ նախատեսվածի 98.1%-ը: 2010 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 33.7%-ով՝ պայմանավորված կառուցվածքային փոփոխությունների արդյունքում նոր աշխատատեղերի ստեղծմամբ:

Հանրային պաշտպանի գրասենյակի պահպանման ծախսերը կատարվել են նախատեսված ծավալով՝ կազմելով 152.4 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:

Դատավարություններին ընդգրկված թարգմանիչների, փորձագետների և վկաների վարձատրության փոխհատուցման ծախսերը կազմել են 72 մլն դրամ (99.3%), որը 67.1%-ով գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը՝ պայմանավորված թարգմանչական աշխատանքների ծավալների աճով:

Անվճարունակության գործերով կառավարիչներին իրենց մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման ծախսերը կազմել են 5.1 մլն դրամ (34.2%)՝ 21.2%-ով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը:

Արտաբյուջետային միջոցների հաշվին իրականացվող մարդու իրավունքների պաշտպանին միջազգային և դոնոր կազմակերպությունների կողմից հատկացվող ֆինանսական աջակցության հաշվին կատարված ծախսերը կազմել են 63.1 մլն դրամ (99.6%): Եվրոպական Հանձնաժողովի աջակցությամբ 2011 թվականին շարունակվել է 2009 թվականի մարտի 1-ից իրականացվող՝ «Մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանությունը մարդու իրավունքների պաշտպանի հաստատության միջոցով՝ որպես Ազգային կանխարգելող մեխանիզմ՝ խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիայի կամընտիր արձանագրությունը» թեմայով 36 ամիս ընդհանուր ժամկետով ծրագիրը: 2011 թվականի հուլիսի 8-ին Երևանում ՀՀ Մարդու իրավուքների պաշտպանի աշխատակազմը ՅՈՒՆԵՍԿՕ-ի մոսկովյան գրասենյակի ֆինանսական աջակցությամբ անցկացրեց «Մշակութային կյանքին մասնակցելու իրավունքի իրականացումը ՀՀ-ում, խոչընդոտներ, գերակայություններ, առաջընթաց և հեռանկարներ» թեմայով մեկօրյա հանդիպում-քննարկում: 2011 թվականի հոկտեմբերի 24-27-ը ՀՀ Մարդու իրավուքների պաշտպանի աշխատակազմը Եվրոպայի խորհրդի և Եվրոպական հանձնաժողովի աջակցությամբ իրականացրեց խոշտանգումների կանխարգելման ազգային մեխանիզմների գործուն ցանցի «Ազգային կանխարգելման մեխանիզմի շրջանակներում այցելություններ ազատազրկման վայրեր և փորձի փոխանակում» խորագրով աշխատանքային հանդիպում: Կազմակերպվել են 2011թ. դեկտեմբերի 10-ին Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային օրվան նվիրված միջոցառումներ:

2011 թվականին 2.8 մլրդ դրամ է տրամադրվել *դատախազության* դասի ծրագրերին՝ կազմելով նախատեսվածի 98.8%-ը: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն աճել են 6.4%-ով՝ հիմնականում պայմանավորված դատախազության պահպանման և կարողությունների զարգացման ծախսերի աճով: Հաշվետու տարում 2.4 մլրդ դրամ տրամադրվել է ՀՀ դատախազության պահպանմանը, որը կատարվել է 98.7%-ով: 2010 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 3.3%-ով: Նախատեսված ողջ ծավալով օգտագործվել են ՀՀ դատախազության պահուստային ֆոնդի հաշվին նախատեսված միջոցները՝ կազմելով 59.1 մլն դրամ:

2011 թվականի պետական բյուջեից ՀՀ հատուկ քննչական ծառայության պահպանմանը տրամադրվել է 247.5 մլն դրամ (98.4%): Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

78.5 մլն դրամ տրամադրվել է ՀՀ դատախազության կարողությունների զարգացմանը, որը կատարվել է 99.9%-ով և 2.8%-ով գերազանցել նախորդ տարվա ցուցանիշը:

Նախատեսված ողջ ծավալով իրականացվել են *քրեակատարողական համակարգի* պահպանության ծախսերը կազմելով՝ շուրջ 7 մլրդ դրամ: 2010 թվականի համեմատ դրանք աճել են 33.6%-ով՝ պայմանավորված ազատազրկվածների թվաքանակի աճով:

<u>Տնտեսական հարաբերություններ</u>

ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի ծախսերի 8.5%-ը տրամադրվել է *տնտեսական հարաբերությունների* բաժնին՝ կազմելով շուրջ 84 մլրդ դրամ և 79.9%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Շեղումը հիմնականում պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի ցածր կատարողականով: Հատկացված ֆինանսական միջոցների զգալի մասն ուղղվել է երեք բնագավառների՝ գյուղատնտեսության, անտառային տնտեսության, ձկնորսության և որսորդության (50.5%), տրանսպորտի (36.2%) և վառելիքի ու էներգետիկայի (6.6%) ծրագրերի իրականացմանը:

Հաշվետու տարում *ընդհանուր բնույթի տնտեսական, առևտրային և աշխատանքի գծով հարաբերությունների* դասի ծախսերը կազմել են ավելի քան 2.3 մլրդ դրամ՝ 94.7%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Դասում ընդգրկված են 9 ծրագրեր, որոնցից 5-ի գծով արձանագրվել է 100% կատարողական:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերը կազմել են շուրջ 215.4 մլն դրամ, որը հատկացվել է ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովին և ամբողջությամբ օգտագործվել է: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել են 6.5%-ով կամ

13.2 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է աշխատավարձերի և տրանսպորտային նյութերի գծով ծախսերի աճով:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծրագրի գծով (նախարարությունների աշխատակազմերի մասով) օգտագործված միջոցները կազմել են 587.1 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 98.8%-ը: Միջոցներն ուղղվել են ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ 10%-ով կամ 53.3 մլն դրամով աճը հիմնականում պայմանավորված է նախարարության աշխատակազմի հաստիքացուցակում կատարված փոփոխություններով:

Հաշվետու տարում 80.6 մլն դրամ է տրամադրվել արտասահմանում առևտրային ներկայացուցչությունների պահպանմանը, որն ամբողջությամբ օգտագործվել է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 11.5%-ով կամ 10.5 մլն դրամով, որը պայմանավորված է փոխարժեքի նվազմամբ:

Հիդրոօդերևութաբանության ծառայությունների գծով կատարված ծախսերը կազմել են 533.6 մլն դրամ (նախատեսվածի 100%-ը), որն օգտագործվել է «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի պետական ծառայություն» ՊՈԱԿ-ի կողմից հիդրոօդերևութաբանական դիտարկումների իրականացման նպատակով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 0.7%-ով կամ 3.6 մլն դրամով:

Տնտեսական գործունեության արդյունավետ վարման և աջակցման միջոցառումների իրականացման ծախսերը կազմել են 125 մլն դրամ կամ նախատեսվածի 100%-ը: Ծրագիրն իրականացնում է «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ն, որի արժեթղթերի 100%-ը պատկանում է ՀՀ կառավարությանը, իսկ բաժնետոմսերի կառավարման լիազորությունը վերապահված է ՀՀ կառավարության աշխատակազմին: Ընկերության հիմնական նպատակն է օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավումը և արտահանման խթանումը, ինչպես նաև գործարար միջավայրի և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման խոչընդոտների ուսումնասիրությունը և դրանց վերացման ուղղությամբ առաջարկությունների ներկայացումը: Հաշվետու տարում իրականացվել են մի շարք միջոցառումներ՝ ուղղված օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավմանը, արտահանման զարգացմանը, գործարար միջավայրի բարելավմանը և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 1.5%-ով կամ 1.9 մլն դրամով:

Հայաստանում փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության ծրագրին հատկացվել է 150 մլն դրամ: Հաշվետու տարում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից ՓՄՁ պետական աջակցության 2011 թվականի ծրագրի շրջանակներում վարկային երաշխավորությունների տրամադրման, սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության, տեղական արտադրանքի

խթանման և տեղական ապրանքանիշի ձևավորման, ՓՄՁ սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի արտահանման, ՓՄՁ սուբյեկտներում ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման, գործարար տեղեկատվական և խորհրդատվական, ՓՄՁ-ի սուբյեկտների կադրային ներուժի ձևավորման և զարգացման աջակցության ուղղություններով աջակցություն է ցուցաբերվել սկսնակ և գործող 3780 ՓՄՁ սուբյեկտի: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերը չեն փոփոխվել:

Գյումրու տեխնոպարկի գործունեության իրականացման ծրագրի ֆինանսավորման նպատակով տրամադրվել է 155.3 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 93.3%-ը: Շեղումը պայմանավորված է մրցույթների արդյունքում նախատեսվածից ցածր գներով ապրանքների և ծառայությունների ձեռքբերման հանգամանքով: Ծրագրի շրջանակներում ճարտարագիտական կրթական և հետազոտական (մեխանիկայի և էլեկտրոնիկայի) լաբորատորիայում ուսուցում են անցել 203 ուսանողներ և աշակերտներ, հայտարարվել է ճարտարագիտության (բարձր տեխնոլոգիաներ) և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներին վերաբերող բիզնես գաղափարների երկրորդ մրցույթը, որի արդյունքում հաղթող են ճանաչվել 3 գաղափարներ, բացվել և ներկայումս Գյումրիում գործում է «Դ-Լինկ» տարածաշրջանային հետազոտական կենտրոնը, Գյումրու տնտեսական զարգացման հիմնադրամի (ԳՏԶՀ) մասնագիտական օժանդակությամբ ստեղծվել են «Գիգաբիթ» ԱՁ և «Էներգո էֆեկտիվ տեխնոլոգիա» (ԷԷՖ) ՍՊԸ սկսնակ ընկերությունները, մշակվել և ներկայացվել է Մուլտիմեդիայի լաբորատորիայի ստեղծման նպատակով բովանդակային և տեխնիկական բաղադրիչների նկարագրությունը, կատարվել է «Գյումրու տեխնոլոգիական կենտրոն» աշխատանքային նախագծի փորձաքննություն: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 22.3%-ով կամ 44.7 մլն դրամով, որը նույնպես պայմանավորված է մրցույթների արդյունքում նախատեսվածից ցածր գերով ապրանքների և ծառայությունների ձեռքբերման հանգամանքով:

2011 թվականին «Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի» (ՀԱՄՀ) կանոնադրական հիմնախնդիրների իրականացմանը պետական աջակցության ծախսերը կազմել են 249.5 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 94.5%-ը: Շեղումը պայմանավորված է մրցույթների արդյունքում առաջացած տնտեսումներով: Ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- Տաթևի վերածնունդ միջոցառման շրջանակներում իրականացվել է օրենսդրական հենքի ուսումնասիրություն: Մշակվել է ֆոնդահայթայթման ծրագրի նախագիծ, մշակվել է ծրագրի փաթեթ, որը ներկայացվել է պոտենցիալ ներդնողներին: Իրականացվել են հանդիպումներ միջազգային և տեղական ներդնողների հետ, կազմակերպվել են 2 միջազգային միջոցառումներ: Մշակվել են tatev.am կայքի զարգացման/վերաձևավորման 2 հայեցակարգ: Մշակվել է մշակութային շտեմարանի հայեցակարգ: Մշակվել է փոքր հյուրանոցների (B&B) և գյուղական տների զարգացման գործարար

ծրագիր: Նախնական պայմանավորվածություններ են ձեռք բերվել ծրագրի իրականացման համար միկրովարկավորման վերաբերյալ: ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակը մշակել է Տաթև գյուղաբնակ տարածքի համայնքային երկարաժամկետ զարգացման գործողությունների պլան: Վարվում են բանակցություններ հաջորդիվ ծրագրում ներգրավված համայքների զարգացման ծրագրերի մշակման վերաբերյալ: Իրականացվել է ծառատունկ, վանական համալիրի ընդհանուր բարեկարգման աշխատանքների նախագծեր, մաքրման աշխատանքներ/շաբաթօրյակներ: Զբոսաշրջային արդյունքների զարգացման շրջանակներում մշակվել է քայլարշավի հինգ երթուղի, որոնցից երեքը արդեն նշագրված են: Տաթևը որպես տուրիստական ուղղություն առաջ մղելու նպատակով վերամշակված շնորհանդեսը ներկայացվել է մի քանի միջազգային և տեղական առևտրային ցուցահանդեսներում: Իրականացվել է 2 ճանաչողական այց 18 լրագրողի և 40 զբոսաշրջային գործակալությունների համար:

- Զբոսաշրջություն: Մշակվել է «Հայաստանի հարավային միջանցքի զբոսաշրջության զարգացման ռազմավարական նախագիծ» ուղեցույցը, «Սևանա լճի բարձր լեռնային մարզական կենտրոն» գործարար ծրագիրը, Հայաստանի խթանման նոր ռազմավարությունը, Հայաստանը ներկայացնող գովազդատեղեկատվական նյութերը, ինչպես նաև միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսներում Հայաստանի տաղավարի նոր էսքիզները: Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամը տեղական զբոսաշրջային ընկերությունների հետ համատեղ ներկայացրել է Հայաստանը հինգ միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսներում՝ Ուտրեխտում, Բեռլինում, Փարիզում, Ռիմինիում, Լոնդոնում: Հավաքագրվել են բազմաթիվ առաջարկներ թիրախային զբոսաշրջային շուկաներում զանգվածային լրատվամիջոցներից և զբոսաշրջային կազմակերպութուններից, ներառյալ՝ CNN, Euronews, Eurosport, TTG, BBC, Travel Channel և այլն: Ամփոփվել է զբոսաշրջային նոր կայքի ստեղծման առաջարկը՝ կազմված զբոսաշրջության ոլորտում մասնագիտացված բարձրակարգ գործակալության կողմից:
- Առողջապահություն: Միջոցառման շրջանակներում հիմնադրվել է «Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոն» ՓԲԸ-ն: Ձևավորված են ուռուցքաբանության և սրտաբանության ոլորտների աշխատանքային խմբեր և խորհրդատուների խորհուրդ, որոնք տրամադրելու են անվճար խորհրդատվություն՝ առանց բյուջետային լրացուցիչ հատկացումների: Մշակվել է ապահովագրության շուկայի վերլուծության հիմնադրույթներն ամփոփող փաստաթուղթը:
- Կրթություն: 2011 թվականին կրթական ծրագրի հայեցակարգի ամփոփման, զարգացման ծրագրի հիմնադույթների ստեղծման և իրագործելիության ուսումնասիրության համար կատարվել է արտասահմանյան փորձի ուսումնասիրություն: Մշակվում են կրթական ծրագրերի հայեցակարգեր, որոնք կներկայացվեն Հիմնադրամի խորհրդի քննարկմանը: Հիմնադրամի խորհրդի կոնկրետ հայեցակարգի հաստատումից հետո կմշակվի կրթական ծրագրի զարգացման ռազմավարական

ծրագիրը: Արտասահմանյան կազմակերպությունը կրթական ծրագրի զարգացման պլանի մշակման և իրագործման աշխատանքներն իրականացնում է սեփական աշխատանքային և ֆինանսական ռեսուրսներով:

- Զանգվածային լրատվամիջոցների և հասարակության հետ կապեր: Այս միջոցառման շրջանակներում ՀԱՄՀ-ի գործունեությունը լայնորեն լուսաբանվել է տպագիր, առցանց և հեռուստատեսային լրատվամիջոցների (ներառյալ արտասահմանյան) միջոցով: ՀԱՄՀ հանրային կապերի գրասենյակը ստանձնել է կայքում ներկայության ապահովումը և սոցիալական ցանցերում գործունեությունը (ներառյալ սոցիալական մեդիայի մոնիթորինգի և սոցիալական ցանցերում հաղորդակցությունների սկզբունքների, նպատակների և մեթոդների մշակումը)՝ բարձրացնելով սոցիալական ցանցերում ՀԱՄՀ հանրային լուսաբանվածության արդյունավետությունը: Կայքի բովանդակության մեջ փաստագրվել և պարբերաբար վերափաստագրվում է հիմնադրամի գործունեությունը՝ այլ կայքերի հետ կապատողերի ստեղծմամբ և ՀԱՄՀ պաշտոնական կայքէջի շարունակական թարմացմամբ:
- Ֆոնդահայթաթում, ներդրողների և դոնորների հետ կապեր: Այս միջոցառման շրջանակներում ստեղծվել է հայազգի պոտենցիալ խոշոր նվիրատուների բնութագիր-շտեմարանը և ուսումնասիրվել են նվիրատուների հետ հարաբերությունների կառավարման համակարգչային ծրագրերը: Հիմք ընդունելով ՀԱՄՀ-ի բազմաոլորտ գործունեությունը՝ մշակվել է միասնական ֆոնդահայթհայթման կարիքների գնահատման փաստաթուղթ, որի հիման վրա պատրաստվել է առաջարկությունների հրավեր և հայտարարվել մրցույթ՝ ֆոնդահայթհայթման միջազգային խորհրդատվական կազմակերպություն ներգրավելու նպատակով: Բանակցությունների արդյունքում ստացվել է երեք առաջարկ, որոնք ներկայացվել են ՀԱՄՀ-ի խորհրդի նիստին: Տարվա ընթացքում այցելություններ են կազմակերպվել դեպի Անգլիա, Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա, Միացյալ Արաբական Էմիրություններ և այլն, որտեղ հանդիպումներ են տեղի ունեցել տեղի հայ համայնքի ներկայացուցիչների հետ: Ամփոփվել է զբոսաշրջության, կրթության և առողջապահության ոլորտում աշխատանքային հանձնաժողովի թեկնածուների ներգրավման գործընթացը և հաստատվել է կապ բոլոր ներգրավված թեկնածուների հետ: Ստեղծվել է ստանդարտ տեղեկատվական փաթեթ և ներկայացվել է բոլոր հետաքրքրված կողմերին:
- Ունակությունների բարձրացում և խորհրդի հետ հարաբերություններ: Այս միջոցառման շրջանակներում հաստատվել է ՀԱՄՀ նոր կազմակերպչակառուցվածքային մոդելը, որի արդյունքում կատարվել է ծրագրերով ֆինանսավորվող և Հիմնադրամի հիմնական բյուջեով ֆինանսավորվող աշխատակազմի հստակ տարանջատում: Տարվա ընթացքում պատրաստվել են ֆինանսական զեկույցներ և ներկայացվել խորհրդի նիստերում:

Հաշվետու տարում ընդհանուր բնույթի տնտեսական և առևտրային հարաբերությունների դասում գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման նպատակով 243.7 մլն դրամ օգտագործվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության արտաբյուջետային միջոցներից՝ ապահովելով ծրագրի 74%-ը, ինչը պայմանավորված է որոշ մրցույթներ չկայանալու հանգամանքով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 30.4%-ով կամ 56.8 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված ապրանքների և ծառայությունների ձեռքբերման ծախսերի աճով:

2011 թվականի ընթացքում *գյուղատնտեսության, անտառային տնտեսության, ձկնաբուծության և որսորդության* բնագավառներում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են շուրջ 42.4 մլրդ դրամ կամ ծրագրվածի 93.1%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ոռոգման և գյուղատնտեսության բնագավառներում արտաքին աջակցությամբ իրականացվող վարկային ծրագրերի ցածր կատարողականով:

Հաշվետու տարում *գյուղատնտեսության* դասի ծախսերը կազմել են 5.8 մլրդ դրամ կամ ծրագրվածի 77.8%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ԳԶՄՀ աջակցությամբ իրականացվող «Գյուղական կարողությունների ստեղծում», ՀԲ աջակցությամբ իրականացվող համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության վարկային ծրագրերի և Դանիական թագավորության աջակցությամբ իրականացվող «Շուկայավարման հնարավորություն ֆերմերներին» դրամաշնորհային ծրագրի ցածր կատարողականով. վերոհիշյալ ծրագրերը կատարվել են համապատասխանաբար 35.9%-ով, 58.3%-ով և 27.2%-ով:

Գյուղատնտեսության ոլորտին կատարված հատկացումների հաշվին իրականացվել են 25 ծրագրեր, այդ թվում՝ արտաքին աջակցությամբ ֆինանսավորվել են 9 վարկային և դրամաշնորհային ծրագրեր:

Հաշվետու տարում գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի (ԳԶՄՀ) աջակցությամբ իրականացվող՝ «Շուկայական հնարավորություն ֆերմերներին» վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է 624.8 մլն դրամ, որից 537.2 մլն դրամը՝ վարկային միջոցներից, 87.5 մլն դրամը՝ ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշվին: Ծրագրի ծախսերը 28.3%-ով գերազանցել են նախատեսված ցուցանիշը, ինչը հիմնականում պայմանավորված է շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգման ու այլ ծախսերի գերազանցման հանգամանքով: Ծրագրի նպատակն է բարելավել Հայաստանի Հանրապետության գյուղական աղքատ բնակչության սոցիալ-տնտեսական վիճակը: Ծրագրի խնդիրն է աջակցել համեմատական տնտեսական առավելություններ ունեցող առաջնային արտադրողների և առավել բարենպաստ աշխատանքային հնարավորություններ փնտրող գյուղաբնակների հետ սերտ կապ ունեցող գյուղական ձեռնարկությունների աճին, տրամադրել ներդրումային գործիքներ և հարակից ֆինանսական

միջոցներ, որոնք կբավարարեն գյուղական բաժնետիրական ֆինանսավորման պահանջարկը, և աջակցել Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական ոլորտի հետագա զարգացմանը, բարելավել Հայաստանի Հանրապետության գյուղական աղքատ բնակչության սոցիալ-տնտեսական վիճակը ենթակառուցվածքների վերականգման միջոցով: Ծրագիրն ունի 3 հիմնական բաղադրիչ՝ «Գյուղական ձեռնարկատիրության ֆինանսավորում», «Տնտեսապես հիմնավորված ենթակառուցվածքների վերականգնում» և «Ծրագրի վերլուծություն և կառավարում»: Առաջին բաղադրիչի խնդիրն է խթանել գյուղական մանրածավալ արտադրողների և ՓՄՁ-ների տնտեսական կայուն ակտիվության աճը՝ համապատասխան նորարարական ֆինանսական ծառայություններ տրամադրելու ճանապարհով: Բաղադրիչի նպատակն է հիմնել գյուղական բաժնետիրական հիմնադրամ, ՓՄՁ-ներին տրամադրել ներդրումային վարկեր և ֆերմերային տնտեսություններին՝ զարգացման վարկեր: «Տնտեսապես հիմնավորված ենթակառուցվածքների վերականգնում» բաղադրիչի խնդիրն է բարելավել հիմնական շահառու խմբի կենսամակարդակը և ներդրումային միջավայրը շահութաբեր ձեռնարկատիրության զարգացման և կայուն գյուղական տնտեսական աճի համար: Բաղադրիչի ներդրումները նպատակաուղղվել են սոցիալական ենթակառուցվածքների վերականգման ծրագրերին: 2011 թվականի դեկտեմբերի վերջի դրությամբ ներդրումների միջոցով հանրապետության համայնքներում իրականացվել են ոռոգման, գազի ցանցի, ջրամատակարարման, կոյուղու և ճանապարհների վերականգնման աշխատանքներ: «Ծրագրի վերլուծություն և կառավարում» բաղադրիչի շրջանակներում 2011 թվականի ընթացքում իրականացվել է երկու ծրագիր՝ «Շուկայավարման հնարավորություն ֆերմերներին» և «Գյուղական կարողությունների ստեղծում»: Այս բաղադրիչի շրջանակներում իրականացվում է շարունակական վարչական բարեփոխումների գործընթաց, թափանցիկությունը և արդյունավետությունը բարձրացնելու համար, մշակվել է նոր ընդհանուր կառավարման համակարգ, որի ներքո կազմվել են հաշվետվության համակարգեր և աշխատանքային պարտականությունների նկարագրեր, ինչպես նաև գործարկվել է վճարումների իրականացման նոր հաշվապահական և հաշիվների պահպանման համակարգ:

Նշված վարկային ծրագրին աջակցելու նպատակով ԳՁՄՀ-ի կողմից տրամադրված դրամաշնորհից օգտագործվել է 26.4 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 61%-ը, որը ծախսվել է միջազգային խորհրդատվական ծառայությունների գնման և հիմնական աշխատակազմի աշխատավարձի վճարման և ուսուցման ուղղությամբ: Ցածր կատարողականը կապված է 2011 թվականի ընթացքում եվրոյի փոխարժեքի անկման հետ: Ցածր կատարողականի պատճառ է հանդիսացել նաև պայմանագրով նախատեսված վճարումների հետաձգումը՝ կապված ԳՁՄՀ-ից համապատասխան թույլտվություն ստանալու հետ:

Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող՝ «Գյուղական կարողությունների ստեղծում» վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 544.4 մլն դրամ, որից 110.6 մլն դրամը՝ վարկային միջոցներից, 433.7 մլն դրամը՝ ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշվին: Ծրագրի ծախսերը 64.1%-ով զիջել են նախատեսված ցուցանիշը, ինչը հիմնականում պայմանավորված է նախատեսված շինարարական աշխատանքները 2012 թվական տեղափոխելու հանգամանքով: Ծրագրի համընդհանուր նպատակն է՝ նվազեցնել աղքատությունը Հայաստանի Հանրապետության գյուղական տարածքներում: Ծրագրի խնդիրն է ստեղծել պտղի և ընկուզեղենու տնտեսապես կայուն արտադրություն, որը կապված կլինի գյուղական մանրածավալ արտադրող ֆերմերների հետ: Ծրագիրն ունի 3 հիմնական բաղադրիչ՝ «Աջակցություն պտղի և ընկուզեղենու արտադրությանը», «Գյուղական ենթակառուցվածքներ» և «Ծրագրի կառավարում»: Ծրագիրը հանդիսանում է ԳՀՄՀ-ի կողմից ֆինանսավորվող վեցերորդ ծրագիրը Հայաստանում, և առաջինն է «Հայկական Միրգ» բաժնետիրական ընկերության ստեղծման գործում՝ աջակցելով գյուղական տարածքների աղքատության նվազեցմանը, որը նորարական է և՛ Հայաստանի, և՛ ԳՀՄՀ-ի համար: «Հայկական Միրգ»-ը կապահովի ձեռնարկատիրական ուղղվածությամբ մոտեցում՝ հասնելու Հայաստանում մրգի արտադրության եկամտաբերության և, հետևաբար, շահավետ կլինի փոքր սեփականատեր արտադրողներին:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 492.5 մլն դրամ, որից 381 մլն դրամը՝ վարկային միջոցներից, 111.4 մլն դրամը՝ ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշվին: Ծրագրի ծախսերը 41.7%-ով զիջել են նախատեսված ցուցանիշը, ինչը հիմնականում պայմանավորված է նրանով, որ ծրագիրն ուժի մեջ է մտել նախատեսվածից 7 ամիս ուշացումով: Ծրագրի հիմնական նպատակն է աջակցել անասնապահական ուղղվածություն ունեցող համայնքներին արոտաօգտագործման/անասնապահական առավել մրցունակ և կայուն համակարգերի ստեղծման հարցում: Սա հնարավոր կլինի կաթնատվության և կենդանիների օրական քաշաճի ավելացմանը զուգահեռ անասնապահական մթերքի ծավալների մեծացման և որակի բարձրացման, արոտավայրերի վարձակալությունից համայնքի բյուջետային եկամուտների ավելացման միջոցով համայնքների արոտավայրերի կառավարման արդյունավետության բարձրացման և անասնապահությունից ստացվող զուտ եկամտի ավելացման միջոցով: Ծրագիրն ունի 4 հիմնական բաղադրիչ՝ «Համայնքների արոտավայրերի/անասնապահության կառավարման համակարգ», «Գյուղատնտեությանն աջակցող ծառայությունների հզորացում», «Մրցակցային դրամաշնորհների ծրագիր» և «Ծրագրի իրականացում, մոնիթորինգ և գնահատում»: Առաջին բաղադրիչի նպատակն է ընտրված անասնապահական ուղվածություն ունեցող բարձր լեռնային և սահմանամերձ համայնքներում իրականացնել արոտաօգտագործման և կերարտադրության վրա

հիմնված անասնապահական մթերքի արտադրության արդյունավետ և կայուն համակարգ, որը կկառավարվի համայնքներում ստեղծվող արոտօգտագործողների միավորումների (սպառողական կոոպերատիվների) կողմից: Կընտրվեն բարձր լեռնային այն համայնքները, որտեղ անասնապահությունը ապրուստի հիմնական միջոց է հանդիսանում և որտեղ համայնքները մեծապես շահագրգռված են բարելավելու սեփական արոտավայրերից ստացվող արտադրանքը: Այս նպատակի իրականացումը պահանջում է գյուղամերձ արոտներում կենդանիների գերարածեցման մեծապես աճող տենդենցի կասեցում, համայնքների հեռագնա արոտների օգտագործման հնարավորությունների ստեղծում, վարելահողերի առավել արդյունավետ օգտագործում, կերարտադրության ու կենդանիների կերակրման և տոհմային աշխատանքների բարելավում, ինչպես նաև գյուղատնտեսական կենդանիների մթերատվության բարձրացում: Երկրորդ՝ «Գյուղատնտեությանն աջակցող ծառայությունների հզորացում» բաղադրիչի նպատակն է բարձրացնել անասնապահական մթերքի արտադրողականությունը և բարելավել արոտավայրերի վիճակը անասնապահությամբ զբաղվող ֆերմերներին մատուցվող խորհրդատվական և կենդանիների առողջությանն ուղղված ծառայությունների բարելավման միջոցով: Այս նպատակին հասնելու համար աջակցություն կտրամադրվի անասնապահության արդյունավետության բարձրացմանն ուղղված գյուղատնտեսական խորհրդատվական ծառայությունների և կենդանիների առողջությանն ուղղված ծառայությունների հզորացմանը: Երրորդ՝ «Մրցակցային դրամաշնորհների ծրագիր» բաղադրիչի նպատակն է իրականացնել գյուղատնտեսության և անասնապահության ոլորտներում արտադրվող գյուղատնտեսական արտադրանքի որակի և որակական հատկությունների բարձրացմանը, գյուղատնտեսական բիզնեսի շուկայավարման կատարելագործմանը (ներառյալ գյուղատնտեսական ապրանքների արտադրությունը, վերամշակումը, պահեստավորումը և նոր տեխնոլոգիաների ներդրումը), գյուղական բիզնեսի կառավարման բարելավմանը, կատարելագործմանը և բիզնեսի լավագույն փորձի զարգացմանն ու տարածմանը, գյուղատնտեսական ոլորտում կոոպերացիայի զարգացմանը, շուկայական կապերի ընդլայնմանը և ամրապնդմանը, ինչպես նաև գյուղատնտեսական մթերքի իրացման խնդիրների լուծմանը, ՀՀ տարածաշրջանների կամ մարզերի կտրվածքով գյուղատնտեսական արտադրանքի նոր տեսակների և նոր տեխնոլոգիաների ներդրմանը, տարածմանը և զարգացմանը նպաստող միջոցառումներ: Չորրորդ բաղադրիչի շրջանակներում ֆինանսավորումն ուղղված է ծրագրի կառավարմանը, անձնակազմի վերապատրաստմանը, տարեկան աուդիտին, գործառնական ծախսերին, ինչպես նաև ծրագրի մոնիթորինգին և գնահատմանը: Ծրագիրը ֆինանսավորվում է ՀԲ-ի Միջազգային զարգացման ընկերակցության կողմից առաջին անգամ, ուժի մեջ է մտել 2011 թվականի հուլիսի 26-ից և տևողությունը 5 տարի է՝ 2011 թվականից մինչև 2016 թվականը:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող գյուղատնտեսության ձեռնարկությունների և փոքրածավալ առևտրային գյուղատնտեսության զարգացման ծրագրի շրջանակներում վարկային միջոցների հաշվին ծախսվել է շուրջ 12.6 մլն դրամ՝ 100%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Նշված գումարից 8.9 մլն դրամը կազմել են այլ ընթացիկ դրամաշնորհները, իսկ 3.7 մլն դրամը՝ այլ ծախսերը: Նշենք, որ այլ ընթացիկ դրամաշնորհային ծախսերը նախորդ տարում կատարված աշխատանքների համար երաշխիքային գումարների և պահպանման ծախսերի վճարումներն են:

Նշված վարկային ծրագրին աջակցելու նպատակով ճապոնական դրամաշնորհային ծրագրի շրջանակներում կատարվել են 967 հազար դրամի ծախսեր՝ 100%-ով ապահովելով ծրագրի կատարումը:

Դանիական թագավորության աջակցությամբ իրականացվող՝ «Շուկայավարման հնարավորություն ֆերմերներին» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 102.9 մլն դրամ (որից 97.8 մլն դրամը՝ դրամաշնորհային միջոցներից, 5.1 մլն դրամը՝ ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշվին)՝ ապահովելով 27.2% կատարողական: Դրամաշնորհի փակման օրը սկզբնապես նախատեսվել էր 2011 թվականի հունիսի 30-ը, սակայն համաձայնագրում կատարված փոփոխությամբ այն տեղափոխվել է 2012 թվականի հունիսի 30: Ծրագրի նպատակն է բարելավել Հայաստանի Հանրապետության գյուղական աղքատ բնակչության սոցիալ-տնտեսական վիճակը: Ծրագրի խնդիրն է նախաներդրումային, ներդրումային և հետներդրումային տեխնիկական օժանդակության տրամադրումը Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի (ՖՐԵԴԱ) միջոցով ֆինանսավորվող ձեռնարկություններին, ՖՐԵԴԱ-ին մասնագիտացված տեխնիկական օժանդակության ցուցաբերումը: 2010 և 2011 թվականների ընթացքում ծրագրի շրջանակներում ֆինանսավորվել են ոլորտային յոթ հետազոտություններ՝ երկուսը գինեգործության, երկուսը այգեգործության, երկուսը մրգերի և մեկը ձկնաբուծության վերաբերյալ: Ներկայումս պատրաստման փուլում են գտնվում ևս երեքը՝ ջերմոցների, սառնարանային տնտեսության և կաթնամթերքի արտադրության գծով:

ՄԱԿ-ի զարգացման աջակցության ծրագրի գծով 2011 թվականի պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 35.8 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում օգտագործված միջոցներից 17.9 մլն դրամը կազմել են շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգման, 7.2 մլն դրամը՝ տրանսպորտային սարքավորումների, 10.7 մլն դրամը՝ այլ մեքենաների և սարքավորումների ձեռքբերման ծախսերը:

Հաշվետու տարում գյուղատնտեսության դասում ընդգրկված հետևյալ 7 ծրագրերի գծով ևս արձանագրվել է 100% կատարողական:

1. Սերմերի որակի ստուգման ու պետական սորտափորձարկման միջոցառումների իրականացման նպատակով ծախսվել է 51.1 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում իրականացվել են սելեկցիոն նվաճումների հայտերի փորձաքննությունների, սերմերի որակի լաբորատոր հետազոտությունների և փաստաթղթավորման, բույսերի նոր սորտերի տեղեկագրերի հրապարակումների, ինչպես նաև բույսերի նոր սորտերի դաշտային փորձարկումների աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 10.6%-ով կամ 4.9 մլն դրամով՝ պայմանավորված մատուցված ծառայությունների ծավալների ավելացմամբ:

2. Գյուղատնտեսական կենդանիների արհեստական սերմնավորման ծախսերը կազմել են 6.3 մլն դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 1.2%-ով:

3. Հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման միջոցառումների ծախսերը կազմել են 48.1 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում 2011 թվականին իրականացվել են 63293 հեկտար գյուղատնտեսական հողատեսքերի ագրոքիմիական դաշտային հետազոտություններ, հետազոտված տարածքից վերցված 21098 հողանմուշներում կատարվել են 53378 լաբորատոր փորձաքննություններ, կազմվել և համայնքներին են հանձնվել 141 ագրոքիմիական քարտեզներ և մշակաբույսերի պարարտացման երաշխավորագրեր: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 6.7%-ով կամ 3 մլն դրամով, որը պայմանավորված է մատուցված ծառայությունների ծավալների ավելացմամբ:

4. ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության անասնաբուժական ոստիկանական դասակի կողմից կարանտինային սահմանափակումների իրականացման նպատակով տրամադրվել է շուրջ 40.2 մլն դրամ: Նշված ծախսերն ուղղվել են ՀՀ ոստիկանության հասարակական կարգի ապահովման (ՀԿԱ) վարչության կազմում ստեղծված ոստիկանության հատուկ դասակի պահպանությանը, որը համաճարակային բռնկումների ժամանակ գյուղատնտեսական կենդանիների հիվանդություններն օջախներում լոկալիզացնելու, ինչպես նաև դրանց հետագա տարածումները կանխելու նպատակով իրականացնում է կարանտինային սահմանափակումներ: Նշենք, որ տվյալ ծախսերը նախորդ տարվա համեմատ փոփոխություն չեն կրել:

5. Գյուղատնտեսական խորհրդատվական ծառայությունների գծով կատարվել են 293.1 մլն դրամի ծախսեր: Ծրագրի շրջանակներում խորհրդատվական ծառայություններ մատուցող Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնների (ԳԱՄԿ-ների) և Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոնների (ԳԱՀԿ-ների) միջոցով ագրոտեխնիկական կանոններին և նոր տեխնոլոգիաներին համապատասխան գյուղատնտեսության վարման նպատակով գյուղացիական տնտեսություններին մատուցվել են խորհրդատվական ծառայություններ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նույնպես չեն փոփոխվել:

6. Բույսերի կարանտինի և գյուղմշակաբույսերի բուսասանիտարական վիճակի մոնիթորինգի, լաբորատոր փորձաքննությունների հիման վրա կանխարգելիչ և ախտորոշիչ ծառայությունների իրականացմանը տրամադրվել է շուրջ 134.3 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում կատարվել են 199.1 հազար հեկտարի հանրապետությունում գրանցված սահմանափակ տարածում ունեցող կարանտին օրգանիզմների տարածման արեալի ճշտում, նոր օջախների հայտնաբերում և բույսերի վնասատուների ու հիվանդությունների հայտնաբերման մոնիթորինգ, փորձանմուշների և թունանյութերի նմուշների լաբորատոր փորձաքննություններ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 87.2%-ով կամ 62.6 մլն դրամով, որը պայմանավորված է մատուցվող ծառայությունների ծավալների ավելացմամբ:

7. Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի փորձաքննության միջոցառումների իրականացման համար ծախսվել է շուրջ 190.9 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում իրականացվել են գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի, համաճարակային վիճակի վերլուծության, մոնիթորինգի, հանրապետության բարձր լեռնային տարածաշրջաններում կենդանիների վարակիչ հիվանդությունների ներթափանցումից պաշտպանելու, կենդանական ծագում ունեցող հումքի և մթերքների լաբորատոր փորձաքննության միջոցառումներ: 2010 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 3.2%-ով կամ 5.9 մլն դրամով:

Գյուղատնտեսության դասում ընդգրկված՝ գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման (նախարարություն-ների աշխատակազմերի մասով) ծախսերը կազմել են շուրջ 427.6 մլն դրամ կամ նախատեսվածի 96.2%-ը, որը պայմանավորված է տնտեսումներով: Միջոցները հատկացվել են ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 35.8%-ով կամ 238.9 մլն դրամով, ինչը պայմանավորված է ՀՀ գյուղատնտեսության նախարարության համակարգում սննդամթերքի անվտանգության պետական ծառայության ստեղծմամբ, որի պահպանման համար միջոցներ են հատկացվել ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից:

Բույսերի պաշտպանության միջոցառումների գծով ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի ծախսերը կազմել են 99.7 մլն դրամ՝ ապահովելով 98.7% կատարողական: Ծրագրի շրջանակներում գյուղատնտեսական մշակաբույսերի առավել վնասակար օրգանիզմների դեմ իրականացվել են մի շարք միջոցառումներ: Նախորդ տարի ձեռքբերված միջատասպան միջոցով 200 հա հողատարածության վրա պայքար է իրականացվել մորեխների դեմ: 88.2 մլն դրամն օգտագործվել է համայնքների միջոցով մկնանման կրծողների դեմ պայքարի միջոցառումների ֆինանսավորմանը: Նշված բաղադրիչի շրջանակներում ձեռք բերված թունանյութերն անհատույց տրամադրվել են

հանրապետության բոլոր մարզերի առավել վարակված տարածքների հողօգտագործողներին, որոնց միջոցով պայքարի աշխատանքներ են տարվել շուրջ 163.4 հա հողատարածության վրա: 11.5 մլն դրամ տրամադրվել է 1808 հա տարածքի վրա մկնանման կրծողների դեմ տրակտորային ցրիչներով պայքարի միջոցառումների իրականացման համար: 2010 թվականի համեմատ այս ծախսերն աճել են 45.2%-ով կամ 31 մլն դրամով, որը պայմանավորված է մատուցված աշխատանքների ծավալների և ձեռքբերված թունանյութերի քանակի ավելացմամբ:

Գյուղատնտեսական կենդանիների պատվաստման ծախսերը կազմել են ավելի քան 888.8 մլն դրամ կամ նախատեսվածի 92.1%-ը, որը պայմանավորված է տնտեսումներով: Նախորդ տարվա համեմատ գյուղատնտեսական կենդանիների պատվաստման ծախսերը նվազել են 10.4%-ով կամ 102.7 մլն դրամով:

Գյուղատնտեսական հողօգտագործողներին պետական աջակցության ծախսերը կազմել են 1.4 մլրդ դրամ՝ ապահովելով 94.8% կատարողական: Շեղումը պայմանավորված է կանխատեսված և փաստացի փոխարժեքների տարբերությամբ: Նշված ծրագրի շրջանակներում ՀՀ-ում սերմարտադրության ծրագրի զարգացման համար ՌԴ-ց ներկրվել է էլիտային աշնանացան ցորեն, իսկ տեղական սերմարտադրողներից գնվել է առաջին վերարտադրության սերմացու: Ուկրաինայի Հանրապետությունից ներկրվել են գարնանացան գարու և եգիպտացորենի սերմեր: Նշենք, որ 2011 թվականին ծրագիրն էականորեն ընդլայնվել է. նախորդ տարի այս նպատակով տրամադրվել էր ընդամենը 7.8 մլն դրամ:

Գյուղատնտեսական հողատեսքերի պահպանման, բարելավման և ինժեներական կառուցվածքների վերականգնման աշխատանքների իրականացման համար հաշվետու տարում պետական բյուջեից տրամադրվել է 61 մլն դրամ՝ ապահովելով 96% կատարողական: Շեղումը պայմանավորված է տնտեսումներով: Ծրագրի շրջանակներում իրականացվել են Արաքս գետի ափապաշտպան արգելաթմբի վտանգավոր հատվածների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման, Արաքս գետի ափամերձ տարածքի 1:2000 մասշտաբի տեղագրական հատակագծերի ստեղծման և Արաքս գետի ափամերձ տարածքի մոնիթորինգի իրականացման աշխատանքներ: 2010 թվականի համեմատ այս ծախսերը նվազել են 83.9%-ով կամ 318.7 մլն դրամով՝ պայմանավորված աշխատանքների ծավալների նվազմամբ:

Բուսասանիտարական համակարգի բարելավման և մասնագիտական գիտելիքների բարձրացմանն աջակցության ծախսերը կազմել են 5.6 մլն դրամ՝ ապահովելով 96.6% կատարողական, որը պայմանավորված է գնումների արդյունքում միջոցների տնտեսմամբ: Ծրագրի նպատակն է ուսուցողական դասընթացների կազմակերպումը, որը կնպաստի մասնագիտական պատրաստվածության աստիճանի բարձրացմանը: 2011 թվականին ծրագրի շրջանակներում վերապատրաստվել են 42 աշխատակից: Ծրագիրը մեկնարկել է 2011 թվականին:

Հանրապետական անասնաբուժական հակահամաճարակային և ախտորոշիչ կենտրոն ՊՈԱԿ-ում ներդրմներին ուղղվել է ավելի քան 20.8 մլն դրամ կամ նախատեսվածի 98.9%-ը: Ծրագրի շրջանակներում ձեռք են բերվել սառնարաններ, որոնք տրամադրվել են տարածաշրջաններին: Ծրագիրը մեկնարկել է 2011 թվականին:

Սննդամթերքի լաբորատոր փորձաքննությունների ծախսերը կազմել են 3.3 մլն դրամ՝ 33.9%-ով զիջելով նախատեսված և 33.7%-ով՝ նախորդ տարվա ցուցանիշները, որը պայմանավորված է գնումների արդյունքում տնտեսված միջոցներով:

Հակակարկտային կայանքների տեղակայման ծախսերը հաշվետու տարում կազմել են շուրջ 277.3 մլն դրամ՝ ապահովելով 99.4% կատարողական, որը պայմանավորված է տնտեսումներով: Հատկացված միջոցներով ձեռք են բերվել հակակարկտային կայանքներ և տրանսպորտային սարքավորումներ: 2010 թվականի համեմատ այս ծրագրի ծախսերը նվազել են 33.6%-ով կամ 140.1 մլն դրամով:

Հաշվետու տարում շուրջ 822.8 մլն դրամ է տրամադրվել *անտառային տնտեսության* դասին՝ ապահովելով 102.9% կատարողական, որը պայմանավորված է ՀԲ աջակցությամբ իրականացվող անտառների պետական մոնիթորինգի հզորացման դրամաշնորհային ծրագրի բարձր կատարողականով: Կատարված հատկացումների հաշվին իրականացվել են երեք ծրագրեր, որոնցում մեծ տեսակարար կշիռ ունեն անտառապահպանական ծառայություններին կատարված հատկացումները: Նշված ծառայությունների ձեռքբերման համար նախատեսվել է 708.7 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Այն տրամադրվել է «Հայանտառ» ՊՈԱԿ-ին՝ որպես դրամաշնորհ, իր կանոնադրական խնդիրներն իրականացնելու համար: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

Անտառային պետական մոնիթորինգի նպատակով նախատեսված 54 մլն դրամը նույնպես ամբողջությամբ օգտագործվել է, որը նախորդ տարվա համեմատ չի փոփոխվել: Հատկացված գումարների հաշվին իրականացվել են շուրջ 370 հազար հա անտառտնտեսություններում, ազգային պարկերում, արգելավայրերում անտառպահպանության և անտառօգտագործման բնագավառում իրականացված աշխատանքների արդյունքների ուսումնասիրում, փայտանյութի սպառման շուկայի, փայտանյութի մթերման և արտահանման, ապօրինի հատումների և դրա արդյունքում բնափայտի տեղափոխումների, իրացման վերաբերյալ տվյալների հավաքում, մշակում, վերլուծություն և գնահատում:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ անտառների պետական մոնիթորինգի հզորացման դրամաշնորհային ծրագրի գծով 2011 թվականին ծախսվել է 60.1 մլն դրամ՝ 62.1%-ով գերազանցելով ծրագրված ցուցանիշը, ինչը պայմանավորված է նախատեսվածից ավել պայմանագրերի կնքմամբ: Ծրագրի շրջանակներում իրականացվել են համակարգի

ուսումնասիրման, ներքին անվտանգության համակարգի և համակարգչային ցանցի նախագծման աշխատանքեր: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերի 49.3%-ով կամ 19.9 մլն դրամի աճը պայմանավորված է մատուցված աշխատանքների ծավալների ավելացմամբ:

Հաշվետու տարում շուրջ 35.8 մլրդ դրամ տրամադրվել է *ոռոգման* դասի ծախսերին՝ կազմելով ծրագրվածի 96%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ՀԲ աջակցությամբ իրականացվող Ոռոգման համակարգերի վերականգման հրատապ վարկային ծրագրի ցածր կատարողականով: Կատարված հատկացումների հաշվին իրականացվել են 9 ծրագրեր, այդ թվում՝ արտաքին աղբյուրներից ֆինանսավորվել են երկու վարկային և մեկ դրամաշնորհային ծրագրեր:

ԱՄՆ կառավարության աջակցությամբ իրականացվող՝ «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսված շուրջ 26 մլրդ դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագիրն ունի երկու հիմնական բաղադրիչ՝ «Ոռոգման ենթակառուցվածքներ» և «Ջրից դեպի շուկա»: Առաջին բաղադրիչի շրջանակներում իրականացվել է Արզնի-Շամիրամի, Արտաշատի, Արմավիրի, Ստորին-Հրազդանի, Թալինի և Շիրակի մայր և երկրորդ կարգի ջրանցքների 41,8 կմ հատվածների և 267 հիդրոտեխնիկական կառուցվածքների վերականգնումը, Սպիտակի, Այգեզարդի, Շենիկի, Մանթաշի և Վարդենիսի ինքնահոս համակարգերի կառուցումն ու վերականգնումը, թվով 105 համայնքների 232,5 կմ երրորդ կարգի ջրանցքների վերականգնումը, ոռոգման 17 պոմպակայանների տեխնիկական վերազինումն ու շինությունների վերականգնումը, Արարատյան հարթավայրի դրենաժային համակարգի մայր և երկրորդ կարգի կոլեկտորների և դրենաժների մաքրումը/խորացումը, ջրանցումների, հիդրոտեխնիկական կառուցվածքների, փակ դրենաժային համակարգի, Արտաշատի պոմպակայանի վերակառուցումը: Աշխատանքներն իրականացվել են ամբողջությամբ և հանձնվել շահագործման: Ծրագրի շրջանակներում իրականացվել են նաև շինարարության վերահսկողության/ծրագրի կառավարման աշխատանքներ: Վերականգման աշխատանքների ավարտին ավելի քան 60000 ջրօգտագործողներ 30 համայնքներում ունեցան ջրի կորստի կրճատումից և ջրի կառավարման բարելավումից առաջացած օգուտներ: Հաշվետու տարվա ընթացքում «Ջրից դեպի շուկա» բաղադրիչի շրջանակներում իրականացվող աշխատանքները մտել են ավարտական փուլ, շարունակվել են աշխատանքները ոռոգման համակարգի կազմակերպություններին տեխնիկական աջակցության և սարքավորումների ու տեխնիկայի տրամադրման, ֆերմերների վերապատրաստման, ֆերմերային խմբերի և գյուղատնտեսական արտադրանքի վերամշակողներին օժանդակության տրամադրման, ինչպես նաև վարկային բաղադրիչի ուղղություններով:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի վերականգնման հրատապ ծրագրի շրջանակներում ծախսվել է ավելի քան 2.3 մլրդ դրամ, որից 1.8 մլրդ դրամը՝ վարկային միջոցներից, 515 մլն դրամը՝ կառավարության համաֆինանսավորման

հաշվին: Կատարված ծախսերը 38.5%-ով զիջել են նախատեսված ցուցանիշը, ինչը պայմանավորված է նրանով, որ վճարումները մասամբ կատարվել են նախորդ տարվա կանխավճարի հաշվին: Ծրագիրը բաղկացած է երկու բաղադրիչներից՝ «Թալինի 59.01 կմ-ի և Արմավիրի 24.8 կմ-ի ոռոգման համակարգերի գլխավոր ջրանցքների (ընդամենը 83,81 կմ մայր և ճյուղային ջրանցքների) վերականգնում» և «Ծրագրի կառավարման և ինստիտուցիոնալ գործողություններ»: Ծրագրի ավարտը սահմանվել էր 2011 թվականի տարեվերջը: 2011 թվականի ընթացքում կատարվել են աշխատանքներ 7 կմ Արմավիրի մայր ջրանցքի, 16.5 կմ Թալինի և 23.5 կմ Արմավիրի ոռոգման համակարգերում:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի վերականգնման հրատապ վարկային ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման ծրագրի ծախսերը կատարվել են նախատեսված ծավալով՝ կազմելով շուրջ 1.2 մլրդ դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է վարկային միջոցներից: Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի վերականգնման հրատապ ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման միջոցով կվերականգնվեն մոտ 50 կմ երկարությամբ մայր և միջտնտեսային (գլխավոր) ջրանցքներ Արագածոտնի, Կոտայքի, Շիրակի, Լոռու, Արարատի և Արմավիրի մարզերում և մոտ 63 կմ երկարությամբ ներտնտեսային ոռոգման ցանցի ջրանցքներ Լոռու, Շիրակի, Գեղարքունիքի և Արմավիրի մարզերում: Գլխավոր և ներտնտեսային ցանցի ջրանցքների վերականգնման արդյունքում ոռոգման ջրի կորուստները կնվազեն տարեկան 44.2 մլն խմ: 2011 թվականին ֆինանսավորված գումարը կնքված պայմանագրերի հիման վրա վճարվել է որպես կանխավճար: Ծրագրի սկիզբն է 2011 թվականի դեկտեմբերի 20-ը, իսկ ավարտը՝ 2013 հունիսի 30-ը:

Հաշվետու տարում ոռոգման դասում ընդգրկված հետևյալ 3 ծրագրերի գծով նույնպես արձանագրվել է 100% կատարողական:

1. Ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին տրամադրել է շուրջ 4.2 մլրդ դրամ աջակցություն: 2011 թվականին ծառայություններ են մատուցվել 44 ջրօգտագործողների ընկերությունների: Համակարգի հետագա զարգացման և ջրօգտագործողների ընկերությունների՝ որպես կենսունակ հաստատությունների կայացման հարցում միջնաժամկետ հեռանկարում մեծ դեր է վերագրվում պետական օժանդակությանը, որի անմիջական դրսևորումներից է պետական ֆինանսական աջակցությունը: Ոռոգման համակարգին պետական ֆինանսական աջակցության շրջանակների հստակեցումը և տրամադրման մեխանիզմների բարեփոխումն է՛լ ավելի է կարևորվում աղքատության հաղթահարման միջոցառումների համատեքստում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ոռոգման ջրի կանոնավոր հասանելիությունը զգալիորեն նվազեցնում է աղքատության ռիսկը գյուղական բնակավայրերում: Ջրօգտագործողների ընկերություններին պետական ֆինանսական աջակցության բարեփոխումների հիմնական նպատակներն են

ջրօգտագործողներին աջակցությունն ու մասնակցային կառավարման ամրապնդումը, ջրօգտագործողների ընկերությունների գործունեության արդյունավետության բարձրացումն ու ինքնածախսածածկման մակարդակի աստիճանական ավելացումը, ոռոգման ջրի կորուստների կրճատումը, ինչպես նաև պետական ծախսերի կանխատեսելիության ու բաշխման արդյունավետության աճը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերի 12.1%-ով կամ 576.5 մլն դրամով նվազումը պայմանավորված է ըստ տարիների սուբսիդիայի կրճատման սցենարով:

2. Ոռոգում ջրառ իրականացնող կազմակերպություններին տրամադրվել է 583.7 մլն դրամի ֆինանսական աջակցություն: Վերջինիս հիմնական նպատակն է ոռոգում ջրառ իրականացնող կազմակերպությունների վնասների փոխհատուցման արդյունքում կազմակերպությունների տեխնիկական և ֆինանսական կայունության ապահովումը, որը թույլ կտա կազմակերպություններին ապահովել կնքված պայմանագրերով ոռոգման ջրի մատակարարումը և ստանձնած պայմնագրային պարտավորությունների կատարումը: Ծրագիրը մեկնարկել է 2011 թվականին:

3. Կոլեկտորադրենաժային ցանցի պահպանման և շահագործման, գրունտային ջրերի մակարդակների և որակի որոշման աշխատանքների իրականացման համար 2011 թվականի պետական բյուջեից ծախսվել է 94.2 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում ոռոգելի հողերի մելիորատիվ վիճակի բարելավման նպատակով միջոցառումների մշակման համար իրականացվել է 1051.83 կմ ընդհանուր երկարությամբ բաց կոլեկտորադրենաժային ցանցերի պահպանում և շահագործում: 2010 թվականի համեմատ նշված ծախսերը գրեթե փոփոխություն չեն կրել:

ՀՀ 2011 թվականի պետական բյուջեից ոռոգման համակարգերի հիմնանորոգմանն ուղղվել է շուրջ 1.2 մլրդ դրամ՝ ապահովելով 97.9% կատարողական: Շեղումը պայմանավորված է նրանով, որ կնքված պայմանագրերով ծառայությունները մատուցվել են ավելի ցածր արժեքով: 2010 թվականին նշված նպատակով միջոցներ չէին հատկացվել:

Ոռոգելի հողերի կոլեկտորադրենաժային ցանցերի մաքրման և ընթացիկ նորոգման համար տրամադրվել է 219.5 մլն դրամ կամ նախատեսվածի 97%-ը: Շեղումը պայմանավորված է ցանցերի մաքրման և ընթացիկ նորոգման համար կնքված պայմանագրերով ծառայությունների ավելի ցածր արժեքով մատուցմամբ: Ծրագրի իրականացման արդյունքում պահպանվում և շահագործվում են հանրապետությունում առկա կոլեկտորադրենաժային ցանցերը, մաքրվում ու վերանորոգվում է կոլեկտորադրենաժային ցանցերի մի մասը, որոնցով հնարավորություն է տրվում Արարատյան հարթավայրի հողերի գրունտային ջրերի մակարդակները պահպանել թույլատրելի խորությունների վրա: Նշված արդյունքներին հասնելու համար նախատեսվել է իրականացնել կոլեկտորադրենաժային ցանցերի մաքրման և նորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում, կոլեկտորադրենաժային ցանցերի մաքրում և նորոգում, դրանց մաքրման և նորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողություն,

ինչպես նաև տեխնիկական վիճակի պահպանում և շահագործում: 2011 թվականի ընթացքում հանրապետության 4 մարզերի (Արարատի, Արմավիրի, Լոռու և Գեղարքունիքի) 34 համայնքներում կատարվել են 129.6 կմ երկարությամբ կոլեկտորադրենաժային ցանցերի մաքրման և նորոգման աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 2.4%-ով:

Ջրատեխնիկական կառույցների ուսումնասիրությունների ծախսերը կազմել են 10.9 մլն դրամ կամ ծրագրի 99.4%-ը: 2010 թվականի համեմատ նշված ծախսերն էական փոփոխության չեն ենթարկվել:

Վառելիքի և էներգետիկայի բնագավառի ծախսերը 2011 թվականին կազմել են 5.5 մլրդ դրամ՝ 63.2%-ով գերազանցելով ծրագիրը: Վերջինս հիմնականում պայմանավորված է Ճապոնիայի կառավարության աջակցությամբ իրականացվող համակցված շոգեգազային ցիկլով էներգաբլոկի կառուցման վարկային ծրագրի բարձր կատարողականով:

Հաշվետու տարում *միջուկային վառելիքի* դասի ծախսերը կազմել են 190.7 մլն դրամ, որը հատկացվել է ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեի պահպանմանը՝ ապահովելով 96.9% կատարողական: Շեղումը հիմնականում պայամանավորված է ապրանքների գնման և ծառայությունների վճարման ծախսերի տնտեսմամբ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 3.5%-ով կամ կամ 6.4 մլն դրամով՝ պայմանավորված քաղաքացիական ծառայողների աշխատավարձերի բնականոն աճով, ինչպես նաև հատուկ փորձաքննությունների անցկացման ծառայություններ ձեռք բերելու համար «Միջուկային և ռադիացիոն անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ-ին կատարված հատկացումներով:

Վառելիքի այլ տեսակների դասի ծախսերը կազմել են շուրջ 3.6 մլրդ դրամ՝ մոտ 2.5 անգամ գերազանցելով ծրագիրը, որը հիմնականում պայմանավորված է Ճապոնիայի կառավարության աջակցությամբ իրականացվող համակցված շոգեգազային ցիկլով էներգաբլոկի կառուցման վարկային ծրագրի բարձր կատարողականով: Կատարված հատկացումների հաշվին ֆինանսավորվել են արտաքին աջակցությամբ իրականացվող 3-ական վարկային և դրամաշնորհային ծրագրեր:

Մասնավորապես՝ Ճապոնիայի կառավարության աջակցությամբ իրականացվող համակցված շոգեգազային ցիկլով էներգաբլոկի կառուցման վարկային ծրագրի շրջանակներում նախատեսված 123 մլն դրամի դիմաց ծախսվել է 2.5 մլրդ դրամ, որը պայմանավորված է 2010 թվականին կատարված աշխատանքները 2011 թվականին վճարելու հանգամանքով: Բացի այդ, ծրագրի կառուցման աշխատանքների մասով պայմանագրով գումար չէր նախատեսվել, սակայն ելնելով անհրաժեշտությունից, պայմանագրում կատարվել են մի շարք փոփոխություններ, որի համաձայն էլ իրականացվել են համապատասխան վճարումներ: Հարկ է նաև նշել, որ 2011 թվականին

նախատեսվել էր խորհրդատուի մասնակցությունը կայանի ետերաշխիքային սպասարկման աշխատանքներին, սակայն նման անհրաժեշտություն չի առաջացել:

2011 թվականին Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ջեռուցման ծրագրի շրջանակներում կատարվել են 410.1 մլն դրամի ծախսեր, որից 342 մլն դրամը՝ վարկային միջոցներից, 68.1 մլն դրամը՝ կառավարության համաֆինանսավորման հաշվին: Ծրագրի 94.1% կատարողականը մեծ մասամբ պայմանավորված է այն հանգամանքով, որ «Կապիտալ դրամաշնորհների տրամադրում աղքատներին» բաղադրիչով նախատեսված էր պայմանագրի արժեքը ավելացնել՝ ներառելով շահառուներ, սակայն ծրագրի ավարտի հետ կապված՝ շահառուների ցուցակի թարմացում չիրականացվեց, ինչի հետևանքով էլ նախատեսված գումարները չծախսվեցին: Քաղաքային ջեռուցման ծրագրի ավարտը նախատեսված էր 2010 թվականի դեկտեբերի 31-ին, սակայն Հայաստանի Հանրապետության և Համաշխարհային բանկի փոխհամաձայնությամբ այն երկարաձգվել էր մինչև 2011 թվականի հունիսի 1-ը: Ծրագրի նպատակն է մեծացնել մաքուր, արդյունավետ, ապահով և մատչելի ջեռուցման տեխնոլոգիաների օգտագործումը քաղաքային դպրոցներում և բազմաբնակարան շենքերում: Ծրագրի շրջանակներում աշխատանքներ են իրականացվել հետևյալ 4 բաղադրիչների գծով՝ «Արդյունավետ ու ապահով ջեռուցման ծառայությունների մատուցման համար նպաստավոր միջավայրի ստեղծում», «Բնակելի շենքերի ջեռուցում», «Դպրոցների ջեռուցում», «Աջակցություն ծրագրի իրականացմանը (ապրանքների, աշխատանքների և խորհրդատվական ծառայությունների տրամադրման միջոցով)»: Հաշվետու տարվա ընթացքում իրականացվել են 3 դպրոցի ջեռուցման համակարգերի վերականգնման և էներգախնայողական միջոցառումներ: Ծրագրի շրջանակներում իրականացվել է նաև տնային տնտեսությունների ջեռուցման տարբերակների ուսումնասիրություն:

Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող էլեկտրամատակարարման հուսալիության և էներգախնայողության ծրագրի նախապատրաստման կանխավճարի վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 256.6 մլն դրամ, որից 228.3 մլն դրամը՝ վարկային միջոցներից, 28.3 մլն դրամը՝ կառավարության համաֆինանսավորման հաշվին: Ծրագրի շրջանակներում նախատեսված միջոցներն օգտագործվել են 83.4%-ով: Վճարումները կատարվել են ծրագրի իրականացման համար նախատեսված խորհրդատվական ընկերությունների կողմից նախատեսված աշխատանքների կատարման համար: Շեղումը պայմանավորված է նրանով, որ խորհրդատվական ընկերության հետ կնքված պայմանագրով նախատեսված աշխատանքները ձգձգվել են՝ կապված բանկի հետ ունեցած տարաձայնությունների հետ, մասնավորապես մրցութային փաստաթղթերի մասով, որի համար նախատեսված վճարումը չի կատարվել: Սակայն, հաշվի առնելով, որ էլեկտրամատակարարման հուսալիության և էներգախնայողության ծրագրի կանխավճարի ժամկետն ավարտվել է, իսկ վարկային համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2011

թվականի նոյեմբերի 28-ին, վերոնշյալ աշխատանքների իրականացման դեպքում վճարումը կիրականացվի էլեկտրամատակարարման հուսալիության ծրագրի վարկի միջոցներից:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ Վերականգնվող էներգետիկայի դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 244.5 մլն դրամ, որից 199.5 մլն դրամը՝ դրամաշնորհային միջոցներից, 45 մլն դրամը՝ կառավարության համաֆինանսավորման հաշվին՝ ապահովելով 94.8% կատարողական: Շեղումը պայմանավորված է նրանով, որ ծրագրի իրականացման շրջանակներում անցկացված մրցույթների արդյունքում որոշ պայմանագրեր կնքվել են առավել ցածր գնային առաջարկով, ինչպես նաև դրամ/դոլար փոխարժեքների տարբերությամբ, որոնց արդյունքում առաջացել է տնտեսում: Վերականգնվող էներգետիկայի դրամաշնորհային ծրագրի նպատակն է էլեկտրամատակարարման հուսալիության և էներգախնայողության բաղադրիչի նախապատրաստումը, ինչպես նաև վերականգնվող էներգետիկայի ոլորտում ծրագրեր իրականացնող կազմակերպություններին և անհատներին դրամաշնորհների տրամադրման խորհրդատվական և կառավարման ծառայությունների մատուցումը: Ծրագիրը ներառում է ինստիտուցիոնալ հենքի ամրապնդում և իրականացման լուծումների մշակում կատարողականների ցուցանիշների և մոնիթորինգի մեխանիզմների մշակում, հանրային շենքերի ընտրություն և առաջին տարվա էներգախնայողության ներդրումների նախապատրաստում, էներգախնայողության գործողությունների ծրագրի մշակում: Ծրագիրն իրականացվում է 2 բաղադրիչների՝ վերականգնվող էներգետիկայի ոլորտի զարգացման և վերականգնվող էներգետիկայի ենթածրագրերում ներդրումների ֆինանսավորման միջոցով: 2011 թվականին նախատեսված միջոցներով իրականացվել է հասարակության իրազեկման ծրագրի, վերականգնվող էներգետիկայի խնդիրների շուրջ քննարկումների, սեմինարների և կլոր սեղանների կազմակերպման, վերականգնվող Էներգետիկայի և Էներգախնայողության ծրագրերի վարկավորման համար Ֆինանսական մեխանիզմների մշակման, վերականգնվող էներգետիկայի աղբյուրների վրա գործող արտադրող հզորությունների տեխնոլոգիաների նորմատիվ փաստաթղթերի մշակման և հրապարակումների ու տեղեկատվության տարածման կազմակերպման միջոցառումներ:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ Երկրաջերմային էներգիայի դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ծախսվել է ավելի քան 155 մլն դրամ, որից 128.5 մլն դրամը՝ դրամաշնորհային միջոցներից, 26.5 մլն դրամը՝ կառավարության համաֆինանսավորման հաշվին: Ծրագրի նպատակն է իրականացնել գեոթերմալ տեղանքի հետազոտական բնույթի հորատման աշխատանքների տեխնիկա-տնտեսական հիմնավորման գնահատումը տվյալ առավել հեռանկարային գեոթերմալ տեղանքի համար: Տեղանքի հետախուզական աշխատանքների արդյունքում հնարավոր կլինի բացահայտել նշված գեոթերմալ տեղանքներում հորատանցքեր հորատելու անհրաժեշտությունը, որոնք ընտրվել էին շարունակական դաշտային հետախուզական

աշխատանքների արդյունքում: Ծրագիրը կատարվել է 49%-ով, ինչը պայմանավորված է ծրագրի իրականացման շրջանակներում Գեոսիստեմ ընկերության հետ կնքված պայմանագրով նախատեսված աշխատանքների համար ներկայացված հաշվետվության երկրորդ փուլի ձգձգմամբ, որը 2011 թվականի վերջի դրությամբ դեռևս գտնվում էր լրամշակման փուլում, ուստի վճարումը տեղափոխվել է 2012 թվական:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող էլեկտրամատակարարման հուսալիության և էներգախնայողության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 6 մլն դրամ, որից 4.9 մլն դրամը՝ դրամաշնորհային միջոցներից, ավելի քան 1 մլն դրամը՝ կառավարության համաֆինանսավորման հաշվին: Ծրագիրը կատարվել է 83.2%-ով, ինչը պայմանավորված է նրանով, որ ծրագրի իրականացման շրջանակներում անցկացված մրցույթների արդյունքում որոշ պայմանագրեր կնքվել են առավել ցածր գնային առաջարկով, ինչպես նաև դրամ/դոլար փոխարժեքների տարբերությամբ, որոնց արդյունքում առաջացել է տնտեսում: Ծրագրի նպատակն է էլեկտրամատակարարման հուսալիության և էներգախնայողության ծրագրի Էներգախնայողության բաղադրիչի նախապատրաստումը, ունենալ առավելագույն էներգախնայողության ներուժ ունեցող հանրային շենքերի ընտրության մեթոդոլոգիա: Ծրագիրը ներառում է ինստիտուցիոնալ հենքի ամրապնդում և իրականացման լուծումների մշակում, կատարողականների ցուցանիշների և մոնիթորինգի մեխանիզմների մշակում, հանրային շենքերի ընտրություն և առաջին տարվա էներգախնայողության ներդրումների նախապատրաստում, էներգախանայողության գործողությունների ծրագրի մշակում: 2011 թվականին կնքվել է միայն աուդիտորական ծառայությունների իրականացման պայմանագիր և շարունակել են գործել 2010 թվականին անհատ խորհրդատուների հետ կնքված երեք պայմանագրեր, որոնց շրջանակներում իրականացվել է հանրային շենքերի ընտրություն և առաջին տարվա էներգախնայողության ներդրումների նախապատրաստումը, էներգախանայողության գործողությունների ծրագրի մշակումը: Ծրագիրը 2011 թվականին ավարտվել է:

Հաշվետու տարում *էլեկտրաէներգիայի* դասի ծախսերը կազմել են ավելի քան 1.7 մլրդ դրամ՝ ապահովելով 100.9% կատարողական:

Շուրջ 441.1 մլն դրամ են կազմել գործադիր իշխանության, պետական կառավարման մարմինների պահպանման (նախարարությունների աշխատակազմերի մասով) համար օգտագործված միջոցները՝ ապահովելով ծրագրի 99%-ը: Միջոցները հատկացվել են ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը 8.9%-ով աճել են՝ պայմանավորված քաղաքացիական ծառայողների թափուր հաստիքային միավորների համալրմամբ և քաղաքացիական ծառայողների աշխատավարձի բնականոն աճով:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող «Գյումրի-2» ենթակայանի վերականգնման վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է ավելի քան 1.2 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսվածի 101.7%-ը: Ծրագրի նպատակն է «Գյումրի-2» 220 կՎ ենթակայանի վերականգնումը: Ենթակայանն ունի տեղական և տարածաշրջանային ռազմավարական կարևորություն: Նրա վերականգնման արդյունքում ցանցի կարևոր բաղադրիչի ամբողջական աշխատունակության ճանապարհով կվերացվի 220 կՎ էլեկտրահաղորդման համակարգի հիմնական թույլ տեղերից մեկը: Վերականգնման արդյունքում կբարձրանա ենթակայանի, ինչպես նաև էներգահամակարգի աշխատանքի հուսալիությունը: Տրամադրված միջոցների հաշվին կատարվել են կանխավճարներ ծրագրի խորհրդատուին և գլխավոր կապալառուին:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող էլեկտրաէներգիայի տեղափոխման սեկտորի վերակառուցման ծրագրի գծով ծախսերը կատարվել են նախատեսված ողջ ծավալով՝ կազմելով շուրջ 87.8 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է վարկային միջոցներից: Ծրագրի նպատակն է բարձրացնել էլեկտրաէներգետիկական համակարգի հուսալիությունը, ինչպես նաև ապահովել էլեկտրաէներգիայի անխափան մատակարարում: Ծրագրի շրջանակներում 2010 թվականին ամբողջությամբ ավարտվել են «Վանաձոր-1» 110 կՎ ենթակայանի բաց բաշխիչ սարքավորման մասնակի վերակառուցման, ինչպես նաև «Գյումրի», «Լոռի», «Գուգարք 1, 2», «Նորադուզ», «Լիճք» օդային գծերի վրա տեղադրված արգելափակիչները և զտիչները նորով փոխարինելու աշխատանքները: 2011 թվականի առաջին եռամսյակում իրականացվել են վճարումներ 2010 թվականին կատարված աշխատանքների դիմաց և ապրանքների ու սարքավորումների 5%-ի համար, ինչպես նաև խորհրդատվական ընկերությանը՝ որպես վերջնավճար, «Ալավերդի-2» ենթակայանի վերակառուցման վարկային ծրագրի շրջանակում:

Հաշվետու տարում ՀՀ պետական բյուջեից շուրջ 15.4 մլն դրամ տրամադրվել է *լեռնաարդյունահանման, արդյունաբերության և շինարարության* խմբի ծախսերին՝ ապահովելով 96% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է շինարարության թույլտվության ծախսերի ցածր կատարողականով:

Հաշվետու տարում *հանքային ռեսուրսների արդյունահանում, բացառությամբ բնական վառելիքի* դասի ծախսերը կազմել են շուրջ 13.8 մլն դրամ՝ ապահովելով 98.4% կատարողական: Նշված գումարից շուրջ 7.8 մլն դրամը կազմել են երկրաբանահետախուզական աշխատանքների աջակցման ծառայությունների ծախսերը, որոնք կատարվել են 97.3%-ով: Ծրագրի շրջանակներում տեխնիկական բնութագրի առաջադրանքը կատարելու նպատակով իրականացվել են արխիվային նյութերի հավաքում, ուսումնասիրություն և վերլուծություն: Հանրապետության տարածքում ամփոփագրված սողանքային դաշտերից ընտրվել և առաջարկվել են երեք՝ Դիլիջանի, Ողջաբերդի և Ուղեձորի սողանքային տեղամասերը, որոնցում պետք է անցկացնել մոնիթորինգ: Նշված

տեղամասերի ընտրությունը կատարվել է՝ ելնելով այդ տարածքներում գտնվող քաղաքի, գյուղերի, ճանապարհների և այլ կառույցների կարևորությունից, ինչպես նաև տվյալ տարածքներում արտակարգ իրավիճակներ առաջանալու դեպքում սպասվող ծանր հետևանքներից: Նախագիծ-նախահաշվով առաջարկվում է ընտրված տեղամասերում մոնիտորինգ իրականացնել ինժեներաերկրաբանական, հիդրոերկրաբանական, երկրաֆիզիկական, գեոմորֆոլոգիական, արբանյակային դիրքորոշման կայանների միջոցով սողանքային մարմինների և արագությունների որոշման և հորատման ուսումնասիրությունների կիրառմամբ: Ուսումնասիրությունների ընթացքում ստացված տվյալները հիմք պետք է հանդիսանան հակասողանքային միջոցառումներ նախագծելու և իրականացնելու համար: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերի 48.1%-ով կամ 7.2 մլն դրամով նվազումը պայմանավորված է նրանով, որ 2010 թվականին ֆինանսավորվել է երեք ծրագիր, երկուսը՝ 8 մլն դրամ, իսկ մեկը՝ 7 մլն դրամ արժեքով, իսկ 2011 թվականին 7 մլն դրամ գումարով ծրագիրն ավարտվել է:

6 մլն դրամ է տրամադրվել ընդերքի մասին տեղեկատվության տրամադրման ծառայությանը: Ծրագրի շրջանակներում իրականացվում են ՀՀ ընդերքի պահպանման, հաշվառման և գրանցման, դրա վերաբերյալ ճշգրիտ տեղեկատվության տրամադրման աշխատանքներ: Նշված ծախսերը կատարվել են նախատեսված ծավալով և նախորդ տարվա համեմատ փոփոխություն չեն կրել:

Հաշվետու տարում *շինարարության* դասում ընդգրկված շինարարության թույլտվության ծախսերը կազմել են շուրջ 1.6 մլն դրամ՝ կատարելով ծրագրի 78.8%-ը, որը պայմանավորված է ներկայացված հայտերի քանակով: Ծրագիրը 2010 թվականին նախատեսված չի եղել:

2011 թվականին *տրանսպորտի* բնագավառում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են 30.4 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի կատարումը 61.4%-ով: Ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի ցածր կատարողականով:

Ճանապարհային տրանսպորտի դասի ծախսերը կազմել են ավելի քան 24.6 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրվածի 64%-ը: Կատարված հատկացումների հաշվին իրականացվել են 11 ծրագրեր, որոնցից չորսը՝ վարկային և մեկը՝ դրամաշնորհային ծրագրեր են:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող կենսական նշանակության ճանապարհների բարելավման երկրորդ լրացուցիչ ֆինանսավորման վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է 5.5 մլրդ դրամ, որից 3.7 մլրդ դրամը՝ վարկային միջոցներից, 1.8 մլրդ դրամը՝ կառավարության համաֆինանսավորման հաշվին: Ծրագրի ցածր՝ 45.9% կատարողականը պայմանավորված է ՀԲ-ի կողմից շուրջ 100 կմ երկարությամբ ճանապարհահատվածների վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի և մրցութային փաստաթղթերի վերաբերյալ հավանություն ստանալու հետ կապված քննարկումների երկարաձգմամբ: Բավական երկար տևած քննարկումների և բանակցությունների արդյունքում ՀԲ-ի հետ համաձայնություն ձեռք

բերվեց իրականացնել փորձնական նախագիծ (կրկնակի մակերեսային մշակում խճային հիմքի վրա)՝ հիմնանորոգելով մոտ 12 կմ երկարությամբ ճանապարհահատված Արմավիրի մարզում, իսկ մնացած ճանապարհները հիմնանորոգել ասֆալտբետոնե ծածկով: 2011 թվականի 4-րդ եռամսյակում բոլոր նախագծերն ընդունվեցին, և հայտարարվեցին համապատասխան մրցույթները, որոնց արդյունքում 2011 թվականի դեկտեմբերին կնքվեցին պայմանագրեր և կապալառուներին տրամադրվեց կանխավճար, իսկ աշխատանքները կիրականացվեն 2012 թվականի ընթացքում: 2011 թվականին նախատեսվել էր կնքել շուրջ 128 կմ ճանապարհների վերականգնման պայմանագրեր, սակայն տարվա ընթացքում կնքվել է ընդամենը 28 կմ երկարությամբ ճանապարհների վերականգնման պայմանագրեր: Ծրագրի շրջանակներում 2011 թվականին նախատեսվում էր ճանապարհահատվածների վերականգման նախագծերի նախապատրաստման պայմանագրով վճարումների իրականացում, ինչպես նաև վերականգնվող ճանապարհների տեխնիկական հսկողության իրականացում: Նախագծողի կողմից ներկայացվել են պայմանագրով նախատեսված շուրջ 100 կմ երկարությամբ ճանապարհահատվածների վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթեր: Հաշվի առնելով, որ այս ճանապարհահատվածների շինարարությունը 2011 թվականին վերոհիշյալ պատճառներով չի իրականացվել, չեն իրականացվել նաև տեխնիկական հսկողության աշխատանքները: Ծրագրով նախատեսվում էր նաև ճանապարհների և ճանապարհածածկի վիճակի վերաբերյալ տվյալների հավաքագրման համակարգի ձեռքբերումը: Համակարգի տեխնիկական բնութագրի մշակումը դեռևս գտնվում է քննարկման փուլում: 2011 թվականին ծրագրով նախատեսված էին 140 կմ ճանապարհների վերականգնման շինարարական աշխատանքներ, փաստացի վերականգնվել են 43.4 կմ ճանապարհներ:

Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող գյուղական ճանապարհների վերականգնման ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 3.3 մլրդ դրամ, որից 2.3 մլրդ դրամը՝ վարկային միջոցներից, 929.6 մլն դրամը՝ կառավարության համաֆինանսավորման հաշվին՝ ապահովելով 102.3% կատարողական: Օգտագործված միջոցներից 160.6 մլն դրամը կազմել են ընթացիկ, 3.1 մլրդ դրամը՝ շենքերի և շինությունների շինարարության ծախսերը: Ծրագրի գերազանցումը պայմանավորված է 2010 թվականին տնտեսված տարեսկզբի դրամական միջոցների մնացորդն օգտագործելու հանգամանքով: Ծրագրի շրջանակներում 2011 թվականին Գեղարքունիքի մարզում վերականգնվել և շահագործման է հանձնվել 33.49 կմ երկարությամբ ճանապարհ:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ կենսական նշանակության ավտոճանապարհների բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման ծախսերը կազմել են 1.6 մլրդ դրամ, որից 1.4 մլրդ դրամը՝ վարկային միջոցներից, 195.5 մլն դրամը՝ կառավարության համաֆինանսավորման հաշվին՝ ապահովելով 223.5% կատարողական: Ծրագրի գերազանցումը

պայմանավորված է այն հանգամանքով, որ ՀԲ կողմից մոտ 13.5 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհների վերականգնման աշխատանքների մրցույթների արդյունքներն ուշ հաստատելու պատճառով համապատասխան պայմանագրերը կնքվել են 2010 թվականի վերջին, ինչի արդյունքում 2010 թվականին տնտեսված գումարներն օգտագործվել են 2011 թվականին: Ծրագրի շրջանակներում իրականացնել է 2010 թվականին ավարտված շինարարական աշխատանքների ամսական կատարողականներից պահված գումարների՝ ներկայացված բանկային երաշխիքների դիմաց, ինչպես նաև ճանապարհների հիմնանորոգման աշխատանքների վճարումներ, կատարվել են նաև պահպանման ծախսերը, վճարումներ ծրագրի ֆինանսական աուդիտի, ինչպես նաև շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների դիմաց, ձեռք է բերվել ճանապարհային ծածկի ամրությունը ստուգող «Ընկնող քաշով դեֆլեկտոմետր» սարքը:

Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 603.2 մլն դրամ, որից 465.8 մլն դրամը՝ վարկային միջոցներից, 137.3 մլն դրամը՝ կառավարության համաֆինանսավորման հաշվին: Ծրագրի 6.8% կատարողականը պայմանավորված է ծրագրով նախատեսված շինարարական աշխատանքների իրականացման նպատակով 2010 թվականին հայտարարված մրցույթի արդյունքում հաղթող չճանաչվելու հանգամանքով: 2011 թվականի մարտից նախատեսվում էր նոր մրցույթի կազմակերպում, որի արդյունքում հաղթող ճանաչված ընկերությանը պետք է վճարվեր կանխավճար և շինարարական աշխատանքների մոբիլիզացման կատարողականի գումար: Սակայն մրցույթի կազմակերպման ժամկետները հետաձգվեցին, և արդեն 2011 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին նախատեսված էր ավարտել ծրագրի առաջին և երկրորդ տրանշների կապալառուի ընտրության մրցույթը և կնքել համապատասխան պայմանագիր՝ տրամադրելով պայմանագրի գումարի տասնհինգ տոկոսի չափով կանխավճար: Ծրագրով նախատեսվում էր նաև ծրագրի կառավարման խորհրդատուի հետ պայմանագրի կնքում, որով պետք է վճարվեր մինչև քսան տոկոսի կանխավճար: 2011 թվականի ընթացքում հայտարարվել է ծրագրի կառավարման խորհրդատուի ընտրություն: Սակայն մրցույթի գործընթացը 2011 թվականին չի ավարտվել: 2011 թվականի օգոստոսի 2-ին հայտարարվել է Հյուսիս-հարավ ավտոմայրուղու Տրանշ 1 և Տրանշ 2 շինարարական միջազգային բաց մրցույթ՝ Հյուսիս-հարավ ավտոմայրուղու հատվածների վերակառուցման և բարելավման համար: Հայտերը մանրամասն գնահատվել են և գնահատման հաշվետվությունը, վերանայման և հաստատման նպատակով, 2011 թվականի դեկտեմբերի 2-ին ուղարկվել է ԱԶԲ, որի հաստատումից հետո՝ 2012 թվականին, նախատեսվում է կնքել համապատասխան պայմանագրերը:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստանի ճանապարհային անվտանգության քարտուղարություն հիմնադրելու դրամաշնորհային ծրագրի շրջանակներում

կատարվել են շուրջ 8.5 մլն դրամի ծախսեր, որն ամբողջությամբ օգտագործվել է դրամաշնորհային միջոցներից: Ծրագրի նպատակն է աջակցել Հայաստանում ճանապարհային անվտանգության բարելավման նպատակով Հայաստանի Հանրապետության ճանապարհային երթևեկության անվտանգության ազգային խորհրդի քարտուղարության հիմնադրմանը և գործարկմանը: Ծրագրի 94.4% կատարողականը պայմանավորված է այն հանգամանքով, որ ծրագրի ավարտը 2011 թվականի օգոստոսի 31-ից երկարաձգվել է մինչև 2012 թվականի մայիսի 31-ը: Ծրագրի շրջանակներում 2011 թվականի համար կնքված բոլոր պայմանագրերով կատարվել են համապատասխան աշխատանքները և վճարումները, դեկտեմբեր ամսին կնքվել են համապատասխան պայմանագրեր ճանապարհային անվտանգության քարտուղարության մասնագետների հետ, դեկտեմբերին կատարված աշխատանքների դիմաց վճարումներն իրականացվել են 2012 թվականին:

Հաշվետու տարում տրանսպորտի բնագավառում ընդգրկված հետևյալ երկու ծրագրերի գծով արձանագրվել է 100% կատարողական: Մասնավորապես՝ «Համայնքների բյուջեներին նպատակային հատկացումների՝ սուբվենցիաների տրամադրում» ծրագրի գծով ծախսերը կազմել են շուրջ 3.3 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 6.8%-ով կամ 238.3 մլն դրամով, ինչը պայմանավորված է 2010 թվականին կատարված կապիտալ ծախսերով:

«Տրանսպորտային փոխադրումներ» ՊՈԱԿ-ԻՆ պետական աջակցության ծախսերը կազմել են 32.5 մլն դրամ: «Տրանսպորտային փոխադրումներ» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվել են Հայաստանի Հանրապետության միասնական երթուղային ցանցի մշակման և զարգացման, ուղևորահոսքի մշտական ուսումնասիրության, անվճար երթևեկության վկայականների պատրաստման և տրամադրման, միջպետական բեռնափոխադրումների թույլտվությունների բլանկների պատրաստման, այլ պետությունների հետ փոխանակման և Հայաստանի Հանրապետության փոխադրողներին տրամադրման, Հայաստանի Հանրապետությունում հսկիչ սարքերում (թվային տախոգրաֆներում) օգտագործվող քարտերի տրամադրման համար հայտերի ընդունման, քարտերի տրամադրման, տրամադրված քարտերի սպասարկման, տեղեկատվական բանկի վարման և կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ: Նշված ծրագրին 2010 թվականի պետական բյուջեից միջոցներ չեն հատկացվել:

Տրանսպորտի բնագավառում ընդգրկված ևս 2 ծրագրերի գծով արձանագրվել է 99.6% կատարողական: Մասնավորապես՝ 2011 թվականին ավտոճանապարհների պահպանման և շահագործման ծախսերը կազմել են ավելի քան 5.3 մլրդ դրամ: Ծրագրի շրջանակներում կատարվել են 3393 կմ երկարությամբ միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ և ձմեռային պահպանության աշխատանքներ՝ ավելի քան 4 մլրդ դրամ արժեքով, սպասարկվել են 3 ավտոճանապարհային թունելներ (Պուշկին, Նալբանդ, Դիլիջան)

և 5 խոշոր կամուրջներ՝ (Մեղրի, Եղվարդ, Աշտարակ, Ջերմուկ, Մ-3 Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման գ. Ձորագետ)՝ 224.1 մլն դրամ արժեքով, կատարվել են նաև ավտոճանապարհների նշագծման աշխատանքներ՝ շուրջ 205.6 մլն դրամ արժեքով, մետաղական արգելափակոցների պահպանման և վնասված հատվածների վերականգման աշխատանքներ՝ 742.5 մլն դրամ արժեքով, ինչպես նաև «Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհներ» ՊՈԱԿ-ի կողմից պետական պատվերի ծրագրերի իրականացման համար տրամադրվել է շուրջ 111.9 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ ավտոճանապարհների պահպանման և շահագործման ծախսերը նվազել են 2.3%-ով կամ 127 մլն դրամով, որը պայմանավորված է 2011 թվականին կնքված պայմանագրերի արժեքների նվազմամբ:

Հաշվետու տարվա պետական բյուջեից շուրջ 4.1 մլրդ դրամ է տրամադրվել պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգմանը: Ծրագրի շրջանակներում իրականացվել են միջպետական, հանրապետական և մարզային նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգման աշխատանքներ՝ 3.6 մլրդ դրամ արժեքով, Արտաշատ քաղաքի Հ.Իսակովի անվան փողոցի մայթերի կառուցման աշխատանքներ՝ 40.9 մլն դրամ արժեքով, ինչպես նաև իրականացվել են նախագծային, հեղինակային և տեխնիկական հսկողության աշխատանքներ՝ 152.1 մլն դրամ արժեքով: Ծրագրի շրջանակներում կատարվել են շուրջ 63 կմ-ի ավտոճանապարհների հիմնանորոգման աշխատանքներ: Վճարվել են նաև «Հազարամյակի մարտահրավեր» համաձայնագրի շրջանակներում կնքված պայմանագրերով կատարված աշխատանքների դիմաց վճարման ենթակա գումարներից պահված հետավարտական երաշխիքային գումարները՝ շուրջ 267.6 մլն դրամի չափով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 3 անգամ կամ 2.7 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է ավտոճանապարհների հիմնանորոգման ենթակա օբյեկտների ավելացմամբ:

Մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանման, ընթացիկ պահպանման և շահագործման նպատակով ՀՀ 2011 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 750.6 մլն դրամ՝ ապահովելով նախատեսված ծախսերի 98.8%-ը: Ծրագրի շրջանակներում ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ պահպանման, շահագործման և ձմեռային պահպանության ուղղություններով աշխատանքներ են կատարվել հանրապետության բոլոր մարզերում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 3.4%-ով կամ 24.4 մլն դրամով, որը պայմանավորված է աշխատանքների ծավալների ավելացմամբ՝ կապված եղանակային պայմանների հետ:

Հաշվետու տարում տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգման ծախսերը կատարվել են 99.2%-ով՝ կազմելով շուրջ 194.8 մլն դրամ: Մասնավորապես՝ 44.6 մլն դրամ տրամադրվել է հանրապետական, 137.9 մլն դրամ՝ մարզային նշանակության ավտոճանապարհների

տրանսպորտային օբյեկտների վրա կատարված շինարարական աշխատանքներին, 10 մլն դրամ՝ նախագծային և հեղինակային հսկողության, 2.3 մլն դրամ՝ տեխնիկական հսկողության աշխատանքներին: Ծրագրի շրջանակներում հիմնանորոգվել են 11 կամուրջներ, որից 2-ի գծով ընդունված աշխատանքների դիմաց վճարումները պետք է իրականացվեն 2012 թվականին: Նախորդ տարվա համեմատ տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգման ծախսերը նվազել են 43.4%-ով կամ 149.4 մլն դրամով՝ պայմանավորված հիմնանորոգման ենթակա օբյեկտների քանակի նվազմամբ:

Հաշվետու ժամանակահատվածում *երկաթուղային տրանսպորտի* դասի ծախսերը կազմել են 208.5 մլն դրամ և ապահովել 93.8% կատարողական: Շեղումը պայմանավորված է ՀՀ տարածքում ՌԴ զորամիավորումների հասցեով երկաթուղային փոխադրումների սպասարկման և մատուցվող ծառայությունների ծախսերի փոխհատուցման նպատակով նախատեսված միջոցները չօգտագործելու հանգամաքով: Նշենք, որ 2010 թվականի պետական բյուջեից երկաթուղային տրանսպորտի բնագավառին միջոցներ չէին հատկացվել:

Նշված գումարից 167 մլն դրամը տրամադրվել է «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ին՝ որպես սուբսիդիա ուղևորափոխադրումներից ստացված վնասի դիմաց, որը կատարվել է նախատեսված ծավալով: 2011 թվականին «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ում բացվեց տրանսպորտային ծառայությունների կենտրոնը (ՏԾԿ): Նոր կառույցը տրանսպորտային ծառայությունների ողջ տեսականին հաճախորդներին առաջարկելու է «մեկ պատուհանի» սկզբունքով և գործելու է տրանսպորտային սպասարկման ֆիրմային ճանապարհային կենտրոնի կազմում, մշակվել և շրջանառության մեջ է դրվել կոնցեսիոն պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին համաձայնագրի նախագիծը, այդ կապակցությամբ ռուսական կողմին են ներկայացվել նաև նոր առաջարկություններ: «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի պատվերով նախապատրաստվել է «Վանաձոր-Ֆիոլետովո» երկաթգծի տեխնիկատնտեսական հիմնավորումը, որի հիմքում ընկած են 5 ծրագրեր, որոնցից ընտրվել է 1-ը:

Հաշվետու տարում 41.5 մլն դրամի սուբսիդիա է հատկացվել «Երկաթուղու շինարարություն» ՓԲԸ-ին, որն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակներում «Երկաթուղու շինարարություն» ՓԲԸ-ի մասնագետների միջոցով մշակվել են առաջարկություններ Վանաձոր-Ֆիալետովո երկաթուղային գծի շինարարության հետ կապված խնդիրների ուսումնասիրման և լուծման համար, որոնք ներկայացվել են ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կազմում ստեղծված երկաթգծի կառուցման ծրագիրը համակարգող հանձնաժողովին, բանակցություններ են վարվել Ասիական Զարգացման բանկի (ԱԶԲ) առաքելության, Համաշխարհային բանկի և մասնավոր ներդրողների, այդ թվում՝ սփյուռքահայ համայնքի ներկայացուցիչների հետ հնարավոր ֆինանսական միջոցներ ձեռք բերման նպատակով, ռուսական կողմի հետ ձեռք է բերվել

նախնական պայմանավորվածություն Վանաձոր-Ֆիալետովո երկաթգծի շինարարական աշխատանքների համար գումարների հատկացման վերաբերյալ, քննարկվել են Վանաձոր-Ֆիալետովո երկաթուղային գծի նախագծման, շինարարական աշխատանքների և ֆինանսական գնահատականների վերաբերյալ հնարավոր տարբերակները:

2011 թվականին 13.7 մլն դրամ էր նախատեսվել ՀՀ տարածքում ՌԴ զորամիավորումների հասցեով երկաթուղային փոխադրումների սպասարկման և մատուցվող ծառայությունների ծախսերի փոխհատուցման նպատակով, որը, սակայն, չի օգտագործվել:

2011 թվականին *օդային տրանսպորտի* գծով պետական բյուջեի ծախսերում արձանագրվել է 69.8% կատարողական՝ կազմելով շուրջ 451 մլն դրամ: Շեղումը հիմնականում առաջացել է ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության արտաբյուջետային միջոցներով իրականացվող պետական, տարածքային հանրապետական մարմինների պահպանման ծախսերի գծով, որոնք 35.3%-ով զիջել են ծրագիրը՝ կազմելով 238 մլն դրամ: Շեղումը պայմանավորված է այն հանգամանքով, որ նշված միջոցների հաշվին նախատեսվել էին անհատ անձանց և կազմակերպություններին (հիմնականում մշակույթի բնագավառի ներկայացուցիչներին) բարեգործական նպատակով տրամադրվող օգնություններ, որոնք նախատեսվածից քիչ են կազմել: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 8.1%-ով կամ 21 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված ապրանքների ու ծառայությունների ձեռքբերման ծախսերի նվազմամբ:

Ավելի քան 127 մլն դրամ է ծախսվել ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պահպանման համար՝ ապահովելով ծրագրի 93.4%-ը, որը տնտեսումների արդյունք է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 1.2%-ով կամ 1.5 մլն դրամով՝ պայմանավորված աշխատավարձի, ինչպես նաև տրանսպորտային նյութերի ձեռքբերման գծով ծախսերի ավելացմամբ:

Մարդասիրական օգնության չվերթներ իրականացնող օդանավերի թռիչք-վայրէջքի, օդանավակայանում օդանավերի կանգառի և մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման ծախսերը կազմել են շուրջ 8 մլն դրամ՝ ապահովելով 37.9% կատարողական: Շեղումը պայմանավորված է նրանով, որ 2011 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում իրականացվել է երեք չվերթ՝ նախատեսված հինգի փոխարեն: Երկու չվերթ չեն կայացել, քանի որ թռիչքը և վերադարձը իրականացվել է Թբիլիսիի օդանավակայանից: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 31.1%-ով կամ 3.6 մլն դրամով՝ պայմանավորված է նրանով, որ 2011 թվականի ԱՄՆ-ի միացյալ հայկական հիմնադրամի միջոցով ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հասցեով առաքվող մարդասիրական օգնության բեռներ տեղափոխող հատուկ չվերթները հիմնադրամի ֆինանսական դժվարությունների պատճառով

դադարեցվել են: 2011 թվականին կատարվել են միայն «Հայաստանի մանկական ասոցիացիա» բարեգործական հասարակական կազմակերպության և Գերմանիայի «Ֆրիդենսդորֆ ինտերնացիոնալ» հասարակական կազմակերպության կողմից համատեղ իրականացվող բարեգործական ծրագրի շրջանակներում (Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունների այն երեխաները, որոնց բուժումն անհնար է կազմակերպել տեղում, նշված չվերթների օդանավերով տեղափոխվում և բուժման հնարավորություն են ստանում Գերմանիայում) կատարվող հատուկ չվերթների սպասարկումները:

ՀՀ օդանավակայաններում ՌԴ զորամիավորումների օդանավերի սպասարկման և մատուցվող ծառայությունների դիմաց փոխհատուցման ծախսերը կազմել են շուրջ 78 մլն դրամ՝ ապահովելով 64.4% կատարողական: Ծրագիրը պետական բյուջեում նախատեսվել է 2011 թվականից: Հիմնականում նշվածով պայմանավորված՝ 2010 թվականի համեմատ օդային տրանսպորտի ծախսերն աճել են 13.8%-ով:

Հաշվետու տարում *խողովակաշարային և այլ տրանսպորտի* գծով պետական բյուջեի ծախսերը կազմել են 5.1 մլրդ դրամ: Կատարված հատկացումների հաշվին իրականացվել են 5 ծրագրեր, որոնցից երկուսը՝ վարկային և մեկը՝ դրամաշնորհային ծրագրեր են: Նշված դասի 50.3% կատարողականը պայմանավորված է Եվրոպական միության հարևանության ներդրումային ծրագրի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման դրամաշնորհային ծրագրի և Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման վարկային ծրագրի ցածր կատարողականով, որոնցից յուրաքանչյուրի շրջանակներում օգտագործվել է 682.5 մլն դրամ կամ նախատեսվածի 20.8%-ը: Նշված ծրագրերի ցածր կատարողականը պայմանավորված է կատարված աշխատանքների և ձեռք բերված ապրանքների ծավալով: Ծրագրերի շրջանակներում ձեռք են բերվել վագոնների սալյակներ, էքսկավատոր-բեռնիչ և ինքնաթափ մեքենա, կատարվել է էլեկտրամատակարարման համակարգի վերանորոգում, վագոնների մոդեռնիզացում:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերականգնման վարկային ծրագրի (Երևան համայնքի ղեկավարին պետության կողմից պատվիրակված լիազորություն) շրջանակներում ծախսվել է 1.6 մլրդ դրամ, որից 1.3 մլրդ դրամը՝ վարկային միջոցներից, 306.5 մլն դրամը՝ կառավարության համաֆինանսավորման հաշվին՝ ապահովելով 110.2% կատարողական: Նշենք, որ վարկային միջոցների հաշվին նախատեսված շուրջ 969 մլն դրամի դիմաց ծախսվել է 1.3 մլրդ դրամ, այսինքն՝ ծրագրի 36.4%-ով գերազանցումը պայմանավորված է աշխատանքների հրատապության հետևանքով կնքված պայմանագրերով: Մինչդեռ, համաֆինանսավորման հաշվին նախատեսված 507.7 մլն դրամի դիմաց ծախսվել է 306.5

մլրդ դրամ, որը պայմանավորված է ձեռք բերված ապրանքների ծավալով: Ծրագրի շրջանակներում ձեռք են բերվել վագոնների սալյակներ և տեխնիկական քարշային մեքենա:

Նշված դասում ընդգրկված երկու ծրագրեր կատարվել են նախատեսված ամբողջ ծավալով: Մասնավորապես՝ ավելի քան 1.8 մլրդ դրամ ուղղվել է Երևանի մետրոպոլիտենի աշխատանքների կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման ֆինանսավորմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 21.2%-ով կամ 495 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված «Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի ենթակառուցվածքների նորոգման ծախսերի կրճատմամբ:

276 մլն դրամի սուբվենցիաներ են տրամադրվել համայնքների բյուջեներին՝ վերգետնյա էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրման ծառայությունների շրջանակներում: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը չեն փոփոխվել:

2011 թվականին *կապի* ոլորտում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են շուրջ 400.9 մլն դրամ, որը նախատեսված ամբողջ ծավալով ծախսվել է հեռահաղորդակցության և կապի կանոնակարգման ծառայությունների ձեռքբերման նպատակով: Ծրագրի շրջանակներում իրականացվել են ՀՀ հաճախությունների բաշխումների աղյուսակի կազմման, ռադիոեթերի մոնիթորինգի, ռադիոէլեկտրոնային միջոցների և բարձր հաճախականության սարքավորումների տեղադրման, փորձաքննության և չափումների անցկացման, կապի շինարարական աշխատանքների տեխնիկական նորմերին համապատասխանության ընդունման, եթերի խանգարման աղբյուրների հայտնաբերման և վերացման գործառույթները: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

2011 թվականի ընթացքում *«Այլ բնագավառներ»* խմբի ծախսերը կազմել են ավելի քան 1 մլրդ դրամ՝ ապահովելով 99.1% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված խմբի ծախսերի 11.7%-ով աճը պայմանավորված է ԱՄՆ կառավարության աջակցությամբ իրականացվող «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի աճով: Նշված ծրագրի շրջանակներում 2011 թվականին կատարվել են շուրջ 973.1 մլն դրամի ծախսեր՝ ապահովելով 100% կատարողական: Նշված միջոցներն օգտագործվել են ծրագրի «Ջրից դեպի շուկա» բաղադրիչի շրջանակներում: Հաշվետու տարվա ընթացքում տվյալ բաղադրիչի շրջանակներում իրականացվող աշխատանքները մտել են ավարտական փուլ, շարունակվել են աշխատանքները ոռոգման համակարգի կազմակերպություններին տեխնիկական աջակցության և սարքավորումների ու տեխնիկայի տրամադրման, ֆերմերների վերապատրաստման, ֆերմերային խմբերի և գյուղատնտեսական արտադրանքի վերամշակողներին օժանդակության տրամադրման ուղղություններով:

«Ոռոգման համակարգի կազմակերպությունների հզորացում» ենթաբաղադրիչի շրջանակներում շարունակվել է տեխնիկական օժանդակության տրամադրումը ՋՕԸ-ին և Ջրառ-երին: 2011 թվականին ավարտվեցին նաև ՋՕԸ-ում և Ջրառ-ում հաշվապահական հաշվառման համակարգչային ծրագրի արդիականացման և տեղադրման, հաշվապահական անձնակազմի ուսուցման աշխատանքները: ՋՕԸ-ի և Ջրառ-երի մի խումբ աշխատակիցների համար կազմակերպվել է ուսումնական այց միջազգային փորձն ուսումնասիրելու և արդի տեխնոլոգիաներին ծանոթանալու նպատակով: 2011 թվականի ընթացքում ձեռք են բերվել և որպես նվիրատվություն տրամադրվել 44 զոդման ագրեգատներ և 38 էքսկավատոր-ամբարձիչ ՋՕԸ-երի և Ջրառ-երի նյութատեխնիկական բազան ամրապնդելու և աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

2011 թվականը «ՋՕԸ անդամ ֆերմերների եկամուտների ավելացում» ենթաբաղադրիչի ամփոփման տարի էր, ավարտվել են ջրի ներտնտեսային կառավարման և բարձարժեք գյուղատնտեսության դաընթացները: Ծրագրի սկզբից ի վեր «Ջրից դեպի շուկա» բաղադրիչի շրջանակներում վերապատրաստվել են ջրի ներտնտեսային կառավարման ուղղությամբ՝ 45639 ֆերմեր, բարձարժեք գյուղատնտեսության ուղղությամբ՝ 36070 ֆերմեր: Վերապատրաստման դասընթացները կազմակերպվել են հանրապետության 403 համայնքներում: Ջրի ներտնտեսային կառավարման տեխնոլոգիաների և Բարձարժեք գյուղատնտեսության բարելավումների ցուցադրման նպատակով ծրագրի կողմից բոլոր 10 մարզերում հիմնվել էին ցուցադրական տեղամասեր: Ընդհանուր առմամբ հիմնվել էր 269 ցուցադրական տեղամաս, որոնք օգտագործվել են վերապատրաստման դասընթացների ընթացքում: Չոր մթերքի որակի և քանակի բարձրացման նպատակով ավելի քան 100 փոքր և միջին արտադրողներ խորհրդատվություն են ստացել և մասնակցել են վերապատրաստման դասընթացներին: Հետբերքահավաքային տեխնոլոգիաների վերաբերյալ վերապատրաստման դասընթացներ են իրականացվել մթերման կենտրոններին արտադրանք մատակարարող մոտ 475 ֆերմերների, 45 ձեռնարկությունների տրամադրվել է մարկետինգային աջակցություն:

Հաշվետու տարում *զբոսաշրջության* ոլորտի ծախսերը կազմել են շուրջ 40.6 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 81.1%-ը, ինչը պայմանավորված է այն հանգամանքով,որ 2011 թվականի ընթացքում նախատեսված էր գումար որակավորման համար, սակայն որակավորումն ունի կամավոր բնույթ և տարվա ընթացքում կազմակերպությունների կողմից որակավորման հայտեր չեն ներկայացվել: Դրանով է նաև պայմանավորված նախորդ տարվա համեմատ նշված ծախսերի 18.9%-ով կամ 9.4 մլն դրամով նվազումը: Ծրագրի շրջանակներում իրականացվել են Հայաստանի զբոսաշրջային արդյունքը ներկայացնող գովազդատեղեկատվական նյութերի պատրաստում և տարածում, օտարերկրյա լրագրողների և զբոսաշրջային օպերատորների՝ Հայաստան

ճանաչողական այցերի կազմակերպում, ծրագրային միջոցառումների համար աշխատակազմի վարձատրություն: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 37.5%-ով կամ 30 մլն դրամով, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ ծրագրի շրջանակներում նախատեսված միջոցառումների մի մասն իրականացվել է «Պետական աջակցություն «Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամ»-ի կանոնադրական հիմնախնդիրների իրականացմանը» ծրագրով:

2011 թվականի ընթացքում *տնտեսական հարաբերությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքների* շրջանակներում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են շուրջ 92.2 մլն դրամ՝ 100%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Նախորդ տարվա համեմատ նշված խմբի ծախսերը նվազել են 16.2%-ով կամ 17.8 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է 2011 թվականի պետական բյուջեով շինարարության գնագոյացման բնագավառում մեթոդաբանական, վերլուծական և տեխնիկական ծառայությունների և Սևանա լճի առափնյա տարածքների ծրագրային փաստաթղթերի մշակման նպատակով միջոցներ չնախատեսելու հանգամանքով:

Խմբում ընդգրկված են 2 ծրագրեր: Մասնավորապես՝ տեխնիկական անվտանգության կանոնակարգման ծառայություններին հաշվետու տարում ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 42.1 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագիրն իրականացվում է «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից, որի գործունեությունն ուղղված է «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով տեխնածին վթարների կանխարգելմանը, դրանց հետևանքների վերացմանը, նման վթարների հետևանքով հասարակությանը և տնտեսությանը հասցվող վնասների ռիսկի նվազեցմանը, ինչպես նաև բնակչության և շրջակա միջավայրի պաշտպանությանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 15.8%-ով կամ 7.9 մլն դրամով, որը պայմանավորված է ռեեստրի վարման գործառույթները ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանը փոխանցելու հանգամանքով:

Պետական կարիքների համար ապրանքների, աշխատանքների (ծառայությունների) կողմնորոշիչ գների մեթոդաբանական, վերլուծական և տեղեկատվական ծառայությունների ծախսերը կազմել են 50 մլն դրամ: 2011 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում իրականացվել են պետական պատվերի շրջանակներում գործող գներով տնտեսության ոլորտների կարիքների համար ապրանքների գների և աշխատանքների արժեքների մասին ամսական տեղեկագրերի մշակման և հրապարակման, պետական պատվերի շրջանակներում գործող գներով շինարարության բնագավառի միջին ամսական աշխատավարձի, մեքենա-մեխանիզմների շահագործման և աշխատավարձի ինդեքսների հաշվարկման և սահմանված կարգով ներկայացման, միջազգային կազմակերպությունների և դոնոր երկրների հետ համատեղ տնտեսության ոլորտների

կարիքների համար ապրանքների գնագոյացման ծրագրերի մշակման և իրականացման, ինչպես նաև պետական կարիքների համար իրականացվող կապիտալ ծախսերի հաշվարկի հիմքում դրվող ապրանքատեսակների կողմնորոշիչ գների և շինարարության ոլորտում գների ինդեքսների հաշվարկման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակման միջոցառումները: Ծրագիրը մեկնարկել է 2011 թվականին:

2011 թվականին *այլ դասերին չպատկանող տնտեսական հարաբերությունների* գծով փաստացի ցուցանիշը կազմել է շուրջ 1.8 մլրդ դրամ՝ 67.9%-ով ապահովելով նախատեսվածը: Մասնավորապես՝ խմբում ընդգրկված ծրագրերի գծով կատարվել են շուրջ 5.3 մլրդ դրամի ծախսեր, իսկ ոչ ֆինանսական ակտիվների օտարումից ստացվել է 3.5 մլրդ դրամ: Ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երրորդ ծրագրի երկրորդ լրացուցիչ ֆինանսավորման ծրագրի ցածր կատարողականով և ոչ ֆինանսական ակտիվների օտարումից՝ նախատեսվածից ավել մուտքերի ստացման հանգամանքով: Հաշվետու տարում տվյալ խմբում կատարված հատկացումների հաշվին իրականացվել են 14 ծրագրեր, որոնցից չորսը վարկային ծրագրեր են:

Խմբում ընգրկված երեք վարկային ծրագրերն իրականացվել են Համաշխարհային բանկի աջակցությամբ:

Մասնավորապես՝ Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երրորդ վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 485.4 մլն դրամ, որից 365.4 մլն դրամը՝ վարկային միջոցներից, 120 մլն դրամը՝ կառավարության համաֆինանսավորման հաշվին: Ծրագրի 85.1%-ով կատարումը պայմանավորված է նախագծի լրամշակման պատճառով ժամկետի երկարաձգման և աշխատանքների մի մասը 2012 թվական տեղափոխելու հանգամանքով: Ծրագրի շրջանակներում սկսվել են շինարարական աշխատանքները 1 օբյեկտում, շինարարական աշխատանքներ են իրականացվել նաև 8 այլ օբյեկտներում, վճարվել է նախորդ տարվա ընթացքում գնված ապրանքների որակի երաշխիքի դիմաց, ֆինանսավորվել են գրասենյակի գործառնական ծախսերը:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երրորդ վարկային ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման շրջանակներում ծախսվել է շուրջ 88 մլն դրամ, որից 62.5 մլն դրամը՝ վարկային միջոցներից, 25.5 մլն դրամը՝ կառավարության համաֆինանսավորման հաշվին: Նշված ծախսերը կատարվել են 84.7%-ով, ինչը պայմանավորված է նրանով, որ շինարարական աշխատանքների մի մասն իրականացվել էր 2010 թվականին: Ծրագրի շրջանակներում ավարտվել են շինարարական աշխատանքները 3 այլ օբյեկտներում, գնվել է դպրոցական կահույք, շինարարական աշխատանքները վերահսկվել են տեխնիկական վերահսկիչների կողմից:

Նշված վարկային ծրագրի երկրորդ լրացուցիչ ֆինանսավորման ծրագրի շրջանակներում կատարվել են շուրջ 1.8 մլրդ դրամի ծախսեր, որից 1.4 մլրդ դրամը՝ վարկային միջոցներից, 386.8 մլն դրամը՝ կառավարության համաֆինանսավորման հաշվին: Նախատեսված ցուցանիշը կատարվել է 80.7%-ով: Ծրագրի ցածր կատարողականը պայմանավորված է եղանակային անբարենպաստ պայմանների պատճառով աշխատանքների ժամկետի երկարաձգման և դրանց մի մասը, ինչպես նաև դպրոցական կահույքի մատակարարումը 2012 թվական տեղափոխելու հանգամանքով: Ծրագրի շրջանակներում ավարտվել են շինարարական աշխատանքները 11 օբյեկտներում, մեկ մշակութային կենտրոնի համար գնվել են լուսային սարքավորումներ, ընթացող շինարարական աշխատանքները վերահսկվել են տեխնիկական վերահսկիչների կողմից, ֆինանսավորվել են գրասենյակի գործառնական ծախսերը:

Բելգիական Քեյ Բի Սի Էն Վի բանկի աջակցությամբ իրականացվող ռադիոիզոտոպների արտադրության արտադրամասի ստեղծման վարկային ծրագրի ծախսերը կատարվել են նախատեսված ողջ ծավալով՝ կազմելով 938 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է վարկային միջոցներից և տրամադրվել է որպես կանխավճար:

100% կատարողական է ապահովվել «Մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայության» ծրագրի գծով, որի շրջանակներում ծախսվել է շուրջ 266.6 մլն դրամ՝ 49.6%-ով կամ 88.4 մլն դրամ գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը:

Խմբում ընդգրկված ևս մեկ ծրագրի՝ պետական ռեզերվների գործակալության համակարգի հիմնարկների պահպանման ծախսերը կատարվել են նախատեսված ամբողջ ծավալով՝ կազմելով 153.6 մլն դրամ: Նախորդ տարվա համեմետ նշված ծախսերն աճել են մոտ 2.2 անգամ կամ 83.5 մլն դրամով:

Հաշվետու տարում նյութական ռեսուրսների ՀՀ պետական պահուստի ձևավորման ու պահպանման ծախսերը կազմել են շուրջ 3.7 մլն դրամ կամ նախատեսվածի 14.2%-ը: Նախորդ տարվա համեմետ նշված ծախսերը նվազել են 95.7%-ով կամ 82.4 մլն դրամով:

Շուրջ 337.9 մլն դրամ են կազմել գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման (նախարարությունների աշխատակազմերի մասով) ծախսերը՝ 97.5%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Շեղումը պայմանավորված է տնտեսումներով: Միջոցները հատկացվել են ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմի պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Պետական պահուստից նյութական արժեքների թարմացման, փոխարինման, փոխառման և ապաամրագրման գործառնությունների գծով 2011 թվականին ոչ ֆինանսական ակտիվների

օտարումից ստացվել են 19.9 մլն դրամ արտաբյուջետային միջոցներ (նախատեսված 6 մլն դրամի դիմաց), որոնցից օգտագործվել է 34.8 մլն դրամը (նախատեսված 51.9 մլն դրամի դիմաց):

Ծախսերի այս խմբում ներառվել են «ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն կատարված հատկացումները: ՀՀ պետական բյուջեից առանց սահմանափակման իրականացվել են ավելի քան 1.2 մլրդ դրամի ծախսեր: Նշված գումարից 1.1 մլրդ դրամը կազմել են ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից դատարան տրվող հայցադիմումների, դիմումների և գանգատների, դատարանների վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ բողոքների, ինչպես նաև դատարանի կողմից տրված փաստաթղթերի պատճենների տրամադրման ծախսերը, 85.3 մլն դրամը՝ պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում պետական մասնակցության նվազեցման ճանապարհով ակտիվների կազմից գույք առանձնացնելիս գույքն ստացող պետական կառավարչական հիմնարկի կողմից մատակարարին վճարման ենթակա ԱԱՀ-ի պարտավորության կատարման գծով ծախսերը, 568.8 հազար դրամը՝ ՀՀ հարկային և մաքսային մարմինների կողմից պետական կառավարման մարմիններում և պետական հիմնարկներում օրենսդրությամբ սահմանված կարգով կատարված ստուգումների և վերստուգումների արդյունքում առաջացած լրացուցիչ հարկային և մաքսային պարտավորությունների մարման համար անհրաժեշտ վճարումները, 96.0 հազ. դրամը՝ պետական հիմնարկների՝ ՊՈԱԿ-ի վերակազմակերպման նպատակով ՀՀ ձեռնարկությունների պետական ռեգիստրում պետական գրանցման համար «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարումները:

<u>Շրջակա միջավայրի պաշտպանություն</u>

2011 թվականի ընթացքում շրջակա միջավայրի պաշտպանության բնագավառում պետական բյուջեի ծախսերը կազմել են ավելի քան 6.6 մլրդ դրամ կամ ծրագրով նախատեսվածի 74.6%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ) աջակցությամբ իրականացվող Սևանա լճի բնապահպանական վարկային և դրամաշնորհային ծրագրերի, ինչպես նաև Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Հարավային Կովկասի տարածաշրջանում բնապահպանական դրամաշնորհային ծրագրի ցածր կատարողականով: 2010 թվականի համեմատ շրջակա միջավայրի պաշտպանության ծախսերն աճել են 34.6%-ով կամ 1.7 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է արտաքին աջակցության ավելացմամբ:

Հաշվետու տարում *աղբահանության* գծով կատարված ծախսերը կազմել են 43.1 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 100% կատարողական: Հատկացված գումարից 29.2 մլն դրամը տրամադրվել

է ռադիոակտիվ թափոնների վնասազերծման ծառայություններին: Ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների նպատակն է միջուկային և ճառագայթային անվտանգության նորմերի ու կանոնների պահպանմամբ ռադիոակտիվ թափոնների կենտրոնացված փոխադրումը, ուսումնասիրումը, տեղափոխումը, վնասազերծումը, պահպանումը և թաղումը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե փոփոխություն չեն կրել:

«Ռադիոակտիվ թափոնների վնասազերծում» ՓԲԸ-ում ներդրումների համար նախատեսված 13.9 մլն դրամն օգտագործվել է ամբողջությամբ: 2011 թվականին ծրագիրը պետական բյուջեից ֆինանսավորվել է առաջին անգամ:

2011 թվականին *օդի աղտոտման դեմ պայքարի* դասի ծրագրերին ուղղվել է 121.6 մլն դրամ՝ 99.2%-ով կատարելով տարեկան ծրագիրը: Հատկացված գումարից 10.1 մլն դրամը տրամադրվել է «Թափոնների ուսումնասիրության կենտրոն» ՊՈԱԿ-ին: Հյուսիսատլանտյան Դաշինքի (ՆԱՏՕ) հետ համատեղ իրականացվում է «Հայաստանի Հանրապետությունում ժամկետանց թունաքիմիկատների հաշվառում, մոնիթորինգ և վերլուծություն՝ դրանց էկոլոգիապես անվտանգ հեռացման նպատակով» ծրագիրը, որի շրջանակներում ձեռք է բերվել մասս դետեկտորով գազային քրոմատագրիչ՝ անալիտիկ հետազոտությունների լաբորատորիայի ստեղծման և համալրման համար: «SHIMADZU CORPORATION» (Ճապոնիա) կազմակերպության կողմից մատակարարվել է նշված սարքը, որն արդեն իսկ տեղակայվել է և կատարվում են թեստավորման աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծրագրի ծախսերն ավելացել են 43.9%-ով՝ կապված աշխատանքների շրջանակների ընդլայնման և ծավալի ավելացման հետ:

Ջրային օբյեկտների և օդային ավազանի աղտոտվածության վիճակի մոնիթորինգի իրականացմանն ուղղվել է 111.5 մլն դրամ՝ 99.3%-ով կատարելով տարեկան ծրագիրը: 2011 թվականի ընթացքում օդային ավազանի աղտոտվածության վիճակի մոնիթորինգային ծրագրի շրջանակներում ընդհանուր առմամբ վերցվել է օդի 474,627 փորձանմուշ, կատարվել՝ 518,275 անալիզ (2010 թվականի 508,581 անալիզի դիմաց): Եվրոպայի մոնիթորինգի և գնահատման ծրագրի (EMEP) շրջանակներում Ամբերդի ավտոմատ կայանից վերցվել է օդի և տեղումների 11,503 փորձանմուշ՝ կատարվել 21,924 անալիզ: 2011 թվականին մակերևութային ջրերի մոնիթորինգային աշխատանքներ իրականացվել են հանրապետության 39 գետերի, Ախուրյանի, Արփի լճի, Ապարանի, Ազատի, Կեչուտի ջրամբարների, Երևանյան լճի և Սևանա լճի 120 դիտակետում, որտեղ պետական պատվերով վերցվել է 1221 փորձանմուշ, ընդհանուր առմամբ կատարվել՝ 54,945 անալիզ (2010 թվականի 52 065 անալիզի դիմաց): Հայ-Իրանական համատեղ դիտարկումներ են կատարվել Արաքս գետի 6 դիտակետում: Վերցված 53 փորձանմուշներում կատարվել է 2385 անալիզ (2010 թվականի 1620 անալիզի դիմաց): Նախորդ տարվա համեմատ օդի աղտոտման դեմ պայքարի դասի ծախսերը գրեթե փոփոխություն չեն կրել:

Կենսաբազմազանության և բնության պաշտպանության դասի ծրագրերին ուղղվել է 5.2 մլրդ դրամ՝ 73.8%-ով կատարելով տարեկան ծրագիրը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ՎԶԵԲ աջակցությամբ իրականացվող՝ Սևանա լճի բնապահպանական վարկային և դրամաշնորհային ծրագրերի ցածր կատարողականներով: Նախորդ տարվա համեմատ կենսաբազմազանության և բնության պաշտպանության խմբի ծախսերում արձանագրվել է ծախսերի 44.5%-ով աճ՝ հիմնականում պայմանավորված Աբու-Դաբիի Զարգացման հիմնադրամի աջակցությամբ իրականացվող Արփա-Սևան թունելի հիմնանորոգման նպատակով միջոցների հատկացմամբ ու Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Սևանա լճի բնապահպանական դրամաշնորհային ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի աճով:

2011 թվականին ձկան պաշարների համալրման ծառայությունների ծախսերը կատարվել են ողջ ծավալով՝ կազմելով 60 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ ծախսերի 2.1 անգամ աճը պայմանավորված է նրանով, որ 2011 թվականի նոյեմբերի 22-ին Սևանա լիճ է բաց թողնվել 366.7 հազ. հատ մանրաձուկ՝ 2010 թվականի 192.0 հազ. հատի դիմաց:

Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման ծառայություններին տրամադրվել է 125.2 մլն դրամ՝ 99.8%-ով կատարելով տարեկան ծրագիրը: 2010 թվականին ձեռք բերված ֆիննական արտադրության հողահան էքսկավատորի և այլ օժանդակ մեխանիզմների օգտագործումը հնարավորություն է ընձեռել 2011 թվականին Սևանա լճի ջրի մակարդակի բարձրացման հետևանքով ջրածածկ տարածքներում (ջրում և ճահճում) իրականացնել անտառտնկարկների մաքրման ավելի որակյալ աշխատանքներ (274 հա): 2010 թվականի համեմատ ծախսերի 56.6%-ով նվազումը պայմանավորված է ջրածածկ տարածքների մաքրման աշխատանքների ծավալի նվազմամբ:

Սևանա լճում և նրա ջրհավաք ավազանում ձկան և խեցգետնի պաշարների հաշվառման ծախսերը կազմել են 7.4 մլն դրամ՝ արձանագրելով 98.6% կատարողական: Ծրագրի շրջանակներում 2011 թվականին Սևանա լճում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- Սևանա լճի ջրհավաք ավազանի գետերում ձկնատեսակների և խեցգետնի վերաբերյալ առկա գիտական տեղեկատվության հավաք, վերլուծություն, ամփոփում,
- գետերում ձկնատեսակների և խեցգետնի հաշվառման, գույքագրման, ձկնապաշարների որոշման միջազգայն փորձի ուսումնասիրում, մեթոդոլոգիաների գնահատում, ընտրած մեթոդոլոգիաների հիմնավորում,
- բնական ձվադրավայրերի վերականգնման միջազգային փորձի ուսումնասիրում, մեթոդոլոգիաների գնահատում, ընտրած մեթոդոլոգիաների հիմնավորում,
- Սևանա լճի ջրհավաք ավազանի գետերում էնդեմիկ ձկնատեսակների կենսաբանական տվյալների, բնական ձվադրավայրերի ուսումնասիրություն, դրանց առկա վիճակի գնահատում,

վերականգնման ուղիների մշակում և էկոլոգիական ու տնտեսական հիմնավորում: Նախորդ տարվա համեմատ նշված ծրագրի ծախսերը գրեթե փոփոխություն չեն կրել:

2011 թվականին «Սևան» ազգային պարկի պահպանության, պարկում գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների իրականացման համար նախատեսված 179 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակներում իրականացվել են ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության, այդ տարածքներում գիտական ուսումնասիրությունների և անտառտնտեսական աշխատանքների գծով 2011 թվականին ծրագրավորված միջոցառումները, այդ թվում՝ «Սևան» ազգային պարկի պահպանությանը և տարածքների արդյունավետ օգտագործմանը նպատակաուղղված միջոցառումներ և ծրագրեր: Մասնավորապես՝ 2011 թվականին ազգային պարկի տարածքում 6 հա-ի վրա կատարվել է անտառի տնկում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 1%-ով:

«Դիլիջան» ազգային պարկի պահպանության, պարկում գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների իրականացման համար պետական բյուջեով նախատեսված 76.6 մլն դրամը նույնպես ամբողջությամբ տրամադրվել է: Ծրագրի շրջանակներում իրականացվել են «Դիլիջան» ազգային պարկի պահպանությանը և տարածքների արդյունավետ օգտագործմանը նպատակաուղղված, ինչպես նաև գիտական ուսումնասիրությունների գծով համապատասխան միջոցառումներ և ծրագրեր: Ազգային պարկում կատարվել են 10 հա անտառի տնկում, 7.5 հա անտառի ցանքս, 5 հա անտառի լրացում, 70 հա անտառի խնամք, 2.2 տ անտառային սերմերի մթերում և այլ ծրագրային աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:

«Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրինության ներքո գտնվող ԲՀՊ (բնության հատուկ պահպանվող) տարածքների պահպանության, տարածքներում գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների կատարման ծառայությունների գծով հատկացվել է 75.4 մլն դրամ, որն ամբողջությամբ ֆինանսավորվել է: 2011 թվականին «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրինման ներքո գտնվող ԲՀՊ տարածքներում կատարվել են ծրագրային աշխատանքներ, այդ թվում՝ «Էրեբունի» պետական արգելոցի և «Որդան կարմիր» պետական արգելավայրի, «Ջրվեժ» անտառպարկի և 4 դենդրոպարկերի տարածքներում պահպանության, անտառտնտեսական և գիտահետազոտական աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 1.7%-ով:

«Շիկահող» պետական արգելոցի, «Սոսիների պուրակ» ու «Զանգեզուր» պետական արգելավայրերի պահպանության, գիտական ուսումնասիրությունների անտառտնտեսական աշխատանքների կատարման ծառայությունների նպատակով նախատեսված 50.1 մլն դրամի

ծախսերն ամբողջությամբ կատարվել են: Ծրագրի շրջանակներում «Շիկահող» պետական արգելոցում և «Զանգեզուր» պետական արգելավայրում 2011 թվականին իրականացվել են պահպանության աշխատանքներ, այդ թվում՝ հրդեհավտանգ տեղամասերում և հատվածներում իրականացվել են հակահրդեհային ճանապարհների շինարարության և ընթացիկ վերանորոգման աշխատանքներ, իսկ «Սոսու պուրակ» պետական արգելավայրում՝ 35 հա անտառկուլտուրաների միանվագ խնամք, 5 հա անտառկուլտուրաների լրացում, 3.67 հազար հատ տնկանյութի աճեցում և այլ ծրագրային աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե փոփոխություն չեն կրել:

«Խոսրովի անտառ» պետական արգելոցի պահպանության, գիտական ուսումնասիրությունների կատարման ծառայությունների իրականացման նպատակով հատկացվել է 77.5 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 100% կատարողական: Հաշվետու տարում «Խոսրովի անտառ» պետական արգելոցում կառուցվել (վերանորոգվել) են հակահրդեհային նշանակության 18 կմ ճանապարհներ, պետական արգելոցում և պետական արգելավայրերում էկոտուրիզմի զարգացման նպատակով մշակվել և իրականացվել են համապատասխան ծրագրեր: Նախորդ տարվա համեմատ նշված ծրագրի ծախսերը փոփոխություն չեն կրել:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Սևանա լճի բնապահպանական վարկային ծրագրի գծով կատարվել են 697.9 մլն դրամի ծախսեր, որից 528.7 մլն դրամը հատկացվել է վարկային միջոցներից, 169.2 մլն դրամը՝ ՀՀ կառավարության կողմից: Նշված ծախսերը կատարվել են 43.5%-ով՝ պայմանավորված այն հանգամանքով, որ աշխատանքները կատարվել են նաև դրամաշնորհային միջոցների հաշվին: ՀՀ-ի և ՎԶԵԲ-ի միջև կնքված վարկային համաձայնագրի հիման վրա շարունակվել են Գավառ, Վարդենիս, Մարտունի, Ջերմուկ և Սևան քաղաքների կոյուղու ցանցերի վերանորոգման, ինչպես նաև Գավառ, Վարդենիս, Մարտունի քաղաքներում կոյուղու մաքրման կայանի կառուցման աշխատանքները, որոնք կրում են շարունակական բնույթ: Ծրագրի սկզբից իրականացվել են Գավառի, Մարտունու, Վարդենիսի, Սևանի, Ջերմուկի կոյուղու ցանցերի 26 կմ երկարությամբ վերանորոգման աշխատանքներ: Շարունակվում են Գավառի, Մարտունու, Վարդենիսի կոյուղու մաքրման կայանների կառուցման աշխատանքները, որոնք իրականացվել են մոտ 50%-ով: 2010 թվականի համեմատ Սևանա լճի բնապահպանական վարկային ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի ցածր կատարողականը կապված է շինարարական աշխատանքների փաստացի կատարված ծավալների, ինչպես նաև վարկային միջոցների օգտագործման ժամկետի հետաձգման հետ:

Աբու-Դաբիի Զարգացման հիմնադրամի աջակցությամբ իրականացվող Արփա-Սևան թունելի հիմնանորոգման վարկային ծրագրի շրջանակներում իրականացվել են 2.8 մլրդ դրամի ծախսեր,

որից 825.3 մլն դրամը հատկացվել է վարկային միջոցներից, 2 մլրդ դրամը՝ ՀՀ կառավարության կողմից, ապահովելով ծրագրի 100.6% կատարողական:

ՀՀ-ի և Աբու Դաբիի զարգացման հիմնադրամի միջև 2007 թվականի դեկտեմբերի 12-ին կնքվել է Արփա-Սևան թունելների վերականգնման ծրագրի ֆինանսավորման վարկային համաձայնագիր: Ծրագրով իրականացման ժամկետ է սահմանված մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը: Ծրագրի նպատակն է գետերից ջրի մակարդակի բարձրացման և բնապահպանական կայունության պահպանման նպատակով Սևանա լիճ ջուր տեղափոխող 48 կմ երկարությամբ Արփա-Սևան հիդրոհամակարգային որոշ հատվածների վերականգնումը, վերանորոգումը և շինարարությունը: 2011 թվականի ընթացքում իրականացվել են 0.744 կմ երկարությամբ հիմնանորոգման աշխատանքներ: Ծրագրի ամբողջական իրականացումը հնարավորություն կընձեռի անվտանգ և անխափան շահագործել Որոտան-Արփա-Սևան հիդրոտեխնիկական համալիրը, ինչպես նաև ապահովել Սևանա լիճ տեղափոխվող ջրի նախագծային ծավալը՝ տարեկան շուրջ 450 մլն խմ:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Սևանա լճի բնապահպանական դրամաշնորհային ծրագրի գծով իրականացվել են 780.9 մլն դրամի ծախսեր, որից 478.9 մլն դրամը հատկացվել է վարկային միջոցներից, 302 մլն դրամը՝ ՀՀ կառավարության կողմից: Ծրագրի 42.8% կատարողականը պայմանավորված է այն հանգամանքով, որ դրամաշնորհային միջոցների օգտագործումը սկսվել է 2011 թվականի 4-րդ եռամսյակից:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող «Ինժեներիա, նախագծում և պայմանագրերի վերահսկողություն» դրամաշնորհային ծրագրի գծով իրականացվել են 159.9 մլն դրամի ծախսեր՝ 52.1%-ով գերազանցելով ծրագրային ցուցանիշը: Ծրագրի շրջանակներում «Ֆիխտներ» խորհրդատվական ընկերության կողմից մատուցվել է տեխնիկական աջակցություն խորհրդատվական ծառայության տեսքով: Համաձայն կնքված խորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանագրի՝ նշված ծրագիրը 2011 թվականին ավարտվել է:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող «Հանրային մասնավոր համագործակցություն» դրամաշնորհային ծրագրի ծախսերը կազմել են 76.1 մլն դրամ, 29.4%-ով գերազանցելով ծրագրային ցուցանիշը: Ծրագրի շրջանակներում կնքված խորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանագրով «Ավագ Սոյուշնս» խորհրդատվական ընկերության կողմից մատուցվել է տեխնիկական աջակցություն խորհրդատվական ծառայության տեսքով: 2011 թվականի ընթացքում մատուցված ծառայությունների դիմաց Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի կողմից համաձայն մասհանման հայտերի վճարվել է 65.7 մլն դրամ, իսկ ՀՀ կառավարության համաֆինանսավորման միջոցներից

վճարվել է ԱԱՀ՝ 10.4 մլն դրամ: Համաձայն կնքված խորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանագրի՝ նշված ծրագիրն ավարտվել է:

«Արևիկ» ազգային պարկի պահպանության, պարկում գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների կատարման ծառայություններին հատկացվել է 22.4 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակներում 34401.8 հա տարածքի վրա իրականացվել են բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության, բնության ժառանգության պահպանության աշխատանքներ, ինչպես նաև «Կլիմայի փոփոխության հետևանքների նկատմամբ Հայաստանի լեռնանտառային էկոհամակարգերի հարմարվողականության բարձրացում» ծրագրի շրջանակներում ազգային պարկի Նյուվադի-Շվանիձոր տեղամասում վնասատուներով վարակված և հրդեհված անտառային տարածքի (կաղնուտի) 18 հա տարածքում անտառվերականգնման աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծրագրի ծախսերը փոփոխություն չեն կրել:

Բնապահպանական ծրագրերի մշակման և իրականացման ծառայություններին հատկացվել է 10.5 մլն դրամ, որը նույնպես ամբողջությամբ օգտագործվել է: Նախորդ տարվա համեմատ ծախսերի 66.2%-ով նվազումը պայմանավորված է «Բնապահպանական ծրագրերի կենտրոն» ՊՈԱԿ-ի վերակազմակերպման գործընթացով, որը լուծարվել է, իսկ գործառույթներն անցել են նրա իրավահաջորդ հանդիսացող՝ ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկին: Այդ կապակցությամբ տվյալ ծախսերի ծրագիրը նույն չափով կրճատվել է:

«Արփի լիճ» ազգային պարկի պահպանության ծառայություններին հատկացվել է շուրջ 10 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակներում իրականացվել են ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության, այդ տարածքներում գիտական ուսումնասիրությունների և անտառտնտեսական աշխատանքների գծով 2011 թվականին ծրագրված միջոցառումները: Մասնավորապես՝ ՀՀ կառավարության կողմից հաստատվել են «Արփի լիճ» ազգային պարկի սահմանների նկարագիրը, հատակագիծը, տարածքի չափը և հողերի նպատակային նշանակությունը, ինչպես նաև «Արփի լիճ» ազգային պարկի 2011-2015 թվականների կառավարման պլանը: «Արփի լիճ» ազգային պարկի գլխավոր մասնաշենքի համալիրի և այցելուների կենտրոնի՝ 2011 թվականի համար նախատեսված բոլոր շինարարական աշխատանքները կատարվել են: Ընդհանուր առմամբ իրականացվել են կառույցների արտաքին և ներքին հարդարման և բարեկարգման աշխատանքները: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն ավելացել են 2.6 անգամ:

Շրջակա միջավայրի պաշտպանության գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ դասի ծախսերը հաշվետու տարում կազմել են շուրջ 8 մլն դրամ կամ ծրագրվածի 79.5%-ը, որն

ամբողջությամբ տրամադրվել է Սևանա լճի ջրահավաք ավազանում հանքավայրերի շահագործման արդյունքում կուտակված թափոնների գույքագրման ծառայություններին: Ցածր կատարողականը պայմանավորված է ծրագրի իրականացման շրջանակներում անցկացված մրցույթների արդյունքում միջոցների տնտեսմամբ: Ծրագրի շրջանակներում իրականացվել է Սևանա լճի վրա արտադրական թափոնների բացասական ազդեցության գնահատման նպատակով լճի ջրահավաք ավազանում գտնվող կուտակված թափոնների գույքագրում (թվով 54 հանքավայրեր, այդ թվում՝ երեք մետաղային հանքավայրեր): Կատարվել է ՀՀ Գեղարքունիքի, Սյունիքի և Վայոց Ձորի մարզերի մետաղական և ոչ մետաղական օգտակար հանածոների հանքավայրերի ֆոնդային նյութերի հավաքագրում, փաստացի տեղազննում, կազմվել են մարկշեյդերական չափագրման իրավիճակային քարտեզները՝ շահագործված տարածքների և թափոնների լցակույտերի տեղադրմամբ: Ներկայացվել է տեղեկատվություն հանքավայրերի երկրաբանական կառուցվածքի, օգտակար հանածոների որակական և քիմիական հատկությունների վերաբերյալ: Կատարվել է ուսումնասիրություն հանքավայրերի մնացորդային պաշարների վերաբերյալ: 2011 թվականին ծրագիրը պետական բյուջեից ֆինանսավորվել է առաջին անգամ:

Այլ դասերին չպատկանող շրջակա միջավայրի պաշտպանության դասի ծախսերը հաշվետու տարում կազմել են ավելի քան 1.2 մլրդ դրամ կամ ծրագրվածի 75.6%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Հարավային Կովկասի տարածաշրջանում բնապահպանական դրամաշնորհային ծրագրի ցածր կատարողականով: Նախորդ տարվա համեմատ տվյալ դասի ծախսերն աճել են 6%-ով:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման (նախարարությունների աշխատակազմերի մասով) ծախսերը կազմել են 828.8 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 97.4%-ը: Միջոցները հատկացվել են ՀՀ բնապահպանության նախարարության պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել են 6.5%-ով:

«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն բնապահպանական ծրագրերի իրականացման համար ՀՀ համայնքներին տրամադրվել է 151.2 մլն դրամի սուբվենցիա կամ ծրագրվածի 94.3%-ը: ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի կատարման շրջանակներում բնապահպանական ծրագրերի իրականացման համար սուբվենցիաներ են հատկացվել 11 համայնքների:

Բնապահպանական ոլորտի գծով վերլուծական տեղեկատվական ծառայությունների իրականացման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 17 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում իրականացվել է ՀՀ բնապահպանության նախարարության տեղային համակարգչային ցանցի և առկա համակարգչային տեխնիկայի

ծրագրային ու տեխնիկական սպասարկումը և վերանորոգումը: Նախարարության համակարգում ապահովվել է համակարգչային ցանցի, համակարգչային տեխնիկայի, ինտերնետային կապի, էլեկտրոնային կապի, էլեկտրոնային փոստի անխափան աշխատանքը: Ապահովվել է ՀՀ բնապահպանության նախարարության պաշտոնական ինտերնետային կայքի անխափան գործունեությունը, որը ներկայացված է երեք լեզվով: Բնապահպանական տեղեկատվությունը տրամադրվել է ըստ պահանջի և ինտերնետային կայքերի միջոցով: Տեղեկատվությունը տրամադրվում է նաև «Բնապահպանական տեղեկատվության հասարակական Օրհուս կենտրոն»-ի միջոցով: Նախորդ տարվա համեմատ բնապահպանական ոլորտի գծով վերլուծական տեղեկատվական ծառայությունների ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Հայաստանի Հանրապետության տարածքի ստորերկրյա քաղցրահամ ջրերի հիդրոերկրաբանական մոնիթորինգի ծառայություններին 2011 թվականին ՀՀ պետական բյուջեից հատկացվել է 18.1 մլն դրամ՝ ամբողջությամբ կատարելով ծրագրային ցուցանիշը: Հաշվետու տարում հիդրոերկրաբանական մոնիթորինգի վարման աշխատանքներն իրականացվել են Ախուրյանի, Սևան-Հրազդանի, Արարատյան, Հյուսիսային, Հարավային ավազանային կառավարման տարածքների սահմաններում: Նշված տեղամասերի սահմաններում հորատանցքերի և բնաղբյուրների ընտրությունը կատարվել է արխիվային նյութերի հավաքման, մշակման, վերլուծության, ինչպես նաև դաշտային հետազոտությունների ամփոփման արդյունքում: Աշխատանքների և նրանցից ստացված արդյունքների հիման վրա կատարվել են համապատասխան վերլուծություններ: Նախորդ տարվա համեմատ նշված ծրագրի ծախսերը գրեթե փոփոխություն չեն կրել:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Հարավային Կովկասի տարածաշրջանում բնապահպանական դրամաշնորհային ծրագրի ծախսերը կազմել են 189.9 մլն դրամ կամ նախատեսվածի 35%-ը, որից 167.2 մլն դրամը կազմել են դրամաշնորհային միջոցները, 22.7 մլն դրամը՝ ՀՀ կառավարության համաֆինանսավորումը: Ցածր կատարողականը պայմանավորված է այն հանգամանքով, որ ծրագրի կատարումը երկարաձգվել է մինչև 2012 թվականի հոկտեմբերի 30-ը: Ծրագրի շրջանակներում շարունակվել է Հարավային Կովկասի տարածաշրջանում էկոտարածաշրջանային բնապահպանական ծրագիրը, Հայաստանի Ջավախքի (Աշոցքի) տարածաշրջանում պահպանվող տարածքների ստեղծման ծրագրի իրականացումը: Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են «Արփի Լիճ» ազգային պարկի պահպանման գոտու տնտեսական զարգացման պլանից առաջնահերթության կարգով ընտրված ենթածրագրերը ներդրումների հետևյալ ուղղություններով՝

- Համայնքների զարգացման փոքր ծրագրերի գծով Բերդաշեն համայնքի գյուղապետարանի և Գառնարիճ համայնքի դպրոցի շենքերում հիմնադրվել են Բերդաշեն և Գառնարիճ համայնքների

զարգացման և կրթական կենտրոնները, Մեծ Սեպասար համայնքում տուրիստական կենտրոնի ստեղծման նպատակով հաշվետու ժամանակահատվածում ձեռք է բերվել տուրիստական կենտրոնի կառույցը, Սիզավետ համայնքի գյուղապետարանի տարածքում հիմնադրվել է համայնքի զարգացման և կրթական կենտրոնը,

- Համայնքներին խմելու ջրի մատակարարման բարելավում, տեղական անասնաբուծության և մսի մշակման բարելավում, ինչպես նաև մեղվապահության բարելավման ենթածրագրերով իրականացվել են դրանց կատարման համար անհրաժեշտ նախապատրաստական բնույթի միջոցառումներ: Վերոգրյալ ենթածրագրերով նախատեսված աշխատանքները կիրականցվեն 2012 թվականին:

Սևանա լճի շրջակայքում նոր անտառաշերտի հիմնման ծառայությունների իրականացման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է 14.9 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 99.5% կատարողական: Ծրագրի շրջանակներում իրականացվել է «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի և հարակից համայնքների վարչական սահմաններում անտառային շերտերի ստեղծման համար հնարավոր տարածքների բացահայտում և համայնքներում քննարկումների կազմակերպում, անտառաշերտերի հիմնման նախատեսվող տարածքների չափագրում և GIS համակարգով քարտեզների պատրաստում, անտառաշերտերի հիմնման տարածքների տեխնոլոգիական քարտերի պատրաստում, տնկման սխեմաների մշակում, ցանկապատի կառուցման հաշվարկ և ոռոգման հնարավորությունների բացահայտում: Մշակվել է «Սևանա լճի շրջակայքում նոր անտառաշերտի հիմնման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որը ներկայացվել է ՀՀ Նախագահին առընթեր Սևանա լճի հիմնահարցերի հանձնաժողովի քննարկմանը: 2011 թվականին ծրագիրը պետական բյուջեից ֆինանսավորվել է առաջին անգամ:

«Բնապահպանական նպատակային ֆոնդ» ծրագրի շրջանակներում ՀՀ բնապահպանության նախարարության արտաբյուջետային միջոցների հաշվին կատարվել են 12.5 մլն դրամի ծախսեր՝ կազմելով նախատեսվածի 50%-ը: Միջոցները տրամադրվել են Արտաշատի քաղաքապետարանին, որի կողմից նախատեսված աշխատանքների ցածր կատարողականը պայմանավորված է եղել եղանակային պայմաններով: Կնքված սուբվենցիայի պայմանագրի համաձայն՝ 12.5 մլն դրամը վճարվել է որպես կանխավճար, որից 6 մլն դրամը նպատակաուղղվել է Արտաշատի լճի և նրա շրջակա տարածքի էկոլոգիական բարելավման միջոցով բնապահպանական ռիսկերի նվազեցման և հանգստյան գոտու ստեղծման համար նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերմանը:

Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ

2011 թվականին *բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների* բնագավառին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է ավելի քան 43.8 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրի 91.8%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ջրամատակարարման ոլորտում արտաքին աջակցությամբ իրականացվող որոշ ծրագրերի ցածր կատարողականով: Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների բաժնի ծախսերը 2.4%-ով կամ 1 մլրդ դրամով գերազանցել են նախորդ տարվա ցուցանիշը՝ հիմնականում պայմանավորված արտաքին աջակցությամբ իրականացվող որոշ ծրագրերի, ինչպես նաև բնակարանային շինարարության և խմելու ջրի մատակարարման ծառայությունների սուբսիդավորման ծախսերի աճով:

2011 թվականին *բնակարանային շինարարության* ոլորտին տրամադրվել է շուրջ 25.8 մլրդ դրամ՝ ամբողջությամբ կատարելով ծրագիրը: 2010 թվականի համեմատ տվյալ ծախսերն աճել են 2.2%-ով կամ 550.4 մլն դրամով: Գումարը հատկացվել է աղետի գոտում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքներին բնակարաններով ապահովելու նպատակով: Ծրագրի շրջանակներում կատարվել են Գյումրիում 1200 բնակարանների կառուցման, Անի թաղամասում տարածքների (400 բնակարանների) կառուցապատման, Ախուրյան գյուղում 182 բնակարանների և Լոռու մարզի Սպիտակ քաղաքում 354 բնակարանների շինարարության աշխատանքները:

Բաժնի ծախսերի 36.4%-ն ուղղվել է *ջրամատակարարման* խմբի ծրագրերի ֆինանսավորմանը: Նշված ծախսերը կազմել են ավելի քան 15.9 մլրդ դրամ կամ տարեկան ծրագրի 80.3%-ը, որը հիմնականում պայմանավորված է Ֆրանսիայի հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրին տրամադրվող տեխնիկական աջակցության վարկային ծրագրի շրջանակներում նախատեսված միջոցները չօգտագործելու հանգամանքով, ինչպես նաև Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ Շիրակի մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման դրամաշնորհային ծրագրի ցածր կատարողականով:

Հաշվետու տարում 126.7 մլն դրամ է տրամադրվել ջրային տնտեսության ոլորտում «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման» ծրագրի շրջանակներում, որը հատկացվել է ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի պահպանմանը: Նշված ծախսերի ծրագիրը կատարվել է 95.9%-ով՝ կապված որոշակի ծառայությունների և նյութական արժեքների ձեռք բերման ծախսերի տնտեսման հետ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 3.8%-ով, որը հիմնականում պայմանավորված է աշխատավարձի բնականոն աճով, կապի ծառայության և տրանսպորտային միջոցների պահպանման ծախսերի աճով:

Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 4.3 մլրդ դրամ (վարկային միջոցներից՝ 3.6 մլրդ դրամ, ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշվին՝ 734.2 մլն դրամ), որը 12.8%-ով գերազանցել է նախատեսված ցուցանիշը: Ծրագիրը բաղկացած է երկու հիմնական բաղադրիչներից՝

- համայնքային ենթակառուցվածքների վերականգնում և բարելավում,
- կառավարման բարելավում և կարողությունների հզորություն:

2011 թվականին ծրագրի շրջանակներում շարունակվել են շենքերի և շինությունների վերանորոգման, Հայաստանի գյուղերում և քաղաքներում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավման աշխատանքները, խորհրդատուի և ԾԻԳ-ի պահպանման ծախսերը: Ծրագրով նախատեսված աշխատանքները կրում են շարունակական բնույթ: 2011 թվականի ընթացքում թվով 52 համայնքներում իրականացվել են 211 կմ բաշխիչ ցանցի ջրագծի և անհատական տնային մուտքագծերի կառուցման աշխատանքներ:

Հաշվետու տարում ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվել է «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի խմելու ջրի մատակարարման ծառայությունների արդյունքում առաջացող ֆինանսական ճեղքվածքի մարմանն ուղղված սուբսիդավորումը, որի գծով նախատեսված 811.6 մլն դրամն ամբողջությամբ տրամադրվել է: 2010 թվականի համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

ՀՀ 2011 թվականի պետական բյուջեով ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի հիմնանորոգման ծրագրի գծով օգտագործվել է ավելի քան 207.9 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 75.6%-ը: Շեղումը բացատրվում է նրանով, որ ծառայությունները մատուցվել են ըստ կնքված պայմանագրերի: ՀՀ 2011 թվականի պետական բյուջեով նախատեսվել էր ՀՀ Արագածոտնի մարզի «Իրինդ-Արտենի» համակարգի բարելավում (գլխավոր ջրատարի, ՕԿՋ-ների ու ջրագծերի վերանորոգում և տնային միացումների իրականացում), ՀՀ Արմավիրի մարզի Քարակերտ գյուղի ջրամատակարարման բարելավում (ՕԿՋ-ի, քլորակայանի ու ջրագծերի վերանորոգում և տնային միացումների իրականացում) և ՀՀ Շիրակի մարզի Հայկավանի կոյուղու դիտահորերի վերանորոգում, Աղինի և Առափիի նոր կոյուղագծերի կառուցում:

ՀԲ աջակցությամբ իրականացվող՝ Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման վարկային ծրագրի շրջանակներում կատարվել են շուրջ 1.5 մլրդ դրամի ծախսեր (վարկային միջոցներից՝ 1.3 մլրդ դրամ, ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշվին՝ 167.8 մլն դրամ)՝ 28.7%-ով գերազանցելով ծրագրված հատկացումները: Շեղումը պայմանավորված է այն հանգամանքով, որ ծրագրի շրջանակներում կնքված պայմանագրի ժամկետը 2011 թվականի փետրվար ամսից երկարաձգվել է մինչև դեկտեմբերի 31-ը, ինչպես նաև տարվա ընթացքում ՓՀԻ-ի (SDR)՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ արժևորման հետևանքով շինարարական աշխատանքների և խորհրդատվական

ծառայությունների գծով ծախսերի ավելացմամբ: Ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- 50-1000մմ տրամագծի ջրագծերի 5743 գծամետր ընդհանուր երկարությամբ հատվածների կառուցում և վերակառուցում, ջրագծերի փոխարինում,
- 200-1200մմ տրամագծի կոյուղագծերի 1157 գծամետր ընդհանուր երկարությամբ հատվածների վերակառուցում և նոր գծերի անցկացում,
- Արզնիի պոմպակայանների վերակառուցում, ժամանակակակից նոր տիպի պոմպերի տեղադրում, նոր կապտաժների կառուցում,
- խմելու ջրագծերի թվով 27 դիտահորերի կառուցում և վերակառուցում,
- կոյուղագծերի թվով 8 հատ դիտահորերի կառուցում,
- 26 հատ օրվա կարգավորիչ ջրամբարների (ՕԿՋ-ների) վերականգնում և վերանորոգում,
- բաշխիչ ցանցում 275 հատ նոր փականների տեղադրում:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ Շիրակի մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման դրամաշնորհային ծրագրի գծով օգտագործվել է 386.1 մլն դրամ դրամ (դրամաշնորհային միջոցներից՝ 255.6 մլն դրամ, ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշվին՝ 130.5 մլն դրամ)՝ կազմելով նախատեսվածի 20.1%-ը: Շեղումը պայմանավորված է նրանով, որ վճարումները կատարվել են նաև չօգտագործված վարկային միջոցներից՝ 805.6 մլն դրամի չափով, որոնք պետք է ամբողջովին իրացվեին 2010 թվականին, սակայն որոշակի օբյեկտիվ գործոններից ելնելով (եղանակային պայմաններ)՝ աշխատանքներն ավարտին են հասցվել 2011 թվականին: Ծրագրի դրամաշնորհային միջոցներն ուղղված են ՀՀ Շիրակի մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնմանը: Ծրագրով կնքված պայմանագրերի հիման վրա իրականացվող աշխատանքները համարվում են վարկային միջոցների շարունակական մաս:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երրորդ ծրագրի շրջանակներում 2011 թվականին կատարվել են շուրջ 21.6 մլն դրամի ծախսեր, որոնք 20.8%-ով գերազանցել են ծրագրված հատկացումները: Ծրագրի հիմնական նպատակներից է բարելավել աղքատ համայնքներում և ամենախոցելի խմբերի համար համայնքային ենթակառուցվածքների որակն ու մատչելիությունը՝ ի արձագանք բացահայտվող կարիքների: Տվյալ ենթածրագիրն ընդգրկում է խմելու ջրի մատարակարման տեղական համակարգերի և տեղական նշանակության ոռոգման համակարգերի կառուցումն ու վերակառուցումը: Ծրագրի ավարտը տեղափոխվել է 2012 թվական:

2011 թվականին խմելու ջրի մատակարարման ծառայությունների սուբսիդավորման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է 279.7 մլն դրամ՝ 70%-ով ապահովելով ծրագրված

ցուցանիշը: Շեղումը բացատրվում է նրանով, որ վճարումներն իրականացվել են ենթավարկային պայմանագրում 2010 թվականին կատարված փոփոխություններով նախատեսված սուբսիդիայի սցենարին համապատասխան: Հատկացված միջոցներն ուղղվել են «Նոր Ակունք» ՓԲԸ-ի ընթացիկ գործունեության արդյունքում առաջացող ֆինանսական ճեղքվածքի և Գերմանիայի զարգացման վարկերի բանկի կողմից տրամադրված վարկի սպասարկման ծախսերի մարմանը, որը 2011 թվականին կազմել է 233.3 մլն դրամ: Վերջինիս արդյունքում խմելու ջրի մատակարարման ծառայությունների սուբսիդավորման ծախսերը 10.7 անգամ գերազանցել են նախորդ տարվա ցուցանիշը:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող՝ ՀՀ Շիրակի, ՀՀ Լոռու և ՀՀ Արմավիրի մարզերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի մասնավոր կառավարման հայեցակարգերի ներդրման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է ավելի քան 529.9 մլն դրամ կամ նախատեսվածի 82.2%-ը: Շեղումը պայմանավորված է նրանով, որ 2011 թվականի տարեվերջին ներկայացված մասհանման հայտի գումարի վճարումը կատարվել է 2012 թվականի փետրվար ամսին: 2011 թվականի ընթացքում մատուցված ծառայությունների դիմաց KFW բանկի կողմից տրամադրվել է ավելի քան 432.7 մլն դրամ, իսկ ՀՀ կառավարության համաֆինանսավորման միջոցներից վճարվել է ԱԱՀ՝ շուրջ 97.2 մլն դրամ գումարով:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող համայնքային ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման ծրագրի շրջանակներում կատարվել են ավելի քան 3.7 մլրդ դրամի ծախսեր (վարկային միջոց՝ 2.9 մլրդ դրամ, ՀՀ կառավարության համաֆինանսավորում՝ 836.3 մլն դրամ)՝ 90.7%-ով կատարելով նախատեսված ցուցանիշը: Շեղումը պայմանավորված է նրանով, որ խորհրդատուի կողմից մատուցված ծառայությունների դիմաց վճարումները կատարվել են 2012 թվականի սկզբին: Ծրագրի շրջանակներում 2011 թվականին իրականացվել են Հրազդան քաղաքի ջրամատակարարման համակարգի բարելավման աշխատանքներ:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ Շիրակի մարզի (Գյումրու) ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման ծրագրի երկրորդ փուլի շրջանակներում կատարվել են շուրջ 852.7 մլն դրամի ծախսեր (վարկային միջոցներից՝ 843.1 մլն դրամ, ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշվին՝ 9.6 մլն դրամ)՝ 71.6%-ով կատարելով նախատեսված ցուցանիշը: Ծրագրի երկրորդ փուլի աշխատանքներն սկսվել են 2010 թվականի սեպտեմբեր ամսից, որը համարվում է Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ Շիրակի մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման վարկային ծրագրի շարունակությունը: 2011 թվականին վարկային

ծրագրի 1-ին փուլի շինարարական աշխատանքներին զուգահեռ կատարվել է նաև 2-րդ փուլի աշխատանքների ֆինանսավորում: Շեղումը պայմանավորված է նրանով, որ մրցույթի, հետագայում էլ հաղթող ընկերության հետ պայմանագրի կնքման համար KFW բանկի հետ համաձայնեցման ձգձգման հետևանքով աշխատանքները զգալիորեն ուշ են մեկնարկել:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող՝ ՀՀ Լոռու (Վանաձորի) մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման վարկային ծրագրի երկրորդ փուլի շրջանակներում կատարվել են շուրջ 2.1 մլրդ դրամի ծախսեր (վարկային միջոցներից՝ 1.7 մլրդ դրամ, ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշվին՝ 408.2 մլն դրամ)՝ 87.8%-ով կատարելով նախատեսված ցուցանիշը: Ծրագրի երկրորդ փուլն ուժի մեջ է մտել 2010 թվականի սեպտեմբեր ամսից և համարվում է Գերմանիայի զարգացման վարկային բանկի աջակցությամբ իրականացվող՝ ՀՀ Լոռու մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման դրամաշնորհային ծրագրի շարունակությունը: Վարկային ծրագրի 2-րդ փուլը և դրամաշնորհային ծրագիրը սերտորեն կապված են միմյանց հետ: ՀՀ Լոռու մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման վարկային ծրագրի երկրորդ փուլի շրջանակներում վարկային միջոցներից վճարում է կատարվել դրամաշնորհային գումարների չօգտագործված միջոցները սպառվելուց հետո: Շեղումը պայմանավորված է եղանակի կտրուկ վատթարացման հետևանքով բարձրադիր գոտիներում գտնվող ջրաղբյուրների վրա կատարվող շինարարական աշխատանքների հետաձգմամբ:

Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող՝ Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրին տրամադրվող տեխնիկական աջակցության վարկային ծրագրի գծով 2011 թվականի պետական բյուջեի ճշտված ծրագրով նախատեսվել էին 2.1 մլրդ դրամի ծախսեր, որոնք սակայն չեն կատարվել: Ծրագիրը չի կատարվել՝ պայմանավորված Ֆրանսիայի Հանրապետության կառավարության և ՀՀ կառավարության միջև պայմանագրային փոփոխությունների շուրջ բանակցությունների ընթացքով:

Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող՝ Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրին տրամադրվող տեխնիկական աջակցության դրամաշնորհային ծրագրի գծով 2011 թվականի պետական բյուջեի ճշտված ծրագրով նախատեսված 298.1 մլն դրամի միջոցները (դրամաշնորհային միջոցներից՝ 248.4 մլն դրամ, ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշվին՝ 49.7 մլն դրամ) ամբողջությամբ օգտագործվել են: Ծրագրի շրջանակներում կատարվել են հետևյալ աշխատանքները՝

- համընկնության բացառման երաշխավորում և Զարգացող երկրների պահուստային հիմնադրամի ծրագրի ֆինանսական իրագործելիության վերլուծություն,

- Աէրացիա կեղտաջրերի մաքրման կայանի բարելավման համար նախնական հետազոտում և նախնական նախագծում (առաջնային մաքրում և տիղմի խտացում),
- Երևան քաղաքի հյուսիսային շրջանում խմելու ջրի բաշխման ցանցի վերահսկման համակարգի իրականացման ծրագրի կառավարում (պոմպակայանների հզորացում, տնային պոմպերի կառուցում, 2 հորատանցքերի ավտոմատացում և ընդգրկուն մոնիտորինգի ու վերահսկման համակարգի տեղադրում ցանցի վրա),
- խմելու ջրի ցանցի և կեղտաջրերի հիմնական կոլեկտորների բարելավում:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող՝ ՀՀ Շիրակի մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման վարկային ծրագրի գծով իրականացվել են 805.6 մլն դրամի ծախսեր՝ 36.1%-ով գերազանցելով ծրագրված հատկացումները:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող՝ ՀՀ Լոռու մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման դրամաշնորհային ծրագրի գծով գրեթե ամբողջությամբ (99.9%-ով) օգտագործվել են նախատեսված միջոցները՝ կազմելով 73.1 մլն դրամ: 2011 թվականի ընթացքում շարունակվել են կատարվել ՀՀ Լոռու մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման աշխատանքները, որոնք կրում են շարունակական բնույթ: Վերոհիշյալ երկու ծրագրերի շրջանակներում նախատեսված աշխատանքները պետք է ավարտվեին 2010 թվականին, սակայն որոշակի օբյեկտիվ գործոններից ելնելով (եղանակային պայմաններ)՝ աշխատանքներն ավարտվել են 2011 թվականին:

2011 թվականին պետական բյուջեի ծախսերի՝ *փողոցների լուսավորման* խմբում համայնքների բյուջեներին նպատակային հատկացումների՝ սուբվենցիաների տրամադրման համար նախատեսված շուրջ 1.7 մլրդ դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Միջոցներն ուղղվել են Երևան քաղաքի արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքների իրականացմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

Այլ դասերին չպատկանող բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների դասում նախատեսված՝ գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման (նախարարությունների աշխատակազմերի մասով) ծրագրի շրջանակներում կատարվել են շուրջ 403 մլն դրամի ծախսեր՝ 99.9%-ով ապահովելով տարեկան ծրագրային հատկացումների ծավալը: Միջոցները հատկացվել են ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 3.7%-ով, ինչը պայմանավորված է «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի ստեղծման հետ կապված ծախսերի կրճատմամբ:

Առողջապահություն

2011 թվականին ՀՀ պետական բյուջեի միջոցներով առողջապահության ոլորտում կատարվել են ավելի քան 63.3 մլրդ դրամի ծախսեր՝ ապահովելով ծրագրի 95.7%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի, այդ թվում՝ ՀՀ առողջապահության նախարարության արտաբյուջետային միջոցներով իրականացվող ծրագրերի ցածր կատարողականով:

Բաժնի ծախսերի 42.5%-ն ուղղվել է հիվանդանոցային ծառայությունների, 35.6%-ը՝ արտահիվանդանոցային ծառայությունների, 10.8%-ը՝ այլ դասերին չպատկանող առողջապահական ծրագրերի, 6.4%-ը՝ բժշկական ապրանքների, սարքերի և սարքավորումների ձեռքբերման և 4.7%-ը՝ հանրային առողջապահական ծառայությունների ֆինանսավորմանը: Նախորդ տարվա համեմատ առողջապահության ոլորտի ծախսերն աճել են 12.8%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է երեխաներին բժշկական օգնության և շտապ բժշկական օգնության ծառայությունների ծախսերի աճով:

Հաշվետու տարում *դեղագործական ապրանքների* ձեռքբերման ծախսերը կազմել են շուրջ 4.1 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 96.5% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է ՀՀ առողջապահության նախարարության արտաբյուջետային միջոցներով իրականացվող՝ տուբերկուլյոզի դեմ պայքարի Ազգային ծրագրի ուժեղացման ծախսերի ցածր կատարողականով:

Ամբուլատոր-պոլիկլինիկական, հիվանդանոցային բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց դեղորայքի տրամադրման նպատակով տրամադրվել է շուրջ 3.8 մլրդ դրամ՝ 99.7%-ով ապահովելով ծրագիրը: Միջոցներն օգտագործվել են սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված ազգաբնակչությանը դեղորայքով ապահովելու նպատակով: 2010 թվականի համեմատ նշված ծախսերն ավելացել են 4.3%-ով, որը պայմանավորված է սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված բնակչության թվաքանակի աճով:

Պետական պահպանության ծառայությանը դեղորայքի տրամադրման նպատակով նախատեսված 1.1 մլն դրամը գրեթե ամբողջությամբ օգտագործվել է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:

Իմունականխարգելման ազգային ծրագրի ծառայություններին աջակցության շրջանակներում ՀՀ առողջապահության նախարարության արտաբյուջետային միջոցներից ծախսվել է շուրջ 3.3 մլն դրամ՝ նախատեսված 5.3 մլն դրամի դիմաց: Ցածր կատարողականը պայմանավորված է նրանով, որ այլ աղբյուրներից որպես նվիրատվություն ստացվել են առողջապահական և լաբորատոր նյութեր:

2011 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում կատարվել են ներքոհիշյալ աշխատանքները.

- ներքին գործուղման ծախսերն օգտագործվել են մարզերում իմունականխարգելման գործընթացի ընտրանքային ուսումնասիրությունների իրականացման համար,
- Իմունականխարգելման ազգային ծրագրի միջացառումները լիարժեք կազմակերպելու և իրականացնելու համար ձեռք են բերվել շարժական համակարգիչներ,
- ծրագրի իրականացման արդյունքում դիտվել է ծրագրի ոչ ֆինանսական ցուցանիշների, մասնավորապես՝ պատվաստումներում նպատակային խմբերի երեխաների ընդգրկման ցուցանիշների բարելավում:

«Տուբերկուլյոզի դեմ պայքարի Ազգային ծրագրի ուժեղացում» արտաբյուջետային ծրագրի շրջանակներում կատարվել են 278.7 մլն դրամի ծախսեր՝ կազմելով նախատեսվածի 67.2%-ը: Շեղումը պայմանավորված է կառավարչական ծառայությունների, ընթացիկ նորոգման և պահպանման ծառայությունների, ինչպես նաև այլ մեքենաների և սարքավորումների համար նախատեսված ծախսերի տնտեսմամբ: Ծրագրի շրջանակներում իրականացվել են ներքոհիշյալ աշխատանքները.

- կազմակերպվել են հակատուբերկուլյոզային ծառայությունների մասնագետների վերապատրաստման դասընթացներ,
- բազմադեղակայուն տուբերկուլյոզի բուժման համար ներմուծվել են անհրաժեշտ քանակի դեղորայք,
- իրականացվել է տուբերկուլյոզով հիվանդներին սոցիալական աջակցության տրամադրում, որի արդյունքում հիվանդներին բաժանվել են սննդային և հիգիենիկ փաթեթներ,
- գնվել են լաբորատոր և վարակի վերահսկման պարագաներ,
- պերիֆերիկ լաբորատորիաներից իրականացվել է խորխի նմուշների տեղափոխում ազգային ռեֆերենս լաբորատորիա,
- տուբերկուլյոզի ազգային գրասենյակի կողմից իրականացվել են ստուգայցեր տուբերկուլյոզային հաստատություններ:

2011 թվականի պետական բյուջեից *արտահիվանդանոցային ծառայությունների* ձեռքբերմանը տրամադրվել է ավելի քան 22.5 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 97.6%-ով կատարում: Արտահիվանդանոցային ծառայությունների ծախսերի 36.5%-ը կամ 8.2 մլրդ դրամը կազմել են ընդհանուր բնույթի, 24.8%-ը կամ շուրջ 5.6 մլրդ դրամը՝ մասնագիտացված բժշկական, 3.6%-ը կամ 815.8 մլն դրամը՝ ստոմատոլոգիական և 35.1%-ը կամ 7.9 մլրդ դրամը՝ պարաբժշկական ծառայությունների ծախսերը:

Արտահիվանդանոցային ծառայությունների խմբում ընդգրկված *ընդհանուր բնույթի բժշկական ծառայությունների* դասի ծախսերը կատարվել են գրեթե ամբողջությամբ՝ 99.6%-ով: Միջոցներն ուղղվել են բնակչության առողջության առաջնային պահպանմանը: Ծրագրի շրջանակներում տեղամասային թերապևտի, տեղամասային մանկաբույժի, ընտանեկան բժշկի, բուժմանկաբարձական կետերի քույրերի, դպրոցների աշակերտներին սպասարկող քույրերի կողմից բժշկական օգնություն և սպասարկում է իրականացվել հանրապետության ամբողջ ազգաբնակչությանը, ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով հաստատված բնակչության խմբերին անվճար և արտոնյալ պայմաններով տրամադրվել է 1.2 մլրդ դրամ ընդհանուր արժեքով դեղորայք: 2010 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 5.7%-ով կամ 446.9 մլն դրամով:

5.6 մլրդ դրամ է օգտագործվել *մասնագիտացված բժշկական ծառայությունների* ձեռքբերման նպատակով՝ 9.1%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը:

Բարձր ռիսկի խմբերում ընդգրկված բնակչության մոտ հիվանդությունների հայտնաբերման, առողջության գնահատման և բուժման ծառայությունների համար օգտագործվել է շուրջ 173 մլն դրամ, որը կատարվել է նախատեսված ամբողջ ծավալով: Ծրագրի շրջանակներում բուժօգնություն է մատուցվել շուրջ 1500 հաշմանդամ երեխաների՝ 2010 թվականի 1100 դիմաց: 2010 թվականի համեմատ նշված ծախսերն ավելացել են 35.2%-ով կամ 45 մլն դրամով:

Հեմոդիալիզի անցկացման ծառայությունների ծախսերը 2011 թվականին կազմել են շուրջ 1.4 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 99.7% կատարողական: Այս ծրագրով պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում 2011 թվականին իրականացվել է 75 հազար սեանս՝ 2010 թվականի 67.7 հազար սեանսի դիմաց: Ծախսերի աճը նախորդ տարվա համեմատ կազմել է 11.4% կամ 140.2 մլն դրամ:

Մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության ծառայություններին 2011 թվականի պետական բյուջեով հատկացվել է ավելի քան 1.2 մլրդ դրամ՝ 99.6%-ով կատարելով ծրագրային ցուցանիշը: Ծրագրի շրջանակներում նախածննդյան և հետծննդյան հսկողություն է իրականացվել հանրապետության շուրջ 50 հազար հղիների նկատմամբ՝ նախորդ տարվա 47 հազարի փոխարեն, ինչպես նաև բուժօգնություն են ստացել գինեկոլոգիական հիվանդություններով կանայք: 2010 թվականի համեմատ նշված ծախսերն ավելացել են 11.9%-ով կամ 131.4 մլն դրամով:

Սպորտային բժշկության և հակադոպինգային հսկողության ծառայություններին տրամադրվել է 71.4 մլն դրամ պետական աջակցություն՝ ամբողջովին ապահովելով նախատեսված ծավալը, որն ուղղվել է «Սպորտային բժշկության և հակադոպինգային հսկողության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին: 2010 թվականի համեմատ նշված ծախսերն ավելացել են 7.8%-ով՝ պայմանավորված աշխատողների թվաքանակի և պահպանության ծախսերի աճով:

Նեղ մասնագիտացված բժշկական օգնության ծառայությունների շրջանակներում հատկացվել է շուրջ 2.6 մլրդ դրամ՝ 99.3%-ով կատարելով ծրագրային ցուցանիշը: Ծրագրի շրջանակներում բուժօգնություն է մատուցվել հանրապետության ամբողջ բնակչությանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 5.5%-ով կամ 135.5 մլն դրամ՝ պայմանավորված աշխատողների աշխատավարձի բարձրացմամբ:

Շարունակական հսկողություն պահանջող և առանձին հիվանդությունների բուժման ծառայություններին տրամադրվել է շուրջ 151.8 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 99.7% կատարողական: Այս ծրագրով պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում 2010 թվականի 9.4 հազար հիվանդի դիմաց 2011 թվականին բուժօգնություն է ստացել 8.6 հազար հիվանդ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը աճել են 7.6%-ով՝ պայմանավորված ծառայության գնի բարձրացմամբ:

Օրթոդոնտոլոգիական բժշկական օգնության ծառայությունների գծով նախատեսված ծախսերը կատարվել են 91.5%-ով՝ կազմելով շուրջ 7.9 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում 2011 թվականին բուժօգնություն է տրամադրվել 0.9 հազար հիվանդների՝ 2010 թվականի 1.4 հազարի փոխարեն: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 3.9%-ով:

Ստոմատոլոգիական ծառայությունների դասում ընդգրկված են 2 ծրագրեր՝ «Ստոմատոլոգիական բժշկական օգնության ծառայություններ» և «Երեխաների ստոմատոլոգիական առաջնային կանխարգելման ծառայություններ», որոնց շրջանակներում օգտագործվել է շուրջ 815.8 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 97.1%-ը: Մասնավորապես՝ 730.6 մլն դրամ տրամադրվել է ստոմատոլոգիական բժշկական օգնության ծառայությունների ֆինանսավորմանը՝ ապահովելով ծրագրի 97.5%-ը՝ պայմանավորված բուժօգնության դեպքերի քանակով: Ծրագրի շրջանակներում բուժօգնության դեպքերի քանակը կազմել է 225.4 հազար՝ նախորդ տարվա 253.3 հազարի դիմաց: Երեխաների ստոմատոլոգիական առաջնային կանխարգելման ծառայությունների ծախսերը կազմել են ավելի քան 85.1 մլն դրամ՝ ապահովելով 93.4% կատարողական: Ծրագրի շրջանակներում հետազոտվել են թվով 70.9 հազար երեխաներ՝ 2010 թվականի 67.7 հազարի դիմաց: Նախորդ տարվա համեմատ ստոմատոլոգիական ծառայությունների գծով բյուջեի ծախսերն աճել են 0.5%-ով:

Պարաբժշկական ծառայությունների շրջանակներում օգտագործվել է 7.9 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսվածի 94.5%-ը: Մասնավորապես՝ 2.9 մլրդ դրամ տրամադրվել է շտապ բժշկական օգնության ծառայությունների ֆինանսավորմանը՝ կազմելով նախատեսվածի 99.5%-ը: Ծրագրի շրջանակներում պետության կողմից երաշխավորված անվճար բուժօգնության և սպասարկման շրջանակներում 2011 թվականին իրականացվել է 397.1 հազար կանչ՝ 2010 թվականի 337.0 հազարի փոխարեն: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 100.3%-ով՝ պայմանավորված ինչպես կանչերի քանակի աճով, այնպես էլ ծառայության արժեքի բարձրացմամբ:

Լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների ծախսերը կազմել են շուրջ 2.8 մլրդ դրամ կամ նախատեսվածի 97.3%-ը: Ծրագրի շրջանակներում իրականացվել է 3.9 մլն հետազոտություն՝ 2010 թվականի 3.4 մլն-ի դիմաց: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 9.9%-ով:

Զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց փորձաքննության և բժշկական օգնության ծառայությունների գծով 2011 թվականի պետական բյուջեի ծախսերը կազմել են ավելի քան 2.2 մլրդ դրամ կամ նախատեսվածի 85.8%-ը: Ծրագրի շրջանակներում բժիշկ-մասնագետների կողմից մատուցվել են 15-17 տարեկան պատանիների առողջության առաջնային պահպանման և շարունակական հսկողության ծառայություններ, ապահովվել է զինկոմիսարիատներին կից բժշկական հանձնաժողովներում ընդգրկված բժիշկ-փորձագետների և բուժքույրերի աշխատավարձերի վճարումը, ինչպես նաև նշված տարիքի անձանց փորձաքննության նպատակով հիվանդանոցային բուժհաստատություններ ուղեգրման ճանապարհածախսի փոխհատուցումը: 2010 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 10.1%-ով կամ շուրջ 250.2 մլն դրամով:

Հաշվետու տարում ՀՀ պետական բյուջեի *հիվանդանոցային ծառայությունների* ձեռքբերման ծախսերը կազմել են շուրջ 26.9 մլրդ դրամ՝ 99%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Հիվանդանոցային ծառայությունների ծախսերի 50.2%-ը կամ 13.5 մլրդ դրամը կազմել են բժշկական, մոր և մանկան կենտրոնների, 26.8%-ը կամ 7.2 մլրդ դրամը՝ մասնագիտացված հիվանդանոցային ծառայությունների, 22.9%-ը կամ 6.2 մլրդ դրամը՝ ընդհանուր բնույթի հիվանդանոցային ծառայությունների ծախսերը:

Ընդհանուր բնույթի հիվանդանոցային ծառայությունների դասում ընդգրկված՝ անհետաձգելի բժշկական օգնության ծախսերը կազմել են շուրջ 2.2 մլրդ դրամ՝ 97.7%-ով կատարելով ծրագրային ցուցանիշը: Շեղումը պայմանավորված է բուժօգնության դեպքերի քանակով: Ծրագրով պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում 2010 թվականի 24.5 հազար հիվանդի դիմաց 2011 թվականին բուժօգնություն է ստացել 22.3 հազար հիվանդ: 2010 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 3.7%-ով:

Հաշվետու տարում պետական բյուջեից 4 մլրդ դրամ է տրամադրվել բնակչության սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին տրամադրվող բժշկական օգնության ֆինանսավորմանը՝ 99.1%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Այս ծրագրով պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության շրջանակներում 2011 թվականին բուժօգնություն է ստացել 39.8 հազար հիվանդ՝ 2010 թվականի 36.5 հազարի դիմաց: 2010 թվականի համեմատ նշված ծախսերն ավելացել են 18.5%-ով կամ 624.6 մլն դրամով:

Հաշվետու տարում 7.2 մլրդ դրամ է օգտագործվել *մասնագիտացված հիվանդանոցային ծառայությունների* ձեռքբերման նպատակով՝ ապահովելով նախատեսվածի 99%-ը: Տվյալ դասի շրջանակներում ֆինանսավորվել է 7 ծրագիր:

Տուբերկուլյոզի բժշկական օգնության ծառայությունների ծախսերը կազմել են շուրջ 1.3 մլրդ դրամ՝ 99.9%-ով ապահովելով ծրագրի կատարումը և 10.9%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: Եթե 2010 թվականին ծրագրի շրջանակներում բուժօգնություն էր ստացել 5.6 հազար հիվանդ, ապա 2011 թվականին հիվանդների թիվը կազմել է 5.8 հազար:

Աղիքային և այլ ինֆեկցիոն հիվանդությունների բժշկական օգնության ծառայությունների ձեռքբերման նպատակով 2011 թվականի բյուջեից տրամադրվել է ավելի քան 1.1 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսվածի 97.2%-ը: Ծրագրի շրջանակներում 2011 թվականին բուժօգնություն է ստացել 10.4 հազար հիվանդ՝ 2010 թվականի 9.2 հազարի դիմաց: 2010 թվականի համեմատ տվյալ ծախսերն աճել են 68%-ով՝ պայմանավորված գնաճով և երեխաների առողջության պետական հավաստագրերի ներդրմամբ:

Սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների բժշկական օգնության ծառայությունների գծով պետական բյուջեից տրամադրվել է 170.1 մլն դրամ՝ ամբողջությամբ ապահովելով նախատեսված ծավալը: Ծրագրի շրջանակներում բուժօգնություն է ստացել 1.2 հազար հիվանդ՝ 2010 թվականի 1.1 հազարի փոխարեն: Նախորդ տարվա համեմատ այս ծրագրի գծով ծախսերն աճել են 10.6%-ով:

Հոգեկան և նարկոլոգիական հիվանդների բժշկական օգնության և խնամքի ծառայությունների ծախսերը կազմել են շուրջ 1.9 մլրդ դրամ՝ 99.9%-ով ապահովելով նախատեսվածը: Ծրագրի շրջանակներում բուժօգնություն է ստացել 5.6 հազար հիվանդ՝ 2010 թվականի 6.9 հազարի փոխարեն: 2010 թվականի համեմատ այս ծախսերն աճել են 14.6%-ով՝ պայմանավորված ծառայության գնի աճով:

Զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց փորձաքննության և բժշկական օգնության ծառայությունների ձեռքբերման նպատակով ծախսվել է ավելի քան 1.1 մլրդ դրամ՝ 97%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Ծրագրի շրջանակներում բուժօգնություն է ստացել 51.5 հազար հիվանդ՝ 2010 թվականի 47.4 հազարի փոխարեն: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել են 22.5%-ով:

Ուռուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների բժշկական օգնության ծառայությունների ծախսերը կատարվել են 100%-ով՝ կազմելով 1 մլրդ դրամ: Նշված ծրագրով պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում նախորդ տարվա 10.5 հազար հիվանդի փոխարեն 2011 թվականին

բուժօգնություն են ստացել 10.9 հազար հիվանդ: 2010 թվականի համեմատ տվյալ ծախսերն աճել են 10.2%-ով:

Վերականգնողական բժշկական օգնության ծառայություններին ուղղվել է ավելի քան 561.5 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում ինչպես 2010 թվականին, այնպես էլ 2011 թվականին բուժօգնություն է ստացել 3.9 հազար հիվանդ: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերը գրեթե փոփոխություն չեն կրել:

Թրաֆիքինգի զոհերին բժշկական օգնության ծառայությունների ծրագրով 2011 թվականի պետական բյուջեից հատկացվել էր 2.2 մլն դրամ, որը տարվա ընթացքում չի օգտագործվել՝ դեպքեր չլինելու պատճառով:

Բժշկական, մոր և մանկան կենտրոնների ծառայությունների դասի շրջանակներում իրականացվել են 3 ծրագրեր, որոնց ծախսերը կատարվել են 99.2%-ով՝ կազմելով 13.5 մլրդ դրամ: 2010 թվականի համեմատ նշված ծախսերն ավելացել են 38.4%-ով:

Հաշվետու տարում շուրջ 6.6 մլրդ դրամ է տրամադրվել մանկաբարձական բժշկական օգնության ծառայությունների ձեռքբերմանը՝ 99.2%-ով ապահովելով նախատեսվածը և 9.8%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: Այս ծրագրով պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում 2010 թվականի 56.6 հազար դեպքի դիմաց 2011 թվականին արձանագրվել է 58.9 հազար դեպք:

Գինեկոլոգիական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններին ուղղվել է շուրջ 355.3 մլն դրամ կամ նախատեսվածի 98.1%-ը: Այս ծրագրով պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում 2010 թվականի 4.9 հազար դեպքի դիմաց 2011 թվականին արձանագրվել է 4.6 հազար դեպք: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 2.7%-ով՝ պայմանավորված ծառայության միջին գնի բարձրացմամբ:

Երեխաներին բժշկական օգնության ծրագրի ծախսերը կազմել են շուրջ 6.6 մլրդ դրամ՝ 99.3%-ով ապահովելով նախատեսվածը: Պետության կողմից երաշխավորված անվճար բուժօգնության և սպասարկման շրջանակներում 2011 թվականին բուժօգնություն են ստացել 47.5 հազար հիվանդ՝ 2010 թվականի 37.6 հազարի փոխարեն: 2010 թվականի համեմատ նշված ծախսերն ավելացել են 91.9%-ով՝ հիմնականում պայմանավորված երեխաների առողջության պետական հավաստագրերի ներդրմամբ, ինչպես նաև դեպքերի քանակի աճով;

2011 թվականին պետական բյուջեից շուրջ 3 մլրդ դրամ է օգտագործվել *հանրային առողջապահական ծառայությունների* ձեռքբերման նպատակով՝ ապահովելով ծրագրի 100% կատարողական: Տվյալ խմբի շրջանակներում կատարվել են 8 ծրագրեր:

Նշված խմբի ծախսերում մեծ տեսակարար կշիռ ունեն հիգիենիկ և հակահամաճարակային փորձագիտական ծառայությունների գծով տրամադրված միջոցները, որոնք կազմել են 1.8 մլրդ դրամ կամ նախատեսվածի 100%-ը: Ծրագրի նպատակն էր 2011 թվականին ապահովել.

- Հայաստանի Հանրապետության տարածքում հիգիենիկ և հակահամաճարակային պետական հսկողության միջոցառումների իրականացումը,
- ինֆեկցիոն հիվանդությունների ու թունավորումների կանխարգելման նպատակով հիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումների կազմակերպումը,
- բնակչության առողջության վրա շրջակա միջավայրի գործոնների ազդեցության սոցիալ-հիգիենիկ ուսումնասիրությունների կազմակերպումը,
- բնակչության հիգիենիկ և համաճարակային անվտանգության ապահովման կազմակերպական-մեթոդական կանոնակարգումը,
- հիգիենիկ-համաճարակաբանական նորմերի և կանոնների պատշաճ համակարգի ստեղծումը,
- բնակչության հիգիենիկ և բժշկական գիտելիքների մակարդակի բարձրացումը:

Ծրագրի շրջանակներում հակահամաճարակային միջոցառումների իրականացման նպատակով կատարվել են 2279314 փորձագիտական լաբորատոր ախտորոշիչ հետազոտություններ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 1.1%-ով:

Հիգիենիկ հակահամաճարակային ծառայությանը տրամադրվել է շուրջ 207.7 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում ինֆեկցիոն հիվադությունների հաշվառման և նրանց իջեցմանն ուղղված միջոցառումների իրականացման նպատակով կատարվել են 1555716 լաբորատոր ախտորոշիչ հետազոտություններ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 1.4%-ով:

2011 թվականին ավելի քան 228.8 մլն դրամ է տրամադրվել հատուկ վտանգավոր վարակների կանխարգելման ծառայությունների ֆինանսավորմանը, որը կատարվել է 100%-ով: Ծրագրի շրջանակներում իրականացվել են հանրապետության տարածքում ժանտախտի, խոլերայի, տուլարեմիայի և այլ հատուկ վտանգավոր վարակների հայտնաբերման և կանխարգելման աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 6.2%-ով:

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման և բուժօգնության ծառայությունների շրջանակներում օգտագործվել է ավելի քան 112.9 մլն դրամ՝ ամբողջովին ապահովելով նախատեսված ծավալը: Ծրագրի շրջանակներում իրականացվել են ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման, ախտորոշման, բուժման, հիվանդների դիսպանսերային հսկողության և քարոզչության աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխության չեն ենթարկվել:

Ամբողջությամբ ֆինանսավորվել են վարակիչ հիվանդությունների օջախների ախտահանման ծառայությունները, որոնց տրամադրվել է 60.7 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում իրականացվել են վարակիչ հիվանդությունների օջախների ախտահանման աշխատանքներ՝ մարդու օրգանիզմի վրա շրջակա միջավայրի վնասակար և վտանգավոր գործոնների ազդեցության բացառման և նվազեցման նպատակով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխության չեն ենթարկվել:

Արյան հավաքագրման ծառայությունների ծախսերը կազմել են 211.3 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում ապահովվել է արյան փոխներարկման կայանների պահպանումը, որոնց ֆունկցիոնալ խնդիրն է արյան հավաքագրումը, բաց թողումը և բուժկանխարգելիչ հիմնարկներին արյունով ու դրա բաղադրիչներով ապահովումը Հայաստանի տասը մարզերում: Երևան քաղաքը սպասարկում է «Ռ.Յոլյանի անվ. արյունաբանության կենտրոն» ՓԲԸ-ն: Կենտրոնի առաջնային խնդիրներից են դիսպանսեր հսկողության տակ գտնվող արյան չարորակ հիվանդություններով տառապող հիվանդների ամբուլատոր հետազոտումը և բուժումը, արյան փոխներարկման կայանների կողմից կատարվող աշխատանքների արտագնա ստուգումը և մեթոդական օգնությունը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 5.6%-ով, որն ուղղվել է հղի կանանց հակառեզուս իմունոգլոբուլենի ապահովմանը:

Իմունականխարգելման ազգային ծրագրին տրամադրվել է 230 մլն դրամ՝ ամբողջությամբ ապահովելով նախատեսված ծավալը: Ծրագրի շրջանակներում ազգաբնակչության համար ձեռք են բերվել պատվաստանյութեր և ներարկիչներ կարմրուկի, խոզուկի և այլ վարակիչ հիվանդությունների կանխարգելման համար: 2011 թվականին նախորդ տարվա համեմատ նվազել է դոնոր կազմակերպությունների աջակցությունը, և ավելացել ՀՀ պետական բյուջեի միջոցներով պատվաստանյութերի ձեռքբերման ծավալը: Դրանով է բացատրվում նախորդ տարվա համեմատ ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի 21.1%-ով աճը:

Ծխելու դեմ պայքարի և շրջակա միջավայրի պահպանության պետական ծրագրի շրջանակներում ծախսվել է 99.9 մլն դրամ, որի կատարողականը կազմել է 99.9%: 2010 թվականին պետական բյուջեով այս ծրագրին գումար չի հատկացվել:

Այլ դասերին չպատկանող առողջապահական ծախսերի խմբի շրջանակներում հաշվետու տարվա ընթացքում իրականացվել են ավելի քան 6.8 մլրդ դրամի ծախսեր, որոնց կատարողականը կազմել է 78.4%: Ծրագրից շեղումը հիմնականում առաջացել է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առողջապահական համակարգի արդիականացման երկրորդ և լրացուցիչ վարկային ծրագրերի, ինչպես նաև արտաբյուջետային միջոցների հաշվին իրականացվող «ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հակազդման ազգային ծրագրին աջակցություն», «ՀՀ առողջապահական

համակարգի հզորացում» և «ՀՀ-ում դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնումը» ծրագրերի գծով:

2011 թվականին պետական բյուջեից 37.8 մլն դրամ է տրամադրվել հանրապետությունից դուրս բուժման ուղեգրված հիվանդների ճանապարհածախսի փոխհատուցման նպատակով՝ ապահովելով ծրագրի 93.7% կատարողական: Ծրագրի շրջանակներում այն հիվանդները, որոնց ախտորոշումը հնարավոր չէ կատարել հանրապետությունում, ուղեկցողով գործուղվում են Մոսկվա կամ ԱՊՀ երկրներ ախտորոշման և հետագա բուժում նշանակելու համար: Մեկ հիվանդի ճանապարհածախսը ուղեկցողով գնալու և վերադառնալու համար կազմում է մոտ 400 հազար դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 42.1%-ով՝ պայմանավորված հանրապետությունից դուրս մեկնող հիվանդների թվաքանակի աճով: Այն կազմել է 235՝ նախորդ տարվա 170-ի դիմաց:

Դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների շրջանակներում ծախսվել է շուրջ 454 մլն դրամ, որի կատարողականը կազմել է 99.7%: Այն ուղղվել է սոցիալապես անապահով խավի հիվանդների՝ յուրահատուկ, բացառիկ բուժսարքավորումներով և տեխնոլոգիաներով անվճար ախտորոշիչ հետազոտությունների իրականացմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 6.2%-ով:

Ամբողջությամբ ֆինանսավորվել են դեղաքաղաքականությունից բխող փորձագիտական և մեթոդաբանական ծառայությունները, որոնց տրամադրվել է 20 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում իրականացվել են մարդասիրական կարգով ներմուծվող դեղերի և «որբ դեղերի» ցանկում ընդգրկված դեղերի պետական գրանցման նպատակով փորձաքննություններ, հոգեմետ և հսկվող դեղերի պահանջարկի հաշվարկ և այլ ծառայություններ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխության չեն ենթարկվել:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երրորդ ծրագրի շրջանակներում նախատեսված շուրջ 85.2 մլն դրամի փոխարեն ծախսերը կազմել են շուրջ 137.2 մլն դրամ: Ծրագրին կառավարության մասնակցությունն ամբողջությամբ իրականացվել է՝ 15.2 մլն դրամի չափով, իսկ վարկային միջոցները կազմել են 121.9 մլն դրամ: Ծրագիրը սկսվել է 2006 թվականից և ավատվելու է 2012 թվականին, որի հիմնական նպատակներից է՝ բարելավել աղքատ համայնքներում և ամենախոցելի խմբերի համար համայնքային ենթակառուցվածքների որակն ու մատչելիությունը՝ ի արձագանք բացահայտվող կարիքների: Տվյալ ենթածրագիրն ընդգրկում է համայնքային մակարդակի առողջապահական կենտրոնների, կլինիկաների, ամբուլատորիաների և պոլիկլինիկաների կառուցումն ու վերակառուցումը: Ծրագրի շրջանակներում սկսվել են շինարարական աշխատանքները 1 օբյեկտում և ավարտվել՝ 3 առողջապահական հիմնակներում: Ծրագրի շրջանակներում նախատեսվածից ավել աշխատանքներ են կատարվել:

Դատաբժշկական և գենետիկ ծառայությունների ձեռքբերման գծով 2011 թվականի պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 330.9 մլն դրամ՝ ամբողջությամբ կատարելով ծրագիրը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 5%-ով:

«Պաթանատոմիական ծառայություններ» ծրագրի գծով ՀՀ պետական բյուջեի ծախսերը ևս նախատեսված ծավալով կատարվել են՝ կազմելով շուրջ 38.3 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխության չեն ենթարկվել:

Հաշմանդամ երեխաների օրթեզների և կորսետների պատրաստման ծառայությունների ծախսերը հաշվետու տարում կազմել են շուրջ 86.8 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 6.1%-ով: Ծրագրի շրջանակներում 2011 թվականին պատրաստվել է 1997 օրթեզ և կորսետ՝ 2010 թվականի 1250-ի փոխարեն:

Շուրջ 78.7 մլն դրամ է տրամադրվել առողջապահության համակարգի գործունեության զանգվածային տեղեկատվության ծառայություններին՝ ապահովելով 98.3% կատարողական: Ծրագրի կազմում ընդգրկված են բժշկական վիճակագրության և բժշկասանիտարական տեղեկատվության հավաքագրումը և վերլուծությունը: ՀՀ առողջապահության նախարարությունում և ամբողջ համակարգում շարունակվել են ներդրվել համակարգչային տեխնոլոգիաներ և ցանցեր: Ներդրվել են նաև առողջապահական տեղեկատվական համակարգեր և ինտերնետային կապ: Առողջապահության համակարգի գործունեության զանգվածային տեղեկատվության, բնակչության լայն շրջանակներում հավաստի բժշկական գիտելիքների տարածման համար տպագրվում է հանրամատչելի զրույցների հավելված: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 1.3%-ով:

Մասնագիտական, խորհրդատվական և կազմակերպամեթոդական աջակցության ծառայություններին տրամադրվել է 35 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Միջոցներն ուղղվել են սիրտ-անոթային, սպինալ և պրոֆեսիոնալ հիվանդություններով, շաքարային դիաբետով, ասթմայով տառապող հիվանդներին, ինչպես նաև ուռոլոգներին, նեֆրոլոգներին, հանրապետության ուռուցքաբանական, նարկոլոգիական, մաշկավեներական, հոգեբուժական և հակատուբերկուլյոզային ծառայությունների գծով կազմակերպչամեթոդական օգնությանը: 2010 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 12%-ով՝ պայմանավորված կազմմեթոդական օգնության ծավալի կրճատմամբ:

Խմբում ընդգրկված այլ բուժօգնության և սպասարկման ծառայությունները (15 մլն դրամ) և մարդասիրական օգնության կարգով ստացվող դեղերի և դեղագործական արտադրանքի ստացման, մաքսազերծման և բաշխման աշխատանքները (40 մլն դրամ) ֆինանսավորվել են ամբողջությամբ և նախորդ տարվա համեմատ չեն փոփոխվել:

Ամբողջությամբ ֆինանսավորվել է նաև տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագիրը, որին տրամադրվել է 92 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում մատուցվել են տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի պահպանման աջակցության ծառայություններ: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն ավելացել են 61%-ով, որն ուղղվել է աշխատավարձի և այլ ծախսերի վճարմանը:

ՀՀ մարզային առողջապահական կազմակերպությունների բժիշկ-մասնագետների ժամանակավոր ուղեգրման ծախսերի փոխհատուցման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է 22.1 մլն դրամ՝ ապահովելով 99.5% կատարողական: Ծրագրի շրջանակներում 2011 թվականին ՀՀ մարզեր են ուղեգրվել 11 բժիշկ-մասնագետ՝ 72 ամիս տևողությամբ՝ նախորդ տարվա 36 ամսվա փոխարեն: Արդյունքում նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն ավելացել են 96.1%-ով:

ՀԲ աջակցությամբ իրականացվող առողջապահական համակարգի արդիականացման երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է 2 մլրդ դրամ, որը կատարվել է 92.8%-ով: Ծրագրին կառավարությունը մասնակցություն է ցուցաբերել 550.7 մլն դրամի չափով, իսկ վարկային միջոցները կազմել են շուրջ 1.5 մլրդ դրամ: Շեղումը պայմանավորված է ապրանքների ձեռքբերման և շինարարական աշխատանքների համար բյուջեով նախատեսվածից ցածր գումարներով պայմանագրերի կնքումով: Ծրագրի շրջանակներում իրականացվել են վերանորոգման աշխատանքներ «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում, որոնք ավարտվել են 2011 թվականի հոկտեմբերի 31-ին, և շինարարական աշխատանքներ «Գյումրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում, որոնց մի մասը տեղափոխվել է 2012 թվական՝ կառուցման նախագծային փաստաթղթերում կատարված փոփոխությունների պատճառով:

2011 թվականին ՀԲ աջակցությամբ իրականացվող՝ առողջապահական համակարգի արդիականացման լրացուցիչ վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է 1.5 մլրդ դրամ՝ ապահովելով 58.8% կատարողական: Ծրագրի ցածր կատարողականը պայմանավորված է հետևյալ պատճառներով.

- ՀՀ Լոռու մարզի Վանաձորի նոր բժշկական կենտրոնի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքները հետաձգվել են, քանի որ «Երևաննախագիծ» ՓԲԸ կողմից իրականացվում էր նոր բժշկական կենտրոնի կառուցման նպատակահարմարության գնահատում, որը ավարտվել է 2011 թվականի դեկտեմբեր ամսին: ՀՀ Տավուշի մարզի Բերդի բժշկական կենտրոնի, ՀՀ Սյունիքի մարզի Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոնի կառուցման, Կապանի բժշկական կենտրոնի վերանորոգման, ՀՀ Կոտայքի մարզի Աբովյանի բժշկական կենտրոնի, ինչպես նաև Էրեբունի բժշկական քոլեջի ընտանեկան բուժքույրության ամբիոնի վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքները դեռևս չեն ավարտվել.

- ՀՀ Շիրակի մարզի Գյումրու նոր բժշկական կենտրոնի շինարարական աշխատանքների ավարտի ժամկետը 2011 թվականի դեկտեմբերից տեղափոխվել է 2012 թվականի ապրիլ ամիս, այդ պատճառով նախատեսվող բժշկական սարքավորումների գնման մրցույթը հայտարարվել է 2011 թվականի նոյեմբեր.
- նոր կառուցվող համայնքային առողջության առաջնային պահպանման 13 կենտրոնների ցանկը վերջնականապես հստակեցվել է 2011 թվականի դեկտեմբերին.
- ընտանեկան բժիշկների երկու անկախ խմբային պրակտիկաների՝ բժշկական սարքավորումներով, կահույքով և համակարգչային սարքավորումներով աջակցելու նպատակով հայտարարվել է վերոնշյալ ապրանքների գնման մրցույթ, որը նախատեսվել է ամփոփել 2012 թվականին,
- քաղաքային պոլիկլինիկաների առողջության առաջնային պահպանման նոր մոդելի մշակման նպատակով խորհրդատուի ընտրության գործընթացը ոչ բավարար հետաքրքրության պատճառով երկարացվել է մինչև 2012 փետրվար ամիսը:

2011 թվականի ընթացքում «Առողջապահական համակարգի արդիականացման» երկրորդ և լրացուցիչ վարկային ծրագրերի շրջանակներում իրականացվել են հետևյալ միջոցառումները.

1. Ընտանեկան բժշկության զարգացում:

2011 թվականի դեկտեմբեր ամսվա դրությամբ ծրագրի առաջին և երկրորդ փուլի շրջանակներում արդեն մասնագիտացել են 1394 ընտանեկան բժիշկներ և 1592 ընտանեկան բուժքույրեր: Մասնավորապես՝ 2011 թվականի ընթացքում 124 բժիշկ և 153 բուժքույր ավարտել են ընտանեկան բժշկության մասնագիտացման դասընթացները: Ներկայումս 39 ընտանեկան բժիշկ գտնվում են մասնագիտացման գործընթացում և կավարտեն իրենց մասնագիտացումը 2012 թվականի ընթացքում:

2. Ինստիտուցիոնալ զարգացում

2011 թվականի նոյեմբերին ավարտվել է Հայաստանի հիվանդանոցային հաստատություններում հիվանդների «գրպանից դուրս» վճարումների՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպության հետ համատեղ իրականացված ուսումնասիրությունը:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծրագրի շրջանակներում իրականացվել է ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի պահպանումը, որի ծախսերը կազմել են 999.1 մլն դրամ՝ ապահովելով 95.6% կատարողական՝ պայմանավորված միջոցների տնտեսմամբ: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 1.7%-ով, որը պայմանավորված է աշխատավարձի, ինչպես նաև հատուկ նպատակային ֆոնդից տրվող պարգևատրման, կապի ծառայությունների և գործուղման ծախսերի նվազմամբ:

ՀՀ առողջապահության նախարարության արտաբյուջետային միջոցների հաշվին իրականացվող՝ «ԳԱՎԻ աջակցությամբ իրականացվող առողջապահության համակարգի հզորացման դրամաշնորհային» ծրագրի շրջանակներում ծախսվել է 17 մլն դրամ՝ նախատեսված 26.5 մլն դրամի դիմաց: Ծրագրի իրականացման արդյունքում դիտվել է ծրագրի ոչ ֆինանսական ցուցանիշների, մասնավորապես՝ պատվաստումներում նպատակային խմբերի երեխաների ընդգրկման ցուցանիշների բարելավում:

Արտաբյուջետային միջոցների հաշվին իրականացվող՝ Հայաստանի Հանրապետությունում դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնման ծրագրին տրամադրվել է 395.6 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 65.6%-ը, որը պայմանավորված է շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգման, վարչական սարքավորումների ու նախագծահետազոտական ծախսերի տնտեսմամբ: Ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- ավարտվել են Աբովյանի տուբերկուլյոզային դիսպանսերի բազմադեղակայուն բաժանմունքի առաջին հարկի վերանորոգման աշխատանքները,
- իրականացվել են Գրիգոր Նարեկացի ԲԿ ՓԲԸ, Երևան ՔՀԴ ՓԲԸ, Իջևան ԲԿ ՓԲԸ, Աշտարակի ԲԿ ՓԲԸ, Մասիսի ԲԿ ՓԲԸ, Վաղարշապատի Պոլիկլինիկա ՓԲԸ տուբերկուլյոզային լաբորատորիաների վերանորոգման աշխատանքները,
- իրականացվել է տուբերկուլյոզով հիվանդներին սոցիալական աջակցության տրամադրում, որի արդյունքում հիվանդներին բաժանվել են սննդային և հիգիենիկ փաթեթներ,
- ձեռք են բերվել լաբորատոր ծախսանյութեր և սարքավորումներ ՏԲ ծառայությունների համար:

ՀՀ առողջապահության նախարարության արտաբյուջետային միջոցների հաշվին իրականացվող՝ «Առողջապահության համակարգի հզորացում» ծրագրի շրջանակներում ծախսվել է 111.2 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 34.5%-ը, որը պայմանավորված է մեքենաների և սարքավորումների, աշխատավարձի և կառավարչական ծառայությունների ծախսերի տնտեսմամբ: Ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- մշակվել է առողջապահական համակարգի աշխատուժի շարունակական մասնագիտական զարգացման հայեցակարգ, վերանայվել են պետական բժշկական կրթական հաստատություններում տուբերկուլյոզի և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի առկա ուսուցողական ծրագրերը, մշակվել են նոր ծրագրեր բուժքույրերի ու բժիշկների համար,
- մշակվել է պալիատիվ/ամոքիչ խնամքի ցավի վերահսկման կլինիկական ուղեցույցը, չորս տեղամասերում մեկնարկվել է հիվանդանոցային և տնային պայմաններում ամոքիչ խնամքի փորձարկումը, պալիատիվ խնամքի վերապատրաստում են անցել պիլոտային տեղամասերի մասնագետները,

- վերանայվել են տվյալների աղբյուրները, տեղեկատվության ներկայիս հոսքերը, մշակվել ազգային ցուցանիշների նոր ցանկ և տվյալների հաշվետվական ձևեր, վերանայվել է առողջապահական տեղեկատվական համակարգի օրենսդրական դաշտը, մշակվել է նոր համակարգչային ծրագիր առողջապահական տեղեկատվական մարզային կարողությունները հզորացնելու նպատակով,
- մշակվել են արյան և արյան բաղադրամասերի դոնորության և փոխներարկումային բժշկական օգնության ազգային ծրագիրը, արյան և արյան բաղադրամասերի պահպանման և տեղափոխման կարգը, արյան և արյան բաղադրամասերի շրջանառության ոլորտում կիրառվող բժշկական փաստաթղթերի ձևերը և դրանց լրացման կարգը: Արյան դոնորների միասնական էլեկտրոնային գրանցամատյանի ստեղծման նպատակով մշակվել է մանրամասն տեխնիկական առաջադրանք: Մշակվել են արյան անվարձահատույց դոնորությունը քարոզող կրթական նյութեր: Ձեռք են բերվել բժշկական ծախսանյութեր ծրագրի շրջանակներում գնված բժշկական սարքավորումների անխափան աշխատանքը ապահովելու նպատակով,
- մշակվել է տուբերկուլոզի և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի բուժման վերանայված ուղեցույցներին համապատասխան դեղերի նոր ցանկ: Կազմակերպվել են ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և տուբերկուլոզի դեղերի ռացիոնալ օգտագործման, գնման և մատակարարման կառավարման դասընթացներ, դեղերի ռացիոնալ օգտագործումը ապահովելու նպատակով իրականացվել է հակատուբերկուլյոզային և հակառետրովիրուսային դեղերի գնման և մատակարարման կառավարման համակարգի ուսումնասիրություն, մշակվել են վերոնշյալ դեղերի գնման և մատակարարման համակարգի կառավարմանը նպաստող իրավական փաստաթղթերի նախագծեր:

ՀՀ առողջապահության նախարարության արտաբյուջետային միջոցների հաշվին իրականացվող ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հակազդման ազգային ծրագրին աջակցության շրջանակներում ծախսվել է 374.2 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 61.4%-ը: Ցածր կատարողականը հիմնականում պայմանավորված է կառավարչական ծառայությունների, առողջապահական և լաբորատոր նյութերի, այլ մեքենաների և սարքավորումների ծախսերի տնտեսմամբ: Ծրագրի շրջանակներում 2011 թվականի ընթացքում գնվել են հակառետրովիրուսային օպորտունիստական վարակների դեղամիջոցներ, ՄԻԱՎ-ի ախտորոշման թեսթ համակարգեր և լաբորատոր ծախսանյութեր, իրականացվել է ՄԻԱՎ վարակի սքրինինգ, 330 հիվանդ ստացել է հակառետրովիրուսային բուժում, 148 ներարկային թմրամիջոցներ գործածողներ ստացել են մեթադոնային փոխարինող բուժում, 1893 դատապարտյալ ստացել են ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին վերաբերող

խորհրդատվություն, իրականացվել է 285 բուժաշխատողների, 78 լաբորատոր մասնագետների և 132 պետական ոլորտի աշխատողների վերապատրաստում:

Հանգիստ, մշակույթ և կրոն

2011 թվականին ՀՀ պետական բյուջեից *հանգստի, մշակույթի և կրոնի* ոլորտի ծրագրերի իրականացմանը տրամադրվել է 17.6 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսված ծախսերի 98.8%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 9.2%-ով, հիմնականում պայմանավորված արվեստի, թանգարանների և ցուցասրահների, մշակույթի տների, ակումբների ու կենտրոնների ծախսերի աճով:

Հաշվետու տարվա ընթացքում *հանգստի և սպորտի ծառայություններին* տրամադրվել է շուրջ 1.4 մլրդ դրամ՝ 95.2%-ով ապահովելով տարեկան ծրագիրը:

2011 թվականին ՀՀ առաջնություններին և միջազգային միջոցառումներին մասնակցության ապահովման համար մարզիկների նախապատրաստման և առաջնությունների անցկացման ծրագրով նախատեսված միջոցները նպատակաուղղվել են միջոցառումների քանակի ավելացմանը և որակի բարձրացմանը, մարզիկների բժշկական հետազոտման աշխատանքների բարելավմանը, մարզաձևերի ՀՀ ազգային հավաքական թիմերը երիտասարդ հեռանկարային մարզիկներով համալրմանը և օլիմպիական վարկանիշային միջազգային մրցումներին նախապատրաստմանը: Այս ծրագրի գծով 2011 թվականին տրամադրվել է 898.5 մլն դրամ՝ ապահովելով 99.8% կատարողական: Ծրագրի շրջանակներում հաշվետու տարում անցկացվել են Հայաստանի Հանրապետության 92 առաջնություններ, որոնց մասնակցել է 9600 մարզիկ: Աշխարհի, Եվրոպայի առաջնություններին, գավաթի խաղարկություններին և միջազգային մրցաշարերին նախապատրաստվելու նպատակով ՀՀ հավաքական թիմերում ընդգրկված մարզիկների համար կազմակերպվել են 140 ուսումնամարզական հավաքներ, որոնց մասնակցել է 2680 մարդ: ՀՀ հավաքական թիմերում ընդգրկված 2115 մարզիկ մասնակցել են աշխարհի, Եվրոպայի առաջնությունների 175 մրցաշարերի: Նախորդ տարվա համեմատ ՀՀ առաջնություններին և միջազգային միջոցառումներին մասնակցության ապահովման համար մարզիկների նախապատրաստման և առաջնությունների անցկացման ծախսերն աճել են 1.6%-ով:

2011 թվականին շախմատիստների պատրաստման նպատակով 55.5 մլն դրամ է տրամադրվել «Հայաստանի շախմատային ակադեմիա» հիմնադրամին: Միջոցներն օգտագործվել են նախատեսված ողջ ծավալով և 6.7%-ով գերազանցել նախորդ ցուցանիշը՝ պայմանավորված նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ: Հիմնադրամի նպատակներն ու խնդիրներն են Հայաստանի ամբողջ տարածքում տաղանդաշատ երեխաների բացահայտումը, նրանց անվճար

կրթումը, միջազգային մրցաշարերի և միջոցառումների կազմակերպման շնորհիվ շախմատի մասսայականացումը:

Նախատեսված ծավալով իրականացվել են նաև հետևյալ 10 ծրագրերը.

- 2011 թվականին Երևանում կայացած խուլերի ըմբշամարտի Եվրոպայի առաջնության անցկացման նպատակով օգտագործվել է 13.7 մլն դրամ, որը նախորդ տարի նախատեսված չի եղել.
- միջազգային մարզական միջոցառումների հաղթողներին և մրցանակակիրներին դրամական մրցանակների հանձնման նպատակով պետական աջակցությունը կազմել է 50 մլն դրամ և նախորդ տարվա համեմատ փոփոխություն չի կրել.
- ՀՀ մարզերում և ԼՂՀ-ում հանրապետական մարզական փառատոնի անցկացման նպատակով օգտագործվել է 7 մլն դրամ, որը նախորդ տարվա համեմատ փոփոխություն չի կրել: Փառատոնն անց է կացվել 7 մարզաձևերից ՀՀ մարզերում և ԼՂՀ-ում մայիս-սեպտեմբեր ամիսներին՝ 49 քաղաքներում, որին մասնակցել է 24495 մարդ.
- պետական աջակցությունը հաշմանդամային սպորտով զբաղվող մարզական և այլ հասարակական կազմակերպություններին կազմել է 9 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում աջակցություն է ցուցաբերվել 4 հասարակական կազմակերպությունների, իրականացված միջոցառումներին մասնակցել են 409 հաշմանդամ մարզիկներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել.
- նավամոդելային սպորտի զարգացման նպատակով տրամադրվել է 5.5 մլն դրամ: 2011 թվականին Ֆրանսիայի Շատել Ռո քաղաքում կայացած նավամոդելային սպորտի Աշխարհի առաջնությանը մասնակցած ՀՀ ազգային հավաքականի ներկայացուցիչները նվաճել են մեծահասակների և երիտասարդների Աշխարհի չեմպիոնի կոչումները, շահելով 2 ոսկե, 2 արծաթե և մեկ բրոնզե մեդալներ: Տվյալ ծախսերը նախորդ տարվա համեմատ փոփոխություն չեն կրել.
- 5 մլն դրամ պետական աջակցություն է տրամադրվել սպորտային միջոցառումների կազմակերպմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 91.1%-ով՝ պայմանավորված «Սպորտային միջոցառումների կազմակերպման կենտրոն» ՊՈԱԿ-ի լուծարմամբ, որի հետ կապված՝ նույն չափով կրճատվել է տվյալ ծախսերի ծրագիրը:
- Եվրախորհրդի սպորտի մասին համաձայնագրին անդամակցելու համար տրամադրվել է 3.4 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 11%-ով, որը պայմանավորված է արտարժույթի փոխարժեքի նվազմամբ:
- Հակադոպինգային համաշխարհային գործակալությանն անդամակցելու նպատակով ՀՀ 2011 թվականի պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 2.7 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 50%-ով, պայմանավորված այն հանգամանքով, որ 2010 թվականին

վճարվել էր երկու տարվա անդամակցության վճար, ինչպես նաև արտարժույթի փոխարժեքի փոփոխությամբ.

- օլիմպիական խաղերում, աշխարհի և Եվրոպայի առաջնություններում բարձր արդյունքների հասած ՀՀ հավաքական թիմերի մարզիկներին և նրանց մարզիչներին ՀՀ նախագահի անվանական թոշակ հատկացնելու նպատակով տրամադրվել է 124.1 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 15.6%-ով՝ պայմանավորված անվանական թոշակ ստացողների թվի կրճատմամբ.
- Եվրոպայի երիտասարդության օլիմպիական փառատոններին մասնակցության ապահովման նպատակով տրամադրվել է 34.9 մլն դրամ: Նախորդ տարի նշված նպատակով պետական բյուջեից գումար չի հատկացվել:

2011 թվականին 31.3 մլն դրամ է տրամադրվել Համահայկական խաղերի անցկացմանը՝ կազմելով ծրագրի 39.2%-ը: Մրցումներն անցկացվել են 10 մարզաձևերից: Տնտեսումը պայմանավորված է նրանով, որ խաղերի նախապատրաստական փուլի ծախսերը կատարվել են հովանավորների միջոցներով:

ՀՀ ամառային առաջին պատանեկան սպարտակիադայի անցկացման համար նախատեսված 10.9 մլն դրամը չի օգտագործվել, քանի որ ծրագիրը չի իրականացվել:

Նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերի անցկացման նպատակով տրամադրվել է 7 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 99.5%-ը: Խաղերն անցկացվել են 4 փուլով, մասնակցել են հանրակրթական դպրոցների աշակերտները: 2010 թվականին նշված ծրագրին միջոցներ չեն հատկացվել:

ՈՒսանողական մարզական միջոցառումներին տրամադրվել է 18.7 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 81.2%-ը, որը տնտեսման արդյունք է: 2011 թվականին Չինաստանում կայացել է 26-րդ համաշխարհային ունիվերսիադան, որին մասնակցել է Հայաստանի ուսանողական մարզական պատվիրակությունը 5 մարզաձևերում, մասնակիցների թիվը կազմել է 23: Նշված ծրագիրն անցկացվում է 2 տարին մեկ անգամ:

ՀՀ նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի անցկացման նպատակով տրամադրվել է 65.9 մլն դրամ կազմելով ծրագրի 95.5%-ը: Մրցույթին մասնակցել է 1122 ընտանիք՝ 3366 մասնակցով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 186.4%-ով՝ պայմանավորված նախնական փուլերում մասնակից ընտանիքների թվի ավելացմամբ:

Մանկապատանեկան սպորտի մասսայականացման միջոցառումների իրականացման նպատակով հատկացվել է 8 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 99.8%-ը: Ծրագրի նպատակը մանկապատանեկան սպորտի, մասնավորապես՝ ֆուտբոլի մասսայականացումն է: Ծրագրին մասնակցում են հանրակրթական դպրոցների 8-12 տարեկան աղջիկներ և պատանիներ, 2011

թվականին ներգրավվել է 212 մասնակից: 2010 թվականի համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Հավաքական թիմերի ավագ մարզիչների վարձատրության և աշխարհի չեմպիոններին թոշակի հատկացման նպատակով «ՀՀ հավաքական թիմերի կենտրոն» ՓԲԸ-ին տրամադրվել է 20.5 մլն դրամ պետական աջակցություն՝ կազմելով ծրագրի 99.9%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 19%-ով, որը պայմանավորված է թոշակ ստացող աշխարհի չեմպիոնների թվի աճով:

Հաշվետու տարում ՀՀ պետական բյուջեից 10.6 մլրդ դրամ տրամադրվել է *մշակութային ծառայությունների* խմբի ծրագրերի ֆինանսավորմանը՝ կազմելով ծրագրվածի 99.8%-ը: 2010 թվականի համեմատ մշակութային ծառայությունների ծախսերն աճել են 12.7%-ով:

Հաշվետու տարում 1.4 մլրդ դրամ ուղղվել է *գրադարանների* դասի ֆինանսավորմանը, որն իրականացվել է նախատեսված ողջ ծավալով: Նախորդ տարվա համեմատ գրադարաններին պետական բյուջեից տրամադրված միջոցներն ավելացել են 2%-ով:

2011 թվականին տվյալ դասում ընդգրկված մշակութային օբյեկտների հիմնանորոգմանը հատկացվել է 275.8 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում հիմնանորոգվել են 7 գրադարաններ, որոնցից 1-ը՝ Երևանում, 6-ը՝ մարզերում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 26.9%-ով՝ պայմանավորված աշխատանքների ծավալներով:

1.1 մլրդ դրամ ուղղվել է 16 գրադարանների պետական աջակցության տրամադրմանը: Հաշվետու տարում գրադարանների գործունեության առաջնային ուղղություններն են համարվել նրանց գործունեության պայմանների բարելավումն ու մշակութային ժառանգության պահպանության ապահովումը, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման գործընթացների իրականացումը, գրադարանային հավաքածուների պետական հաշվառման աշխատանքները: Տեղեկատվության և ծառայությունների մատչելիության ապահովման ուղղությամբ նորացվել են գրադարաններից օգտվողներին տրամադրվող էլեկտրոնային-տեղեկատվական աղբյուրները: Հաշվետու տարում մշակութային ծառայությունների մատչելիությունն ապահովելու նպատակով «Բիբլիոբուս» շրջիկ գրադարան-ավտոմեքենան շրջել է ՀՀ Սյունիքի, Շիրակի, Արարատի, Վայոց ձորի մարզերում և Լեռնային Ղարաբաղում՝ բնակչության գրադարանային տեղեկատվական սպասարկման ծառայություն իրականացնելու և գրադարանային հավաքածուները համալրելու նպատակով: «Արև» տեղեկատվական հաղորդակցման ծրագրի շրջանակներում կույր և թույլ տեսնող անձանց հնարավորություն տրվեց համակարգչի միջոցով տառերն ու թվերը «կարդալ» լսողական խորհրդանշանների միջոցով: Տեղեկատվական հաղորդակցման այս ծրագիրը 2011 թվականին ներդրվել է Տավուշի մարզային գրադարաններում: «Հայաստանյան գրադարանների միացյալ ավտոմատացված ցանց» ծրագրի շրջանակներում մասնակից 12 գրադարանների կողմից

համահավաք քարտարանների տվյալների շտեմարանում շարունակվել են մուտքագրվել մատենագիտական գրառումներ: Նախորդ տարվա համեմատ գրադարաններին պետական աջակցությունն ավելացել է 12%-ով, պայմանավորված աշխատողների միջին հաշվարկային աշխատավարձի բարձրացմամբ, դրան համապատասխան՝ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների, ինչպես նաև գազի սակագնի թանկացման հետ կապված՝ գրադարանների ջեռուցման ծախսերի ավելացմամբ:

2011 թվականին հրատարակությունների գրանցման, հաշվառման և մատենագիտական ծառայությունների մատուցման համար պետական բյուջեից Հայաստանի ազգային գրապալատին տրամադրվել է 58.5 մլն դրամ: Ծրագրով նախատեսված հատկացումներն ուղղվել են ազգային և համաշխարհային մշակութային ժառանգության մաս հանդիսացող՝ ՀՀ-ում ու արտերկրում լույս տեսած և լույս տեսնող հրատարակությունների անձեռնմխելի ֆոնդերի պահպանման, մատենագիտական տեղեկույթով ապահովման, գիտության զարգացման և հանրության կրթական մակարդակի բարձրացման խնդիրների իրագործմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 10.9%-ով՝ պայմանավորված աշխատողների միջին հաշվարկային աշխատավարձի բարձրացմամբ և դրան համապատասխան՝ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների աճով:

Գրադարանների համար սարքերի և սարքավորումների ձեռքբերման գծով պետական պատվերի ծրագրի իրականացման համար օգտագործվել է 10.9 մլն դրամ: Հատկացումներն ուղղվել են Երաժշտագիտական գրադարանում, Արմավիրի, Գեղարքունիքի, Կոտայքի, Շիրակի, Սյունիքի, Վայոց ձորի մարզային գրադարաններում ազդանշանային և հակահրդեհային համակարգերի տեղադրմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 152.8%-ով:

2011 թվականին *թանգարանների և ցուցասրահների* դասի ծրագրերին պետական բյուջեից տրամադրվել է 1.9 մլրդ դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 21.8%-ով՝ պայմանավորված մշակութային օբյեկտների հիմնանորոգման, թանգարանային ծառայությունների ու ցուցահանդեսների, ինչպես նաև համայնքային բյուջեներին սուբվենցիաների տրամադրման ծախսերի աճով:

Մշակութային օբյեկտների հիմնանորոգմանը պետական բյուջեից տրամադրվել է 235 մլն դրամ, որը կազմում է նախատեսվածի 99.7%-ը: Հատկացված միջոցներով հիմնանորոգվել են 4 տուն-թանգարան, որից 2-ը՝ Երևանում, 2-ը՝ մարզերում:

Թանգարանային ծառայությունների և ցուցահանդեսների ծրագրի իրականացմանը պետական բյուջեից տրամադրվել է 1.5 մլրդ դրամ, որը կազմում է նախատեսվածի 100%-ը: Թանգարանների գործունեության առաջնային ուղղություններն են համարվել թանգարանային առարկաների և թանգարանային հավաքածուների պահպանությունը, հանրահռչակումը, բացառիկ ցուցանմուշների

կրկնատիպերի պատրաստումը, թանգարանային առարկաների կոնսերվացումը և վերականգնումը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 9%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է աշխատավարձի բարձրացմամբ և դրան համապատասխան՝ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների, ինչպես նաև գազի սակագնի թանկացման հետ կապված՝ թանգարանների ջեռուցման ծախսերի աճով:

Հայաստանի Հանրապետության համայնքային բյուջեներին սուբվենցիաների տրամադրումը կազմել է 193.7 մլն դրամ կամ նախատեսվածի 100%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 39.8%-ով՝ պայմանավորված Էրեբունի թանգարանը ծրագրում ներառելու հանգամանքով:

ՄԱԿ-ի զարգացման աջակցության ծրագրի շրջանակներում 2011 թվականին իրականացվել են 39.4 մլն դրամի ծախսեր՝ կազմելով նախատեսվածի 100%-ը:

ՀՀ 2011 թվականի պետական բյուջեից 591.4 մլն դրամ է տրամադրվել *մշակույթի տների, ակումբների և կենտրոնների* ֆինանսավորմանը, որն իրականացվել է նախատեսված ողջ ծավալով: Նախորդ տարվա համեմատ տվյալ դասի ծախսերն աճել են 74.9%-ով՝ հիմնականում պայմանավորված մշակութային օբյեկտների հիմնանորոգման և շինարարության ծախսերի աճով:

Մասնավորապես՝ 408.8 մլն դրամ են կազմել հիմնանորոգման, 128.1 մլն դրամ՝ շինարարության ծախսերը: Նշված ծրագրերի շրջանակներում հանրապետության մարզերում հիմնանորոգվել է 11 և կառուցվել՝ 2 մշակութային օբյեկտ:

Համայնքային մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպման ծախսերը կազմել են 34.5 մլն դրամ: Ծրագիրն իրականացվել է Ստեփանավանի մշակույթի և ժամանցի կենտրոնի, Կոտայքի մարզային մշակութային կենտրոնի, Կապանի մշակույթի կենտրոնի և Եղեգնաձորի մշակույթի տան գործունեության խթանման, մշակութային միջոցառումների և ժամանցի կազմակերպման, մշակույթի զարգացման, հասարակության հոգևոր պահանջների բավարարման, համայնքի բնակչությանը մշակութային կյանքին հաղորդակից դարձնելու նպատակով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 17.7%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է աշխատավարձի բարձրացմամբ:

Շենքերի և շինությունների ձեռքբերման ծախսերը կազմել են 20 մլն դրամ, որով ձեռք է բերվել ՀՀ Լոռու մարզի Նոր Խաչակապի համայնքային կենտրոնը: 2010 թվականին տվյալ ծրագրի գծով ծախսեր չեն նախատեսվել:

Այլ մշակութային կազմակերպությունների դասին ՀՀ 2011 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 699.1 մլն դրամ, որը կազմել է ծրագրի 100%-ը: 2010 թվականի համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

380.9 մլն դրամ տրամադրվել է Հայաստանի ազգային արխիվի սուբսիդավորմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 14.4%-ով՝ պայմանավորված աշխատավարձերի բարձրացմամբ և ջեռուցման ծախսերի աճով:

Տեղեկատվական-վերլուծական և հանրային իրազեկման ծառայություններին հատկացվել է 1.8 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 95.7%-ով՝ պայմանավորված «Տեղեկատվական-վերլուծական և հասարակայնության հետ կապերի կենտրոն» ՊՈԱԿ-ի լուծարման գործընթացով, որը վերակազմակերպվել է «Մշակութային ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի:

Ժողովրդական ստեղծագործության ավանդույթների և ժողարվեստի պահպանման նպատակով 2011 թվականի պետական բյուջեից հատկացվել է 34.7 մլն դրամ: Ծրագիրն իրականացվել է բնակչության հոգևոր և գեղագիտական զարգացման, հասարակության մեջ ժողովրդական ստեղծագործության տարածման, ավանդական ժողովրդական արհեստների պահպանման և ուսումնասիրման, ինքնագործ կոլեկտիվների, ինքնուս անհատ ստեղծագործողների, ժողովրդական վարպետների ստեղծագործությունների կատարելագործման և հանրահռչակման նպատակով: Ժողստեղծագործության և ժողովրդական արվեստի պրոպագանդման ուղղությամբ իրականացվել են 15 միջոցառումներ: Կատարվել է հեքիաթների, առակների, վիպերգերի, ասույթների հավաքագրում, թվայնացում և տպագրում՝ 40 միավորով: Իրականացվել է ժողովրդական ավանդական արհեստների տեսակների և արհեստագործների ցուցակագրում, կատալոգի հրատարակում՝ 30 միավոր: Կանխատեսվել և կազմակերպվել է 15 ցուցահանդես: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 9.7%-ով՝ պայմանավորված աշխատողների միջին հաշվարկային աշխատավարձի 15%-ով բարձրացմամբ և դրան համապատասխան՝ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների գծով ծախսերի աճով:

«Մշակութային արժեքների փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ին 2011 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 32.7 մլն դրամ աջակցություն: Ծրագրի նպատակը մշակութային արժեքների փորձագիտական ուսումնասիրության, մշակութային արժեքների և մշակութային նշանակության առարկաների մշակութաբանական ու արվեստաբանական փորձաքննության իրականացումն է: 2011 թվականին կանխատեսված փորձաքննության ենթակա 2500 (նախորդ տարվա 1337) մշակութային արժեքների և մշակութային նշանակության առարկաների դիմաց դրանց փաստացի քանակը կազմել է 2112: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 11.7%-ով՝ պայմանավորված աշխատողների միջին հաշվարկային աշխատավարձի 15%-ով բարձրացմամբ և դրան համապատասխան՝ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների գծով ծախսերի աճով:

2011 թվականին տվյալ դասում ՀՀ համայնքային բյուջեներին սուբսիդիաների տրամադրման շրջանակներում ՀՀ պետական բյուջեով նախատեսված 194.6 մլն դրամն ամբողջությամբ ուղղվել է

Երևանի կենդանաբանական այգու սուբսիդավորմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 3.3%-ով՝ պայմանավորված աշխատավարձերի բարձրացմամբ:

Հայրենիք-սփյուռք գործակցության ծրագրերի իրականացման նպատակով ՀՀ 2011 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 32.1 մլն դրամ, իսկ ներդրումները «Հայրենիք-սփյուռք կենտրոն» ՊՈԱԿ-ում կազմել են 22.1 մլն դրամ: Տվյալ ծրագրին նախորդ տարի պետական բյուջեից միջոցներ չեն հատկացվել:

Արվեստի բնագավառի ծրագրերի ֆինանսավորմանը ՀՀ 2011 թվականի պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 5 մլրդ դրամ՝ ապահովելով տարեկան ծրագրի 99.6% կատարողական: 2010 թվականի համեմատ արվեստի բնագավառում պետական բյուջեի ծախսերն աճել են 12.4%-ով կամ 545.6 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է 2011 թվականի պետական բյուջեից Հայկական տպագրության 500-ամյակին նվիրված միջոցառումների իրականացման համար միջոցների հատկացմամբ:

Արվեստի բնագավառի մշակութային օբյեկտների հիմնանորոգման ծրագրի շրջանակներում նախատեսված 62.9 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է, որն ուղղվել է 3 մարզային մշակութային օբյեկտների հիմնանորոգմանը: Նշված ծախսերը 81.5%-ով զիջում են 2010 թվականի ցուցանիշը:

Հաշվետու տարում Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնին տրամադրվել է 673.2 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական և 17%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը, ինչը պայմանավորված է աշխատավարձերի բարձրացմամբ և ջեռուցման ծախսերի աճով:

Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնին ևս նախատեսված սուբսիդիան ամբողջությամբ տրամադրվել է՝ կազմելով 269.6 մլն դրամ և նախորդ տարվա համեմատ աճելով 12%-ով, ինչը նույնպես պայմանավորված է աշխատավարձերի բարձրացմամբ և ջեռուցման ծախսերի աճով:

Մշակութային միջոցառումների իրականացմանը տրամադրվել է 1.1 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրի 99.9%-ը: Ժամանակակից արվեստի զարգացման գործում 2011 թվականին առաջնահերթություն է համարվել երիտասարդ ստեղծագործական ներուժի ներգրավումը, նոր մրցունակ մշակութային արտադրանքի ստեղծումը, հայ ժամանակակից ստեղծագործություններով խաղացանկերի և երկացանկերի համալրումը, սփյուռքահայ արվեստագետների ներգրավումը Հայաստանի մշակութային դաշտ: Առանձնակի կարևորվել է դեբյուտային գործընթացներին պետական աջակցության ապահովումը՝ արվեստի տարբեր ոլորտներում երիտասարդ ստեղծագործական ներուժի հայտնաբերման, խթանման, մշակութային կյանքում նրանց ներգրավման և ժամանակակից մտածողության խրախուսման, ինչպես նաև սերնդափոխության

շարունակականության ապահովման նպատակով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 6.1%-ով:

Օտարերկրյա պետություններում հայալեզու թատերական ներկայացումներին աջակցության շրջանակներում Թբիլիսիի Պ. Ադամյանի անվան թատրոնին հատկացվել է 20 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է և պահպանվել է նախորդ տարվա մակարդակին:

«Ժողովրդական» պատվավոր կոչման արժանացած անձանց ամենամսյա պատվովճարների համար օգտագործվել է 37 մլն դրամ, որը կազմել է նախատեսվածի 65.3%-ը: Տնտեսումը պայմանավորված է պատվովճար ստացողների փաստացի թվաքանակով (արվեստագետների մի խումբ դեռևս չի իրացրել պատվովճար ստանալու իր իրավունքը), ինչպես նաև պատվովճարը մի քանի ամիսը մեկ անգամ ստանալու հանգամանքով: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն աճել են 6.7%-ով՝ պայմանավորված նոր նշանակումներով: Պատվովճարի վճարման ծառայությունների համար հատկացված միջոցները նույնպես տնտեսվել են՝ նախատեսված 793 հազար դրամի փոխարեն օգտագործվել է 302.1 հազար դրամ:

Հայաստանի Հանրապետության համայնքային բյուջեներին սուբվենցիաների տրամադրման ծրագրի շրջանակներում 236 մլն դրամ է հատկացվել թատերական ներկայացումների սուբսիդավորմանը, որն ամբողջությամբ օգտագործվել է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 14.7%-ով՝ պայմանավորված աշխատավարձերի բարձրացմամբ:

Թատերական ներկայացումների ծախսերը կազմել են 1 մլրդ դրամ, որոնք օգտագործվել են նախատեսված ծավալով: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն ավելացել են 14.5%-ով՝ պայմանավորված թատրոնների աշխատողների միջին հաշվարկային աշխատավարձի 15%-ով բարձրացմամբ և դրան համապատասխան՝ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների ծախսերի աճով, գազի սակագնի թանկացման հետ կապված՝ ջեռուցման ծախսերի ավելացմամբ, ինչպես նաև Երաժշտական կամերային պետական թատրոնի լոկալ ջեռուցման համակարգի ներդրմամբ:

2011 թվականին երաժշտարվեստի և պարարվեստի համերգների ծրագրի շրջանակներում նախատեսված 978.3 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագիրն ուղղվել է երաժշտարվեստի և պարարվեստի պահպանմանը, զարգացմանն ու տարածմանը, երաժշտադրամատիկական, երաժշտական կատարողական, երգի-պարի արվեստին հաղորդակցմանը, երաժշտարվեստի ու պարարվեստի վերաբերյալ տեղեկույթի ապահովմանը, ինչպես նաև նոր գաղափարների ու արժեքների տարածմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 13.1%-ով՝ պայմանավորված աշխատավարձերի բարձրացմամբ և ջեռուցման ծախսերի ավելացմամբ:

Հայ մշակույթի միջազգային կենտրոններին նախատեսված 25 մլն դրամ աջակցությունն ամբողջությամբ տրամադրվել է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 12.4%-ով՝ պայմանավորված արտարժույթի փոխարժեքի նվազմամբ:

Տարածքային համագործակցության և համահայկական մշակութային ծրագրերի իրականացմանը տրամադրվել է 17.9 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 96.1%-ը և 3.9%-ով զիջելով նաև նախորդ տարվա ցուցանիշը: Ծրագրի նպատակն է տարածքային համագործակցության և մշակութային միջոցառումների իրականացումը, որոնց արդյունքում լուծվում են մի շարք հայապահպանական խնդիրներ: Մասնավորապես՝ իրականացվում են հայ համայնքների հետ համագործակցության ծրագրեր և միջոցառումներ: 2011 թվականի ընթացքում իրականացվել են 13 միջոցառումներ:

Հայկական տպագրության 500-ամյակին նվիրված միջոցառումների իրականացման նպատակով հատկացվել է 488.8 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Հայ գրատպության 500-ամյակի խորագրի տակ հայ գիրքը ներկայացվել է 10 (Մինսկի, Փարիզի, Ժնևի (պատվո հյուրի կարգավիճակով), Լոս Անջելեսի (հատուկ հյուրի կարգավիճակով), Սանկտ Պետերբուրգի, Սալոնիկի, Թեհրանի, Վարշավայի, Մոսկվայի, Մայնի Ֆրանկֆուրտի) միջազգային ցուցահանդեսներում և ցուցահանդես-տոնավաճառներում:

«Տիկնիկները՝ հանուն խաղաղության և բարեկամության» ծրագրին հատկացվել է 5.3 մլն դրամ, որը նույնպես ամբողջությամբ օգտագործվել է: Վերը նշված 2 ծրագրերը 2011 թվականին իրականացվել են առաջին անգամ:

ՀՀ 2011 թվականի պետական բյուջեից *կինեմատոգրաֆիայի* բնագավառին տրամադրվել է 629.7 մլն դրամ, որը կազմել է նախատեսված ծախսերի 100%-ը և 2.8%-ով գերազանցել նախորդ տարվա ցուցանիշը:

Կինոնկարների արտադրությանը տրամադրվել է 447.8 մլն դրամ: Կինոարվեստի բնագավառում Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականության ռազմավարությունը պայմանավորված է կինոարվեստի՝ որպես տեսալսողական հաղորդակցության տեսակի պահպանման, տարածման և զարգացման, կինոարտադրությունն ապահովող տեխնոլոգիայի մշտական կատարելագործման, միջազգային կինոփառատոններին և կինոշուկաներին Հայաստանի Հանրապետության մասնակցության ապահովմամբ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 1.6%-ով:

Ազգային կինոծրագրերի իրականացման համար հատկացումներն ուղղվել են Հայաստանի ազգային կինոկենտրոնի գործունեության ապահովմանը: 2011 թվականին այդ ուղղությամբ բյուջետային ծախսերը կազմել են 131.7 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 12.2%-ով՝ պայմանավորված աշխատավարձերի բարձրացմամբ:

Հաշվետու տարում 7.2 մլն դրամ է տրամադրվել կինո-ֆոտո-ֆոնո հավաքածուի պահպանման ծառայություններին: Ծրագրի շրջանակներում 2011 թվականին վերականգնվել է 2 ֆիլմ, իրականացվել է 7 ֆիլմի թվայնացում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

Ներդրումները «Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ-ում կազմել է 6.4 մլն դրամ: Հատկացումներն ուղղվել են Հայաստանի ազգային կինոկենտրոնի համար համակարգչային տեխնիկայի ձեռքբերմանը: Նախորդ տարի այդ նպատակով միջոցներ չէին հատկացվել:

36.5 մլն դրամի չափով ֆինանսավորվել են փաստավավերագրական կինոծրագրերը: Հատկացված միջոցների հաշվին ապահովվել է «Փաստավավերագրական ֆիլմերի «Հայկ» կինոստուդիա» ՊՈԱԿ-ի գործունեությունը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 10.3%-ով՝ պայմանավորված աշխատավարձերի բարձրացմամբ:

Հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնման ու պահպանման դասին ՀՀ 2011 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 343.6 մլն դրամ կամ ծրագրային ցուցանիշի 99.8%-ը: Նախորդ տարվա համեմատ տվյալ դասի ծախսերն աճել են 1.3%-ով:

Մասնավորապես՝ 4 մլն դրամ պետական աջակցություն է տրամադրվել Թբիլիսիում գտնվող հայ գրողների պանթեոնի պահպանման նպատակով՝ կազմելով նախատեսված հատկացումների 100%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

«Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ին տրամադրվել է 67.9 մլն դրամ, որը կազմում է նախատեսված ծախսերի 100%-ը: Ծրագրի նպատակներն են պատմամշակութային հուշարձանների ուսումնասիրումը, վավերագրումը, պահպանական փաստաթղթերի փաթեթի ստեղծումը և դրանց շնորհիվ հուշարձանների պահպանության ապահովումն ու հետագա սերունդներին փոխանցումը: Հաշվետու տարվա ընթացքում կանխատեսվել և իրականացվել է 400 հուշարձանների պահպանական գոտիների նախագծում և թողարկում: Կանխատեսվել և իրականացվել է 2000 հուշարձանների հաշվառում և ցուցակագրում: Կանխատեսվել և իրականացվել է 250 հուշարձանի հաշվառում և վկայագրում: Կանխատեսվել և իրականացվել է հայկական պատմամշակութային ժառանգության գիտատեղեկատու շտեմարանի 390 վավերագրերի կազմում և թվայնացում: Պատմամշակութային ժառանգության վերաբերյալ հանրությանն իրազեկելու նպատակով հրատարակության է պատրաստվել «Հուշարձան» տարեգրքի 8-րդ հատորը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 12.1%-ով՝ պայմանավորված աշխատավարձերի բարձրացմամբ:

Հուշարձանների վերանորոգման և վերականգնման աշխատանքների իրականացմանը տրամադրվել է 203.4 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 99.7%-ը: Հուշարձանների պահպանության բնագավառում իրականացվող գործընթացները նպատակաուղղված են եղել պատմամշակութային հուշարձանների հաշվառման, ուսումնասիրման, պահպանության,

վերականգնման և օգտագործման գործում առկա հիմնախնդիրների բացահայտմանն ու դրանց լուծմանը: Նախորդ տարվա համեմատ ծրագրի ծախսերը նվազել են 1.4%-ով:

Հուշարձանների տեխնիկական վիճակի մոնիթորինգի նպատակով տրամադրվել է 8.3 մլն դրամ կամ նախատեսվածի 100%-ը: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը փոփոխության չեն ենթարկվել: Հաշվետու տարում իրականացվել է 26 հուշարձանի տեխնիկական վիճակի մոնիթորինգ՝ կանխատեսված 25-ի փոխարեն:

Հայկական պատմամշակութային հուշարձանների վավերագրմանը տրամադրվել է 60 մլն դրամ աջակցություն՝ կազմելով նախատեսվածի 100%-ը և պահպանվելով նախորդ տարվա մակարդակին: ՀՀ մշակույթի նախարարության պատվերով ծրագիրն իրականացվել է «Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող» ՀԿ-ի կողմից: Հաշվետու տարվա ընթացքում Արևմտյան Հայաստանում իրականացվել է 470 պատմամշակութային հուշարձանի վավերագրում:

2011 թվականին *ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակման և հրատարակչական ծառայությունների* ծախսերը կազմել են 4.8 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.6%-ը: Նախորդ տարվա համեմատ տվյալ խմբի ծախսերն ավելացել են 5.7%-ով կամ 257.6 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված հրատարակչական, տեղեկատվական և տպագրական ծառայությունների, ինչպես նաև գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման հատկացումների աճով:

Հաշվետու տարում *հեռուստառադիոհաղորդումների* դասի գծով պետական բյուջեի ծախսերը կազմել են 3.7 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.6%-ը: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն աճել են 2.2%-ով:

Հատկացումների գերակշիռ մասը՝ շուրջ 2.5 մլրդ դրամ (100%), հեռուստատեսային ծառայությունների ծրագրի շրջանակներում հեռուստահաղորդումների պատրաստման և հեռարձակման նպատակով տրամադրվել է «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ին՝ որպես դրամաշնորհ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Այս ոլորտի պետական կառավարման մարմինների՝ Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի և Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի պահպանմանը տրամադրվել է 292.3 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 97.6%-ը և 36.7%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը՝ հիմնականում պայմանավորված աշխատավարձի ծախսերի աճով:

Հաշվետու տարում ռադիոծառայությունների շրջանակներում 634 մլն դրամ (100%) դրամաշնորհներ են տրամադրվել «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ին՝ ռադիոհաղորդումների պատրաստման և հեռարձակման նպատակով, որը նախորդ տարվա համեմատ գրեթե չի փոփոխվել:

Ռադիոհեռուստատեսային հաղորդումների պատրաստման և հեռարձակման նպատակով 24.6 մլն դրամ է տրամադրվել «Շիրակի հանրային հեռուստառադիո» ՓԲԸ-ին, որը կազմել է նախատեսվածի 100%-ը և նախորդ տարվա համեմատ աճել է 7%-ով՝ պայմանավորված աշխատավարձի ծախսերի աճով:

ԱՊՀ երկրներում հեռուստառադիոծրագրերի հեռարձակման ծրագիրը նախատեսված է հեռուստառադիոհաղորդումների միջոցով ԱՊՀ երկրներում տեղեկույթ տարածելու և նրանցից ստանալու համար: Այս ծրագիրը հնարավորություն է տալիս ԱՊՀ երկրներում ծանոթանալ Հայաստանի մշակութային, քաղաքական և տնտեսական կյանքին: Նշված ծրագրի գծով հաշվետու տարվա պետական բյուջեի ծախսերը կազմել են 90.1 մլն դրամ, որն ամբողջությամբ ֆինանսավորվել է և նախորդ տարվա համեմատ աճել է 10%-ով: Հաշվետու տարվա ընթացքում կանխատեսված 74 ժամի դիմաց եթեր են հեռարձակվել 103 ժամ 54 րոպե հեռուստահաղորդումներ՝ նախորդ տարվա 70 եթերային ժամի համեմատ, իսկ կանխատեսված 70 ժամի դիմաց եթեր են հեռարձակվել 39 ժամ 43 րոպե ռադիոհաղորդումներ՝ նախորդ տարվա 80 եթերային ժամի դիմաց:

Հասարակական կարծիքի ուսումնասիրման նպատակով «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» ՓԲԸ-ին հատկացվել է 8 մլն դրամի պետական աջակցություն (100%), որը պահպանվել է նախորդ տարվա մակարդակին:

2011 թվականի պետական բյուջեից 61.5 մլն դրամ պետական աջակցություն է հատկացվել «Տնտեսական բարեփոխումների վերլուծական տեղեկատվական կենտրոն» ՊՈԱԿ-ին, որը կատարվել է 100%-ով և պահպանվել նախորդ տարվա մակարդակին:

Հաշվետու տարվա պետական բյուջեից 78.4 մլն դրամ տրամադրվել է գնումների հրապարակայնության ապահովմանը, որը կազմել է նախատեսվածի 91.2%-ը և 5.6%-ով զիջել է նախորդ տարվա ցուցանիշը:

Հայաստան-Սփյուռք գործակցության թեմայով հեռուստահաղորդումների և տեսահոլովակների պատրաստման, հեռարձակման, ձեռքբերման և բազմացման նպատակով հաշվետու տարվա պետական բյուջեից տրամադրվել է 34.5 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 99.8%-ը: Ծրագրի շրջանակներում պատրաստվել են հայապահպանություն քարոզող ֆիլմաշարեր և տեսահոլովակներ սփյուռքի համայնքներին տրամադրելու և հեռարձակելու նպատակով: 2010 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 2.1 անգամ՝ պայմանավորված աշխատանքների ծավալների ավելացմամբ. 2011 թվականին պատրաստվել է 54 հաղորդում և տեսահոլովակ՝ նախորդ տարվա 11-ի փոխարեն:

2011 թվականին 968.5 մլն դրամ են կազմել *հրատարակչությունների և խմբագրությունների* դասի ծախսերը՝ 99.8%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Նախորդ տարվա համեմատ հրատարակչությունների և խմբագրությունների ծախսերն աճել են 21.6%-ով՝ հիմնականում

պայմանավորված հրատարակչական, տեղեկատվական և տպագրական ծառայությունների ծախսերի աճով:

Պետական մամուլի հրատարակմանը տրամադրվել է 68.9 մլն դրամ (100%), որը հատկացվել է «Հանրապետություն» ՓԲԸ-ին՝ «Հայաստանի Հանրապետություն» թերթի հրատարակման համար և «Հայաստանի Հանրապետություն-Ռեսպուբլիկա Արմենիա» ՓԲԸ-ին՝ «Ռեսպուբլիկա Արմենիա» թերթի հրատարակման համար: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:

Գրականության հրատարակմանը տրամադրվել է 100.3 մլն դրամ (100%): Ծրագրի շրջանակներում 2011 թվականին հրատարակվել է 59 անուն գիրք, զիջելով նախորդ տարվա ցուցանիշը 4.9%-ով:

Գիտական ամսագրերի և մենագրությունների հրատարակմանը տրամադրվել է 61.6 մլն դրամ (100%), որը նախորդ տարվա համեմատ աճել է 5.4%-ով:

Տնտեսագիտական հրապարակումների շրջանակներում «Էկոնոմիկա» հանդես ՓԲԸ-ին տրամադրվել է 38.6 մլն դրամ կամ նախատեսվածի 100%-ը: 2010 թվականի համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:

Ոչ պետական մամուլի հրատարակմանը տրամադրվել է 46.4 մլն դրամ (97.1%): Ծրագրի շրջանակներում պետական հոգածություն է ցուցաբերվում ոչ պետական մամուլին, ինչի միջոցով բնակչությանը հնարավորություն է ընձեռվում տեղեկույթ ստանալու տեղերից: Պետական աջակցություն է ցուցաբերվում նաև ազգային փոքրամասնությունների լեզվով լույս տեսնող գրական և մշակութային մամուլին: 2011 թվականին հրատարակվել են 66 անուն թերթեր և ամսագրեր: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 1.9%-ով:

Մանկական, մանկապատանեկան թերթերի և ամսագրերի հրատարակմանը տրամադրվել է 39.7 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական և 2.3%-ով զիջելով 2010 թվականի ցուցանիշը:

Հրատարակչական, տեղեկատվական և տպագրական ծառայությունների ձեռքբերման ծախսերը կազմել են 395.5 մլն դրամ կամ ծրագրվածի 100%-ը: Միջոցները տրամադրվել են ՀՀ արդարադատության և արտաքին գործերի նախարարություններին: Այս ծրագրի շրջանակներում իրականացվում է «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր», «Հայաստանի Հանրապետության գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր», «Երևանի իրավական ակտերի տեղեկագիր», «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր» (ռուսերեն) և «Քաղաքային ու գյուղական համայնքների նորմատիվ իրավական ակտերի ժողովածու» պարբերականների հրատարակման, քաղաքացիական կացության ակտերի գրանցման, իրավաբանական անձանց պետական գրանցման, «Առլիս» տեղեկատվական համակարգի պահպանման և շահագործման աշխատանքները, ինչպես նաև ՀՀ մուտքի վիզայի բլանկների ու

միջազգային պայմանագրերի տպագրությունը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 53.1%-ով՝ պայմանավորված այն հանգամանքով, որ 2010 թվականին ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից հրատարակչական ծառայությունների ձեռքբերման նպատակով հատկացվել էր լրացուցիչ գումար, որը 2011 թվականին ներառվել է տվյալ ծրագրում, ինչպես նաև ՀՀ մուտքի վիզայի բլանկների խմբաքանակի ավելացմամբ:

Վրաստանի հայալեզու լրատվամիջոցներին աջակցության շրջանակներում 10 մլն դրամ է հատկացվել «Վրաստան» թերթի հրատարակմանը, որն ամբողջությամբ օգտագործվել է: 2010 թվականի համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:

Թարգմանչական ծառայությունների համար նախատեսված 120 մլն դրամը նույնպես ամբողջությամբ օգտագործվել է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 17.6%-ով՝ պայմանավորված աշխատանքների ծավալի աճով. 2011 թվականին թարգմանվել է 10058 էջ՝ նախորդ տարվա 8516-ի փոխարեն:

Մասնավորեցվող պետական գույքի վերաբերյալ տեղեկությունների հրապարակման գծով տրամադրվել է 4.3 մլն դրամ կամ նախատեսվածի 85.4%-ը, որը խնայողության արդյունք է: Ծրագրի շրջանակներում «Ազգ» օրաթերթի կողմից մատուցվել են տեղեկատվական սպասարկման ծառայություններ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 41.8%-ով՝ պայմանավորված այն հանգամանքով, որ գույքի օտարման դեպքում մրցույթի անցկացման մասին ծանուցման հրապարակումն իրականացվել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության կայքում:

Գրականության հրատարակմանը տրամադրվել է 32.1 մլն դրամ աջակցություն (100%): Հատկացումների հաշվին հրատարակվել են 44 անուն գիրք՝ նախորդ տարվա 49-ի փոխարեն, և 9 էլեկտրոնային հրատարակում՝ նախորդ տարվա 7-ի փոխարեն: 2010 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 19.7%-ով:

Տեղեկատվական և ուսուցողական կայքերի մշակման և սպասարկման ծառայությունների ծախսերը կազմել են 30.2 մլն դրամ (99.8%)՝ 47%-ով գերազանցելով 2010 թվականի ցուցանիշը, ինչը պայմանավորված է միջոցառումների ծավալների ավելացմամբ: Միջոցները հատկացվել են «Հայերն այսօր» էլեկտրոնային բազմալեզու օրաթերթի հրատարակման, էլեկտրոնային գրադարանի ստեղծման ու արևելահայերենից արևմտահայերեն և հակառակը փոխարկիչը համալրելու և սպասարկելու աշխատանքներին:

ՈՒսումնական և հանրամատչելի գրականության հավաքագրման և սփյուռքի համայնքներին առաքման նպատակով հատկացվել է 11 մլն դրամ (100%):

Արևմտահայերենի հիմնական դասագրքի ստեղծմանը հատկացվել է 10 մլն դրամ (100%): Վերոհիշյալ 2 ծրագրերը 2011 թվականին իրականացվել են առաջին անգամ:

Հաշվետու տարում *տեղեկատվության ձեռքբերման* գծով պետական բյուջեի ծախսերը կազմել են 149.6 մլն դրամ՝ 100%-ով ապահովելով նախատեսված հատկացումները:

Տեղեկատվության ձեռքբերման, պահպանման և արխիվացման ծառայություններ են մատուցվել «Արմենպրես» ՓԲԸ-ի կողմից, որը տեղեկույթ է տրամադրել հանրապետության ԶԼՄ-ներին և արտերկրում գտնվող ՀՀ դեսպանատներին: Այս նպատակով հատկացվել է 73.9 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 7.5%-ով՝ պայմանավորված աշխատավարձի բարձրացմամբ:

Հանրային իրազեկման ապահովմանը տրամադրվել է 75.7 մլն դրամ, որը 2010 թվականի համեմատ փոփոխություն չի կրել:

ՀՀ 2011 թվականի պետական բյուջեից 402 մլն դրամ է տրամադրվել *կրոնական և հասարակական այլ ծառայությունների* խմբի ծրագրերի ֆինանսավորմանը, որոնք կատարվել են 78.6%-ով: Շեղումը հիմնականում պայմանավորված է երիտասարդական ծրագրերի ծախսերի կրճատմամբ:

222.5 մլն դրամ է տրամադրվել *երիտասարդական ծրագրերի* դասին, որոնք ընդհանուր առմամբ կատարվել են 67%-ով:

Տվյալ դասի ծախսերի հիմնական մասը՝ 127.3 մլն դրամ, կազմել են «Երիտասարդական ծրագրեր»-ի ծախսերը, որոնք կատարվել են 54%-ով և 29.8%-ով զիջել են նախորդ տարվա ցուցանիշը՝ հիմնականում պայմանավորված «Երիտասարդական միջոցառումների կազմակերպման կենտրոն» և «Սպորտային միջոցառումների կազմակերպման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների վերակազմակերպման գործընթացով, որոնք լուծարվել են, և ստեղծվել է ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության «Սպորտի և երիտասարդական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը: 2011 թվականին ֆինանսավորվել են երիտասարդական հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված ավելի պակաս թվով միջոցառումներ:

Երիտասարդական ծրագրերի շրջանակներում թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցառումներին տրամադրվել է 7.6 մլն դրամ կամ նախատեսվածի 94.6%-ը: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն աճել են 97.6%-ով: 2010 թվականին ծրագիրը նախատեսված է եղել անցկացնել երկու փուլով, և մեկ փուլն իրականացվել է անվճար:

«Արի տուն» ծրագրի շրջանակներում Սփյուռքի երիտասարդության՝ Հայաստան այցելությունների կազմակերպման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է 75 մլն դրամ՝ ապահովելով 99.9% կատարողական: Ծրագիրն իրենից ներկայացնում է 13-20 տարեկան սփյուռքահայ երիտասարդների 14-օրյա ճանաչողական շրջայցեր հայրենիքում: Երիտասարդները 10

օր բնակվում են հայ ընտանիքներում, 4 օր՝ ճամբարում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 2.1 անգամ՝ պայմանավորված մասնակիցների թվի ավելացմամբ:

«Արի տուն» ծրագիրը ֆինանսավորվել է նաև արտաբյուջետային միջոցների հաշվին. նախատեսված 1.3 մլն դրամի դիմաց օգտագործվել է 612.1 հազ. դրամ:

Հայաստանում ինտելեկտուալ խաղերի զարգացմանը տրամադրվել է 12 մլն դրամ աջակցություն՝ ապահովելով 100% կատարողական: 2010 թվականի համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:

«*Քաղաքական կուսակցություններ, հասարակական կազմակերպություններ, արհմիություններ*» դասի ծախսերը 2011 թվականին կազմել են 179.6 մլն դրամ՝ 100%-ով ապահովելով ծրագիրը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:

Այլ դասերին չպատկանող հանգստի, մշակույթի և կրոնի դասի շրջանակներում գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման (նախարարությունների աշխատակազմերի մասով) նպատակով տրամադրվել է 441.4 մլն դրամ, որը կազմել է ծրագրվածի 99.3%-ը: Միջոցները հատկացվել են ՀՀ մշակույթի ու ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություններին: Նախորդ տարվա համեմատ հատկացումներն աճել են 7.1%-ով: Ծախսերի աճը հիմնականում պայմանավորված է քաղաքացիական ծառայողների աշխատավարձերի բնականոն աճով, հավելավճարների, դրանց հետ կապված պարտադիր սոցիալական ապահովության վճարների, կապի, տրանսպորտային նյութերի, գազի սակագնի աճով:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կարողությունների զարգացման (նախարարությունների աշխատակազմերի մասով) նպատակով տրամադրվել է 4.1 մլն դրամ, որը կազմել է ծրագրվածի 100%-ը: Միջոցները հատկացվել են ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությանը:

<u>Կրթություն</u>

2011 թվականի *կրթության բնագավառում* ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են շուրջ 106.1 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 99% կատարողական: Ծրագրից շեղումը հիմնականում առաջացել է կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների ծախսերում: 2010 թվականի համեմատ կրթության բնագավառի ծախսերն աճել են 8.5%-ով, որը հիմնականում պայմանավորված է կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների և տարրական ընդհանուր կրթության ծախսերի ավելացմամբ:

Հաշվետու տարում կրթության ծախսերից շուրջ 24.8 մլրդ դրամն ուղղվել է նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթության, 45.2 մլրդ դրամը՝ միջնակարգ ընդհանուր կրթության ծրագրերին՝ գրեթե ամբողջովին ապահովելով նախատեսված ծավալը: Նշված ծախսերի տեսակարար կշիռը կրթության ընդհանուր ծախսերում կազմել է համապատասխանաբար 23.4% և 42.6%:

2011 թվականի պետական բյուջեից նախադպրոցական կրթությանը հատկացվել է 88.4 մլն դրամ՝ ապահովելով ծրագրային ցուցանիշի 98.7% կատարում: Այս ծրագիրը մեկնարկել է 2011 թվականից՝ Արագածոտնի, Լոռու, Արարատի և Արագածոտնի մարզերում, և ուղղված է մանկապարտեզ չունեցող համայնքների ավագ տարիքի երեխաների կրթության կազմակերպմանը: Ծրագրում ընդգրկվել են 982 երեխա:

Հաշվետու տարում տարրական, հիմնական և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության բնագավառներում հանրակրթական ուսուցման ծախսերը կատարվել են 100%-ով՝ կազմելով շուրջ 64.5 մլրդ դրամ, որից 23.3 մլրդ դրամը կազմել են տարրական, 27.8 մլրդ դրամը՝ հիմնական ընդհանուր կրթության, շուրջ 13.4 մլրդ դրամը՝ միջնակարգ ընդհանուր կրթության ծախսերը: Նախորդ տարվա համեմատ հանրակրթական ուսուցման ծախսերն աճել են 0.8%-ով, որը հիմնականում պայմանավորված է նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ: Հանրակրթության համակարգում 2011 թվականին գործել է 1368 դպրոց 365.5 հազար աշակերտով՝ նախորդ տարվա 369.6 հազարի դիմաց: Դպրոցների մանկավարժների միջին ամսական աշխատավարձը կազմել է 118093 դրամ, վարչական անձնակազմինը՝ 176222 դրամ:

Երաժշտական դպրոցներում ուսուցմանը տրամադրվել է շուրջ 261.7 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 100%-ը: Նշված գումարից շուրջ 7.9 մլն դրամը կազմել է երաժշտական դպրոցներում սովորողների կրթաթոշակը: Հատկացումների հաշվին ապահովվել է Երևանի Չայկովսկու անվան միջնակարգ մասնագիտական դպրոցի գործունեությունը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 2.9%-ով կամ 7.4 մլն դրամով, որն ուղղվել է 12-ամյա կրթության համակարգի ներդրման հետ կապված՝ մանկավարժների լրացուցիչ աշխատավարձի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների ապահովմանը:

Հատուկ կրթության ծախսերը կատարվել են 99.2%-ով՝ կազմելով շուրջ 2.6 մլրդ դրամ, որից 851.5 մլն դրամը՝ տարրական, 1.3 մլրդ դրամը՝ հիմնական, 439.5 մլն դրամը՝ միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության գծով: 2010 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 1.9%-ով կամ 48.2 մլն դրամով՝ պայմանավորված նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ: Հաշվետու տարում հատկացված միջոցներով գործել է 23 դպրոց 2504.7 աշակերտով՝ նախորդ տարվա 2675-ի դիմաց:

Հաշվետու տարում տարրական, հիմնական և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության բնագավառներում մասնագիտացված հանրակրթական ուսուցման կազմակերպման համար

ծախսվել է ավելի քան 1.7 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 99.6%-ը: Նշված գումարից 13.4 մլն դրամը տրամադրվել է մասնագիտացված հանրակրթական ուսուցման կրթաթոշակների վճարմանը: 2010 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 13%-ով, ինչը պայմանավորված է աշակերտների թվի ավելացմամբ, ինչպես նաև նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

2011 թվականին տարրական, հիմնական և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության բնագավառներում ներառական կրթության ծախսերը կատարվել են 98.7%-ով՝ կազմելով ավելի քան 744.8 մլն դրամ, որից 356.9 մլն դրամը՝ տարրական, 351.3 մլն դրամը՝ հիմնական ընդհանուր կրթության և 36.7 մլն դրամը՝ միջնակարգ ընդհանուր կրթության ծախսերն են: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 18.6%-ով՝ հիմնականում պայմանավորված աշակերտների թվաքանակի աճով և նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

Երեկոյան ուսուցման ծրագրի շրջանակներում ֆինանսավորվել են ՀՀ Շիրակի մարզի և Երևան քաղաքի երեկոյան դպրոցները, որոնց տրամադրվել է 44.6 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 100%-ը, իսկ նախորդ տարվա համեմատ աճելով 1.7%-ով, ինչը պայմանավորված է աշակերտների թվաքանակի ավելացմամբ:

«Ավագ դպրոցների համակարգի ներդրում» ծրագրի իրականացման համար տրամադրվել է 51.2 մլն դրամ՝ ապահովելով 96.1% կատարողական: Ծրագրի շրջանակներում 16 դպրոցների համար ձեռք է բերվել թվով 48 լաբորատորիաների վերազինման համար անհրաժեշտ գույքի և սարքավորումների լրակազմ՝ նախորդ տարվա 43 դպրոցների համար ձեռք բերված թվով 129 լաբորատորիաների դիմաց: Արդյունքում 2010 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 64.2%-ով:

2011 թվականին նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության դասի ծախսերը կազմել են շուրջ 5.1 մլրդ դրամ կամ նախատեսված հատկացումների 98.5%-ը, որից 1.9 մլրդ դրամը՝ նախնական մասնագիտական (արհեստագործական), 3.2 մլրդ դրամը՝ միջին մասնագիտական կրթության ծախսերն են: Նշված դասերի գծով ծրագրված ցուցանիշները կատարվել են համապատասխանաբար 98.1%-ով և 98.8%-ով:

Հաշվետու տարում նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության ծրագրի շրջանակներում կատարվել են շուրջ 1.6 մլրդ դրամ ծախսեր՝ ապահովելով 98.1% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 6%-ով, ինչը պայմանավորված է աշակերտների թվաքանակի ավելացմամբ: Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական հաստատություններում սովորող ուսանողներին տրամադրվել է 307.9 մլն դրամ կրթաթոշակ՝ 98.4%-ով ապահովելով նախատեսված հատկացումները: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 1.9%-ով՝ պայմանավորված կրթաթոշակ ստացող սովորողների թվի աճով:

2011 թվականին միջին մասնագիտական կրթության ոլորտում շուրջ 2.9 մլրդ դրամ է տրամադրվել միջին մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների, 286.6 մլն դրամ՝ միջին մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակների վճարմանը: Նշված ծրագրերը կատարվել են համապատասխանաբար 98.8%-ով և 98.5%-ով: 2010 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 9.8%-ով՝ հիմնականում պայմանավորված աշակերտների թվաքանակի աճով:

2011 թվականին ՀՀ պետական բյուջեից շուրջ 7.8 մլրդ դրամ տրամադրվել է բարձրագույն կրթության բնագավառին, որից 7.2 մլրդ դրամը բարձրագույն մասնագիտական կրթության ծախսերն են, 593.8 մլն դրամը՝ հետբուհական մասնագիտական կրթության ծախսերը: Բարձրագույն կրթության ծախսերի տարեկան ծրագիրն ապահովվել է 99.3%-ով, իսկ նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 3.7%-ով կամ 274.1 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է ուսանողների միջին տարեկան թվի աճով և նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

Բարձրագույն մասնագիտական կրթության բնագավառին կատարված հատկացումների հաշվին իրականացվել են երեք ծրագրեր, որոնցում մեծ տեսակարար կշիռ ունեն բարձրագույն մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրման համար կատարված հատկացումները: Նշված ծախսերը ֆինանսավորվել են 100%-ով՝ կազմելով 4.8 մլրդ դրամ: Բարձրագույն մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակներին տրամադրվել է շուրջ 1.2 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 99.7%-ը: 1.2 մլրդ դրամ են կազմել նաև բարձրագույն կրթության ծրագրի ծախսերը, որոնք կատարվել են 100%-ով:

Հաշվետու տարում հետբուհական մասնագիտական կրթության բնագավառի ծախսերը կատարվել են 92.5%-ով՝ կազմելով շուրջ 593.8 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ հետբուհական մասնագիտական կրթության ծախսերն աճել են 1.5%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է հետբուհական մասնագիտական կրթության գծով տրամադրված նպաստների և կրթաթոշակների ծախսերի աճով: Հետբուհական մասնագիտական կրթության ոլորտին կատարված հատկացումների հաշվին իրականացվել են 5 ծրագրեր: Մասնավորապես՝ 21.8 մլն դրամ տրամադրվել է գիտական կադրերի պատրաստման գծով նպաստներին, որը կատարվել է 75.5%-ով՝ միևնույն ժամանակ 16%-ով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը, որը պայմանավորված է ասպիրանտների թվաքանակի նվազմամբ՝ կապված օտար լեզվի ընդունելության քննությունը չհաղթահարելու հետ:

Ասպիրանտական և դոկտորանտական կրթաթոշակների համար 2011 թվականի պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 45.2 մլն դրամ, որը կատարվել է 90.5%-ով: Շեղումը պայմանավորված

է ասպիրանտների և դոկտորանտների թվաքանակի նվազմամբ, որի հետ կապված նշված ծախսերը նվազել են նաև նախորդ տարվա համեմատ՝ 8.7%-ով:

Սփյուռքագիտության ոլորտում գիտական կադրերի պատրաստման գծով տրամադրվել են 3.6 մլն դրամ նպաստներ, որոնք ֆինանսավորվել են նախատեսված ծավալով: Ծրագրի շրջանակներում 12 ուսանողների հատկացվել են ուսման վճարներ: 2010 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 20%-ով՝ պայմանավորված ուսանողների թվի ավելացմամբ:

Հետբուհական մասնագիտական կրթության գծով նպաստների տրամադրման և հետբուհական մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակի ծախսերը համապատասխանաբար կազմել են 332.7 մլն և 190.4 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի կատարումը 91.9%-ով և 96.5%-ով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են համապատասխանաբար 2.5%-ով և 4.8%-ով՝ պայմանավորված նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

Հաշվետու տարում *ըստ մակարդակների չդասակարգվող կրթության* խմբի ծախսերը կազմել են շուրջ 3.6 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.2%-ը, որից 2.5 մլրդ դրամը արտադպրոցական դաստիարակության, 1.1 մլրդ դրամը՝ լրացուցիչ կրթության ծախսերն են: 2010 թվականի համեմատ ըստ մակարդակների չդասակարգվող կրթության ծախսերն ավելացել են 13.5%-ով կամ 423.2 մլն դրամով: Մասնավորապես՝ 7.6%-ով կամ 176.6 մլն դրամով ավելացել են արտադպրոցական դաստիարակության, 29.8%-ով կամ 246.6 մլն դրամով՝ լրացուցիչ կրթության ծախսերը:

Արտադպրոցական դաստիարակության ծախսերի աճը հիմնականում պայմանավորված է գազի և աշխատավարձի ծախսերի աճով: Արտադպրոցական դաստիարակությանը 2011 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 8.8 մլն դրամ աջակցություն՝ ապահովելով 88.3% կատարողական: Ծրագիրը մեկնարկել է 2011 թվականին, իսկ ցածր կատարողականը կապված է ՀՀ անկախության 20-ամյակին նվիրված միջոցառումների կատարման շրջանակներում արտադպրոցական դաստիարակության աջակցության մասով իրականացվող «Հուսո մեկնարկներ» սպորտլանդիայի հանրապետական փուլը 2012 թվականի 2-րդ եռամսյակ տեղափոխելու հետ:

Շուրջ 1.5 մլրդ դրամ է հատկացվել արտադպրոցական դաստիարակության ծրագրի ֆինանսավորմանը՝ ապահովելով 99.7% կատարողական: 2010 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 7.3%-ով կամ 100.3 մլն դրամով:

Շախմատի մրցույթների պատրաստման ծառայություններին 2011 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 11.4 մլն դրամ, որն օգտագործվել է նախատեսված ամբողջ ծավալով: 2010 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 6.5%-ով:

«Արտադպրոցական դաստիարակություն հասարակական կազմակերպությունների կողմից» ծրագրի համար նախատեսված շուրջ 452.6 մլն դրամը նույնպես ամբողջությամբ օգտագործվել է:

Ծրագրի շրջանակներում պետական աջակցություն ստացող մարզական հասարակական կազմակերպությունների 23 մարզադպրոցում 566 խմբերի 5711 պարապողների հետ աշխատում է 259 մարզիչ: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն աճել են 6.9%-ով:

Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցման նպատակով 2011 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 240.4 մլն դրամ, որը կազմել է նախատեսվածի 99%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 9.8%-ով, որը պայմանավորված է աշակերտների թվաքանակի աճով:

«ՀՀ համայնքային բյուջներին սուբվենցիաների տրամադրում» ծրագրի ֆինանսավորման համար նախատեսվել է շուրջ 122.2 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 8.1%-ով:

Երաժշտական և արվեստի դպրոցներում ուսումնամեթոդական աշխատանքներին տրամադրվել է շուրջ 51.4 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում Մշակութային կրթության աջակցության հիմնադրամը Երևանի 1 և մարզային 10 ներկայացուցչություններով հանրապետության երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների սաներին ու ուսուցիչներին ցուցաբերել է ուսումնամեթոդական և գործնական աջակցություն: Վերապատրաստման դասալսումներին մասնակցել է 770 ուսուցիչ, վարպետության դասընթացներին՝ 530 մանկավարժ և 570 աշակերտ: Հաստատվել են երաժշտական, արվեստի, գեղարվեստի և պարարվեստի դպրոցների միասնական ուսումնական պլանները: 2010 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 6.8%-ով:

2011 թվականի պետական բյուջեով երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների համար ուսումնական նոր ծրագրերի, դասագրքերի, մեթոդական ձեռնարկների մշակման և հրատարակման համար նախատեսված 17.1 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակներում 2011 թվականին տպագրվել են գեղարվեստական կրթության 31 անուն ուսումնական նոր ծրագրեր, դասագրքեր, մեթոդական ձեռնարկներ: Հրատարակված գրականության մի մասն անվճար տրամադրվել է հանրապետության մշակութային կրթօջախներին: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:

Արտադպրոցական դաստիարակության բնագավառում նախատեսված՝ «Վինդսերֆինգ մարզաձևին առնչվող ծառայություններ» ծրագրի գծով նախատեսվել է շուրջ 44.8 մլն դրամ, որը նախատեսված ամբողջ ծավալով ֆինանսավորվել է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 2.7%-ով:

«ՀՀ մանկապատանեկան մարզադպրոցներին, մարզաձևերի ազգային ֆեդերացիաներին և այլ մարզական հասարակական կազմակերպություններին գույքով ապահովում» ծրագրի գծով

տրամադրվել է 45.8 մլն դրամ՝ ապահովելով 91.7% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 8.3%-ով:

Մանկապատանեկան մարզադպրոցներում աշխատող մարզիչ-մանկավարժների վերապատրաստման կազմակերպման նպատակով հատկացվել է 5.6 մլն դրամ կամ նախատեսվածի 80.7%-ը, որը տնտեսման արդյունք է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 3.1%-ով՝ պայմանավորված վերապատրաստվողների թվի ավելացմամբ:

«Հակոբ Կոջոյան» կրթահամալիր» ՊՈԱԿ-ում արտադպրոցական դաստիարակության կազմակերպման նպատակով պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման ֆինանսավորման համար նախատեսված շուրջ 6.5 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է:

2011 թվականին պետական բյուջեից շուրջ 1.1 մլրդ դրամ է տրամադրվել *լրացուցիչ կրթությանը*՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 98.6%-ը: Նախորդ տարվա համեմատ լրացուցիչ կրթության ծախսերն աճել են 29.8%-ով:

ՀՀ քաղաքացիական ծառայողների վերապատրաստման գծով պետական պատվերի շրջանակներում 2011 թվականին օգտագործվել է 24 մլն դրամ՝ ապահովելով 97.8% կատարողական: Շեղումը պայմանավորված է օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին իրականացված վերապատրաստումներով (միջազգային կազմակերպությունների կողմից, վարկային և դրամաշնորհային ծրագրերով), օրենքով նախատեսված համապատասխան մարմիններում տեղի ունեցող վերակազմավորումներով, կադրերի հոսունությամբ: 2011 թվականի ընթացքում վերապատրաստվել է 2149 քաղաքացիական ծառայող՝ նախորդ տարվա 2146-ի դիմաց: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 1.5%-ով:

Լրացուցիչ կրթության հետևյալ ծրագրերը՝ «Հանրային հատվածի ֆինանսական ոլորտի մասնագետների վերապատրաստման ծառայություններ», «Կադրերի պատրաստման և վերապատրաստման ծառայություններ», «Բուժանձնակազմի մասնագիտացում, շարունակական ուսուցում և վերապատրաստում» և «Մասնագիտական վերապատրաստում ստացող ունկնդիրների կրթաթոշակ», ֆինանսավորվել են ամբողջությամբ, որոնց տրամադրվել է համապատասխանաբար 85 մլն, 72 մլն, 129.9 մլն և 18.5 մլն դրամ: «Բուժանձնակազմի մասնագիտացում, շարունակական ուսուցում և վերապատրաստում» և «Մասնագիտական վերապատրաստում ստացող ունկնդիրների կրթաթոշակ» ծրագրերի ծախսերը նախորդ տարվա համեմատ նվազել են համապատասխանաբար 8.5%-ով և 27.8%-ով, քանի որ լրացուցիչ կրթության գծով պետական պատվերով սովորողների ուսուցման գործընթացի ապահովումը վերապահվել է Բժշկական համալսարանին:

«Լրացուցիչ կրթության ուսուցման գծով պետական պատվեր» ծրագրի շրջանակներում օգտագործվել է շուրջ 17.7 մլն դրամ կամ նախատեսվածի 99.8%-ը: Միջոցներն ուղղվել են

դատախազների տարեկան լրացուցիչ վերապատրաստմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե փոփոխություն չեն կրել:

ՀՀ արդարադատության նախարարության հատուկ ծառայողների վերապատրաստման և հատուկ ուսուցման նպատակով ծախսվել է 288.3 մլն դրամ՝ ապահովելով 99.5% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 86.2%-ով: 2011 թվականին վերապատրաստվողների և հատուկ ուսուցում անցնողների թվաքանակը կազմել է 2557 մարդ՝ 2010 թվականի 1380-ի դիմաց:

Հաշվետու տարում ընտրական հանձնաժողովների անդամների մասնագիտական դասընթացների կազմակերպման ծախսերը կազմել են 52 մլն դրամ կամ նախատեսվածի 96.4%-ը:

Օտարերկրյա պետությունների ուսումնական հաստատություններ գործուղված փրկարարական ծառայողների ուսուցման ծախսերը կազմել են շուրջ 10 մլն դրամ՝ ապահովելով 70.8% կատարողական: Ծախսերը ներառում են ՌԴ քաղաքացիական պաշտպանության ակադեմիա գործուղված փրկարարական ծառայողների և նրանց ընտանիքի անդամների ճանապարհածախսը (տարեկան երկու անգամ) և կրթաթոշակը: Տնտեսումը պայմանավորված է այն հանգամանքով, որ փրկարարական ծառայողները չեն օգտվել ձմեռային արձակուրդը ՀՀ-ում անցկացնելու հնարավորությունից: Արդյունքում նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 11.6%-ով:

ՀՀ Ազգային Ժողովի աշխատակազմի պետական ծառայողների վերապատրաստման նպատակով տրամադրվել է 130 հազար դրամ՝ ապահովելով 14.4% կատարողական: Ծրագրի շրջանակներում վերապատրաստվել են 35 աշխատակից:

Հաշվետու տարում դատավորների, դատական ծառայողների, դատական կարգադրիչների վերապատրաստման ծառայություններին տրամադրվել է շուրջ 158.6 մլն դրամ՝ կազմելով նախատեսվախի 99%-ը: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

219 մլն դրամ է տրամադրվել «Վերապատրաստման ծառայություններ» ծրագրին՝ 97.7%-ով ապահովելով նախատեսված ցուցանիշը: Միջոցներն ուղղվել են ՀՀ դատախազության, ՀՀ տարածքային կառավարման նախարարության և ՀՀ արտաքին գործերի նախարարության աշխատակիցների վերապատրաստմանը: Վերապատրաստման ծառայությունների ծախսերը նախորդ տարվա համեմատ ավելացել են 67.2%-ով, որը հիմնականում պայմանավորված է վերապատրաստում անցած աշխատակիցների թվի ավելացմամբ:

2011 թվականի պետական բյուջեի կրթության ոլորտի ծախսերի 18.1%-ն ուղղվել է *կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների* ֆինանսավորմանը: Նշված ծախսերը կազմել են շուրջ 19.2 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրային հատկացումների 96.1%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ՀԲ աջակցությամբ իրականացվող Կրթության որակի և համապատասխանության երկրորդ ծրագրի և նախնական մասնագիտական ու միջին

մասնագիտական կրթության և ուսուցման բարեփոխումներ ծրագրի շրջանակներում գույքի և սարքավորումների ձեռքբերման ծախսերի ցածր կատարողականով:

Սփյուռքի հայկական դպրոցների ուսուցիչների վերապատրաստման ծախսերը կազմել են շուրջ 29.2 մլն դրամ՝ ապահովելով 99.9% կատարողական: Ծրագրի շրջանակներում 2011 թվականին վերապատրաստվել են 154 սփյուռքահայ ուսուցիչներ՝ նախատեսված 185-ի և նախորդ տարվա 75-ի դիմաց: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 7.7%-ով՝ պայմանավորված վերապատրաստում անցած ուսուցիչների թվաքանակի ավելացմամբ:

Տվյալ խմբում ընդգրկված՝ կրթական օբյեկտների հիմնանորոգման ծախսերը կազմել են շուրջ 5.5 մլրդ դրամ՝ 99.6%-ով ապահովելով ծրագրային ցուցանիշը: Ծրագրի շրջանակներում հիմնանորոգվել են 110 կրթական օբյեկտներ (Երևանում՝ 28, մարզերում՝ 82)՝ նախորդ տարվա 117-ի դիմաց: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 71.4%-ով՝ պայմանավորված շինարարական աշխատանքների ծավալների ավելացմամբ:

Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հիմնանորոգման ծախսերին տրամադրվել է շուրջ 1.2 մլրդ դրամ, որն օգտագործվել է նախատեսված ամբողջ ծավալով: Ծրագրի շրջանակներում հիմնանորոգվել են 15 միջին մասնագիտական կրթական օբյեկտներ (Երևանում՝ 3, մարզերում՝ 12)՝ 2010 թվականի 3 օբյեկտի դիմաց: Արդյունքում նախորդ տարվա համեմատ այս նպատակով կատարված բյուջետային ծախսերն աճել են 13.3 անգամ:

Ուսանողներին զեղչային գներով հանրակացարանային պայմանների տրամադրման համար նախատեսված 30.2 մլն դրամի ֆինանսավորումը կատարվել է ամբողջությամբ: Ծրագրից օգտվել է 273 ուսանող: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն ավելացել են 42.6%-ով, ինչը պայմանավորված է նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

Նախագծային աշխատանքներին ուղղվել է 68.6 մլն դրամ՝ կազմելով նախատեսված գումարի 99.3%-ը: Ծրագրի շրջանակներում կատարվել է նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննություն:

Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների խմբում ընդգրկված՝ կրթական օբյեկտների շինարարությանը ՀՀ 2011 թվականի պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 2.2 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 100%-ը: Ծրագրի շրջանակներում հաշվետու տարում կատարվել են շինարարական աշխատանքներ 19 դպրոցներում՝ նախորդ տարվա 17 դպրոցի դիմաց: Արդյունքում նախորդ տարվա համեմատ ծրագրի գծով բյուջետային ծախսերն աճել են 2.9 անգամ:

2011 թվականին 189.3 մլն դրամ է տրամադրվել մարզական օբյեկտների շինարարությանը՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում կառուցվել են 4 մարզադպրոց՝ 2010 թվականի 3-ի դիմաց: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն ավելացել են 2.7 անգամ:

Ավագ դպրոցների շենքերի հիմնանորոգման ծախսերը կատարվել են 99.4%-ով և կազմել 1.9 մլրդ դրամ: Ծրագրի շրջանակներում կատարվել են 20 ավագ դպրոցների հիմնանորոգման աշխատանքներ՝ նախորդ տարվա 8-ի դիմաց: Արդյունքում 2010 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 11.5 անգամ:

Դպրոցականների ամառային հանգստի կազմակերպմանն ուղղվել է 236.7 մլն դրամ, որը ֆինանսավորվել է ամբողջությամբ: 2011 թվականին ծրագրի շրջանակներում, ինչպես և 2010 թվականին, կազմակերպվել է 3000 երեխայի ամառային հանգիստը: 2010 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 10.7%-ով՝ պայմանավորված նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

Ավարտական փաստաթղթերի՝ գովասանագրերի, դասամատյանների, մեդալների, ծրարների, ուսումնական ծրագրերի, մանկավարժական պարբերականների և ուսումնադիտողական պարագաների ձեռքբերման նպատակով ծախսվել է 407.7 մլն դրամ՝ ապահովելով 99.7% կատարողական: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն ավելացել են 1.7%-ով:

Տարրական դասարանների աշակերտներին անվճար դասագրքերով և ուսումնական գրականությամբ ապահովման և ավագ դպրոցների դասագրքերի հրատարակման ծրագրի շրջանակներում ՀՀ 2011 թվականի պետական բյուջեից կատարվել են 764.6 մլն դրամի ծախսեր՝ 100%-ով կատարելով ծրագրային ցուցանիշը: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերը մնացել են անփոփոխ:

ՀՀ հեռավոր, սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային բնակավայրերի պետական հանրակրթական դպրոցների մանկավարժներին փոխհատուցման նպատակով օգտագործվել է շուրջ 50.5 մլն դրամ՝ 68.9%-ով կատարելով ծրագիրը: Ֆինանսավորումը կատարվել է ըստ ՀՀ մարզերի կողմից ներկայացված պարտավորությունների: Ծրագրի շրջանակներում գործուղված մանկավարժների թիվը կազմել է 307՝ նախորդ տարվա 266-ի դիմաց: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 9.5%-ով:

Հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծառայությունների մատուցման նպատակով տրամադրվել է շուրջ 52.7 մլն դրամ՝ ապահովելով 98.8% կատարողական: Ծրագրի շրջանակներում իրականացվել է 7 մարզերի գյուղական բնակավայրերից մանկավարժների և դպրոցահասակ երեխաների տեղափոխումը: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել են 3.7%-ով:

Նախատեսված ամբողջ ծավալով իրականացվել են նաև հետևյալ հինգ ծրագրերը:

- Ռազմագիտության կաբինետների վերականգնման համար 2011 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 15.3 մլն դրամ: Ձեռք է բերվել մի քանի զինատեսակների հատկանիշների մասին պատմող 8810 օրինակ DVD տեսասկավառակ և 2000 օրինակ պաստառ: Նախորդ տարվա

համեմատ տվյալ ծախսերն աճել են 2.9 անգամ՝ պայմանավորված ձեռք բերված ապրանքների քանակի աճով:

- Դպրոցականների հանրապետական սպարտակիադայի անցկացման համար տրամադրվել է 35 մլն դրամ: Անց են կացվել ՀՀ անկախության 20-րդ տարեդարձին նվիրված դպրոցականների հանրապետական 20-րդ խաղերը 6 մարզաձևերից, յուրաքանչյուր մարզաձև անցկացվել է չորս փուլով: Խաղերին մասնակցել են շուրջ 3794 մասնակիցներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:
- Դպրոցականների օլիմպիադաների անցկացման ծախսերը կազմել են շուրջ 41.6 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 25.4%-ով: Վերջինս կապված է 2011 թվականի հայոց լեզվի և հայ գրականության համահայկական օլիմպիադայի անցկացման հետ, որը կազմակերպվում է 2 տարին 1 անգամ: Անց է կացվել հանրապետության դպրոցականների առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլը հանրակրթական 16 առարկաներից, որին մասնակցել են շուրջ 1045 աշակերտներ:
- Համակարգչային և ինտերնետային կապի ծառայությունների ծախսերը հաշվետու տարում կազմել են 678 մլն դրամ: Ծրագիրն իրականացվել է 944 դպրոցում: Նախորդ տարվա նկատմամբ ծախսերը նվազել են 2.9%-ով:
- Հանրակրթությունում փորձարարական մանկավարժական ծրագրերի իրականացմանը տրամադրվել է 94.9 մլն դրամ: Ծրագրում ընդգրկված աշակերտների թիվը 2011 թվականին կազմել է 7827, մեծահասակների թիվը՝ 5000, վերապատրաստվել են նաև թվով 196 ուսուցիչ և դաստիարակ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Ավելի քան 340.3 մլն դրամ տրամադրվել է գնահատման և թեստավորման ծառայություններին, որը կատարվել է 90.9%-ով: Ծրագիրն իրականացնում է «Գնահատման և թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ-ը: 2010 թվականի համեմատ նշված ծախսերը 22.9%-ով նվազել են՝ պայմանավորված այն հանգամանքով, որ 2011 թվականին շրջանավարտներ չեն եղել, և պետական ավարտական քննություններ հանձնողների թիվը նվազել է:

Սփյուռքի հայկական կրթական հաստատությունների համար ուսումնական գրականության և օժանդակ նյութերի տրամադրման համար 2011 թվականի պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 83.4 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 98.7%-ը: Հատկացված միջոցների հաշվին ձեռք են բերվել 47696 հատ 83 անվանում դասագիրք և 5897 հատ 11 անվանում օժանդակ նյութեր: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 21.5%-ով՝ պայմանավորված 2011 թվականին կատարված ձեռքբերումների քանակի աճով:

Շուրջ 13.3 մլն դրամ է տրամադրվել Ջավախքի դպրոցների համար գույքի ձեռքբերման նպատակով, որը կատարվել է 99.7%-ով: Ծրագրի շրջանակներում ձեռք է բերվել 210 համակազմ

ուսուցչական գույք և 140 հատ գրասենյակային պահարան: 2010 թվականի համեմատ տվյալ ծախսերն աճել են 5.1%-ով:

2011 թվականի պետական բյուջեից հատուկ դպրոցների համար նախատեսված ծրագրերի, դասագրքերի, ձեռնարկների, ուսումնական այլ նյութերի մշակման և հրատարակման համար կատարվել են 15.5 մլն դրամի ծախսեր՝ ապահովելով ծրագրված ցուցանիշների 97%-ը: Տնտեսումն առաջացել է կայացած մրցույթների արդյունքում: Ծրագրի շրջանակներում մշակվել և տպագրվել են 13 անուն ձեռնարկներ և ուսումնական այլ նյութեր՝ թվով 7900 օրինակ և ձեռք բերվել «Հայոց պատմություն» DVD տեսասկավառակ՝ թվով 500 օրինակ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 3%-ով:

Նախատեսված ամբողջ ծավալով իրականացվել են նաև հետևյալ ծրագրերը՝

- 2011 թվականին, ինչպես և 2010 թվականին, ակադեմիական փոխճանաչման և շարժունության ծառայությունների ծրագրին պետական բյուջեից նախատեսվել և տրամադրվել է 41.7 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում մշակվել է 990 անուն փաստաթուղթ՝ նախորդ տարվա 960-ի դիմաց:
- Բարձրագույն մասնագիտական կրթության գնահատման համակարգի բարեփոխումների շրջանակներում հաշվետու տարում ծախսվել է 90 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում անցկացվել են երեք հանրապետական և երկու միջազգային կոնֆերանս, իրականացվել են Միջբուհական կոնսորցիումի գործառույթները, ԲՈՒՀ-երի կայքերի սպասարկումը, «Բարձրագույն կրթություն» պրակ 5-ի հրատարակումը և այլն: 2010 թվականի համեմատ այս ծրագրի ծախսերն աճել են 12.5%-ով՝ պայմանավորված 2011 թվականին իրականացված միջոցառումների քանակի ավելացմամբ:
- Մարզական օբյեկտների հիմնանորոգման համար հատկացվել է 60 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում իրականացվել է Երևան քաղաքի «Տորք Անգեղ» մարզական միության շենքի հիմնանորոգումը: 2010 թվականի համեմատ այս ծրագրի ծախսերը նվազել են 69.3%-ով, որը պայմանավորված է կատարված շինարարական աշխատանքների ծավալով:
- Հաշվետու տարում պետական բյուջեից 491.5 մլն դրամ տրամադրվել է կրթության բովանդակային և մեթոդական սպասարկման ու հանրապետության հանրակրթական դպրոցների ուսուցիչների վերապատրաստման ծրագրին: Վերապատրաստման դասընթացներին մասնակցած ունկնդիրների թիվը կազմել է 14955 մարդ, մշակված և փորձագիտական եզրակացություն ստացած էջերի թիվը կազմել է 39555: 2010 թվականի համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:
- 2011 թվականի պետական բյուջեից նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման բարեփոխումների ուղղությամբ կատարվել են ավելի քան 165.2 մլն դրամի ծախսեր: Ծրագրի շրջանակներում մշակվել են մի շարք

մասնագիտությունների չափորոշիչներ, ուսումնական պլաններ և մոդուլային ծրագրեր, ուսումնական ձեռնարկներ, վերապատրաստվել են հաստատությունների տնօրեններ, փոխտնօրեններ, մանկավարժներ, փորձագետներ, կատարվել են հետազոտական, բարեփոխումների արդյունքների գնահատման աշխատանքներ և այլն: 2010 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 2.1%-ով, որը պայմանավորված է 2011 թվականին իրականացված միջոցառումների քանակի ավելացմամբ:

- 2011 թվականին, ինչպես և 2010 թվականին, 65.7 մլն դրամ է տրամադրվել մասնագիտական կրթության որակի ապահովման ծառայություններին:
- Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցման ծախսերին տրամադրվել է 120 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում հանրապետության թվով 1377 դպրոցների հավասարաչափ հատկացվել են միջոցներ սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցման նպատակով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխության չեն ենթարկվել:
- Դասական երաժշտական բարձրագույն կրթության զարգացմանը տրամադրվել է շուրջ 46.7 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել են 7.5%-ով՝ պայմանավորված նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի (ՀՍՆՀ) երրորդ ծրագրի շրջանակներում կատարվել են 171.1 մլն դրամի ծախսեր՝ կազմելով նախատեսված ցուցանիշի 84.8%-ը: Շարունակվող ծրագրերից մեկում, որը պետք է ավարտվի 2012 թվականին, եղանակային անբարենպաստ պայմանների պատճառով աշխատանքների մի մասը տեղափոխվել է 2012 թվական: Ծրագրին կառավարության մասնակցությունն ամբողջությամբ ֆինանսավորվել է՝ 36.1 մլն դրամի չափով, իսկ վարկային միջոցներից օգտագործվել է 81.5%-ը՝ 135 մլն դրամ: Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երրորդ ծրագիրը սկսվել է 2006 թվականին և ավարտվելու է 2012 թվականին: Հիմնական նպատակներից է՝ բարելավել աղքատ համայնքներում և ամենախոցելի խմբերի համար համայնքային ենթակառուցվածքների որակն ու մատչելիությունը՝ ի արձագանք բացահայտվող կարիքների: Տվյալ ենթածրագիրը ընդգրկում է տարրական և միջնակարգ դպրոցների, դրանց ջեռուցման համակարգերի, մարզադահլիճների կառուցումը, վերակառուցումն ու վերանորոգումը: 2011 թվականին ծրագրի շրջանակներում սկսվել և ավարտվել են շինարարական աշխատանքները 5 կրթական օբյեկտներում:

«Երեխաների ֆիզիկական, մտավոր և (կամ) հոգեկան զարգացման առանձնահատկությունների բացահայտում և գնահատում» ծրագրի գծով ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի ծախսերը կազմել են 317 մլն դրամ՝ ապահովելով 99.5% կատարողական: 2011

թվականին հատուկ կրթության ուսուցման աշխատանքների կազմակերպման մասով երեխաների ճշտված միջին տարեկան թիվը կազմել է 100 (երեխաների միջին տարեկան նախատեսված թվաքանակից պակաս է 3-ով), կրթության առանձնահատուկ կարիք ունեցող երեխաների կրթության կարիքների գնահատման մասով երեխաների ճշտված միջին տարեկան թիվը կազմել է 129 (երեխաների միջին տարեկան նախատեսված թվաքանակից պակաս է 5-ով): Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 7.8%-ով, որը կապված է երեխաների միջին տարեկան թվաքանակի 41-ով նվազման հետ:

2011 թվականին ՀԲ աջակցությամբ իրականացվող «Կրթության որակ և համապատասխանություն» երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 2.3 մլրդ դրամ կամ նախատեսվածի 82.7%-ը: Ծրագրի ցածր կատարողականը պայմանավորված է այն հանգամանքով, որ բաց կրթական միջավայրի (պլատֆորմ) մշակման նպատակով հայտարարված միջազգային մրցույթը ՀԲ համաձայնությամբ չեղյալ է հայտարարվել: Բացի այդ, դպրոցների վարչական և կառավարման գործառույթների իրականացման համար համակարգչային սարքավորումների տրամադրումը չի իրականացվել, քանի որ հայտարարված մրցույթի արդյունքները հաստատվել են 2011 թվականի դեկտեմբերի 30-ին:

Ծրագիրը բաղկացած է երկու բաղադրիչներից՝ «Հանրակրթության որակի բարելավում» և «Բոլոնիայի գործընթացի համատեքստում աջակցություն բարձրագույն կրթության բարեփոխումներին»

«Հանրակրթության որակի բերալավում» ենթածրագիրը ներառում է հետևյալ չորս բաղադրիչները.

- Դպրոցին երեխաների պատրաստվածության մակարդակի բարձրացում և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովում,
- Կրթության որակի հետագա բարելավում՝ ուսուցիչների վերապատրաստման և մասնագիտական զարգացման միջոցով,
- Ուսումնական գործընթացում ՏՀՏ-ի ներդրում,
- Աջակցություն ավագ դպրոցի բարեփոխումներին:

«Բոլոնիայի գործընթացի համատեքստում աջակցություն բարձրագույն կրթության բարեփոխումներին» երկրորդ ենթածրագիրը ներառում է հետևյալ չորս բաղադրիչները.

- Որակի ապահովման մեխանիզմների ստեղծում և ամրապնդում,
- Մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգի ստեղծում,
- Աջակցություն բարձրագույն կրթության ֆինանսավորման կայուն համակարգի ներդրմանը,
- Աջակցություն մանկավարժական կրթության բարեփոխումներին:

«Նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման բարեփոխումներ» ծրագրի շրջանակներում գույքի և սարքավորումների ձեռքբերման նպատակով օգտագործվել է նախատեսված միջոցների 78%-ը՝ 572.8 մլն դրամ: Ծախսերի տնտեսումն առաջացել է ուսումնական հաստատություններից ստացված հայտերի և կայացած մրցույթների արդյունքում: Ծրագիրը նախատեսված էր 2011 թվականի համար:

Ուսուցիչների ատեստավորման գծով ծախսերը կազմել են 527.2 հազար դրամ, որը կատարվել է 4%-ով: Քանի որ ՀՀ կրթության և գիտության նախարարությունն ուսուցիչների ատեստավորման գործընթացը սկսել է իրականացնել միայն դեկտեմբեր ամսին՝ 2011 թվականի նոյեմբերի 10-ի թիվ 1745-Ն որոշմամբ հաստատված կարգի ընդունումից հետո, ծրագիրը 2011 թվականին չի կատարվել, և առաջացել է ծախսերի տնտեսում: Ծրագիրը սկսվել է 2011 թվականին:

Ամբողջ ծավալով իրականացվել են նաև կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների դասում նախատեսված հետևյալ 10 ծրագրերը, որոնք 2010 թվականին չեն իրականացվել՝

- Հատուկ կրթական օբյեկտների հիմնանորոգման ծրագրի գծով ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են 251.3 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում Երևան քաղաքում հիմնանորոգվել են 3 հատուկ կրթական օբյեկտներ:
- ՄԱԿ-ի զարգացման աջակցության ծրագրի շրջանակներում տրամադրվել է շուրջ 206.6 մլն դրամ:
- «Մենամարտ» վարժասարքերի ձեռքբերմանը տրամադրվել է 111 մլն դրամ: Ինչպես նախատեսված էր, թվով 15 հանրակրթական դպրոցներում տեղադրվել է մեկական վարժասարք:
- «Ուսում-2» համակարգի ներդրում ծրագրի ծախսերը կազմել են 67.5 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում թվով 700 հանրակրթական դպրոցներում մատուցվել են համակարգչային գրագիտության ուսուցման և թեստավորման ծառայություններ:
- «Դպրոցական օլիմպիադայի անցկացման համար քիմիայի լաբորատորիա ձեռքբերելու նպատակով ներդրումներ» ծրագրի իրականացման համար տրամադրվել է 10 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում Ա.Երզնկյանի անվան թիվ 118 ավագ դպրոցի քիմիայի լաբորատորիան համալրվել է անհրաժեշտ սարքավորումներով և լաբորատոր պիտույքներով:
- «Հայ ասպետ» հեռուստամրցաշարի անցկացմանը ՀՀ 2011 թվականի պետական բյուջեից հատկացվել է 67.3 մլն դրամ: ՀՀ հանրային հեռուստաալիքով հեռարձակվող հեռուստամրցաշարին մասնակցել են թվով 81 դպրոցների թվով 567 աշակերտներ:
- Հալեպի համալսարանում հայոց լեզվի դասավանդման կազմակերպման համար տրամադրվել է 4.3 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում Երևանի պետական համալսարանի մեկ դասախոս իրականացրել է հայոց լեզվի դասավանդում Հալեպի համալսարանում:

- Արտասահմանում սովորող ուսանողներին հաշվետու տարում հատկացվել է 100 մլն դրամ: Ծրագիրն իրականացվում է «Լույս» մշակութային, գիտական, կրթական հիմնադրամի կողմից, որի առաքելությունն է՝

- ստեղծել ու համախմբել առաջադեմ և ստեղծագործ մտածելակերպ ունեցող ուսանողների սերունդ՝ բազմապատկելով աշխարհի լավագույն համալսարանների հաճախող հայ ուսանողների թիվը, նրանց տրամադրելով նյութական, մենթորական և այլ աջակցություն,

- ստեղծել ենթակառուցվածք, որն ի մի կբերի «Լույս»-ի ուսանողների գիտելիքները, փորձառությունն ու կապերը, և կառաջարկի ծրագրեր, որոնք կօգնեն ուսումնական ձեռքբերումներից անցում կատարել իրական աշխարհի նվաճումներին՝ ի բարօրություն Հայաստանի Հանրապետության:

- ՀՀ արտաքին գործերի նախարարության արտաբյուջետային՝ ՅՈՒՆԵՍԿՈ-ի կողմից տրամադրված միջոցներից օգտագործվել է շուրջ 1.5 մլն դրամ: Ծրագրի նպատակն է ՅՈՒՆԵՍԿՈ-ի արժեքների և սկզբունքների մասին կայուն գիտելիքների ձևավորումը դասընթացների և կոնֆերանսների միջոցով:

- Եվս 2.2 մլն դրամ ՀՀ արտաքին գործերի նախարարության արտաբյուջետային միջոցներից տրամադրվել է հրատարակչական ծառայություններին: Ծրագրի շրջանակներում իրականացվել են «Բիոէթիկա. հարց և պատասխան» գրքի թարգմանության և հրատարակման, ինչպես նաև «Քիմիայի լաբորատոր աշխատանքներ» ձեռնարկի տպագրման աշխատանքները:

2011 թվականին պետական բյուջեից ավելի քան 519.7 մլն դրամ տրամադրվել է *այլ դասերին չպատկանող կրթության* բնագավառում գործադիր իշխանության պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի և ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի պահպանմանը: Տվյալ ծախսերի տարեկան ծրագիրը կատարվել է 96.9%-ով: Այլ դասերին չպատկանող կրթության ծախսերը նախորդ տարվա համեմատ էական փոփոխություն չեն կրել:

<u>Սոցիալական պաշտպանություն</u>

2011 թվականի պետական բյուջեի ծախսերի 26%-ն ուղղվել է *սոցիալական պաշտպանության* ոլորտին: Կատարված հատկացումները կազմել են շուրջ 256.2 մլրդ դրամ՝ ապահովելով 94.7% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է ընտանեկան նպաստի և միանվագ դրամական օգնության ու ապահովագրական կենսաթոշակների կատարողականով: 2010 թվականի

համեմատ սոցիալական պաշտպանության ծախսերն ավելացել են 4.9%-ով կամ 12 մլրդ դրամով հիմնականում պայմանավորված ապահովագրական կենսաթոշակների աճով:

Հաշվետու տարում ավելի քան 1.2 մլրդ դրամ տրամադրվել է *վարչարարության և անաշխատունակության* խմբին՝ ապահովելով 98.6% կատարողական:

Վարչարարության դասին տրամադրվել է 180.8 մլն դրամ, որի կատարողականը կազմել է 94%: Նշված ծախսերը 2010 թվականի համեմատ 7%-ով նվազել են:

Աշխատողների աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցումը կազմել է 78.4 մլն դրամ կամ 87.2%՝ պայմանավորված նախատեսվածի նկատմամբ նպաստառուների թվաքանակի կրճատմամբ, իսկ նախորդ տարվա նկատմամբ ծախսերի 1.9%-ով աճը՝ նվազագույն աշխատավարձի աճի հանգամանքով:

Բժշկասոցիալական վերականգնման ծառայությունների շրջանակներում կատարված ծախսերը կազմել են 102.4 մլն դրամ (100%): Այս ծրագրի շրջանակներում հիմնականում իրականացվում է նախապրոթեզավորման և հետպրոթեզավորման, աշխատունակության վերականգնման կարիք ունեցող հաշմանդամ քաղաքացիների բուժումը: 2011 թվականին իրականացվել է 9 հիվանդատեսակների գծով 643 մարդու բուժում՝ նախորդ տարվա 687-ի փոխարեն, ինչով էլ պայմանավորված՝ ծրագրի ծախսերը 2010 թվականի համեմատ 12.8%-ով նվազել են:

Անաշխատունակության դասին հատկացվել է շուրջ 1.1 մլրդ դրամ՝ ապահովելով 99.4% կատարողական: Նախորդ տարվա համեմատ անաշխատունակության դասի ծախսերը նվազել են 10.2%-ով, որը հիմնականում պայմանավորված է հաշմանդամներին անվճար պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով, վերականգնման տեխնիկական միջոցներով ապահովման և դրանց վերանորոգման ծախսերի կրճատմամբ:

Դպրոցն ավարտած, ինչպես նաև ուշ տարիքում տեսողությունը կորցրած հաշմանդամների համար հատուկ տառատեսակներով գրքերի տպագրության, տետրերի պատրաստման և «խոսող գրքերի» ձայնագրության ծառայությունների ձեռքբերման համար տրամադրվել է 10.5 մլն դրամ (100%): 2010 թվականի համեմատ այս ծախսերը փոփոխություն չեն կրել:

Հաշմանդամներին անվճար պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով, վերականգնման տեխնիկական միջոցներով ապահովման և դրանց վերանորոգման համար ծախսվել է 857.2 մլն դրամ՝ ապահովելով 99.8% կատարողական: Ծրագրի շրջանակներում ֆինանսավորվել են անվճար բժշկական օգնության և սպասարկման իրավունք ունեցող հաշմանդամ քաղաքացիների համար գերմանական և հայրենական տեխնոլոգիաներով արտադրվող պրոթեզաօրթոպեդիկ պարագաների և վերականգնման տեխնիկական միջոցների պատրաստումը, վերանորոգումը, ինչպես նաև ձայնաստեղծ սարքերի և աչքի պրոթեզների տրամադրման ծառայությունների ձեռքբերումը: Նշված

ծախսերը 2010 թվականի նկատմամբ նվազել են 10.5%-ով, որը կապված է 2010 թվականին անհրաժեշտությունից ելնելով՝ սույն ծրագրով նախատեսված միջոցների ավելացման հետ:

Հոգեկան առողջության վերականգնման ծառայություններին հատկացվել է 64.7 մլն դրամ՝ ապահովելով 99.9% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 7.5%-ով՝ պայմանավորված նրանով, որ փաստացի բուժման ծառայություններ են մատուցվել 335 հիվանդների՝ 2010 թվականի 384-ի դիմաց:

Տեսողությունից հաշմանդամություն ունեցող անձանց «Արև» համակարգով ուսուցման ծախսերը կազմել են 3.8 մլն դրամ կամ նախատեսվածի 98.3%-ը: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 49.1%-ով, որը շահառուների թվի նվազման արդյունք է:

Նախատեսված ծավալով օգտագործվել են մտավոր խնդիրներ ունեցող հաշմանդամ դեռահասների և երիտասարդների սոցիալ-վերականգնողական ծառայություններ մատուցելու համար նախատեսված միջոցները՝ 16.5 մլն դրամի չափով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխության չեն ենթարկվել:

Հաշմանդամներին սայլակներով և լսողական սարքերով ապահովման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է 107.6 մլն դրամ (97.2%): Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 5.2%-ով՝ պայմանավորված շահառուների թվաքանակի կրճատմամբ:

Տեսողությունից հաշմանդամություն ունեցող անձանց համակարգչային տեխնիկայով և պահեստամասերով ապահովելու համար տրամադրվել է 2.8 մլն դրամ կամ նախատեսվածի 64.8%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 68.5%-ով, որը պայմանավորված է շահառուների թվաքանակի կրճատմամբ:

Ծերության դասի ծրագրերին հատկացվել է շուրջ 188.4 մլրդ դրամ՝ ապահովելով 97.6% կատարողական: 2010 թվականի համեմատ նշված ծախսերն ավելացել են 5.6%-ով կամ 9.9 մլրդ դրամով:

Տվյալ դասում ամենամեծ կշիռն ունեն ապահովագրական կենսաթոշակների ծախսերը՝ 159 մլրդ դրամ, որոնք կատարվել են 97.8%-ով՝ պայմանավորված ինչպես կենսաթոշակառուների թվաքանակի կրճատման, այնպես էլ վարչարարության ուժեղացման, վճարումների հասցեականության ապահովման հանգամանքներով: 2010 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 7.6%-ով կամ 11.2 մլրդ դրամով՝ պայմանավորված ապահովագրական կենսաթոշակների վերահաշվարկի հանգամանքով. հիմնական կենսաթոշակի չափը 2010 թվականի նոյեմբերի 1-ից սահմանվել է 10500 դրամ՝ նախկին 8000 դրամի փոխարեն (ՀՀ կառավարության 25.03.2010թ. թիվ 275-Ն որոշում):

Սպայական անձնակազմի ու նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակների ծախսերը կազմել են 17.6 մլրդ դրամ կամ նախատեսվածի 98.3%-ը: 2010 թվականի համեմատ նշված

ծախսերը նվազել են 12.4%-ով կամ 2.5 մլրդ դրամով՝ պայմանավորված օրենսդրական փոփոխությունների արդյունքում կենսաթոշակների իրականացված վերահաշվարկի հանգամանքով:

Շարքային զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովման ծախսերը կազմել են 1.5 մլրդ դրամ՝ ապահովելով 93.5% կատարողական: 2010 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 29.9%-ով կամ 658.7 մլն դրամով, որը բացատրվում է Հայրենական մեծ պատերազմի հաշմանդամ և մասնակից կենսաթոշակառուների թվաքանակի կրճատման (մահացության), ինչպես նաև շարքային զինծառայողների կենսաթոշակների վերահաշվարկի հանգամանքով՝ կապված զինծառայողների դրամական օգնությունների միասնական համակարգի ներդրման հետ:

Սոցիալական կենսաթոշակների ծախսերը կատարվել են 94.1%-ով և կազմել շուրջ 8.1 մլրդ դրամ: 2010 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 25%-ով կամ 1.6 մլրդ դրամով, որը բացատրվում է ոչ միայն հիմնական կենսաթոշակի բարձրացման, այլ նաև տարվա ընթացքում նոր նշանակված կենսաթոշակառուների թվաքանակում սոցիալական կենսաթոշակառուների տեսակարար կշռի աճով:

ՀՀ օրենքներով և կառավարության որոշումներով նշանակված կենսաթոշակների ծախսերը կազմել են 335.9 մլն դրամ՝ ապահովելով 77.6% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 50.2%-ով՝ պայմանավորված նոր նշանակված կենսաթոշակներով, ինչպես նաև առանձին դատավորների կենսաթոշակների վերահաշվարկի հանգամանքով:

Տարեցների շուրջօրյա խնամքի իրականացման նպատակով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությանը հանձնված տարեցների տուն-ինտերնատ հանդիսացող ՊՈԱԿ-ներին պետական աջակցությունը կազմել է շուրջ 1.5 մլրդ դրամ՝ ապահովելով 98.4% կատարողական: Ծախսերը նախորդ տարվա նկատմամբ ավելացել են 9.6%-ով, որը պայմանավորված է շահառուների թվաքանակի ավելացման հանգամանքով:

Տնային պայմաններում միայնակ տարեցների սոցիալական սպասարկման նպատակով հատկացումները կազմել են 91.4 մլն դրամ, որն իրականացվել է 99.9%-ով: 2010 թվականի համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

2011 թվականին հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ցերեկային խնամքի նպատակով տրամադրվել է 14.1 մլն դրամ պետական աջակցություն, որը կատարվել է 89.9%-ով՝ պայմանավորված ընտանիքներում սպասարկվող անձանց փաստացի թվաքանակով: 2010 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 4.6%-ով՝ պայմանավորված խնամվող շահառուների թվաքանակը ավելանալու հանգամանքով:

ՀՀ մարզերում միայնակ տարեցներին և հաշմանդամներին տնային պայմաններում և տարեցների ցերեկային խնամքի կենտրոններում սոցիալական սպասարկման նպատակով

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությանը տրամադրվել է 162 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 82.2%-ը, որը պայմանավորված է շահառուների թվաքանակը նախատեսվածից պակաս լինելու հանգամանքով: Ծրագիրը նախատեսված է տնային պայմաններում և տարեցների ցերեկային խնամքի կենտրոններում միայնակ տարեցների և հաշմանդամների սպասարկման, ինչպես նաև անապահով անձանց շաբաթվա աշխատանքային օրերին ճաշարաններում մեկ անգամ սննդի տրամադրման համար: Ծախսերը 2010 թվականի նկատմամբ նվազել են 11.1%-ով՝ պայմանավորված միայնակ տարեցների և հաշմանդամների փաստացի թվով:

Նախատեսված ողջ ծավալով իրականացվել է Վանաձորի տարեցների տանը խնամվողներին շուրջօրյա խնամքի և սոցիալական սպասարկման ծրագիրը, որին հատկացվել է 14.4 մլն դրամ: 2010 թվականի համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

Ներդրումները «Տարեցների տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ներում կազմել են 15.1 մլն դրամ (98.9%), իսկ ներդրումները «Միայնակ տարեցների սոցիալական սպասարկման կենտրոն» ՊՈԱԿ-ում՝ 2.1 մլն դրամ (100%): Նախորդ տարի նշված նպատակով միջոցներ չէին հատկացվել:

2011 թվականին ՀՀ պետական բյուջեից 140 մլն դրամ է տրամադրվել «*Հարազատին կորցրած անձինք*» խմբի ծրագրերին՝ ապահովելով 82.6% կատարողական: Ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է Հայաստանի զոհված ազգային հերոսի կամ Մարտական խաչ շքանշանով հետմահու պարգևատրված անձի ընտանիքներին նպաստի ծրագրի ցածր կատարողականով: Նախորդ տարվա համեմատ խմբի ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

126.7 մլն դրամ են կազմել Հայաստանի զոհված ազգային հերոսի կամ Մարտական խաչ շքանշանով հետմահու պարգևատրված անձանց ընտանիքներին նպաստի վճարման ծախսերը, որոնք իրականացվել են 81.8%-ով՝ պայմանավորված շահառուների փաստացի թվաքանակով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

«Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածով նախատեսված նպաստի վճարումը կազմել է 5.6 մլն դրամ կամ նախատեսվածի 79.2%-ը: Շեղումը պայմանավորված է մահացած գործազուրկների փաստացի թվաքանակով: Նախորդ տարվա նկատմամբ նշված ծախսերը նվազել են 16.9%-ով:

ՀՀ կառավարության 1992 թվականի նոյեմբերի 18-ի N 584 որոշման 49-րդ կետով նախատեսված նպաստի վճարման նպատակով օգտագործվել է 7.7 մլն դրամ կամ նախատեսվածի 100%-ը: 2010 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 43.1%-ով՝ պայմանավորված այն հանգամանքով, որ նշված ծախսերը ֆինանսավորվում են գործատուների ներկայացրած հայտերի հիման վրա և հետագայում փոխհատուցվում ՀՀ պետական բյուջեից: Հաշվետու տարում

փոխհատուցումը տրամադրվել է 2010 թվականի օգոստոս-դեկտեմբեր և 2011 թվականի հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածների համար:

«Ընտանիքի անդամներ և զավակներ» խմբի ծախսերը կազմել են 43.5 մլրդ դրամ՝ ապահովելով 86.6% կատարողական: Նշված գումարի զգալի մասը՝ 29 մլրդ դրամ, տրամադրվել է ընտանեկան նպաստի և միանվագ դրամական օգնության ֆինանսավորմանը, որը կազմել է նախատեսվածի 83.3%-ը՝ պայմանավորված նպաստառուների քանակով: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերը նվազել են 6.1%-ով, քանի որ 2010 թվականի փաստացի 105005 նպաստառու ընտանիքի փոխարեն 2011 թվականին նպաստ է տրամադրվել 91575 ընտանիքի:

ՀՀ պաշտպանության և փրկարարական ծառայության ժամանակ հաշմանդամ դարձած զինծառայողներին և զոհված (մահացած) զինծառայողների ու փրկարար ծառայողների ընտանիքներին հաշվետու տարում տրամադրվել են 88.7 մլն դրամ միանվագ սոցիալական ապահովագրության վճարներ, որոնք օգտագործվել են 23.2%-ով, իսկ նախորդ տարվա ցուցանիշը զիջել 17.6%-ով:

2011 թվականին մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստների գծով ծախսերը կազմել են 2.9 մլրդ դրամ կամ նախատեսվածի 98.8%-ը: 2010 թվականի համեմատ այս ծախսերն աճել են 13.8%-ով, որը պայմանավորված է ավել թվով նպաստառուների դիմելու հանգամանքով, որն էլ իր հերթին պայմանավորված է ծնելիության աճով:

Մարդասիրական օգնության կարգով ստացվող պարենամթերքի բաշխման ծառայություններ ծրագիրը չի իրականացվել: Նախատեսված 4.1 մլն դրամի փոխարեն օգտագործվել է 600 հազ. դրամ, որն ուղղվել է նախորդ տարիներին վարձակալած տարածքի վարձավճարին:

ՀՀ մանկատների շրջանավարտներին 2011 թվականին պետական բյուջեից տրամադրվել է 29.1 մլն դրամի աջակցություն և խորհրդատվություն, որը կատարվել է 80.7%-ով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Հղիության և ծննդաբերության նպաստի գծով ծախսերը կազմել են 3.9 մլրդ դրամ, որոնք կատարվել են նախատեսված ծավալով: 2010 թվականի համեմատ այս ծախսերն աճել են 51.7%-ով, որը պայմանավորված է ինչպես նախորդ տարվա պարտավորությունների մարումը հաշվետու ժամանակահատվածում կատարելու, այնպես էլ նվազագույն ու միջին աշխատավարձերի և ծնելիության որոշակի աճի հանգամանքներով:

Երեխայի ծննդյան միանվագ նպաստի վճարումը կազմել է 4.3 մլրդ դրամ, որը կատարվել է 91.4%-ով: 2010 թվականի նկատմամբ նշված ծախսերը նվազել են 9.5%-ով, որը բացատրվում է դիմողների թվի նվազմամբ:

2011 թվականին 94.8%-ով կատարվել է վարժական հավաքների և զինծառայության ու փրկարարական ծառայության ընթացքում մահացած (զոհված) զինծառայողների ու փրկարար

ծառայողների հուղարկավորության, գերեզմանների բարեկարգման, տապանաքարերի պատրաստման և տեղադրման հետ կապված ծախսերի փոխհատուցումը, որը կազմել է 350.7 մլն դրամ և 17.6%-ով զիջել նախորդ տարվա ծախսերը:

Երեխաների շուրջօրյա խնամքի իրականացման նպատակով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի՝ երեխաների տուն-ինտերնատ հանդիսացող ՊՈԱԿ-ներին պետական աջակցության ծախսերը հաշվետու տարում կազմել են 1.7 մլրդ դրամ կամ նախատեսվածի 94.9%-ը: Ծախսերը նախորդ տարվա նկատմամբ աճել են 8.6%-ով, որը հիմնականում պայմանավորված է մանկատների պահպանման որոշ ծախսերի, մասնավորապես՝ սննդամթերքի, հագուստի, սանհիգենիկ պարագաների ձեռքբերման համար օգտագործված միջոցների ավելացմամբ:

ՀՀ երեխաներին շուրջօրյա խնամքի և պաշտպանության հաստատություններում խնամվող երեխաներին ընտանիքներ վերադարձնելու (բեռնաթափման) ծառայությունների ձեռքբերման ծախսերը կատարվել են 99.1%-ով՝ կազմելով 11.7 մլն դրամ: 2010 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 20.2%-ով:

Ռիսկի գոտում հայտնված երեխաներին սոցիալական հոգածության ծառայությունների ծախսերը կազմել են 137.4 մլն դրամ կամ նախատեսվածի 94.9%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 7.2%-ով, որը հիմնականում պայմանավորված է երեխաների հոգածության կենտրոնների պահպանման որոշ ծախսերի, մասնավորապես՝ սննդամթերքի, հագուստի, սանհիգենիկ պարագաների ձեռքբերման համար օգտագործված միջոցների ավելացմամբ:

ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 05-1680 գործով 15.07.2005թ. վճռի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կողմից կերակրողին կորցնելու կապակցությամբ կրած վնասի փոխհատուցման ծախսերն ամբողջությամբ կատարվել են՝ կազմելով 1.1 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

Երեխաների գիշերօթիկ խնամքի և պաշտպանության ծառայություններին տրամադրվել է 923 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 91.4%-ով կատարում: Ծախսերը նախորդ տարվա համեմատ ավելացել են 11.4%-ով, որը հիմնականում պայմանավորված է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության մեկ մանկատուն գիշերօթիկ հաստատության վերակազմակերպվելու և նրա պահպանման ծախսերը սույն ծրագրով նախատեսվելու հանգամանքով: 2011 թվականին այս ծրագրի շրջանակներում սպասարկվել է 800 շահառու՝ 2010 թվականի 725 շահառու փոխարեն:

Երեխաների խնամքի ցերեկային կենտրոնների կողմից դժվար իրավիճակներում գտնվող երեխաների սոցիալական հոգածության ծառայությունների շրջանակներում տրամադրվել է 50.5 մլն

դրամ՝ ապահովելով ծրագրի 98.3%-ով կատարում և 1.6%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը:

Հայաստանի Հանրապետությունում խնամատար ընտանիքի ինստիտուտի ներդրման ծառայությունների ծախսերը կազմել են 25.7 մլն դրամ՝ ապահովելով 91.1% կատարողական: Նշված ծախսերը 2010 թվականի նկատմամբ ավելացել են 17.6%-ով, որը պայմանավորված է մեկ երեխայի հաշվով նախատեսված միջոցների ավելացմամբ:

Ներդրումները «Երեխաների տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ներում կազմել են 8.5 մլն դրամ կամ նախատեսվածի 72.8%-ը: Սույն ծրագիրը 2011 թվականին նախատեսվել է առաջին անգամ:

ՀՀ մանկատներում խնամվող դպրոցական տարիքի երեխաներին հաշվետու տարում տրամադրվել է 6.2 մլն դրամ աջակցություն կամ նախատեսվածի 69.1%-ը: Ծրագրի շրջանակներում միջոցներ են հատկացվում դպրոցական տարիքի երեխաների գրպանի ծախսերի համար: 2010 թվականի նկատմամբ նշված ծախսերը նվազել են 20.8%-ով, որը պայմանավորված է նախատեսվածի նկատմամբ աջակցություն ստացած երեխաների թվի նվազմամբ:

ՀՀ մանկատների շրջանավարտներին կրթաթոշակի և միանվագ դրամական օգնության տրամադրման ծախսերը կազմել են 2 մլն դրամ կամ նախատեսվածի 51.8%-ը: Նշված ծախսերը 2010 թվականի նկատմամբ նվազել են 34.3%-ով, որը պայմանավորված է շահառուների թվի կրճատման հանգամանքով:

Կենսաբանական ընտանիք տեղափոխված երեխաների ընտանիքներին դրամական օժանդակության փաթեթի տրամադրման ծախսերը կազմել են 9.7 մլն դրամ, որն իրականացվել է նախատեսված ողջ ծավալով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերի 78.7%-ով աճը պայմանավորված է այն հանգամանքով, որ 2010 թվականին նախատեսվել էր 2011 թվականի շահառուներին հատկացնել կանխավճար, որը, սակայն, տրամադրվել է 2011 թվականին:

Ներդրումները «Երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» ՊՈԱԿ-ներում կազմել է 4 մլն դրամ, որն իրականացվել է 99.5%-ով: Ծրագիրը 2011 թվականին նախատեսվել է առաջին անգամ:

Ներդրումները երեխաների գիշերօթիկ խնամքի և պաշտպանության հաստատություն հանդիսացող ՊՈԱԿ-ներում կազմել են 23.7 մլն դրամ, որոնք իրականացվել են 98.6%-ով: Ծրագիրը 2011 թվականին նախատեսվել է առաջին անգամ:

ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 07-3832 գործով 2007 թվականի նոյեմբերի 3-ի վճռի համաձայն Հայաստանի Հանրապետության կողմից կերակրողին կորցնելու կապակցությամբ կրած վնասի փոխհատուցումը կազմել է 1.9 մլն դրամ (100%):

ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի գործով վճիռների համաձայն կրած վնասների փոխհատուցումը կազմել է 4.1 մլն դրամ (100%): Նախորդ տարի նշված նպատակով միջոցներ չէին հատկացվել:

Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ միջազգային բարեգործական կազմակերպության կողմից ՀՀ Լոռու մարզպետարանին հատկացված միջոցներից երեխաների իրավունքների պաշտպանության ծրագրին տրամադրվել է 10.7 մլն դրամ, որն իրականացվել է 97%-ով: Ծրագրի շրջանակներում Լոռու մարզի Ստեփանավանի տարածաշրջանի թվով 20 և Թումանյանի տարածաշրջանի թվով 9 համայնքների երեխաների իրավունքների պաշտպանությանն ուղղված ծրագիրն իրականացնելու համար Ստեփանավանի և Թումանյանի տարածաշրջանների գյուղական համայնքներում բացվել է 22 սոցիալական աշխատողի հաստիք: Սոցիալական աշխատողների աշխատանքի նպատակն է խթանել երեխաների իրավունքների պաշտպանությունը՝ ակտիվորեն համագործակցելով համայնքային կառույցների, տեղական և միջազգային կազմակերպությունների հետ, աջակցել համայնքներում այնպիսի միջավայրի ձևավորմանը, որը կնպաստի երեխաների ակտիվ զարգացմանը: Հանդիսանալով համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի անդամ՝ սոցիալական աշխատողները աջակցում են խոցելի խմբերի երեխաների բացահայտմանը և նրանց խնդիրներին արձագանքելու քայլերի մշակմանը, հանդիսանում են կապող օղակ ՏԻՄ-երի, դոնոր կազմակերպությունների և մարզպետարանի միջև՝ ապահովելով երեխաների պաշտպանության խնդիրների ու զարգացման կարիքների արագ բացահայտմանն ու արդյունավետ արձագանքմանը: Սոցիալական աշխատողը մասնակցում է ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանությանն ու զարգացմանն ուղղված տեղական և մարզային ծրագրերի մշակմանը՝ ապահովելով երեխաների մասնակցությունը ծրագրերի բոլոր փուլերում: Նրանք աջակցում են հատուկ կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպմանը համայնքում, հանդիսանում են համայնքում երեխաների համար խորհրդատու երեխաների պաշտպանության ոլորտում ծագած այնպիսի խնդիրների դեպքում, որոնցում ընտանիքը լուծում չի գտնում: Նրանք նպաստում են համայնքային ներուժի զարգացմանը, աջակցում համայնքի համար հավելյալ ռեսուրսների հայթայթմանը՝ համագործակցելով այլ կառույցների հետ կամ ծրագրեր ներկայացնելով դոնոր կազմակերպություններին, ինչպես նաև աջակցելով Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ կազմակերպությանը՝ արդյունավետ իրականացնելու հովանավորչական ծրագիրը: Սոցիալական աշխատողները վարում են երեխաների հաշվառում, կատարում տունայցեր և առնվազն եռամսյակը մեկ անգամ հաշվետվություն ներկայացնում նրանց ընտանեկան և առողջական կարգավիճակի փոփոխությունների վերաբերյալ: Նրանք իրականացնում են զանազան միջոցառումներ՝ երեխաների իրավունքների և պաշտպանության հարցերի, ինչպես նաև համայնքում իրականացվող

երեխայակենտրոն ծրագրերի վերաբերյալ համայնքի իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով:

2011 թվականին պետական բյուջեից 4.1 մլրդ դրամ տրամադրվել է *գործազրկության* խմբի ծրագրերի ֆինանսավորմանը՝ կազմելով նախատեսվածի 79.7%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է գործազրկության նպաստի ծախսերի ցածր կատարողականով:

Վարձատրվող հասարակական աշխատանքների շրջանակներում օգտագործվել է 126.5 մլն դրամ կամ ծրագիրը կատարվել է 91.8%-ով: 2010 թվականի նկատմամբ նշված ծախսերը նվազել են 79.8%-ով, որը պայմանավորված է վարձատրվող հասարակական աշխատանքների ծավալների կրճատմամբ:

Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու նպատակով պետական գրանցման համար գործազուրկներին և աշխատանք փնտրող չզբաղված հաշմանդամներին տրամադրվել է 960 հազար դրամ ֆինանսական աջակցություն՝ կազմելով նախատեսվածի 51.6%-ը: 2010 թվականի նկատմամբ նշված ծախսերն ավելացել են 18.2%-ով, որը պայմանավորված է շահառուների թվի ավելացման հանգամանքով:

Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի ընդունելիս գործատուին աշխատավարձի մասնակի փոխհատուցման ծախսերը կազմել են 71.7 մլն դրամ կամ նախատեսվածի 79.8%-ը: Ծախսերը նախորդ տարվա նկատմամբ ավելացել են 2.1%-ով, որը պայմանավորված է աշխատաշուկայում անմրցունակ անձանց թվի ավելացման հանգամանքով:

Ապահովագրական ստաժ չունեցող կամ մինչև մեկ տարվա ապահովագրական ստաժ ունեցող աշխատանք փնտրող չզբաղված հաշմանդամների մասնագիտական ուսուցման և աշխատանքային ունակությունների վերականգնման կազմակերպման նպատակով տրամադրվել է 14.6 մլն դրամ կամ նախատեսվածի 93.5%-ը: 2010 թվականի համեմատ նշված ծախսերն ավելացել են 49%-ով, որը պայմանավորված է ծրագրում ընդգրկված անձանց թվաքանակի աճով:

Երիտասարդների մասնագիտական կողմնորոշման և խորհրդատվական ծառայությունների գծով ծախսերը կազմել են 19.8 մլն դրամ՝ ապահովելով 95.8% կատարողական: 2010 թվականի համեմատ նշված ծախսերն ավելացել են 11.4%-ով:

Գործազրկության նպաստի ծախսերի վճարմանն ուղղվել է 3.6 մլրդ դրամ, որը կատարվել է 78.6%-ով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 23.7%-ով կամ 1.1 մլրդ դրամով: Վերջինս կապված է տարվա ընթացքում ծրագրում ընդգրկված անձանց փաստացի թվաքանակի նվազման հետ՝ 6746-ով, որը պայմանավորված է «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխություններով, որն ուժի մեջ է մտել 2011թվականի փետրվարի 5-ից:

Գործազուրկների, աշխատաշուկայում անմրցունակ խմբերի և երկարամյա ծառայության ու արտոնյալ պայմաններով կենսաթոշակ ստացող աշխատանք փնտրող չզբաղված անձանց մասնագիտական ուսուցմանը տրամադրվել է 202.8 մլն դրամ: Ծախսերը կատարվել են 89.6%-ով և 9.9%-ով գերազանցել 2010 թվականի ցուցանիշը, որը պայմանավորված է ծրագրում ընդգրկված անձանց թվաքանակի աճով:

Այլ վայր աշխատանքի գործուղվող գործազուրկների նյութական ծախսերի հատուցումը կազմել է 11.5 մլն դրամ կամ նախատեսվածի 72.6%-ը, որը պայմանավորված է փաստացի գործուղված անձանց թվով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 78.7%-ով, որը պայմանավորված է ծրագրում ընդգրկված անձանց թվաքանակի աճով:

Երկարամյա ծառայության և արտոնյալ պայմաններով կենսաթոշակ ստացող աշխատանք փնտրող չզբաղված անձանց վերամասնագիտացման ծրագրին տրամադրվել է 763.1 հազար դրամ կամ նախատեսվածի 29.9%-ը: Նախատեսված էր ծրագրում ընդգրկել 15 անձ, սակայն փաստացի ընդգրկվել է ընդամենը 7 անձ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 7.1%-ով, որը պայմանավորված է ծրագրում ընդգրկված անձանց թվաքանակի կրճատմամբ:

Աշխատաշուկայի հետազոտման և կանխատեսման աշխատանքների կազմակերպմանը պետական բյուջեից տրամադրվել է 5 մլն դրամ, որը կազմել է ծրագրվածի 100%-ը և 14.8%-ով գերազանցել նախորդ տարվա ցուցանիշը՝ պայմանավորված գների աճով:

Թափուր աշխատատեղերի տոնավաճառի կազմակերպման ծառայությունների գծով տրամադրվել է 4.2 մլն դրամ, որն իրականացվել է նախատեսված ողջ ծավալով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

Աշխատանք փնտրող հաշմանդամների աշխատանքային վերականգնման, մասնագիտական վերապատրաստման և խորհրդատվության ծառայությունների ծախսերը կազմել են 15.7 մլն դրամ՝ ապահովելով 99.7% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են ավելի քան 4.2 անգամ, քանի որ ծրագրի իրականացումը սկսվել է 2010 թվականի 4-րդ եռամսյակում:

Մասնագիտություն ունեցող, սակայն մասնագիտական աշխատանքային ստաժ չունեցող գործազուրկների աշխատանքային պրակտիկայի կազմակերպման համար տրամադրվել է 34 մլն դրամ՝ ապահովելով 95.3% կատարողական:

Կազմակերպություններում հաշմանդամների համար աշխատատեղերի հարմարեցման համար տրամադրվել է 2.2 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 54.9%-ը: Ծրագրի իրականացման գործընթացը կանոնակարգող իրավական ակտերը (կարգերը) հաստատվեցին բավական ուշ, ինչի հետևանքով ծրագրի իրականացումն սկսվեց հոկտեմբերին: Վերջին երկու ծրագրերը 2011 թվականին իրականացվել են առաջին անգամ:

«*Բնակարանային ապահովում*» խմբի ծրագրերին ՀՀ 2011 թվականի պետական բյուջեից հատկացվել է 747.2 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 32.8%-ով, ինչը պայմանավորված է երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների համար բնակարանային շինարարության ծախսերի նվազմամբ:

Զոհված (մահացած) և առաջին, երկրորդ և երրորդ կարգի հաշմանդամ զինծառայողների անօթևան ընտանիքների բնակարանով ապահովման և բնակարանային պայմանների բարելավման համար տրամադրվել է շուրջ 500 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների համար բնակարանային շինարարություն իրականացնելու համար տրամադրվել է 247.2 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում կատարվել են ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ գյուղի թիվ 5 բազմաբնակարան շենքի վերականգնման և ՀՀ Շիրակի մարզի ք.Մարալիկի թվով 9 կիսակառույց բազմաբնակարան շենքի անավարտման աշխատանքները: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել 47.2%-ով, որը հիմնականում պայմանավորված է կատարված աշխատանքների ծավալների կրճատմամբ:

Այլ դասերին չպատկանող սոցիալական հատուկ արտոնությունների խմբում 2011 թվականի պետական բյուջեի ծախսերը կազմել են շուրջ 9.3 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 99.3% կատարողական: Նախորդ տարվա նկատմամբ խմբի ծախսերն աճել 82.8%-ով, որը հիմնականում պայմանավորված է ՀՄ պատերազմի վետերաններին, 25.11.1998թ. ՀՕ-258 օրենքի 13-րդ հոդվածում նշված պատճառներով հաշմանդամ դարձած զինծառայողներին, ինչպես նաև ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքներին տրամադրվող դրամական օգնության աճով:

2011 թվականի պետական բյուջեից վետերանների պատվովճարներին է տրամադրվել 708.2 մլն դրամ, որը կազմել է ծրագրի 99.2%-ը, իսկ նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 14.9%-ով՝ պայմանավորված պատվովճար ստացողների թվաքանակի նվազման (մահացության) հանգամանքով:

Փախստականների սոցիալական խնդիրների լուծման միջոցառումներ իրականացնելու նպատակով տրամադրվել է 17.1 մլն դրամ, որը կատարվել է 100%-ով: 2010 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 7.3%-ով, որը պայմանավորված է շահառուների թվաքանակի ավելացմամբ:

Փախստականների կեցության խնդիրների լուծման նպատակով 2010 թվականին տրամադրվել է 11.9 մլն դրամ (100%), որի միջոցով իրականացվում է 30 ժամանակավոր ապաստան հայցող փախստականների սպասարկումը՝ կացարանի, սննդի և այլ ծառայությունների տրամադրման

միջոցով: 2010 թվականի համեմատ նշված ծախսերն ավելացել են 6.3%-ով՝ պայմանավորված դիմած փախստականների թվաքանակի ավելացմամբ:

Բռնադատված քաղաքացիներին պատճառված վնասի դիմաց 2011 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 252 հազար դրամի միանվագ դրամական փոխհատուցում, որը կատարվել է 52.5%-ով և 34.4%-ով զիջել նախորդ տարվա ցուցանիշը՝ պայմանավորված դիմողների փաստացի թվաքանակի կրճատմամբ:

ՀՄ պատերազմի վետերաններին, 25.11.1998թ. ՀՕ-258 օրենքի 13-րդ հոդվածում նշված պատճառներով հաշմանդամ դարձած զինծառայողներին, ինչպես նաև ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքներին տրամադրվել է 6.8 մլրդ դրամ դրամական օգնություն, որն իրականացվել է 99.3%-ով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 170.4%-ով, որը պայմանավորված է օրենսդրական փոփոխություններով՝ ներդրվել է դրամական օգնության միասնական համակարգ, ինչպես նաև դրամական օգնության գումարների աճով՝ վետերաններին և զինծառայողներին, ինչպես նաև նրանց ընտանիքների անդամներին տրվող դրամական օգնությունների չափերը ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով զգալիորեն աճել են:

58.9 մլն դրամի պետական աջակցություն է ցուցաբերվել «Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ին՝ անօթևան մարդկանց համար ժամանակավոր օթևանի տրամադրման նպատակով, որը կատարվել է 100%-ով, իսկ 2010 թվականի համեմատ՝ աճել 8.8%-ով, որը պայմանավորված է գազի սակագների և սննդամթերքի գների բարձրացմամբ, ինչպես նաև սանիտարահիգիենիկ պարագաների, փափուկ գույքի և հանդերձանքի գծով լրացուցիչ ծախսերի նախատեսմամբ:

ՎՏԲ-Հայաստան ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների՝ նախկին ԽՍՀՄ խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման ծախսերը կազմել են շուրջ 1.7 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.3%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Ներդրումները «Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ում կազմել են 2.2 մլն դրամ՝ ապահովելով 99.2% կատարողական: Ծրագիրը 2011 թվականին նախատեսվել է առաջին անգամ:

Այլ դասերին չպատկանող սոցիալական պաշտպանության խմբի ծրագրերի գծով 2011 թվականի պետական բյուջեի ծախսերը կազմել են ավելի քան 8.7 մլրդ դրամ՝ ապահովելով 83% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող սոցիալական պաշտպանության ոլորտի կառավարման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման վարկային ծրագրի ցածր կատարողականով: 2010 թվականի համեմատ խմբի ծախսերն ավելացել են 2.3%-ով՝ հիմնականում պայմանավորված ժամանակավոր անաշխատունակության դեպքում նպաստի վճարման ծախսերի աճով:

Հաշվետու տարում 1.5 մլրդ դրամ են կազմել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության և ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայության պահպանման ծախսերը, որոնք կատարվել են 98.2%-ով, իսկ նախորդ տարվա համեմատ՝ ավելացել 1.3%-ով:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի պահպանման ծախսերը կատարվել են 97%-ով և կազմել շուրջ 1.6 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 1.9%-ով:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող սոցիալական պաշտպանության ոլորտի կառավարման վարկային ծրագրին տրամադրվել է 14.1 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 39.3%-ը: Ծրագրի նպատակներն ուղղակիորեն կապված են մարդկային զարգացման խթանման և սոցիալական ապահովության համակարգերի ու հանրային հատվածի հիմնական գործառույթների բարելավման հետ: 2011 թվականին ծրագրի շրջանակներում ընդհանուր աջակցություն է ցուցաբերվել սոցիալական պաշտպանության ոլորտին՝ աշխատանքի և զբաղվածության, կենսաթոշակների և այլ համակարգերի մասով: Ծրագրով նախատեսված հիմնական աշխատանքներն իրականացվել են մինչև 2010 թվականի դեկեմբերի 30-ը: 2011 թվականին իրականացնել են խնայված գումարներով աշխատանքները, ինչպես նաև 2010 թվականի աուդիտը: Ցածր կատարողականի պատճառներից հիմնականն այն է, որ 2011 թվականին նախատեսված աշխատանքների մի մասն իրականացվել է 2010 թվականի դեկտեմբերին:

Հաշվետու տարում 272 մլն դրամ տրամադրվել է սոցիալական օգնության ծառայությունների գործունեության կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների ֆինանսավորման նպատակով, որն իրականացվել է 98.8%-ով: 2010 թվականի նկատմամբ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող սոցիալական պաշտպանության ոլորտի կառավարման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման վարկային ծրագրի շրջանակներում կատարվել են 118.6 մլն դրամի ծախսեր՝ կազմելով ծրագրվածի 10.9%-ը (վարկի միջոցներից՝ 85.2 մլն դրամ, իսկ պետական բյուջեի հաշվին՝ 33.4 մլն դրամ): Ծրագրի նպատակներն ուղղակիորեն կապված են մարդկային զարգացման խթանման և սոցիալական ապահովության համակարգերի ու հանրային հատվածի հիմնական գործառույթների բարելավման հետ: Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից՝

- Ընդհանուր աջակցություն սոցիալական պաշտպանության ոլորտին,
- Աշխատանք և զբաղվածություն,
- Կենսաթոշակների վարչարարություն,
- Սոցիալական աջակցության վարչարարության բարելավում:

Ցածր կատարողականը պայմանավորված է հետևյալ պատճառներով.

1. «Ընդհանուր աջակցություն սոցիալական պաշտպանության ոլորտին» բաղադրիչով 2011 թվականին նախատեսվում էր իրականացնել սոցիալական պաշտպանության ոլորտի տարածքային (ինտեգրացված) ծառայությունների գրասենյակների վերանորոգման աշխատանքները, սակայն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը նշված տարածքների հատկացման գործընթացի ուշացման պատճառով աշխատանքները նախատեսված ժամկետներում չեն իրականացվել: Բաղադրիչի շրջանակներում նախատեսվում է ձեռք բերել համակարգչային սարքավորումներ և գրասենյակային կահույք նշված տարածքային գրասենյակների համար, որը հնարավոր կլինի իրականացնել միայն նշված տարածքների վերանորոգումից հետո: Բաղադրիչի շրջանակներում իրականացվում են նաև Սոցիալական ծառայությունների միասնական փաթեթի և սոցիալական ծառայությունների համալիր տրամադրման միասնական համակարգի կառուցվածքագործառութային մոդելի մշակման և շինվերանորոգման աշխատանքների իրականացման նպատակով նախագծանախահաշվային փաստաթղթերի պատրաստման աշխատանքները: 2011 թվականի մայիսից դադարեցվել են բաղադրիչի շրջանակներում 54,000 ԱՄՆ դոլար գումարի չափով վերապատրաստման ծրագիրը և ՍԾՀՏՄՀ վերաբերյալ հանրային իրազեկման աշխատանքների ծրագիրը:

2. 2011 թվականի մայիսից դադարեցվել է «Աշխատանք և զբաղվածություն» բաղադրիչի շրջանակներում 4 հանձնարարականների իրականացումը: Դրանք են՝ մասնագիտություն ունեցող, սակայն մասնագիտական աշխատանքային ստաժ չունեցող գործազուրկների աշխատանքային խորհրդատվության և պրակտիկայի կազմակերպում, աշխատանք փնտրողների և գործազուրկների մասնագիտական կարճաժամկետ ուսուցման ծրագրերի կազմակերպման և վերահսկողության իրականացման ուղղությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ԶՊԾ գործակալության կարողությունների հզորացում, ՀՀ աշխատաշուկայի հետազոտությունը, այդ թվում՝ երիտասարդության զբաղվածության և հաշմանդամների աշխատանքային ինտեգրման հնարավորությունների գնահատումը, աշխատանքի և աշխատավարձի ոլորտի իրավիճակային հետազոտությունը:

3. 2011 թվականի մայիսից դադարեցվել է «Սոցիալական աջակցության վարչարարության բարելավում» բաղադրիչի շրջանակներում 2 հանձնարարականների՝ Ընտանեկան նպաստի քաղաքականության բարեփոխումների իրականացման և ՀՀ ԱՍՀՆ ֆինանսական կառավարման տեղեկատվական համակարգի մշակման և ներդրման, իրականացումը:

Այլ դասերին չպատկանող՝ սոցիալական պաշտպանությանը տրամադրող օժանդակ ծառայությունների դասի ծախսերը կազմել են ավելի քան 5.2 մլրդ դրամ՝ ապահովելով 87.9% կատարողական՝ հիմնականում պայմանավորված կենսաթոշակային ապահովության և

ապահովագրության ծրագրերի վճարման հետ կապված ծառայությունների ձեռքբերման ծախսերի ցածր կատարողականով: Նախորդ տարվա համեմատ տվյալ դասի ծախսերն ավելացել են 3.1%-ով:

Սոցիալական աջակցության ծառայությունների ծրագրի շրջանակներում 498.8 մլն դրամ տրամադրվել է սոցիալական ապահովության առանձին ծրագրերի վճարման հետ կապված ծառայությունների ձեռքբերմանը՝ ապահովելով 84.4% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 7.2%-ով:

Փախստականների և նրանց ընտանիքների վերաբերյալ տեղեկատվության կուտակման նպատակով տրամադրված 44 մլն դրամն օգտագործվել է «Համակարգչային կենտրոն» ՊՈԱԿ-ից փախստականների վերաբերյալ արխիվային տեղեկատվության ձեռքբերման նպատակով՝ ապահովելով 100% կատարողական: 2010 թվականի համեմատ նշված ծախսերը գրեթե փոփոխություն չեն կրել:

«Հաշմանդամներին մատուցվող ծառայություններ» ծրագրի շրջանակներում բժշկասոցիալական փորձաքննության (ԲՍՓ) ձևաթղթի տպագրության ծառայությունների ձեռքբերման և «Սոցիալական աջակցության ծառայություններ» ծրագրի շրջանակներում սոցիալական ծառայության տարածքային գործակալությունների (ՍԾՏԳ) ձևաթղթերի տպագրության ծառայությունների ձեռքբերման նպատակով տրամադրվել է համապատասխանաբար 2.8 մլն դրամ և 4.2 մլն դրամ: Ծրագրերն իրականացվել են համապատասխանաբար 31.7%-ով և 24.3%-ով՝ պայմանավորված գնման գործընթացի արդյունքում կնքված պայմանագրերի գինը նախատեսվածի նկատմամբ զգալիորեն պակաս սահմանելու հանգամանքով, իսկ 2010 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են համապատասխանաբար 36.4%-ով և 34.4%-ով՝ դարձյալ պայմանավորված գների նվազմամբ:

ՀՀ 2010 թվականի պետական բյուջեից հաշմանդամների տվյալների տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայությունների ծրագրի շրջանակներում նախատեսված 21 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 15.7%-ով՝ պայմանավորված տարածքային մարմինների միջև ինտերնետ կապի ապահովմամբ:

Գործազուրկների տվյալների տեղեկատվական համակարգի («Գործ» համակարգ) վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայությունների ծախսերը կազմել են 24.9 մլն դրամ, որոնք կատարվել են նախատեսված ողջ ծավալով: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը չեն փոփոխվել:

Սոցիալական ապահովության քարտերի համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայությունների ձեռքբերման ծախսերը կազմել են 147.6 մլն

դրամ՝ ապահովելով 99.8% կատարողական: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների տվյալների «Մանուկ» տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայությունների ծախսերը նույնպես կատարվել են նախորդ տարվա չափով՝ կազմելով 15.3 մլն դրամ և ապահովելով 100% կատարողական:

Ընտանեկան նպաստի տվյալների տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններին հատկացումները կազմել են 59 մլն դրամ՝ ապահովելով 99.3% կատարողական: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն ավելացել են 98.2%-ով՝ պայմանավորված ինտերնետ կապի ապահովմամբ:

Մեթոդաբանական ձեռնարկների մշակման, հետազոտությունների անցկացման և սոցիալական ապահովության ոլորտի կադրերի վերապատրաստման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է 84.6 մլն դրամ՝ ապահովելով 99.8% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 1.1%-ով:

Երեխայի ծննդյան և խնամքի համար տրամադրվող նպաստների համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններին հատկացումները կազմել են 9.5 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

Կենսաթոշակային ապահովության և ապահովագրության ծրագրերի վճարման հետ կապված ծառայությունների իրականացմանը տրամադրվել է 1.6 մլրդ դրամ, որը կատարվել է 73.7%-ով: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 16.5%-ով՝ պայմանավորված կենսաթոշակային ապահովության և ապահովագրության ծրագրերի ցածր կատարողականով, ինչպես նաև վճարման ծառայության տոկոսադրույքի նվազման հանգամանքով:

Հանրային իրազեկման միջոցառումների իրականացմանը տրամադրվել է 22.3 մլն դրամ, որը կատարվել է 85.5%-ով: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 11.6%-ով, ինչը պայմանավորված է գների նվազմամբ:

Հաշվետու տարում պետական բյուջեից ժամանակավոր անաշխատունակության դեպքում նպաստի վճարը կազմել է շուրջ 2.5 մլրդ դրամ, որն իրականացվել է 100%-ով: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն ավելացել են 24.3%-ով, որը պայմանավորված է ոչ միայն նախորդ տարվա պարտավորությունները հաշվետու ժամանակահատվածում մարելու, այլև նպաստի միջին գումարի աճի հանգամանքով (նվազագույն և միջին աշխատավարձի աճ):

Ընտանեկան նպաստի և դրամական օգնության տրամադրման հետ կապված վարչարարական ծառայություններին տրամադրվել է 18.8 մլն դրամ, որը կատարվել է 99%-ով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

Կենսաթոշակների նշանակման ու վճարման «Արաքս» համակարգչային համակարգի ծրագրային սպասարկման ապահովման ծառայությունների ձեռքբերման ծախսերը կազմել են 18 մլն դրամ, որը կատարվել է 100%-ով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Անհատական (անձնավորված) հաշվառման «Պառնաս» համակարգչային համակարգի ծրագրային սպասարկման ապահովման ծառայություններին տրամադրվել է 36 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Այս ծախսերը ևս նախորդ տարվա համեմատ փոփոխություն չեն կրել:

Կենսաթոշակի նշանակման և վճարման համար անհրաժեշտ ձևաթղթերի տպագրության ծախսերը կազմել են 1.6 մլն դրամ՝ 17.8%-ով զիջելով նախատեսված և նախորդ տարվա ցուցանիշները: Տնտեսումը պայմանավորված է ձևաթղթերի փաստացի պահանջով:

Բարեգործական ծրագրերի հաշվառման տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայությունների ծախսերը կազմել են 5.3 մլն դրամ, ՀՀ աշխատանքի պետական տեսչության տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայությունների ծախսերը՝ 5.7 մլն դրամ: Վերոհիշյալ երկու ծրագրերն էլ կատարվել են ամբողջությամբ և նախորդ տարվա համեմատ փոփոխություն չեն կրել:

Վետերանների պատվովճարի և ՀՄ պատերազմի վետերաններին ու «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի (25.11.1998թ. ՀՕ-258) 13-րդ հոդվածում նշված անձանց ընտանիքներին դրամական օգնության տրամադրման հետ կապված վճարման ծառայություններին տրամադրվել է 15.6 մլն դրամ, որը կատարվել է 98.6%-ով և նախորդ տարվա համեմատ ավելացել 12.1%-ով:

Նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններին տրամադրվել է 14.8 մլն դրամ, որը կատարվել է 100%-ով և նախորդ տարվա համեմատ փոփոխության չի ենթարկվել:

Աշխատողների աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման հետ կապված վճարման ծառայությունների գծով ծախսվել է 738.1 հազար դրամ կամ նախատեսվածի 58.6%-ը: Տնտեսումը պայմանավորված է ծառայությունների վճարովի

մատուցման պայմանագրերով նախատեսված վարձավճարների տոկոսադրույքների նվազման հանգամանքով: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը կրճատվել են 2%-ով:

Վարձատրվող հասարակական աշխատանքների կատարման հետ կապված վարչարարական ծառայություններին տրամադրվել է 1.3 մլն դրամ, որը կատարվել է 12.3%-ով և 83%-ով նվազել նախորդ տարվա համեմատ՝ պայմանավորված ՀՀ կառավարության 28.04.2011թ. N 532-Ն որոշմամբ «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրի կրճատմամբ:

Թրաֆիքինգի զոհերին սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայությունների մատուցման նպատակով նախատեսված միջոցներն օգտագործվել են 25.8%-ով՝ կազմելով 6.6 մլն դրամ, որը պայմանավորված է նշված ծառայությունների պահանջարկով: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն ավելացել են 9.1%-ով, որը պայմանավորված է տարածքի վարձակալության համար միջոցներ հատկացնելու հանգամանքով:

Սոցիալական ապահովության քարտերի համակարգի հետ կապված վարչարարական ծառայություններին տրամադրվել է 6.5 մլն դրամ, որը կատարվել է 99.7%-ով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

12.7 մլն դրամ է տրամադրվել զինվորական կենսաթոշակառուների տեղեկատվական համակարգի ներդրման, վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններին, որը կատարվել է նախատեսված ողջ ծավալով:

<u>Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր</u>

2011 թվականի պետական բյուջեով նախատեսված ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից օգտագործվել է 36.8 մլրդ դրամ կամ նախատեսվածի 97.6%-ը: Տրամադրված միջոցներից շուրջ 12.7 մլրդ դրամն ուղղվել է ընթացիկ ծախսերին՝ կազմելով նախատեսվածի 94.3%-ը, 24.1 մլրդ դրամը՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերին՝ ապահովելով 99.5% կատարողական: Նշենք, որ 2010 թվականին պահուստային ֆոնդից օգտագործվել էր 21.6 մլրդ դրամ:

Հույժ գաղտնի:

ՀՀ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ

ՀՀ 2011 թվականի պետական բյուջեն կատարվել է շուրջ 105.7 մլրդ դրամ պակասուրդով՝ կազմելով ճշտված ծրագրով նախատեսված 158.8 մլրդ դրամի 66.5%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է նրանով, որ պետական բյուջեի ներքին աղբյուրներում ելքերի ֆինանսավորմանն ուղղվող 2011 թվականի տարեսկզբի ազատ միջոցներից նախատեսված 28.5 մլրդ դրամ օգտագործելու փոխարեն օգտագործվել է ընդամենը 9.5 մլրդ դրամ, ինչպես նաև արտաքին աղբյուրներից ստացվել են 88.2 մլրդ դրամի վարկային միջոցներ՝ նախատեսված 118.7 մլրդ դրամի փոխարեն: Նշենք, որ 2010 թվականին ՀՀ պետական բյուջեն կատարվել էր շուրջ 173.9 մլրդ դրամ պակասուրդով, այսինքն՝ 2010 թվականի համեմատ պակասուրդի մեծությունը նվազել է 39.2%-ով: Պակասուրդ/ՀՆԱ ցուցանիշը 2011 թվականին կազմել է 2.8%՝ կանխատեսված 3.9%-ի[14] և 2010 թվականի 5%-ի դիմաց:

Հաշվետու տարվա ընթացքում պակասուրդի ֆինանսավորման ներքին աղբյուրները կազմել են 65.9 մլրդ դրամ՝ նախատեսված 85.3 մլրդ դրամի դիմաց: Նշենք, որ նախորդ տարի նշված ցուցանիշը կազմել էր 107.4 մլրդ դրամ:

Ներքին աղբյուրներում 28.6 մլրդ դրամ են կազմել փոխառու զուտ միջոցները, 37.3 մլրդ դրամ՝ ֆինանսական զուտ ակտիվները: Մասնավորապես՝ 30.26 մլրդ դրամ են կազմել գանձապետական պարտատոմսերից զուտ մուտքերը՝ 139.2 մլրդ դրամ ծավալով պարտատոմսերի տեղաբաշխումից ստացված 128.7 մլրդ դրամ հասույթի և 98.4 մլրդ դրամի մարման փաստացի ցուցանիշների պարագայում: 2011 թվականի սկզբին ՀՀ կառավարությունը հրապարակեց պետական պարտատոմ-սերի թողարկման կանոնները և տեղաբաշխումների օրացույցը: Համաձայն տեղաբաշխումների օրացույցի՝ 2011 թվականի փետրվարի 17-ին իրականացվեցին 7 և 10 տարի մարման ժամկետով երկարաժամկետ ուղենշային պարտատոմսերի թողարկումներ՝ 12% տարեկան արժեկտրոնային եկամտաբերությամբ, իսկ ապրիլի 29-ին՝ նոր 3 և 5 տարի մարման ժամկետով միջնաժամկետ ուղենշային պարտատոմսերի թողարկումներ՝ 11% տարեկան արժեկտրոնային եկամտաբերությամբ: Ուղենշային պարտատոմսերի տեղաբաշխման ծավալը տարվա ընթացքում կազմել է 84.1 մլրդ դրամ, տեղաբաշխման միջին կշռված եկամտաբերությունը՝ 14.7%: 2011 թվականին շարունակվել են պետական խնայողական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկումները՝ ընդհանուր 1,700,000.0 հազ. դրամ ծավալով: Այս պարտատոմսերից տեղաբաշխվել են 583,924.0 հազ. դրամի պարտատոմսեր, որոնցից մուտքը կազմել է 585,298.0 հազ. դրամ:

Պետք է ընդգծել, որ գնաճի դեմ պայքարի շրջանակներում ֆինանսական շուկայում դիտարկվող տոկոսադրույքների ընդհանուր աճի միտումը գրեթե չի անդրադառնում պետական

[14] ՀՀ 2011 թվականի բյուջետային ուղերձում կանխատեսված ցուցանիշ:

պարտատոմսերի եկամտաբերության վրա, քանի որ, դատելով 3-20 տարի մարման ժամկետ ունեցող պետական պարտատոմսերի նկատմամբ շուկայում ձևավորված շարունակական բարձր պահանջարկից, միջին և երկարաժամկետ առումներով դրանք շուկայի մասնակիցների կողմից շարունակում են դիտարկվել որպես ներդրման ամենակայուն և հուսալի միջոց:

2011 թվականին պետական պարտատոմսերի թողարկման ծրագրի իրագործման արդյունքում ներքին պետական պարտքը բնութագրող հիմնական ցուցանիշները հետևյալն են. շրջանառության մեջ եղած պետական պարտատոմսերի ծավալն անվանական արժեքով կազմել է 210,036,472.0 հազ. դրամ: Բոլոր պարտատոմսերի միջին ժամկետայնությունը կազմել է 1698 օր (2010թ.՝ 1353 օր), միջին կշռված եկամտաբերությունը՝ 12.96% (2010թ.՝ 11.67%): Ներքին պետական պարտքը բաղկացած է 15.7% ՊԿՊ-ից, 52.9%՝ ՄԺՊ-ից, 31.0%՝ ԵՊ-ից և 0.4%՝ ԽՊ-ից (2010թ.՝ 29.7% ՊԿՊ-ից, 49.9%՝ ՄԺՊ-ից, 20.0%՝ ԵՊ-ից և 0.4%՝ ԽՊ-ից):

2011 թվականին շարունակվել է նաև ՀՀ ներքին շահող փոխառության պարտատոմսերի հետգնման գործընթացը. հետգնումը կազմել է 894.5 հազար դրամ:

Մուրհակների մարման նպատակով կատարվել են շուրջ 186 մլն դրամի վճարումներ՝ ապահովելով ծրագրի 99.9% կատարողական: Ամբողջությամբ մարվել է նաև «ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ-ից ստացված վարկի ծրագրված գումարը՝ կազմելով 1.4 մլրդ դրամ:

Հաշվետու տարվա պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման աղբյուրներում ներքին ֆինանսական ակտիվները կազմել են շուրջ 37.3 մլրդ դրամ կամ տարեկան ճշտված ծրագրի 65.5%-ը: Մասնավորապես՝ ՀՀ ռեզիդենտներին պետական բյուջեից տրամադրվել են շուրջ 13.2 մլրդ դրամի վարկեր՝ կազմելով նախատեսվածի 99.4%-ը: Նշված գումարից շուրջ 11.7 մլրդ դրամը տրամադրվել է Ռուսաստանի Դաշնության կողմից Հայաստանի Հանրապետությանը 2009 թվականին տրամադրված պետական վարկի միջոցներից, որն իրականացվել է ամբողջ ծավալով: Նշված գումարից 7.5 մլրդ դրամն օգտագործվել է գյուղատնտեսական վարկերի տրամադրման նպատակով, 2.2 մլրդ դրամը տրամադրվել է «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից հիմնադրված վարկային կազմակերպությանը, 1 մլրդ դրամը՝ տնտեսության կայունացման վարկավորման ծրագրի 1-ին բաղադրիչի ֆինանսավորման նպատակով՝ «Համակարգիչ բոլորի համար» ծրագրի շրջանակներում, 936.7 մլն դրամը՝ «Ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով մարդատար տրանսպորտային միջոցներ ներմուծող ֆիզիկական անձանց և 50.6 մլն դրամ՝ «Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոն» ՓԲԸ-ին: Տեղական կենսապարարտանյութերի արտադրությունը խթանելու նպատակով անցած ժամանակահատվածում 50 մլն դրամ է տրամադրվել «ՍԻՍ-95» ՍՊԸ-ին: 169.9 մլն դրամ արտոնյալ պայմաններով տրամադրվել է բռնադատված քաղաքացիներին՝ անհատական բնակարանային շինարարության վարկավորման նպատակով, որն օգտագործվել է

85%-ով: 666.4 մլն դրամ է տրամադրվել Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Շուկայավարման հնարավորություն ֆերմերներին» ծրագրի շրջանակներում՝ կազմելով նախատեսվածի 92.4%-ը: 649.8 մլն դրամ է տրամադրվել Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Գյուղական կարողությունների ստեղծում» ծրագրի շրջանակներում՝ ամբողջությամբ ապահովելով նախատեսված ծավալը:

Շուրջ 8.5 մլրդ դրամ է ստացվել տրամադրված ներքին վարկերի վերադարձից՝ կազմելով նախատեսվածի 102.7%-ը: Նշված գումարից 5.3 մլրդ դրամը մուտքագրվել է նախորդ տարի Ռուսաստանի Դաշնության հատկացրած վարկային միջոցների հաշվին տրամադրված վարկերի վերադարձից:

Բաժնետոմսերի և կապիտալում այլ մասնակցության ձեռքբերմանն ուղղվել է 130.1 մլն դրամ:

Հաշվետու տարում կայունացման դեպոզիտային հաշվից զուտ օգտագործումը կատարվել է 98.7%-ով և կազմել 33.1 մլրդ դրամ: Ըստ այդմ՝ տարվա ընթացքում նշված հաշիվը համալրվել է 5.3 մլրդ դրամով, իսկ հաշվից օգտագործումը կազմել է շուրջ 38.5 մլրդ դրամ:

596.5 մլն դրամով ավելացել է արտաբյուջետային միջոցների մնացորդը:

2011 թվականին պետական բյուջեի պակասուրդն արտաքին աղբյուրներից ֆինանսավորվել է 39.7 մլրդ դրամով՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 54.1%-ը:

Արտաքին փոխառու միջոցներից բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը կազմել է 78.1 մլրդ դրամ կամ նախատեսվածի 72.1%-ը: Տարվա ընթացքում արտաքին աղբյուրներից ստացվել են 88.2 մլրդ դրամի վարկային միջոցներ՝ ծրագրված 118.7 մլրդ դրամի դիմաց: Ստացված գումարից 44.1 մլրդ դրամը ստացվել է նպատակային վարկային ծրագրերի շրջանակներում՝ նախատեսված 62.6 մլրդ դրամի դիմաց: Զարգացման քաղաքականության երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում, որը ՀՀ 2011 թվականի պետական բյուջեում նախատեսված չէր, ՀԲ կողմից տրամադրվել են շուրջ 9 մլրդ դրամի վարկային միջոցներ: 22.1 մլրդ դրամ է տրամադրվել ԱՄՀ կողմից, 13 մլրդ դրամ՝ Եվրամիության կողմից Մակրոֆինանսական աջակցության ծրագրի շրջանակներում: Եվրահանձնաժողովի կողմից Մակրոֆինանսական աջակցության ծրագրի շրջանակներում նախատեսված վարկային միջոցները՝ 20.1 մլրդ դրամի չափով, ստացվել են 2012 թվականին:

Արտաքին պարտավորությունների մարմանն ուղղվել է շուրջ 10.1 մլրդ դրամ, որից 6.9 մլրդ դրամը հատկացվել է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ծրագրերի գծով պարտքի մարմանը: Բացի այդ, 1.1 մլրդ դրամ է տրամադրվել Էլեկտրաէներգիայի հաղորդման և բաշխման համակարգի ծրագրի գծով Ճապոնիայի նկատմամբ պարտքի մարմանը, 400.5 մլն դրամը՝ ԳԶՄՀ, 248.1 մլն դրամը՝ ՎԶԵԲ, 119.3 մլն դրամը՝ ՕՊԵԿ-ի միջազգային զարգացման հիմնադրամի նկատմամբ ունեցած պարտքի մարմանը, 618.5 մլն դրամ՝ ԱՄՆ ապրանքային

վարկերի մարմանը, 51.7 մլն դրամ՝ ԱԷԿ-ի վառելիքի չոր պահպանման համակարգի ծրագրի գծով Ֆրանսիայի նկատմամբ պարտքի մարմանը և 584.1 մլն դրամ՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության նկատմամբ պարտավորությունների մարմանը:

Արտաքին ֆինանսական ակտիվների գծով պակասուրդի ֆինանսավորման ծրագիրը կատարվել է 110%-ով՝ կազմելով շուրջ 38.4 մլրդ դրամ: Մասնավորապես, 35.4 մլրդ դրամ է կազմել ԼՂՀ-ին տրամադրված միջպետական վարկը: Վրաստանի կողմից Հայաստանի նկատմամբ ունեցած վարկային պարտավորությունների գծով կատարվել է 305.6 մլն դրամի վճարում՝ ծրագրված 256.5 մլն դրամի դիմաց, որը պայմանավորված է նրանով, որ ստացված գումարից 49.1 մլն դրամը նախորդ տարվա պարտավորությունն է և Վրաստանի կողմից փոխանցվել է 2010 թվականի դեկտեմբերին, սակայն գանձապետական միասնական հաշվին մուտքագրվել է ընթացիկ տարվա հունվար ամսին:

Միջազգային ֆինանսական կազմակերպություններին ՀՀ անդամակցության գծով պարտավորությունների կատարմանն ուղղվել է 835.2 մլն դրամ կամ նախատեսվածի 91.8%-ը: Հաշվետու տարում 2.5 մլրդ դրամով ավելացել է արտաքին աղբյուրներից ստացված վարկային և դրամաշնորհային միջոցների մնացորդը:

2011 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության արտաքին պետական պարտքը կազմել է 1,376.5 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 36.1%-ը (3,568 մլն ԱՄՆ դոլար կամ ՀՆԱ-ի 34.8%-ը)՝ 2010 թվականի 1,199.0 մլրդ դրամի և 34.2%-ի (3,299.0 մլն ԱՄՆ դոլարի և 35.2%-ի) դիմաց: Պարտքի հիմնական մասը՝ 2,950.9 մլն ԱՄՆ դոլարը, ՀՀ կառավարության անմիջական վարկային պարտավորություններն են, 617.3 մլն ԱՄՆ դոլարը՝ Կենտրոնական բանկի վարկային պարտավորությունները:

Հաշվետու տարում ՀՀ արտաքին պետական պարտքի սպասարկումը կազմել է 101.6 մլն ԱՄՆ դոլար, որից 69.3 մլն ԱՄՆ դոլարը՝ կառավարության և 32.3 մլն դոլարը՝ ԿԲ պարտավորությունների գծով: Արտահանման նկատմամբ արտաքին պարտքի սպասարկման հարաբերակցությունը կազմել է 4.2%՝ նախորդ տարվա 4.7%-ի դիմաց: 2011 թվականի վերջի դրությամբ արտաքին պարտքի զուտ ներկա արժեքի ցուցանիշն (ԶՆԱ) աճել է՝ 2010 թվականի 2,596.6 մլն ԱՄՆ դոլարի դիմաց կազմելով 3,022.8 մլն ԱՄՆ դոլար, աճել է նաև ԶՆԱ/ՀՆԱ հարաբերակցությունը՝ 2010 թվականի 27.7%-ի դիմաց կազմելով 29.5%: Հաշվետու տարում նվազել է ԶՆԱ/արտահանում ցուցանիշը՝ 2010 թվականի 134.1%-ից հասնելով 125.7%-ի: